

ԷԶՄԻԱԾԻՆ



ԺԱ
2007



ԿԳ ՏԱՐԻ

ՎԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ

ՆՈՅՆԻՔԵՐ

2007

ՀՐԱՄԱՆԱԻ

S. S. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ
ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ**

Մեպտեմբերի 30-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հովվապետական այցով մեկնեց Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Լոս Անջելեսի օդանավակայանում Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակությանը դիմավորեցին և ողջունեցին ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Ս. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը, ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Ս. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը, Թեմական խորհրդի ատենապետ դր. Բարլու Տեր-Մկրտչյանը, Թեմական խորհրդի փոխատենապետ Ջոզեֆ Քանինյանը, ԱՄՆ-ում ՀՀ գլխավոր հյուպատոս Արմեն Լիլոյանը և հայ համայնքի բազմաթիվ ներկայացուցիչներ:

Հովվապետական այցի ընթացքում Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Ս. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը, Մայր Աթոռի դիվանապետ Ս. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, Տեղեկատվական համակարգի օտարալեզու լրատվության պատասխանատու Ս. Կտրիճ քահանա Դևեջյանը, Ս. Հովնան արեղա Հակոբյանը՝ որպես գավազանակիր, և «Շողակաթ» հեռուստաընկերության օպերատոր Սուրեն Տեր-Գրիգորյանը:

Հոկտեմբերի 1-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը կատարեց Փասադինայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու Սուրբ Մեղանի օծումը:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում Ամենայն Հայոց Կաթողիկոսին ազգային տարազով և ավանդական աղ ու հացով դիմավորեցին Հովսեփյան դպրոցի սաները: Աղն ու հացն օրհնելուց հետո Վեհափառ Հայրապետը թափորով առաջնորդվեց դեպի եկեղեցի, ուր հավաքվել էին հավատավոր հայորդիները:

Մեպտեմբերի 9-ին օծված նորակառույց տաճարում կատարվեց «Հրաշափառի» արարողություն: Ապա Նորին Սրբությունը օծեց եկեղեցու Սուրբ Մեղանը՝ կառուցված Վահե, Դանիել և Վազգեն Իմաստունյանների բարերարությամբ:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ծխականների անունից Նորին Սրբությանը ողջունեց ծխի հոգևոր հովիվ Ս. Պարետ ծ. վրդ. Երեցյանը և շնորհակալություն հայտնեց Փասադինա կատարած այցի համար: Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևմտյան թեմի անունից Վեհափառ Հայրապետին ողջունեց առաջնորդ Ս. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը և շնորհակալություն հայտնեց ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի հաստատման 80-ամյակի տոնակատարությունը նախագահելու, ինչպես նաև նորակառույց եկեղեցու Սուրբ Մեղանը օծելու համար:

Հավաքվածներին այնուհետև Հայրապետական իր պատգամը ուղղեց Նորին Սրբությունը:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ ՓԱՍՏԱԴԻՆԱՅԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ
ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ**

(1 հոկտեմբերի 2007 թ.)

*«Զմի խնդրեցի ի Տեառնէ եւ զսոյն աղաչեմ,
բնակել ինձ ի տան Տեառն զամենայն աւուրս
կենաց իմոց»:*

*«Մի բան խնդրեցի Տիրոջից և նույնն եմ ա-
ղաչում, որ կյանքիս բոլոր օրերին բնակվեմ
Տիրոջ Տանը»:*

(Սղմ. ԻԶ 4)

Միրելի Սրբազան,

Միրելի հավատավոր զավակներ մեր Սուրբ Եկեղեցու,

*Այս պահին ցնծություն ու բերկրանք է ապրում Հայրապետիս հոգին և զոհութ-
յուն ու փառք է վերառաքում առ Բարձրյալն Աստված, որ այս բարեպատեհ առիթը
պարգևեց Հովվապետական Մեր երրորդ այցելությամբ բերելու Միածնաէջ Մայր
Տաճարի և Արարատյան հայոց հողի քրիստոսաշող լույսն ու օրհնությունը Միաց-
յալ Նահանգներում ապրող բարեպաշտ զավակներին:*

*Կրկնակի է Մեր ուրախությունը, քանզի տոնախմբում ենք Ամերիկայի Միացյալ
Նահանգների հայոց Արևմտյան տիրախնամ թեմի հիմնադրման 80-ամյա հոբելյա-
նը: Այսպիսի իրադարձությունները քաջալերություն են մեր կյանքում՝ ընթանալու
դեպի մեր հույսերի և տեսիլքների մարմնավորում, դեպի եկեղեցաշեն ու հայրե-
նանվեր նոր ծրագրերի իրագործում:*

*Հոբելյանական այս ուրախ առիթով Հայրապետական Մեր օրհնությունն ու
շնորհավորանքներն ենք բերում ամենքիդ և հայցում, որ Բարձրյալն Աստված ամե-
նախնամ Իր Աջի ներքո խաղաղ ու ապահով, սիրով միաբան և պայծառացյալ
պահպանի Միացյալ Նահանգների հայոց Արևմտյան թեմը, Սուրբ Հոգու շնորհնե-
րով զարդարյալ ու զորացյալ պահի Ձեզ, սիրելի Սրբազան, ծառայասեր բոլոր հո-
գևորականներին, վարչական մարմինների բարեջան բոլոր անդամներին և համայն
բարեպաշտ մեր ժողովրդին ի Միացյալ Նահանգս:*

*Այս մաղթանքով ենք շրջում ութսուն տարիների էջերը՝ անդրադառնալու հա-
մար այն պատմական օրվան, երբ երջանկահիշատակ Գևորգ Ե Սուրենյանց Հայ-
րապետը Սրբատառ Կոնդակով հաստատեց հայոց Արևմտյան թեմը: Մխիթարութ-
յուն էր վշտալի Հայրապետի և համայն հայության համար Նահանգներում նոր թե-
մի հոչակումը: Մեկ տասնամյակ էր անցել Մեծ եղեռնից: Հայրենի դարավոր երկրից
որբացած, գաղթականության ճամփան բռնած հայերը Աստծո օգնականությամբ ա-
պաստան ու ապահովություն գտան Միացյալ Նահանգներում: Քաջարի իրենց
ջանքերի շնորհիվ Աստծուն ապավինած ձևավորեցին համայնքային կյանք, կառու-*

ցեղին եկեղեցիներ, մշակութային ու կրթական հաստատություններ՝ ապրելու համար սերնդեսերունդ հայրերի հավատով ու աղոթքով՝ «Զմի խնդրեցի ի Տեառն՝ եւ զսոյն աղաչեմ, բնակել ինձ ի տան Տեառն զամենայն աւուրս կենաց իմոց»։ Արևմտյան թեմի հաստատվում էր որպես հայոց վերածննդի վկայություն։ Գևորգ Ե Ամենայն Հայոց Հայրապետը հռչակում էր հայ ժողովրդի ապրելու հավատը, առ Աստված հույսով հառնելու, ստեղծելու և արարելու ուժը, հավատարմությունը՝ հայրերի վառ հավատին ու հայրենյաց սրբություններին։

Փառք և գոհություն Երկնավոր Հորը. 80 տարիներ առաջ սկզբնավորված առաքելությունն այսօր բարի արդյունքներով շարունակվում է։ Այսօր դուք, սիրելի բարեպաշտ ժողովուրդ, ձեր հայրերի օրինակով, նվիրումով ու սիրով պայծառ եք պահում թեմի եկեղեցիները, դպրոցներն ու ազգային հաստատությունները, որոնք բազմապատկված ու զորացած՝ շարունակում են անմար պահել Լուսավորչյան հավատո կանթեղի լույսը և մեր հայրերի սրբազան ժառանգությունն ու մշակութային ավանդները։ Ահավասիկ, այսօր շնորհապարզև Սուրբ Մյուռոնով օծեցինք մեր հավատքի հայր Սուրբ Գրիգոր Լուսավորչի անունը կրող եկեղեցու սրբազան Խորանը՝ վերստին հնչեցնելով մեր ժողովրդի շուրթերին դարերով ապրած սաղմոսերգուի խոսքը. «Մի բան խնդրեցի Տիրոջից և նույնն եմ աղաչում, որ կյանքիս բոլոր օրերին բնակվեմ Տիրոջ Տանը»։ Թող Բարձրյալն Աստված եկեղեցու խնկաբույր այս հարկը միշտ պահի անսասան և լեցուն բարեպաշտ ու աղոթասեր մեր զավակներով։

Սիրելի Սրբազան, հավատավոր բարեպաշտ զավակներ Մեր, այսօր Մենք հոգու քաջալերությամբ բարձր գնահատանքով ենք անդրադառնում, որ դուք որդիական սիրո նախանձախնդրությամբ ձեր ջանքերն եք բերում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պայծառությանը և մեր Հայրենիքի ազատ նոր կյանքի կառուցմանը։ Ձեր աջակցությամբ ու ներդրումներով Հայաստանում և Արցախում իրականացվում են հոգևոր-կրթական, տնտեսական ու մշակութային կյանքի բարելավմանն ուղղված բազմաթիվ ծրագրեր, որոնք ծառայելով երկիր հայրենին շենացնելու ձեր նվիրումին՝ զորացնում են նաև մեր բոլորի հավատը՝ շուտով մարմնավորված տեսնելու մեր հույսերն ու իդձերը։ Հայրենի անկախության և հայ կյանքի այս հուսառատ օրը երազն էր մեր հայրերի։

Պատարագի սրբազան խորհրդով, սիրելիներ, աղոթք բարձրացնենք երկինք՝ հոգիների համար երջանկահիշատակ Գևորգ Ե Ամենայն Հայոց Հայրապետի, Արևմտյան թեմի հոգևոր կյանքը առաջնորդած շնորհազարդ եկեղեցականների, որոնց շարքում են երջանկահիշատակ Գարեգին արքեպս. Խաչատուրյանը և Շնորհք արքեպս. Գալուստյանը, ովքեր բազում երախտիք են թողել մեր Եկեղեցու անդամատանում։ Աղոթենք շնորհով լի, եկեղեցասեր ու ազգասեր հոգեւույս բոլոր զավակների համար մեր ժողովրդի, որ ծառայեցին տիրախնամ թեմի պայծառությանը, մեր Սուրբ Եկեղեցուն ու Հայրենիքին։

Հայրական Մեր պատգամն է, որ սիրով միաբան մեր Եկեղեցու հոգևոր հարազատ տան մեջ զորանաք հավատով և ազգասեր ու հայրենասեր նույն ոգով ու նվիրումով շարունակեք ձեր ընթացքը՝ բարի գործերով զարդարելով համայնքային կյանքը, որպեսզի մեր զավակներին անկորուստ փոխանցեք առ Աստված հույսն ու ապավինությունը, հայրենի հիշատակներն ու սրբությունները, որպեսզի սերունդ-

ներն ապրեն հայրերի օրինակով և առ Աստված անդադրում հայցով՝ «Նույնն եմ աղաչում, որ կյանքիս բոլոր օրերին բնակվեմ Տիրոջ Տանը»։ Տիրոջով օրհնյալ ու արգասավոր՝ մեր ժողովուրդը պիտի շարունակի իր քրիստոնեական առաքելությունը, ազգերի կողքին՝ հանուն խաղաղ ու բարօր աշխարհի։

Պատարագի այս նվիրական պահին բերկրաշատ հոգով ի Քրիստոս սիրո եղբայրական մեր ողջունն ենք բերում այստեղ ներկա Միացյալ Նահանգների իշխանությունների և մեր քույր Եկեղեցիների ներկայացուցիչներին՝ քաջառողջ կյանքի և բարի գործոց հաջողությունների մաղթանքով։

Աղոթում ենք, որ ամենախնամ Աստված խաղաղ պահի Միացյալ Նահանգները, բարօր ու երջանիկ՝ նրա մեծահոգի ժողովրդին, ձեզ բոլորիդ, սիրելիներ, և Իր շնորհների ներքո միշտ շեն ու պայծառ պահպանի Ամերիկայի հայոց Արևմտյան թեմը։

Թող Տերը օրհնի մեր Հայրենիքի նոր կյանքը, մեր ժողովրդի արդար հույսերն ու ընթացքը։

Ողջ լերուք ի Տեր գորացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի մէնջ. Ամէն։

Արարողության ավարտին Աղաջանյան սրահում տեղի ունեցավ ընդունելություն՝ ի պատիվ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի։

Այնուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ Լուս Անջելեսի շրջանի Սանուկյան-Դեմիրճյան, ՀԲԸՄ Փասադինա, Արշակ Տիգրանյան, Ալֆրեդ և Մարգարիտա Հովսեփյան, Ալեք Փիլիպոս, Մեսրոպյան, Շամյան, Մետիսյան և Ս. Սահակ ու Ս. Մեսրոպ հայկական դպրոցների սաների հետ։ Հանդիպմանը ներկա էին նաև դպրոցների տնօրենները, ուսուցիչները, ինչպես նաև Արևմտյան թեմի եկեղեցականները։

Գալայճյան սրահում հավաքված աշակերտները բուռն ծափահարություններով դիմավորեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսին։ Սաները նախապես պատրաստել էին հարցեր ուղղված Վեհափառ Հայրապետին։ Ամենայն Հայոց Հայրապետը խորապես տպավորված էր միջոցառման հարց ու պատասխանի հատվածից՝ սիրով և անկեղծությամբ պատասխանելով տրվող հարցերին։

Հանդիպման սկզբում միջոցառման պատասխանատու, Արևմտյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Տաճատ ծ. վրդ. Յարտըմյանը ասաց, որ հավաքված այս ուսանողները մեծ նվիրումով ու սիրով են ուսանում իրենց մայրենի լեզուն և հաղորդվում նախնյաց հավատին ու հոգևոր ժառանգությանը։

Ալեք Փիլիպոս դպրոցի աշակերտներ Մելինե Համբարձումյանը և Լուսինե Գալստյանը կատարեցին ԱՄՆ-ի և Հայաստանի Հանրապետության պետական օրհներգերը։ Ապա Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը շնորհակալության խորին զգացումով ողջունեց Վեհափառին՝ ընդգծելով, որ Հայոց Հայրապետի այցը մեծ կարևորություն ունի։ Հովնան Սրբազանը հույս հայտնեց, որ Արևմտյան թեմի անդամները կարդարացնեն Նորին Սրբության ակնկալիքները՝ կապված մեր ազգային-հոգևոր արժեքների հանդեպ ունեցած նվիրվածությանը։ Սրբազան Հայրը ուրախությամբ նշեց, որ առաջին անգամ է, որ Ամենայն Հայոց Հայրապետը հանդիպում է այս դպրոցի սաների հետ, ապա հրավիրեց Նորին

Սրբությանը՝ իր պատգամը փոխանցելու սաներին:

Ողջունելով ներկաներին՝ Նորին Սրբությունն իր օրհնությունն ու շնորհավորանքը բերեց ամենքին՝ Արևմտյան թեմի հիմնադրման 80-ամյակի կապակցությամբ: Հայոց Հայրապետը այնուհետև անդրադարձավ հայերենի իմացության ու հոգևոր դաստիարակության խնդիրներին՝ նշելով, որ այս հարցում ծնողներին մեծ դեր է վերապահված: Հայոց Հայրապետը նաև հավելեց, որ Արևմտյան թեմի եկեղեցականները Հովնան Սրբազանի արդյունաշատ և օրինակելի առաջնորդության ներքո իրենց կարևոր դերակատարությունն ունեն համայնքի կյանքում, սակայն հարկ է անել ավելին, որպեսզի համայնքի երիտասարդությունը, տոգորված ազգային ոգով և որպես ԱՄՆ օրինավոր քաղաքացիներ, իր օգտակարությունը բերի և՛ Միությունին, և՛ Հայրենիքին, և՛ Լեռնային Ղարաբաղին, և՛ Սուրբ Էջմիածնին: Միջոցառումն ավարտվեց Նորին Սրբության «Պահպանիչ» աղոթքով: Ի հիշատակ այս հանդիպման բոլոր ներկաները ստացան աղոթագրքեր:

Հոկտեմբերի 2-ին, առավոտյան ժամը 11-ին, Բրբենքում տեղի ունեցավ ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի Մայր Տաճարի հիմնարկեքի արարողությունը: Հոգևորականաց թափորով Հայոց Հայրապետը առաջնորդվեց եկեղեցու կառուցման վայրը:

Արարողությանը ներկա էին Լոս Անջելեսում Հայաստանի ավագ հյուպատոս Արմեն Լիլոյանը, Բրբենքի քաղաքապետ Մարիսա Ռամոզը, կարդինալ Մահոնիի ներկայացուցիչ Հայր Ալեքսի Շմիդտը, դպտի համայնքի առաջնորդ Մերապիոն Եպիսկոպոսը, Ասորական Եկեղեցու առաջնորդ Գաբրիել Եպիսկոպոսը, հրեական համայնքի ղեկավարներից ռաբի Մարք Դայմոնդը՝ ընկերակցությամբ Ռամբա Ալբերտ Հենքի:

Ողջույնի բարիգալստյան խոսքով դիմելով Վեհափառ Հայրապետին՝ ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտրյանը իր ուրախությունը հայտնեց, որ հիմնարկեքի այս արարողությունը, ինչպես նաև Նորին Սրբության այցելությունը համընկնում է ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի ստեղծման 80-ամյակին և կազմակերպվող հանդիսություններին:

Այնուհետև Հայրապետական իր օրհնության և գնահատանքի խոսքն ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԽՈՍՔԸ ԲՐԲԵՆՔԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ՏԱԺԱՐԻ

ՀԻՄՆԱՐԿԵՔԻ ԱՌԻԹՈՎ

(2 հոկտեմբերի 2007 թ.)

«Դուք՝ քանզի նախանձորդք էք հոգևորացն, վասն շինուածոյ եկեղեցւոյն՝ խնդրէք, զի առաւել եւս իցէք»:

(Ա Կորնթ. ԺԴ 12)

Միրելի Սրբազան,

Միրելի հավատավոր, հարազատ ժողովուրդ.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերկրաշատ հոգով, սիրով և կարոտով ճանապարհվեցինք դեպի ձեզ՝ միասին լինելու հիշարժան այս օրերին, երբ տոնախմբում ենք Ամերիկայի Միացյալ Նահանգներում հայոց Արևմտյան թեմի հաստատման 80-ամյա հորեղանական տարեդարձը: Գոհություն ենք մատուցում Բարձրալին, որ արժանացնում է մեր ժողովրդին՝ տոնելու իր նվիրական հիշատակները և առաջ տանելու իր հոգևոր-ազգային կյանքը խաղաղության մեջ, նոր ձեռքբերումների հավատով ու ձգտումով: Հավատքի մեր օրրանի՝ Սուրբ Էջմիածնի օրհնության լույսն ենք բերել ձեզ, ողջուն ենք բերել վերածնվող մեր Հայրենիքի ազատ կյանքից:

Երկու տարի առաջ Հայրապետական Մեր այցելության ընթացքին բարեպաշտ հայորդիներին և նվիրյալ բարերարների մասնակցությամբ հոգևոր մխիթարությամբ, աղոթքով և գոհաբանական օրհներգությամբ կատարեցինք հողի օրհնության արարողությունը տիրախնամ թեմում կառուցվելիք առաջնորդանիստ եկեղեցու: Եվ այսօր նորոգված հոգու բերկրանքով ու մեր միասնական աղոթքով ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի հիմնադրման 80-ամյակի տոնական տարում կատարեցինք եկեղեցու հիմնարկերի արարողությունը: Փառք Երկնավորին, բյուր բյուրոց փառք, շենանում է ազգիս կյանքը խաղաղականի ավերում հեռավոր, Աստուծո նոր տուն է վեր հանում Ամերիկայի օրհնյալ հողի վրա՝ իր հովանու ներքո առատաբույս պահելու հավատքի ու ազգային ինքնության ակունքը հայորդյաց հոգիներում:

Պատմության մեջ մեր Սուրբ Եկեղեցին հավատարմորեն խնամել ու առաջնորդել է մեր ժողովրդին, դիմագրավել հոգեկործան հողմերի, չարաղետ փորձությունների և նույն հաղթականությամբ պիտի շարունակի փրկագործական իր առաքելությունը: Եկեղեցու գործությունը համայն հավատացյալ ժողովրդի ճշմարիտ հավատքն է: Ճշմարիտ հավատքով միավորվում և լինում ենք տաճար Սուրբ Հոգու: Եկեղեցու գործության համար սուրբ առաքյալը հորդորում է հավատացելոց աղոթել «վասն շինածոյ եկեղեցւոյն», ինչպես նաև ջանալ հավատով նորոգվելու, հոգևոր ճանաչողության ու կյանքի մեջ առաջանալու. «Դուք, քանի որ նախանձախնդիր էք հոգևոր շնորհների, ջանացե՛ք առաւել ևս հարստանալ նոյն շնորհներով՝ ի շինութիւն եկեղեցւոյ»: Մեր հոգեղեն տաճարացումը Սուրբ Հոգով իրականություն է դառնում հատկապես աղոթավայր-սրբատեղիների օրհնաբեր հարկի ներքո՝ ընդհանրական ու աղոթաշաղախ միությամբ:

Մենք հավատում ենք, որ ԱՄՆ հայոց Արևմտյան թեմում վեր հանելիք առաջնորդանիստ եկեղեցին և նրա կամարների ներքո ձեր աղոթական մասնակցությունը սրբազան արարողություններին նոր ոգի ու գործություն պիտի բերեն տիրախնամ թեմի ազգային-եկեղեցական կյանքում՝ Աստծո երկնահեղ օրհնությունը անպակաս դարձնելով ձեր հոգիներից և ընտանեկան հարկերից ներս: Արդ, սիրելի հավատացյալներ, ըստ առաքյալի հորդորի՝ «դուք, քանի որ նախանձախնդիր էք հոգևոր շնորհների, ջանացե՛ք առավել ևս հարստանալ նոյն շնորհներով ի շնություն եկեղեցւոյ»:

Սիրելի Սրբազան, Հայրապետական օրհնությամբ Մեր բարձր գնահատանքն ենք բերում Ձեզ առաջնորդական քաջակորով ծառայության համար, Մեր օրհնությունն ու գնահատանքը՝ թեմի նախորդ վաստակաշատ առաջնորդ Գերաշնորհ Տ.

Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանին, տիրախնամ թեմի ուխտապահ հոգևոր դասին, եկեղեցական վարչության, ազգային կրթական ու մշակութային հաստատությունների նվիրյալներին, հավատավոր մեր բոլոր զավակներին:

Մեր մասնավոր գնահատանքն ենք բերում կառուցվող եկեղեցու բոլոր նվիրատուներին, ովքեր հավատավոր հոգով և թեմական կյանքը առավել պայծառ տեսնելու փափագով առատաձեռնորեն մասնակից են թեմի շենագման, եկեղեցու կառուցման սուրբ գործին: Աղոթում ենք, որ Տերը գորացնի եկեղեցասեր ու ազգասեր զավակացո, որպեսզի Իր շնորհով և օրհնությամբ հաջողությամբ ավարտեք կառուցումը Մայր եկեղեցու և շուտով վայելենք բերկրանքը եկեղեցու շնորհաբաշխ օծման և սրբագործման հանդեսի:

Մեր հորդորն է, որ միշտ անմար պահեք հավատո կանթեղը առաքելապատիվ Լուսավորիչ մեր Հայրապետի, որդիական նույն նվիրումով սիրեք անկախ մեր Հայրենիքն ու Սուրբ Եկեղեցին, հանուր հայության հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Եվ ձեր հավատն ու սերը պիտի փոխանցվեն մեր զավակներին սերնդեսերունդ, որ լինեն կրողները հոգևոր շնորհների, գործությունը մեր Եկեղեցու՝ Աստծո օրհնության մեջ:

Նվիրական այս պահին երախտագիտության Մեր խոսքն ենք ուղղում Միացյալ Նահանգների բարեխնամ իշխանություններին, որոնց հոգածու վերաբերմունքն է վայելում ամերիկահայ մեր ժողովուրդը, կառուցում իր հոգևոր-ազգային կյանքը:

Աղոթենք միասնաբար, որ Աստծո խաղաղությունը հաստատվի համայն աշխարհում, բոլոր ժողովուրդների կյանքում: Թող Աստված շեն ու բարգավաճ պահի Միացյալ Նահանգները և նրա մեծահոգի ժողովրդին: Թող Տիրոջ Սուրբ Աջը հավետ տարածյալ մնա աշխարհասփյուռ հայ կյանքի վրա՝ պահպանելով խաղաղ ու բարօր և պարզելով եկեղեցաշեն ու հայրենանվեր գործոց նոր հաջողություններ: Միբեյրենք, «Դուք, քանի որ նախանձախնդիր էք հոգևոր շնորհների, ջանացե՛ք առավել ևս հարստանալ նույն շնորհներով՝ ի շինություն եկեղեցու», որպեսզի սերը, շնորհը և խաղաղությունը աստվածային լինեն միշտ ձեզ հետ:

Ողջ լերուք ի Տեր զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի մէնջ. Ամէն:

Արարողության ավարտից հետո ընդունելություն կազմակերպվեց Գալաթյան սրահում, ուր Հովնան Սրբազանը ասաց, որ վերջին երկու օրվա ընթացքում Մայր Տաճարի շինության ֆոնդի համար հանգանակվել է մեկ միլիոն 900 հազար ԱՄՆ դոլար, որով եկեղեցու կառուցման համար հանգանակված գումարը հասել է մոտ տաս միլիոն դոլարի:

Այնուհետև ԱՄՆ Արևմտյան թեմի առաջնորդարանում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեզին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց ՀԲԸՄ Հարավային Կալիֆոռնիայի մարզային հանձնախմբի հետ՝ գլխավորությամբ տիար Սինան Սինանյանի:

Թեմակալ առաջնորդի ողջույնի խոսքից հետո ՀԲԸՄ Կենտրոնական կոմիտեի անդամ տիար Սինան Սինանյանը շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրա-

պետին՝ հակառակ ծանրաբեռնված ժամանակացույցի ՀԲԸՄ հանձնախմբի անդամներին ընդունելու համար: Պրն Սինանյանը նաև իր երախտագիտությունը հայտնեց Նորին Սրբությանը, ում նախաձեռնությամբ Մանուկյան-Դեմիրճյան դպրոցում ներկայիս Արևմտյան թեմի հաստատման 80-ամյակի առիթով մատուցվում: Իր հերթին ՀԲԸՄ տարածքային կոմիտեի նախագահ Վահե Իմաստունյանը վստահեցրեց Հայոց Հայրապետին, որ ՀԲԸՄ-ը պատրաստակամ է ծառայելու Հայրենիքին և Հայոց Եկեղեցուն, իր հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

Նորին Սրբությունն իր խոսքում օրհնությամբ ու գնահատանքով անդրադարձավ ՀԲԸՄ-ի բազում տարիների նվիրյալ ծառայությանը Հայրենիքին, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Հայոց Հայրապետը վստահություն հայտնեց, որ ՀԲԸՄ-ն միշտ էլ աջակից կլինի Մայր Աթոռին: Վեհափառը տեղեկացրեց նաև ՀԲԸՄ բարերաներ տեր և տիկին Ալեք և Մարի Մանուկյանների աճյունների Մայր Աթոռ փոխադրության և Սուրբ Էջմիածնում ամփոփման մասին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը կատարեց խաչքարի օծում, որը տեղադրվելու է Մանուկյան-Դեմիրճյան դպրոցում կառուցվող մատուռում: Հանդիպումն ավարտվեց «Պահպանիչ» աղոթքով:

Նույն օրը ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդարանում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց Կաթոլիկ Եկեղեցու Լոս Անջելեսի թեմի արքեպիսկոպոս կարդինալ Ռոջեր Մահոնիի հետ:

Կարդինալ Մահոնին իր ուրախությունը հայտնեց Ամենայն Հայոց Հայրապետի երրորդ Հովվապետական այցի առիթով՝ հաջողություն մաղթելով Նորին Սրբությանն իր առաքելության մեջ: Գաբեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և կարդինալ Մահոնիի զրույցից հետո տեղի ունեցավ ընդունելություն:

Հարկ է նշել, որ 2007 թ. օգոստոսի 26-ին, Ս. Հակոբ կաթոլիկ եկեղեցում կարդինալ Մահոնին կազմակերպել էր միջոցառում՝ նվիրված ԱՄՆ Արևմտյան թեմի 80-ամյակին ի վկայություն Հայ և Կաթոլիկ Եկեղեցիների միջև առկա ջերմ հարաբերությունների:

ԱՄՆ Արևմտյան թեմի առաջնորդարանում այնուհետև Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ «Էջմիածնի մանուկներ» հիմնադրամի հանձնախմբի հետ՝ ղեկավարությամբ հանձնախմբի ատենապետ Գայանե Թաթուլյանի:

«Էջմիածնի մանուկներ» հիմնադրամը հոգում է Էջմիածնում մանկատան կառուցման ծախսերը: Հանձնախմբի անդամների ջանքերի շնորհիվ հիմնադրամը տարեկան 250-ական ԱՄՆ դոլար գումար է հատկացնում 500 որբերի:

Հանդիպման սկզբում թեմակալ առաջնորդը Նորին Սրբությանը ներկայացրեց հանձնախմբի անդամներին՝ անդրադառնալով մարդասիրական այս առաքելության հանդեպ նրանց քրիստոնեական սիրուն, անձնդիր ծառայությանն ու նվիրու-

մին:

Ապա իր օրհնությունն ու գնահատանքը հանձնախմբի անդամներին բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ Հայրենիքի բարօրությանն ուղղված «Էջմիածնի մանուկներ» հիմնադրամի ծառայության համար:

Վերջում հանձնախումբը ի նպաստ Մայր Աթոռի որբախնամ գործունեության 25000 ԱՄՆ դոլարի հատկացում կատարեց: Հանդիպումն ավարտվեց Նորին Սրբության աղոթքով:

ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդարանում, Արմեն և Գլորիա Համբար սրահում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը այնուհետև հանդիպում ունեցավ թեմի հոգևոր սպասավորների հետ:

Վերստին ողջունելով Նորին Սրբությանը՝ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը շնորհակալություն հայտնեց Հայոց Հայրապետին՝ իր հրավերին ընդառաջելու և մինչև ԱՄՆ հայոց Արևելյան թեմ կատարելիք Հովվապետական այցը ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ այցելելու համար, ինչը եզակի հնարավորություն ընձեռեց ամենքին՝ վայելելու Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայությունը:

Վեհափառ Հայրապետին ապա իրենց հարցերն ուղղեցին թեմի հոգևորականները:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը անդրադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևոր առաքելությանը, ներկայացրեց Մայր Աթոռի կողմից իրագործվող նոր ծրագրերը: Վեհափառը կարևորեց համագործակցությունը Հայոց Եկեղեցու և քույր Եկեղեցիների միջև՝ միաժամանակ շեշտելով հայոց եկեղեցական ծեսերն ու ավանդույթները կենդանի պահելու անհրաժեշտությունը:

Վերջում Նորին Սրբությունը եկեղեցականներին հուշանվերներ հանձնեց՝ ի գնահատություն իրենց նվիրյալ ծառայության:

Երեկոյան Հովիվուդում հյուրասիրություն էր կազմակերպվել ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի Տիկնանց կազմակերպության կողմից: Հյուրասիրությունը տեղի ունեցավ Տաղյան գեղազարդ նորակառույց սրահում, որի բացումը կատարեց Վեհափառ Հայրապետը՝ օրհնելով թե՛ սրահը և թե՛ տեր և տիկին Տաղյաններին:

Հոկտեմբերի 3-ին սկսելով Հովվապետական այցելությունը ԱՄՆ հայոց Արևելյան թեմ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նույն օրը ժամանեց Նյու Ջերսի: Քաղաքի Թիթրպորտ օդանավակայանում Նորին Սրբության գլխավորած ջրախմբին դիմավորեցին և ողջունեցին Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը, Արևելյան թեմի թեմական պատվիրակ և միջեկեղեցական հարաբերությունների վարիչ-տնօրեն Տ. Վիգեն արքեպս. Այքազյանը, Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Բագրատ եպս. Գալստանյանը, ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը, ՄԱԿ-ի մոտ Հայաստանի Հանրապետության մնայուն լիազոր դեսպան Արմեն Մարտիրոսյանը, շրջանի հոգևորականները, Թեմական խորհրդի անդամները, ՀՕՖ-ի տնօրենների խորհրդի անդամները, ինչպես նաև Սրբոց Նահատակաց (Նյու Յորք) և Հովնանյան (Նյու Ջերսի)

հայկական վարժարանների աշակերտները և ուսուցչական անձնակազմը, շրջանի ծխական խորհրդի անդամներն ու հավատացյալները:

Ավանդական աղ ու հացի օրհնությունից հետո բարիգալստյան արարողության բացման խոսք ասաց Հայրապետական այցելության Նյու Յորքի հանձնախմբի ատենապետ Ռոյ Ստեփանյանը: Նորին Սրբությանը բարիգալստյան խոսքով դիմեց Խաժակ Սրբազանը՝ ասելով. «Վեհափառ Տեր, Ձեր գալուստը օրհնութիւն կը բերէ մեզի, կը խանդավառէ մեր ժողովուրդը, եւ Ձեր զաւակները ամէն շրջանի մէջ անհամբերութեամբ կը սպասեն Ձեր այցելութեան. այցելութիւն՝ որ հաւատքը տուն պիտի բերէ եւ հաւատացեալներու հոգիները աւելի պիտի զօրացնէ. պիտի զօրացնէ նաեւ հոգեւոր կապը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ մեր Մայր Հայրենիքին հետ: Կաղօթենք որ Տէրը Ձեզի առաւել քաջառողջ եւ արեւշատ տարիներ շնորհէ՝ որպէս զի արժանի ըլլանք Ձեր այցելութեանց եւ օրհնութիւններուն»:

Հավաքվածներին այնուհետև գնահատանքի իր խոսքն ուղղեց Վեհափառ Հայրապետը՝ ի մասնավորի ասելով. *«Անակնկալ էր Մեզ համար դիմավորումի այս արարողությունը, անակնկալ էր, որ պատրաստված էր Ձեր կողմից՝ Հովվապետական Մեր այցելության առաջին իսկ պահին, երբ եկանք Արևելյան թեմ: Ուրախալի է հատկապես, որ մեզ դիմավորեցին ժպտուն և պայծառ դեմքերով մեր անուշիկ երեխաները: Մենք Մեր գնահատանքն ենք բերում Ձեզ՝ սիրելի Սրբազան, Մեզ այսպիսի անակնկալ ուրախություն մատուցելու համար: Մեր գնահատանքը Թեմական խորհրդին, եկեղեցու սպասավորներին և մեր բարեպաշտ հավատավոր զավակներին, որ այս պահին այստեղ եք՝ բերելու Հայոց Հայրապետին ձեր սիրտ, ձեր հավատարմության հավաստումը»:*

Բարիգալստյան արարողությունից հետո Հայրապետական շքախումբը պատվո պահակախմբի ուղեկցությամբ առաջնորդվեց քաղաք:

Հոկտեմբերի 4-ին Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Նյու Յորքում՝ ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդարանում, հանդիպեց առաջնորդարանի Հայ Օգնության Ֆոնդի և Հայ Եկեղեցու հիմնադրամի աշխատակիցների հետ, որից հետո Առաջնորդարանի աշխատակազմի կողմից կազմակերպվեց հյուրասիրություն՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի՝ ԱՄՆ հայոց Արևելյան թեմ այցելության:

Հայոց Հայրապետին բարիգալստյան խոսքով դիմեց թեմակալ առաջնորդ Խաժակ արքեպս. Պարսամյանը. «Ուրախ ենք որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ամերիկայի Արեւելեան թեմին տուած Իր Հովուապետական այցելութեան առաջին օրերուն իսկ կը մասնակցի առաջնորդարանի ընտանիքի անդամներուն կէսօրուան ճաշին: Երջանիկ ենք որ մեր ընտանիքին հայրը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, մեզի հետ է այսօր: Այսօր Դուք, Վեհափառ Տեր, մօտէն պիտի ծանօթանաք այս ընտանիքի անդամներուն եւ Ձեր օրհնութիւնները պիտի տաք անոնցմէ իւրաքանչիւրին»:

Այնուհետև Խաժակ Սրբազանը ներկայացրեց առաջնորդարանի տարբեր բաժինների պատասխանատուներին, որից հետո նրանցից յուրաքանչյուրը պատմեց տվյալ բաժնում կատարվող աշխատանքների մասին, որից հետո հավաքվածներին

գնահատանքի իր խոսքն ուղղեց Վեհափառ Հայրապետը, ասելով, թե ուրախ է, որ իր Հովվապետական այս այցի ընթացքում առիթ ունեցավ ծանոթանալու Առաջնորդարանի աշխատակիցներին: Նորին Սրբությունը նշեց, որ նրանց մի մասին հանդիպել էր տարբեր առիթներով, սակայն բոլորին այսպես մեկտեղված առաջին անգամ է տեսնում. *«Ելնելով այն իրողությունից, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Ամերիկայի Արևելյան թեմի Առաջնորդարանի աշխատանքը լավագույն կազմակերպվածությունը ունի, ուստի ձեր ծառայությունը արդյունավետ է անցնում: Ուրախալի էր ինձ համար ձեզանից յուրաքանչյուրից լսել, որ ինքը այս ընտանիքի անդամ է, և որ դուք ձեր կարելիությունները առավելագույնս կատարում եք ձեզ վստահված պարտականությունների շրջանակում: Ձեր աշխատանքի որակից է կախված նաև թեմի գործունեության ընդհանուր որակը»:*

Մեր գնահատանքն ենք բերում նաև մեր սիրելի Խաժակ Սրբազանին, ով այսպես ձեռնհասությամբ վարում է առաջնորդական պարտականությունները Արևելյան թեմում: Մաղթում եմ, որ Սրբազանը երկար տարիներ իր ծառայությունը բերի մեր Եկեղեցուն և մեր Եկեղեցու միջոցով էլ մեր ժողովրդին: Սրբազանի նախանձախնդրության ոգին թող համակի բոլորիդ: Աշխատավայրում ընտանեկան մթնոլորտի ստեղծումը պայմանավորված է Առաջնորդի վերաբերմունքով, կեցվածքով և կարգապահական ոգով: Շարունակեցեք ձեր ծառայությունը ի սպաս դնել մեր հայրենիքին, Եկեղեցուն ու ԱՄՆ հայոց Արևելյան թեմին»:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը Ժակլին Դշխունյանին պարգևատրեց «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով:

Մայր Աթոռի գործունեությունը և տարբեր բաժինների աշխատանքները ներկայացրեց Մայր Աթոռի Դիվանապետ Ս. Արշակ եպս. Խաչատրյանը:

Հանդիպումն ավարտվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ» աղոթքով:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը օրվա երկրորդ կեսին ներկա գտնվեց ՄԱԿ-ի կենտրոնում ռուսական «Իտառ-Տասս» լրատվական գործակալության կազմակերպած «Ռուս Ուղղափառ Եկեղեցին և միջկրոնական երկխոսությունը և Ռուսաստանի հոգևոր վերազարթոնքը» թեմայով ցուցահանդեսին, որի հովանավորությունը ստանձնել էին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ՄԱԿ-ի մոտ Ռուսաստանի Դաշնության ներկայացուցիչ Վիտալի Վիրկինը, ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Ս. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Ս. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը և Մոսկվայի պատրիարքարանի ներկայացուցչության քարտուղար Ս. Ալեքսանդր ավ. քին. Աբրամովը:

Ժամը 18.00-ին առաջնորդարանում ընթրիքի սեղանի շուրջ Վեհափառ Հայրապետը հանդիպեց թեմի հոգևորականների և թեմի եկեղեցական կազմակերպությունների ղեկավարների հետ:

Ժամը 19.30-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայրապետական թափորով մուտք գործեց ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Ս. Վարդան Մայր եկեղեցին: Հայրապետական թափորին մաս էին կազմում Ս. Խաժակ արքեպս. Պարսամյանը, Ս. Եղիշե արքեպս.

Կիզիբյանը, Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը, Տ. Վիգեն արքեպս. Այքազյանը, Տ. Օշական արքեպս. Զոլոյանը, Տ. Բագրատ եպս. Գալստանյանը, Տ. Արշակ եպս. Խաչատրյանը, թեմի հոգևորականները և քույր Եկեղեցիների ներկայացուցիչները:

Եկեղեցում հավաքված հոծ թվով հավատացյալներին իր օրհնությունը բերեց Վեհափառ Հայրապետը, ապա Ս. Վարդան Մայր եկեղեցում Նորին Սրբությանը բարիգալստյան խոսք ասաց Խաժակ Սրբազանը. «Վեհափառ Տեր, հոգեկան անխառն ուրախությամբ եւ յանուն Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի հոգևորականաց դասուն, Թեմական խորհուրդին եւ համայն հաւատացեալ ժողովուրդին՝ բարի գալուստ կը մաղթենք Ձերդ Սրբութեան՝ այս շնորհաբեր Հովուապետական այցելութեան առիթով:

Ձերդ Սրբութեան Ամերիկայի Արեւելեան թեմին տուած Հովուապետական այս այցելութեան կարգախօսն է «Հովուական այցելութիւն՝ հաւատքը տուն բերող», եւ ո՛վ կրնար հաւատքը տուն բերել՝ եթէ ոչ Ամենայն Հայոց Սրբազնագոյն եւ Ընդհանրական Կաթողիկոսը:

Մենք փառք կու տանք Ամենակալ Աստուծոյ՝ որ հայ ժողովուրդի հաւատքի եւ խղճի ազատութեան մեծագոյն հերոսներէն զօրավար Վարդան Մամիկոնեանի անմոռաց յիշատակին նուիրուած այս Սուրբ Տաճարին մէջ մենք բախտաւորութիւնը ունինք ողջունելու Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետի 132-րդ յաջորդը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդը: Այս Տաճարը 1968 թուականին օծեց երջանկայիշատակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը. եւ մենք այսօր նոյն Տաճարին մէջ բարի գալուստ կը մաղթենք Անոր աշակերտին եւ յաջորդներէն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդին:

Մեր թեմի եւ կամ որեւէ թեմի, հաւատացեալներուն համար խիստ կարեւոր են Հովուապետական այցելութիւնները, որոնք կը նպաստեն հոգևոր վերազարթօնքի եւ կը զօրացնեն յարաբերութեան կապը Ամենայն Հայոց Կաթողիկոսական Աթոռին եւ գահակալող Հայրապետին հետ:

«Հաւատքը տուն բերող հովուական այցելութեան» ընթացքին Ձեր աչքերով պիտի տեսնէք ու վկայէք այս թեմին մէջ կատարուած աշխատանքները եւ ապագայի ծրագիրները: Աւելի մօտէն պիտի ծանօթանաք Արեւելեան թեմի Ձեր զաւակներուն, պիտի լսէք անոնց կազմած ծրագիրներուն, սնուցած յոյսերուն եւ ունեցած մտահոգութիւններուն մասին:

Եւ ես վստահ եմ որ հաւատացեալներն ալ իրենց կարգին ուշադրութեամբ պիտի ունկնդրեն Ձերդ Սրբութեան կենդանի պատգամները եւ պիտի հետեւին անոնց: Նոյն ատեն անոնք պիտի տեղեկանան՝ Ձերդ Սրբութեան անմիջական հսկողութեան եւ առաջնորդութեան ներքեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կատարած գործունէութեանց մասին. հոգևոր վերազարթօնք Մայր Հայրենիքի մէջ, եկեղեցաշինութիւն, հին տաճարներու վերանորոգում, հոգևոր ճեմարաններու արձանագրած յաջողութիւններ, քրիստոնէական դաստիարակութեան տարածում, Եկեղեցիի եւ պետութեան յարաբերութեանց բարելաւում, ձեռնադրուած երիտասարդ եկեղեցականներու փաղանգ եւ արտասահմանեան թեմերուն պատրաստուած հոգևորականներ տրամադրելու կարողութիւն, բարեսիրական եւ առողջապահական հաստատու-

թիւներ, եւ կարելի է յաւելեալ թուումներ եւս ընել: Այս բոլոր գործունէութեանց եւ իրագործումներուն շնորհիւ՝ այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, փառք Աստուծոյ, մեր օրերու ընձեռած պայմաններուն ներքեւ եւ ազատ ու անկախ Մայր Հայրենիքի մէջ առաւել եւս կը բարգաւաճի շնորհիւ Ձերդ Սրբութեան հեռատես, իմաստուն եւ աշխոյժ առաջնորդութեան ու ղեկավարութեան:

Դարձեալ բարի գալուստ կը մաղթենք Ձեզի, Վեհափառ Տէր:

Աղօթող ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանութեան եւ անոր Գահակալի աւելջատութեան համար՝ որպէս զի Ս. Գրիգոր Լուսաւորիչի օրհնութիւնները անպակաս ըլլան մեր բոլորին վրայէն:

Այժմ կը հրաւիրեմ Ձեզ՝ որպէս զի Ձեր պատգամով խանդավառէք ու մխիթարէք ներկայ հաւատացեալները»:

Եկեղեցում հավաքվածներին այնուհետև օրհնության իր խոսքը բերեց Հայոց Հայրապետը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԽՈՍՔԸ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

«ՀՐԱՇԱՓԱՌԻ» ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(4 հոկտեմբերի 2007 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ».

Փառքդ շատ լինի, Տէր.

հույսդ մեծ լինի, ժողովուրդ հայոց:

Միրելի Սրբազան,

Միրելի հավատալոր ժողովուրդ, բարեպաշտ գավակներ Մեր, սիրելի հոգևոր եղբայրներ և քույրեր ի Քրիստոս.

Բերկրաշատ հոգով և հայրական սիրով ողջունում ենք ձեզ, որ հավաքվել էք այսօր Սուրբ Վարդան եկեղեցում՝ մեր աղոթքը միասնաբար երկինք բարձրացնելու: Հավատքի մեր օրրան Սուրբ Էջմիածնի օրհնության լույսն ենք բերել ձեզ, ողջուն ենք բերել ազատ ու վերածնվող մեր Հայրենիքից, համայն մեր ժողովրդի՝ նորոգված հույսերով լեցուն սրտերից: Մեր հայցն է առ Աստված, որ Իր խաղաղությունը տարածվի աշխարհում, բոլոր ազգերի վրա և Տիրոջ հզոր Աջը միշտ հովանյալ լինի աշխարհասփյուռ մեր ժողովրդի ու Հայրենիքի վրա, որ արժանացել է պատմության նոր դարը դիմավորելու հոգևոր և ազգային կյանքի ձեռքբերումներով, նոր առաջընթացի ու հաղթանակների հավատով ու ձգտումով:

Փառքդ շատ լինի, Տէր, հույսդ մեծ լինի, ժողովուրդ հայոց:

Մեծ եղեռնից տասնամյակներ անց Ամերիկայի այս օրհնյալ հողի վրա տունդ ես վերստին կանգնեցրել, հոգևոր և ազգային կյանքդ շենացրել: Երբ կառուցվեց այս եկեղեցին՝ օծվելով հավատքի ու Հայրենիքի պաշտպան Սուրբ Վարդանի անունով, այդ օրը երջանկահիշատակ Վազգեն Ա Հայրապետը «հայ հավատքի հրաշքը» ան-

վանեց հայոց վերածնունդը:

Ամերիկայի հայությունը վառ վկայությունն է հայության հրաշքի՝ վերածնվելու գործության, որի ակունքը կյանքի հավատքն է Քրիստոսով: Միրելիներ, ձեր ընտանիքների կյանքի պատմությունն է թեմի պատմությունը: Այն սկիզբ է առնում պանդխտության մեջ ձեր հայրերի տքնաջան աշխատանքով, արդար վաստակով և այդ վաստակի արդյունքը Հայ Եկեղեցուն, հայ դպրոցին, ազգային խնամատար ու մշակութային հաստատություններին ընծայաբերումով, գոհողությամբ ու անմնացորդ ծառայությամբ ազգային կյանքին: Միացյալ Նահանգների մեջ գտնվելով ազատ ու խաղաղ կյանք, մեր ժողովրդի զավակները ստեղծեցին ու ձեռք բերեցին բարեկեցություն, հասան հաջողությունների, դարձան ազնիվ ու վստահելի քաղաքացիները Ամերիկայի, նաև՝ ճանաչված մասնագետներ, մշակույթի գործիչներ՝ վաստակ բերելով իրենց նոր Հայրենիքի առաջընթացին և միաժամանակ մնալով հարազատ զավակները հինավուրց հայ ժողովրդի, շատավիդները առաջին քրիստոնյա պետության: Ամերիկահայ մեր ժողովուրդը իր նվիրյալ հոգում միշտ վառ ու պայծառ պահպանեց ազատ, արևային, խրոխտ պատկերը Հայոց Աշխարհի և Արարատի ձյունափառ հայացքի ներքո՝ Էջքի խորհրդով լուսապսակ պատկերը Սուրբ Էջմիածնի, որով հայ ժողովուրդը ճանաչել է ու հավատարիմ մնացել Քրիստոսին՝ «հավատի գորագլխին, այն կատարելագործողին» (Եբր. ԺԲ 2):

Դուք այսօր, սիրելիներ, նույն սիրով, հավատավոր հոգով շարունակում եք ձեր պապերի ու հայրերի ավանդը՝ շեն ու պայծառ պահելով թեմի եկեղեցիները, որոնք Սուրբ Լուսավորչի Մյուռոնով դրոշմում են մեր զավակներին, կրթօջախներն ու ազգային կառույցները, որ կրթում և աճեցնում են նրանց հոգիները մեր մշակույթով, պատմությամբ ու ժառանգությամբ:

Հույսդ մեծ լինի, ժողովուրդ հայոց, որ դարերի փորձություններից, ավերներից ու կորուստներից փրկեցիր, պաշտպանեցիր ու բարձր պահեցիր քրիստոնեական հավատքը ու հավատքիդ գործությամբ ելար քեզ համար փորված գերեզմաններից և այսօր հայրենի պետականությունդ վերականգնած, հայրենի Արցախն ազատագրած, պիտի պաշտպանես քո արդար դատը ու պիտի շարունակես քո քրիստոնեական առաքելությունը՝ ազգերի կողքին քո ջանքերն ու մասնակցությունը բերելով նոր ժամանակների, նոր աշխարհի կառուցմանը:

Մնանք հավատավոր ազատության, խաղաղության, արդարության և իրավունքի արժեքներին, որոնցով մարդկային աշխարհում պիտի դրսևորվի և իրական դառնա Աստծո ավանդած սերը միմյանց հանդեպ: Այս արժեքներով դեպի իր հաղթանակները, դեպի նոր դարի առավոտը ընթացավ մեր ժողովուրդը՝ հավատարիմ Սուրբ Ավետարանին մեր Տեր Հիսուս Քրիստոսի, որ Հարուցյալ է, միշտ՝ Լույսն աշխարհի, Առաջնորդը կյանքի:

Այսօր Մենք մեծ քաջալերությամբ ենք անդրադառնում այն նշանակալի աջակցությանն ու ներդրումին, որը բերում է ԱՄՆ Արևելյան թեմը Մայր Հայրենիքի գորացմանը: Դուք ապրեցիք Հայաստանի և Արցախի ամեն անհանգստությամբ, դժվարությամբ ու հոգսով և այսօր որդիական սիրով մասնակից եք Հայրենիքի խաղաղ, նոր կյանքի կառուցմանն ու առաջընթացին ու նույն նախանձախնդրությամբ

ձեր ջանքերն եք բերում մեր ժողովրդի արդար հույսերի մարմնավորմանը: Մեր բարձր գնահատանքն ենք բերում թեմում ծառայող հոգևոր բոլոր սպասավորներին, իրենց բարերարության հովանին թեմական կյանքի մեջ տարածող ազգիս բարերարներին, եկեղեցական վարչությունների և Հովվապետական Մեր այցը կազմակերպող հանձնախմբի բարեջան անդամներին, ազգային հաստատությունների բարօրությանն ու շննությանը իրենց ջանքերը մատուցող մեր զավակներին: Մասնավոր գնահատանքի Մեր խոսքն ենք բերում սիրելի Սրբազանին՝ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանին, որ այսքան տարիներ անսակարկ նվիրումով իր ներդրումը, իր նվիրյալ ջանքերն է ի սպաս դնում հավատավոր մեր ժողովրդին: Մեզ համար գոհունակություն է տեսնել Արևելյան թեմը այսպես գորացող, այսպես պայծառացող՝ Սրբազան Հոր ջանքերով: Թող Տերն օրհնի Ձեզ, սիրելի Սրբազան, առողջ և զուրկ պահի, որպեսզի միշտ վերելքի մեջ լինի Արևելյան թեմը, ծաղկի և իր հովանին տարածյալ պահի հավատավոր մեր զավակների վրա:

Աղոթքի նվիրական այս պահին երախտագիտության Մեր խոսքն ենք ուղղում Ամերիկայի Միացյալ Նահանգների իշխանություններին և բարեսեր ու շնորհալի ժողովրդին՝ խաղաղության ու բարօրության համար, որ վայելում են մեր Եկեղեցու զավակները օրհնյալ այս երկրում: Մաղթում ենք, որ Ամերիկյան Տիրոջ օրհնության ներքո միշտ ապրի բարգավաճ ու երջանիկ: Տիրոջ հովանին ու շնորհներն ենք հայցում քույր Եկեղեցիների բարեջան սպասավորներին և նրանց խնամքին հանձնված բարեպաշտ ժողովրդին: Ողջունում ենք այստեղ ներկայությունը ի Քրիստոս մեր եղբոր՝ Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի ներկայացուցչին՝ Օշական արքեպիսկոպոս Չոլոյանին: Թող Տերն Իր օրհնության ներքո անսասան պահի հայրենի մեր երկիրը, օրհնի մեր ժողովրդի ջանքերը և պայծառացնի մեր Եկեղեցին ծաղկուն հավատքով:

Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ձեզ, Ամերիկայի հավատավոր մեր զավակներին՝ մաղթանքով, որ Տերը հաստատուն ու պայծառ պահպանի Ամերիկայի հայոց Արևելյան թեմը և արդյունավորի ձեր բոլոր արդար ու բարի գործերը, և ապրեք խաղաղությամբ ու երջանիկ: «Եվ ինքը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոս և մեր Հայրը՝ Աստված, որ սիրեց մեզ և մեզ տվեց հավիտենական մխիթարություն և բարի հույս, իբրև շնորհ, թող մխիթարի և հաստատ պահի ձեր սրտերը ամեն բարի խոսքի և գործի մեջ» (Բ Թես. Բ 15-16):

«Հրաշափառի» արարողությունից հետո եկեղեցուն կից Հայկ և Ալիս Գավուկյան սրահում տեղի ունեցավ հյուրասիրություն և հանդիպում Նորին Սրբության հետ:

Հոկտեմբերի 5-ին Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակությունը մեկնեց Մանհատթի Մեյնթ Իգնիշնս առանձնացման կենտրոն: Արևազալի ժամերգությունից հետո բացման խոսք ասաց Խաժակ Սրբազանը, այնուհետև հավաքվածներին դիմեց Վեհափառ Հայրապետը՝ ի մասնավորի ասելով. «Բարդ աշխատանք է, դժվարին աշխատանք է հավատավոր հոգի կերտելը, և մարդկային հոգում հավատ գետեղելը, Աստծո բնակարան հաստատելը ամենաբարդ և

ամենադժվարին աշխատանքն է: Այն առաջին հերթին պահանջում է կենդանի օրինակ և այդ կենդանի օրինակը նախ մենք՝ եկեղեցականներս պետք է ներկայացնենք մեր ժողովրդին: Որքան էլ քարոզենք, ինչ գրականություն էլ որ պատրաստենք, արդյունքը բավարար չի լինի և արդյունք չի տա, եթե չլինի կենդանի քարոզչությունը»:

Այնուհետև Ս. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը հանդես եկավ «Եկեղեցու և պետության հարաբերությունները» զեկուցմամբ, որին հաջորդեցին հարցերը և քննարկումը: Կարճ ընդմիջումից հետո Ս. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը ներկայացրեց «Ռուսահայոց առաջնորդական թեմը» բանախոսությունը, որին ևս հաջորդեց քննարկումը այս թեմայով:

Վեհափառ Հայրապետի գլխավորած շքախումբը երեկոյան Լոնկ-Այլնդի օդանավակայանից մեկնեց Բոստոն, ուր երեկոյան հանդիպեց տարբեր քոլեջներում սովորող երեք հարյուր հայ երիտասարդների հետ:

Հոկտեմբերի 6-ի առավոտյան Ուոթերթաունի Ս. Հակոբ եկեղեցի մուտք գործելով՝ Վեհափառ Հայրապետը օրհնեց այստեղ հավաքված հայ մանուկներին, այնուհետև եկեղեցուն կից սրահում հանդիպեց երիտասարդների հետ, ապա այցելեց հայ տարեցների տուն, ուր կատարեց Տնօրինների արարողություն, հանդիպեց և օրհնեց այստեղ բնակվող տարեցներին:

Երեկոյան Բոստոնի Ֆեյրմոնթ Քոփլի հյուրանցում տեղի ունեցավ ճաշկերույթ ի պատիվ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, որին մասնակցում էին շուրջ 350 հյուրեր: Միջոցառման հանդիսավարն էր Դոնալդ Թելալյանը:

Երեկոյթի ընթացքին Նորին Սրբությանը ողջունեցին Բոստոնի Հույն Ուղղափառ Եկեղեցու Մետրոպոլիտ Մեթոդիոսը, Հռոմեակաթոլիկ Եկեղեցու Բոստոնի թեմի կարդինալ Շոն ՕՄելլին և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ, ԱՄՆ Արևելյան թեմի Թեմական խորհրդի գանձապահ պրն Ջեյմս Գալուստյանը, ով հանդիսանում է Հովվապետական այցի կոմիտեի նախագահը, Նյու Ինգլանդ նահանգի՝ Հովվապետական այցի կազմակերպման տարածքային կոմիտեի նախագահ պրն Հայկ Դերանյանը: Իր խոսքում պրն Գալուստյանը նշեց. «Հայ քրիստոնեական ոգին և հոգին կենդանի են Ամերիկայի հայորդիների մեջ: Մենք ողջունում ենք Ձեզ և աղոթում, որ Տերը շարունակ Ձեզ շնորհի ուժ, իմաստություն և քաջառողջություն, որպեսզի իրականացնեք Տիրոջ կամքը հանուն մեր սիրեցյալ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Հայ Առաքելական Եկեղեցու և Ձեր սիրելի զավակների»:

Բոստոնի Հույն Ուղղափառ Եկեղեցու Մետրոպոլիտ Մեթոդիոսն իր հերթին գնահատանքի խոսքեր ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին և հորդորեց ներկաներին հավատարիմ մնալ սեփական ժառանգությանը, ավանդույթներին ու մշակույթին. «Հույն և հայ ժողովուրդներն իրենց մեծ ներդրումն ունեն համաշխարհային պատմության մեջ: Ես կցանկանայի, որ դուք չձուլվեիք ամերիկյան հնոցում, այլ շարունակեիք մնալ որպես հայկական խճանկարի մաս, որով մենք մեր նպաստն ենք բերում Ամերիկային՝ առանց կորցնելու մեր ինքնությունը»:

Կարդինալ Շոն ՕՄելին ևս իր բարեմաղթանքներն ուղղեց Նորին Սրբությանը՝ մասնավորապես ասելով. «Հայոց Կաթողիկոսը ոչ միայն ձեր հոգևոր առաջնորդն է, այլև ճանաչված է որպես հզոր կրոնապետ ողջ աշխարհում»: Կարդինալն իր խոսքում անդրադարձավ նաև միջեկեղեցական հարաբերություններին՝ հորդորելով հավաքվածներին աղոթել հանուն քրիստոնեական միասնության:

Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը իր խոսքում ասաց. «Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի ուսերին է հայոց պատմության, քրիստոնեական ժառանգության և ինքնության այսօրվա ողջ ծանրությունը: Մակայն փոխարեն լծի, Վեհափառ Հայրապետը ուրախ և խոնարհ սրտով կրում է այդ պատասխանատվությունը՝ բոլորիս կոչելով քրիստոսակենտրոն կյանքի»: Սրբազանը նշեց, որ Հայրենիքը և ողջ Սփյուռքը Հայոց Հայրապետի առաջնորդությամբ կարող են գործության, հոգևոր առաջնորդության և խոստովնալի ապագայի վստահություն ունենալ:

Այնուհետև ներկաներին իր պատգամն ուղղեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը. *«Մեր երկիրը և պատմությունը կրում են վկայությունը Աստծո խնամքի և հոգածության մասին: Մեծ ջրհեղեղից հետո Աստված Արարատ լեռան ստորոտում վերահաստատեց մարդկության կյանքը, և այդ նույն սրբազան վայրում Նա ուխտ կապեց արդար Նոյ նահապետի հետ՝ Աստծո և մարդու միջև առաջին ուխտը: Հետագային Աստված մեր ժողովրդին մեկ անգամ ևս շնորհեց Միածին Որդու Էջքը, և հայոց հողի վրա Իր ընտրյալ ազգի՝ առաջին քրիստոնյա ազգի համար հաստատեց աղոթքի Իր տունը»*, - իր խոսքում նշեց Նորին Սրբությունը:

Հոկտեմբերի 7-ի առավոտյան Հայոց Հայրապետը Ս. Պատարագ մատուցեց Քեմբրիջի (Մասաչուսեթ) Ս. Երրորդություն եկեղեցում: Ս. Պատարագի երգեցողությունը կատարեց Նյու Բնգլանդի շրջանի հայկական եկեղեցիների դպրաց դասը՝ խմբավարությամբ Խորեն Մեյխանիջյանի:

Հավարտ Ս. Պատարագի Նորին Սրբությունը իր գնահատանքը հայտնեց Տ. Վազգեն քին. Քուզույանին և եկեղեցուն նվիրեց մի սրբանկար:

Վեհափառ Հայրապետը Հայոց Եկեղեցու բարձրագույն՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրեց այս եկեղեցու սարկավագ, առաջնորդարանի Թեմական խորհրդի գանձապահ, Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Ջեյմս Գալուստյանին, որի բարերարությամբ կատարվել է Մայր Աթոռի հյուրատան վերանորոգությունը ի հիշատակ իր ծնողների:

Եկեղեցու շրջափակում զետեղված Հայոց Մեծ եղեռնի զոհերի հուշարձանի առջև Վեհափառ Հայրապետը աղոթեց ԴարՖուրի ցեղասպանության զոհերի համար:

Հայոց Հայրապետը ապա այցելեց ԱՄՆ հայոց Արևելյան թեմի ամենատարեց հոգևորականին՝ 99-ամյա Տ. Բաբկեն ավ. քին. Մագսուդյանին. Տեր Հոր քահանայության տարիներին և նրա նախաձեռնությամբ է կառուցվել Քեմբրիջի Ս. Երրորդություն եկեղեցին:

Նորին Սրբությունը երեկոյան նախ հանդիպեց Ամերիկայի հայկական գրադարանի և թանգարանի վարչության անդամների հետ, ապա տեղի ունեցավ հյուրասիրություն Հովվապետական այս այցելության կազմակերպիչների և Մայր Աթոռին

իրենց աջակցությունը բերող մի խումբ հայորդիների մասնակցությամբ:

Հոկտեմբերի 8-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսին հյուրընկալեց Հռոմեակաթուլիկ Եկեղեցու Բոստոնի թեմի արքեպիսկոպոս կարդինալ Շոն ՕՄելլին: Հանդիպմանը ներկա էին նաև քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ և Մասաչուսեթսի Եկեղեցիների խորհրդի անդամներ:

Մասաչուսեթսի Եկեղեցիների խորհուրդը բաղկացած է 17 Ուղղափառ և Բողոքական Եկեղեցիներից: Դիտորդի կարգավիճակով խորհուրդի աշխատանքներում մասնակցություն ունի նաև Կաթոլիկ Եկեղեցին:

Հանդիպմանը խորհրդի գործադիր տնօրեն Հայր Ջեք Ջոնսոնը ընթերցեց հետևյալ բանաձևը՝

«Մասաչուսեթս նահանգի Եկեղեցիների խորհուրդը հաստատապես ճանաչում է 1915 թ. ապրիլի 24-ից մինչև 1923 թ. տեղի ունեցած Հայոց ցեղասպանությունը, որի արդյունքում Օսմանյան Կայսրությունում 1.5 միլիոն հայեր բնաջնջման ենթարկվեցին, և Փոքր Ասիայում իրենց նախնյաց երկրից վտարվեց գրեթե ողջ հայ բնակչությունը: Հայոց եղեռնը նոր շրջանի պատմության առաջին ցեղասպանությունն էր, որը պետության քաղաքականությունն էր...

Մասաչուսեթսի Եկեղեցիների խորհուրդը վճռում է՝

1. Հակազդել և կշտամբել ցեղասպանությունը հերքողներին (անկախ այն հանգամանքից՝ դա արվում է ոճրագործությանը մասնակից լինելու, քաղաքական կամ որևէ կրթաթոշակ ստանալու նպատակներով, թե զուտ անտարբեր լինելու պատճառով) այն գիտակցությամբ, որ ցեղասպանության ցանկացած հերքում միայն կխրախուսի ապագայում ցեղասպանության փորձերը:
2. Հիշել Հայոց ցեղասպանության զոհ դարձածներին և աղոթել վերապրածների խաղաղության համար, աղոթել մշտապես, որպեսզի այս նոր դարում Աստված մարդկությանը մեկընդմիջտ ազատի ցեղասպանության արհավիրքից»:

Այնուհետև կարդինալ Շոն ՕՄելլին ողջունեց Նորին Սրբությանը՝ անդրադառնալով Կաթոլիկ և Հայ Առաքելական Եկեղեցիների ջերմ հարաբերություններին, վերհիշեց մի քանի հայ հոգևորականների այցը իր նստավայր, երբ ինքը նշանակվեց Բոստոնի արքեպիսկոպոս: Ապա կարդինալը իր խոսքն ուղղեց Հայոց Հայրապետին և հայոց թեմի առաջնորդին. «Ես ցանկանում եմ ևս մեկ անգամ փաստել, որ ճանաչում եմ Հայոց ցեղասպանությունը և այն տառապանքը, որ այն պատճառել է հայ ժողովրդին, ինչպես նաև ցանկանում եմ հայտնել, որ խրախուսում եմ Բոստոնում Հայոց ցեղասպանության հուշարձան կառուցելու ձեր ջանքերը»:

Հարկ է նշել, որ Մասաչուսեթսի իշխանությունները թույլատրել էին Բոստոնի Գրինվելյում կառուցել Հայոց ցեղասպանությանը նվիրված հուշարձան, սակայն 11 ժամ անց ընդունվեց մի որոշում, որը խափանեց այն:

Ի հիշատակ այս հանդիպման Հայոց Հայրապետը կարդինալ ՕՄելլին նվիրեց

մի ոսկեգոծ լանջախաչ:

Այս հանդիպումից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Հոլոքոստի զոհերին նվիրված հուշարձան՝ իր հարգանքի տուրքը մատուցելու Հոլոքոստի զոհերի հիշատակին: Ամենայն Հայոց Հայրապետին ուղեկցում էին Բրուքլինի Բեթ Ջիոն տաճարի հովիվ Ռաբբի Մոշե Ուոլդոկսը, Նյու Ինգլանդի լիգայի տարածքային ղեկավար Էնդրյու Տերսելը և ԱՄՆ Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը ծաղկեպսակ զետեղեց, ապա Նորին Սրբությունը և Ռաբբի Մոշե Ուոլդոկսը աղոթեցին նահատակների համար՝ աղերսելով Աստծուն, որ նման ոճրագործություններ այլևս տեղի չունենան ոչ մի ազգի կյանքում: Երկու հոգևոր առաջնորդները մտահոգություն հայտնեցին, որ այսպիսի դաժանությունների ճանաչումը, դատապարտումը և կանխումը լինի հաստատուն՝ իրենց մտահոգությունը հայտնելով հատկապես Դարֆուրի ժողովրդի համար, որի հանդեպ այժմ ցեղասպանություն է իրականացվում:

Ռաբբի Ուոլդոկսը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց այս համալիրի տարբեր մասերի բացատրությունը՝ նշելով, որ հրեաներն ունեն իրենց նշանակալի ներդրումը մարդկության պատմության և մշակույթի մեջ, և թե որքան հաճախ են նրանք արյունահեղության և անհանդուրժողականության զոհ դարձել:

Հոլոքոստի հուշարձանի տարածքում շրջելուց հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր զոհունակությունը հայտնեց պրն Էնդրյու Տերսելին՝ դատապարտելու համար բոլոր նրանց, ովքեր հրաժարվում են ընդունել Հայոց ցեղասպանությունը՝ բարոյապես աններելի նկատելով այդ մոտեցումը: Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց նաև Ամերիկայի հրեական համայնքի նախկին նախագահ պրն Ջեյմս Կոֆմենին՝ նրա ծավալած հումանիստական գործունեության համար:

«Մեզ համար մեծ պատիվ է, որ Նորին Սրբությունը եկել է հարգանքի տուրք մատուցելու Հոլոքոստի անմեղ զոհերի հիշատակին: Մենք բարձր ենք գնահատում Հայոց Հայրապետի կեցվածքը և ցանականում ենք, որ նա գիտենա, որ մենք նրա և հայ ժողովրդի հետ ենք. մի ժողովուրդ, որ տառապել է և 1915-1918 թթ. դաժան ցեղասպանության ընթացում 1,5 միլիոն զոհ է տվել», - ասաց պրն Կոֆմենը:

Քեմբրիջի Ս. Երրորդություն եկեղեցուն կից սրահում երեկոյան Վեհափառ Հայրապետի մասնակցությամբ կազմակերպված ընթրիքին մասնակցեցին Նյու Ինգլանդի շրջանի հայկական եկեղեցիների հոգևոր հովիվները, ծխական խորհուրդների անդամները և թեմական պատգամավորները:

Հոկտեմբերի 9-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորած պատվիրակությունը ժամանեց Վաշինգտոն: Օդանավակայանից քաղաք գնալիս Նորին Սրբությունը այցելեց Հաբիթաթի կողմից կառուցվող բնակարանները՝ կատարելով Տնօրինների արարողություն:

Երեկոյան Վաշինգտոնի Ս. Աստվածածին եկեղեցում տեղի ունեցավ «Հրաշափառի» արարողություն մասնակցությամբ քույր Եկեղեցիների բարձրաստիճան ներկայացուցիչների:

Լեփ-լեցուն դահլիճում բարի գալուստ մաղթելով Հայոց Հայրապետին՝ Խաժակ Սրբազանը շեշտեց, որ. «Ամենայն Հայոց Նորին Սրբությունը Ամերիկայի Արևելյան թեմը եկած է որպեսզի արտայայտե իր սերն ու հոգածությունը այս թեմի իր զուակներուն»:

Հավաքվածներին այնուհետև օրհնության ու գնահատանքի իր խոսքը բերեց Վեհափառ Հայրապետը:

**ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ
ՎԱՇԻՆԳՏՈՆԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ
«ՀՐԱՇԱՓԱՌԻ» ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ**

Գերաշնորհ, հոգեշնորհ և արժանապատիվ հոգևոր այրեր, հավատացյալ զավակներ Մեր և պատվարժան ներկաներ,

«Աստուած ընդ մեզ է» գոհաբանական աղոթքը Մեր շուրթերին, Հովվապետական այցով այսօր եկել ենք ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Վաշինգտոնի Սուրբ Աստվածածին եկեղեցի՝ Միաձնաէջ Սուրբ Աթոռից բերելու Ձեզ Մեր սերն ու օրհնությունը և ականատես դառնալու Ձեր հավատի գործերին: Նվիրական այս պահին Մենք գոհություն ու փառք ենք մատուցում Բարձրյալ Տիրոջը, որ ամենքիս միավորել է այս սուրբ հարկի ներքո և միասին լինելու ու միմյանցով զորանալու առիթը շնորհել մեզ:

Միրելիներ,

Մեր ժողովուրդը մշտապես անխախտ ու աներեր կերպով հավատացել է «Աստուած ընդ մեզ է» ճշմարտությանը: Այս հավատով Սուրբ Գրիգոր Լուսավորիչը տասներեք տարիներ ապրեց Խոր Վիրապում, այս հավատով Սուրբ Մեսրոպը արարեց հայոց գրերը, այս հավատով կառուցվեցին մեր վանքերը, ստեղծվեցին մեր մատյանները, քանդակվեցին խաչքարերը: Արդարև, «Աստուած ընդ մեզ է» հավատով է գրված մեր ողջ պատմությունը:

Մեր ժողովուրդը բազմաթիվ արհավիրքներ, հալածանքներ, պատերազմներ ու կոտորածներ է տեսել, բայց կարողացել է դիմակայել՝ ապավինելով Փրկչի օգնականությանը: Այս է վկայում նաև ամերիկահայ համայնքի պատմությունը: Առաջին հայերը, որ հաստատվեցին Ամերիկայի հյուրընկալ հողում, մազապուրծ էին Մեծ եղեռնից և տարագրված իրենց հայրենի հողից: Նրանք ոչինչ չունեին իրենց հետ, բացի իրենց հոգիներում ծրարած քրիստոնեական սուրբ հավատը, որ ուժ տվեց նրանց ապրելու և արարելու, նոր կյանք կերտելու Նոր Աշխարհում: Ձեր հայրերը իրենց սեպուհ պարտքը նկատեցին եկեղեցու կառուցումը և նրա հովանու ներքո հոգևոր ու ազգային կյանքի կազմակերպումը յուրաքանչյուր համայնքում, քանզի ճշմարտորեն գիտեին, որ մեր Սուրբ Եկեղեցին է, որ միավորում է մեզ ամենքիս ի Հայրենիս և ի Մփյուռս: Արդարև, «Ի վերայ Աջոյն և Սրբոյ Էջմիածնին ամենայն ազգս հայոց կապեալ կայ», - ինչպես վկայում է պատմիչը: Յուրաքանչյուր եկեղեցի՝ օծված Ս. Էջմիածնի սրբազնասուրբ մյուռոնով, իրավամբ դարձավ նոր Էջմիածին՝

շարունակելու Սուրբ Էջմիածնի աստվածատուր առաքելությունը ամերիկահայ համայնքի կյանքում: Դյուրությամբ չհիմնադրվեց այս թեմը, դյուրությամբ չկառուցվեցին եկեղեցիները, բայց հնարավոր եղավ, քանզի հայորդիք հավատացին, որ Եկեղեցուն ծառայել, եկեղեցուն օգտակար լինել նշանակում է ծառայել Աստծուն ու հարազատ ժողովրդին և մասնակցություն բերել Քրիստոսի փրկագործական առաքելությանը:

Միրելի զավակներ Մեր,

Ամերիկահայ համայնքում ակնհայտ են ազգային և հոգևոր կյանքի կազմակերպման գործում արձանագրված հաջողությունները, սակայն առկա են և բազմաթիվ մարտահրավերներ: Մենք մտահոգվելու բազմաթիվ առիթներ ունենք, սակայն մտահոգությունները ոչ թե հուսահատության, այլ առավել եռանդուն ծառայության պիտի առաջնորդեն մեզ: «Աստուած ընդ մեզ է» հավատով խանդավառ՝ ներդնենք մեր ջանքերը, որպեսզի մեր ժողովրդի զավակները կարողանան պահպանել իրենց բարոյական նկարագիրը, ընտանեկան սրբությունները և նախնիներից ժառանգած ազգային ու հոգևոր արժեքները, կարողանան ապրել որպես քրիստոնյա ժողովուրդ՝ մեր Մայր Եկեղեցու փրկարար առաջնորդությամբ: Ինչպես վկայված է դարերով, քրիստոնեական մեր հավատքը և այդ հավատով զորացած հայ ընտանիքն են եղել մեր ժողովրդի գոյատևության երաշխիքը: Այս նպատակով Մենք բարձրորեն գնահատում ենք ընտանեկան հարկերից ներս լուսավորչյան կանթեղի հավատասփյուռ լույսը գորավոր պահելու և հայ ընտանիքի ու Եկեղեցու միասնությունն ամրապնդելու աշխատանքները, որ նախանձնախնդրորեն իրականացվում են Արևելյան թեմում՝ «Եկեղեցի և տուն - մեկ հոգի դարձած» կարգախոսով առաջնորդված: Այս ուղղությամբ թող Ձեր աշխատանքները լինեն հետևողական և Տիրոջ օրհնության ներքո արգասավորվեն բարի արդյունքներով՝ ի պայծառություն մեր Եկեղեցու և ի բարօրություն բարեպաշտ մեր ժողովրդի:

Միրելիներ, ներկայի բազում մարտահրավերների կողքին այսօր Մենք ունենք մեկ առավելություն, որ չունեին մեր հայրերը՝ ազատ ու անկախ մեր Հայրենիքը, որ վերագարթոնքի շնչով կերտում է իր նոր կյանքը: Ուխտավորաբար այցելեք աստվածպարզ մեր Երկիրը, Սուրբ Էջմիածնում, Խոր Վիրապում, Գեղարդում ու մեր մյուս սրբավայրերում նորոգեք Ձեր ուխտն առ Աստված և զորացեք Տիրոջ օրհնությամբ: Ձեր տեսիլքներով ու երազներով իմաստավորեք ու գեղեցկացրեք Ձեր կյանքը և ավանդ բերեք Մայր Եկեղեցու ու Հայրենիքի շենագմանը:

Գոհունակ սրտով Հայրապետական Մեր օրհնությունն ու բարձր գնահատանքն ենք բերում ԱՄՆ հայոց Արևելյան թեմի բարեջան առաջնորդին՝ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանին, ծառայության մեջ դրսևորած աննվազ եռանդի ու արդյունաշատ գործունեության, ինչպես և Սուրբ Էջմիածնի նկատմամբ մշտապես տածած որդիական անխախտ սիրտ ու հավատարմության համար: Միրելի Մրբազան, թող Բարձրյալն Աստված հանապազ հովանի լինի Ձեզ և նորանոր հաջողություններ պարգևի առաջնորդական պատասխանատու առաքելության մեջ՝ ի փառս Իր Սուրբ Անվան և ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Մեր օրհնությունն ենք բերում նաև թեմական ու ծխական խորհուրդների հարգարժան անդամներին, եկեղեցականաց և դպրաց դասերին, Ազգային կրթօջախների ու միությունների պատասխանատուներին և Արևելյան թեմի սիրեցյալ մեր բոլոր զավակներին:

Քերկրաշատ հոգով և ի Քրիստոս սիրով ողջունում ենք այստեղ ներկա ԱՄՆ պետության, քույր Եկեղեցիների, եկեղեցական և կրոնական հարանվանությունների ներկայացուցիչներին: Թող բարին Աստված մշտապես հովանի և օգնական լինի Ձեզ և հաջողություններ պարգևի Ձեր առաքելության մեջ:

Ի խորոց սրտի մաղթում ենք, որ Բարձրյալն Աստված Իր Ամենագոր Աջի հովանու ներքո պահպանի Միացյալ Նահանգները և հանապազ օրհնությամբ գորացնի ու շնորհագարդի ձեզ ամենքիդ՝ առաջնորդելով եկեղեցաշեն և աստվածահաճո նորանոր գործերի:

Մերն իմ ընդ ամենեսին ձեզ ի Քրիստոս Յիսուս. Ամեն:

Արարողությունից հետո, ի հիշատակ այս հանդիպման, Նորին Սրբությունը եկեղեցուն նվիրեց մի սրբանկար:

Երեկոյան ի պատիվ Հայոց Հայրապետի ընդունելություն էր կազմակերպվել Իտալիայի դեսպանատանը: Ընդունելությանը ներկա էին տարբեր դեսպանատների ներկայացուցիչները, հայ համայնքի անդամներ, ինչպես նաև Հայաստանում ԱՄՆ նախկին դեսպան Ջոն Էվանսը:

Բարիգալստյան իր խոսքում ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Թաթուլ Մարգարյանը ասաց, որ իր համար մեծ պատիվ է ողջունել Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Խոսք ասաց նաև այս ընդունելությունը կազմակերպած Բորիս Ղազարյանը: Հավաքվածներին այնուհետև իր օրհնության և գնահատանքի խոսքը բերեց Գարեգին Երկրորդը:

Հոկտեմբերի 10-ին ԱՄՆ 110-րդ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի նիստը բացվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի աղոթքով: Նորին Սրբությունը հրավիրված էր Ներկայացուցիչների պալատ ԱՄՆ հայոց Արևելյան թեմ Հովվապետական այցի շրջանակներում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսին կոնգրեսականներին ներկայացրեց ԱՄՆ Կոնգրեսի խոսնակ Նենսի Փելոսին (Կալիֆոռնիա):

Կոնգրեսում հնչեցրած իր աղոթքում Վեհափառ Հայրապետը մասնավորապես ասաց. «Տե՛ր, գոհություն ենք հայտնում Քեզ, որ շնորհեցիր մեզ այսօր աղոթելու այս ազգի առաջնորդների համար, ովքեր ջանում են հանուն աշխարհում ազատության և արդարության հաստատման: Ավելացրու նրանց իմաստությունն ու վճռակալությունը: Նրանց գործերը ոգեշնչում և իրագործում են շնորհում յուրաքանչյուրի սրտում ապրող ձգտմանն արդարության: Հա՛յր մեր, որ երկնքում ես, առաջնորդիր բոլոր ազգերին, Հայաստանի Հանրապետությանը՝ մեր Հայրենիքին, և մեր հավատի հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

Մենք հիշում ենք Հայոց ցեղասպանության զոհերին, ցեղասպանություն, որի հետևանքները դեռևս ապրում է ողջ աշխարհը ցեղասպանության նորանոր դրսևորում-

ներով: Հանգստություն շնորհիբ մարդկության դեմ գործած ոճիրների բոլոր զոհերի հոգիներին և նրանց հետնորդներին խաղաղություն ու արդարություն պարգևիր: Կանգնեցրու նրանց, ովքեր ոտնահարում են կյանքը, ազատությունը և երջանկության փնտրտուքը:

Տե՛ր, օրհնիր այս երկիրն ու ժողովրդին: Խաղաղություն և ապահովություն շնորհիբ Ամերիկայի զավակներին, ովքեր իրենց ազգին ծառայում են արտասահմանում...»:

Նիստի բացումից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ տիկին Նենսի Փելոսիի հետ: Ի դեմս Կոնգրեսի խոսնակի՝ Նորին Սրբությունը իր գնահատանքը հայտնեց ԱՄՆ իշխանություններին հայ համայնքի նկատմամբ ցուցաբերվող հարգանքի և հոգածության համար, որի շնորհիվ ամերիկաբնակ հայորդիները հնարավորություն ունեն ազատորեն դավանելու իրենց քրիստոնեական հավատը: Նորին Սրբությունը խոսեց նաև Միացյալ Նահանգների՝ Հայաստանին ցուցաբերած օգնության մասին՝ նշելով, որ այն մեծապես նպաստել է Հայաստանի վերակառուցմանը, և հատկապես ընդգծելով Միացյալ Նահանգների մեծ ջանքերը՝ ուղղված Հարավկովկասյան տարածաշրջանում կայուն և ապահով միջավայրի հաստատմանը: Հանդիպման վերջում Նորին Սրբությունն իր երախտագիտությունը հայտնեց Նենսի Փելոսիին և մյուս կոնգրեսականներին, ովքեր հանձն են առել տեղեկացնել և հասնել Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչմանը:

Նույն օրը Կոնգրեսի Արտաքին գործերի հանձնաժողովը ընդունեց թիվ 106 բանաձևը, որով ճանաչեց Հայոց ցեղասպանությունը:

Այնուհետև ի պատիվ Վեհափառ Հայրապետի ընդունելություն կազմակերպվեց ԱՄՆ-ում ՀՀ դեսպանատանը: Ընդունելությանը ներկա էին տարբեր երկրների բազմաթիվ դիվանագետներ:

14.00-ին Վեհափառ Հայրապետը նախ այցելեց Ողջակիզման թանգարան, ապա և Հայոց ցեղասպանության թանգարան, ուր կատարեց Տնօրինների արարողություն:

Երեկոյան Վաշինգտոնի Ս. Աստվածածին եկեղեցում կատարվեց երեկոյան ժամերգություն՝ հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Հայրապետի: Արարողության ավարտից հետո եկեղեցուն կից սրահում տեղի ունեցավ ընդունելություն, որի ժամանակ գեղարվեստական հայտագրով հանդես եկավ Նարեկի Զանգակներ համույթը (գեղարվեստական ղեկավարը Լևոն Հիջա-Էյնաջյան):

Հոկտեմբերի 11-ի առավոտյան Հայոց Հայրապետը այցելեց Արլինկթոնի Ազգային գերեզմանոց և աղոթեց ու ծաղկեպսակ դրեց անհայտ զինվորի շիրիմին:

Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակությունը այստեղից ուղևորվեց Ջեֆերսոնի հուշահամալիր, ուր քույր Եկեղեցիների ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցավ «Կրոնի ազատությունը» թեմայով համաժողով:

Հանդիսության բացման աղոթքը ասաց Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը՝ ողջունելով քույր Եկեղեցիների ներկայացուցիչներին, կոչ անելով համագործակցության, հանդուրժողականության, սիրո և փոխըմբռնման բոլոր ժողովուրդների միջև:

Այնուհետև խոսք ասացին նաև Եպիսկոպոսական եկեղեցու կառավարական

հարաբերությունների վարիչ Մորին Շեան, Միջկրոնական կազմակերպությունից՝ դոկտ. Վելտին Յերտին, «Խղճմտանքի կոչ» հիմնարկից՝ րաբբի Արթուր Շնայրերը, Հնդիկների Սիկի խորհրդից՝ դոկտ. Բաժուան Սինդը, Հյուսիսային Ամերիկայի իսլամական ընկերությունից՝ դոկտ. Տայիտ Սիիտը, Վաշինգտոնի Հռոմեական կաթոլիկ արքեպիսկոպոսարանից՝ Մարտին Էպս. Հալին, Կրոնական կենտրոնից՝ րաբբի Դեյվիդ Սաբերսթայնը և ԱՄՆ Ուղղափառ Եկեղեցուց՝ Լեոնիդ Քելկովսկին:

Այս հավաքին Հայրապետական իր պատգամը բերեց և Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ասելով. *«Մեզ համար ուրախություն է այսօր գտնվել այստեղ՝ Վաշինգտոնի մեջ, Միացյալ Նահանգների երրորդ նախագահ, հիմնադիր հայր, անկախության հռչակագրի հեղինակ և Կրոնի ազատության Վերջինիայի օրենքի ճարտարապետ Թոմաս Ջեֆերսոնին ի պատիվ կառուցված այս հուշարձանի առջև: Ուրախ ենք, որ այսօր մեզ հետ են միջեկեղեցական և միջկրոնական կազմակերպությունների մեր եղբայրները, ովքեր ներկայացնում են քրիստոնեական տարբեր Եկեղեցիներ և կրոններ: Ողջույններ և բարեմաղթանքներ ենք բերել Ձեզ մեր հավատքի կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից: Միացյալ Նահանգների Արևելյան թեմին տված մեր Հայրապետական այցելության առիթով փափագեցինք այցելել այս երկրի մայրաքաղաքը, հանդիպել մեր համայնքի անդամներին և մեր գնահատանքը հայտնել Ամերիկյան ժողովրդին և կառավարությանը»:*

Վեհափառ Հայրապետը իր խոսքը ավարտեց՝ հիշելով Թովմաս Ջեֆերսոնի հետևյալ խոսքերը. «Ես կնախընտրեմ ապագայի տեսիլքները, քան անցյալի պատմությունը», ապա ավարտեց «Աղոթենք, որպեսզի աշխարհը լցվի տեսիլքներով»:

Օրվա երկրորդ կեսին Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակությունը ժամանեց Շարլոթ: Այստեղ երեկոյան 17.30-ին տեղի Ս. Սարգիս եկեղեցու սրահում Վեհափառ Հայրապետը հանդիպեց եկեղեցու հովվի, ծխական խորհրդի անդամների, թեմական պատգամավորների և Հովվապետական այցելության հանձնախմբի անդամների հետ:

Հոկտեմբերի 12-ի առավոտյան Հայոց Հայրապետը հանդիպեց Շարլոտի Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու եպիսկոպոս Պիտր Ջուկիսի հետ, որից հետո տեղի ունեցավ միջեկեղեցական աղոթքի արարողություն:

Կեսօրից հետո Հայոց Հայրապետը «Հրաշափառով» մուտք գործեց Շարլոտայի Ս. Սարգիս նորակառույց եկեղեցին՝ օրհնության և գնահատանքի Իր խոսքը բերելով հավաքված հավատացյալ հայորդիներին:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ «ՀՐԱՇԱՓԱՌԻ» ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ**

(12 հոկտեմբերի 2007 թ.)

*«Յերգս օրհնութեան եւ ի ձայն սաղմոսաց
անդադար փառաւորենք զՀայր եւ զՈրդի եւ
զՍուրբ Հոգիդ»:*

(Ժամագիրք)

Գոհաբանական աղոթքը մեր շուրթերին, սաղմոսով և օրհներգությամբ փառավորում ենք Աստծուն, որ պարզևեց Մեզ՝ Հայրապետական այցելությամբ վերստին լինելու Ամերիկայի օրհնյալ երկրում և առաջին անգամը լինելով այցելել Շառլոտ քաղաքի Ս. Սարգիս եկեղեցի՝ հանդիպելու ձեզ և միասին ապրելու աղոթական օրեր:

Ողջույն ենք բերել ձեզ մեր Հայրենիքից, ձեր եղբայրներից ու քույրերից, բերել ենք ձեզ օրհնությունը մեր նվիրական սրբավայրերի, սերն ու օրհնությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, աստվածապարզ մեր նվիրական սրբօրրանի: Հիբավի, Աստված պարզևեց մեզ Սուրբ Էջմիածինը, որպեսզի նրա լույս խորանից ճառագող օրհնությամբ միշտ պայծառ մնա հավատը մեր ժողովրդի և մեկ ու անբաժան, հար միաբան՝ աշխարհասփյուռ ազգս հայոց:

Հայրապետիս հոգին լեցուն է նվիրական զգացումներով և գոհաբանական աղոթքով, քանզի տեսնում ենք ձեզ այսպես միասնական ու համախումբ այս նորաշեն, լուսախինդ Ս. Սարգիս եկեղեցու մեջ, որ կառուցեցիք ձեր հավատով և զոհողություններով, որպեսզի աղոթքի Տան կամարների ներքո վայելեք Աստծո շնորհները, պահպանեք ձեր ազգային կյանքն ու մշակութային արժեքները:

Տարիներ առաջ այս Տունը երազ էր, ծրագիր և մտահաղացում միայն: Վերջին երեք տարիներին, սակայն, դուք այդ երազը իրականություն դարձրեցիք շնորհիվ ազգային մեծ բարերարի՝ լուսահոգի Սարգիս Հակոբյանի, ով մեծ վաստակ ունի ազգային մեր կյանքում՝ այս եկեղեցիով, Հայրենիքում կառուցված Ս. Հակոբ և Ս. Մեսրոպ եկեղեցիներով, բազում բարերարություններով, որոնք որպես վկայություններ նրա հավատավոր, ազնիվ ու արդար հոգու, ծառայում են մեր ժողովրդին:

«Երանի եկեղեցի շինողաց». մեր հայրերի այս աղոթքով հիշենք հոգեւորյս բարերարին և բոլոր եկեղեցասեր բարերարներին, որ վարձք ունեն Աստծո մոտ:

Մենք գնահատում ենք ձեզ և մեր օրհնությունը բերում աստվածահաճ ձեր ձեռնարկներին: Այստեղ հաստատված ձեր պապերի ու հայրերի օրհնակով շարունակեք արարել աստվածապարզ ջերմեռանդ սիրով. սեր՝ Եկեղեցու և ազգի հանդեպ, ընտանիքի ու բարեկամի հանդեպ, Ամերիկայի ու Հայաստանի հանդեպ, մեր ժառանգության ու ավանդների հանդեպ և բոցավառ սեր առ Աստված, որ «ոչ երբեք անկանի»:

Աստվածային մաքրամաքուր սերը, որ երբեք չի սպառվում, միավորում և զորացնում է քրիստոնյաներիս իր սրբազան շնորհներով՝ շարունակելու մեր առաքելությունը միաբան և միախորհուրդ: Աստվածային սիրո այդ անսպառ աղբյուրից բխող հանապազ օրհնությունը ձեր նորակազմ համայնքին քաջություն և ուժ պիտի հաղորդի, որպեսզի Ս. Սարգսի բարեխոսությամբ այս հրաշակերտ եկեղեցու խորանից ճառագող կենդանարար լույսը մշտավառ պահեք, որով պիտի լուսավորվի Ձեր և ձեր զավակների կյանքի ուղին, «փարատվի մեզը տարակուսանքի և ցրվի խավարը թերահավատության»: Հավատացե՛ք, արագահաս Սուրբի անդադրում բարեխոսությամբ և ձեր աղոթքով ու ջանքերով այս եկեղեցին պիտի դառնա հավատի նվիրական տուն, ուր պիտի կանգնեք աղոթքի Աստծո առաջ և Աստծո օրհնությամբ՝ դուք և ձեր զավակները և ձեր զավակների զավակները երգով օրհնության և

սաղմոսների ձայնով փառավորեք ամենասուրբ երրորդությանը՝ Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն:

Գիտենք, որ հայապահպանության ճամփան դուրսին չէ՝ դժվարին է և պահանջում է անձնագոհ նվիրում: Մակայն հոգու վկայությամբ հավատում ենք, որ մեր սրբազնասուրբ հայրերի բարեխոսությամբ Տեր Աստված ձեզ գորավիզ ու մարտակից կլինի աստվածահաճո ձեր կյանքի, ազգաշեն ու եկեղեցաշեն ձեր առաքելության ճանապարհին:

Մեր սրտի փափագն է, որ ձեր հոգու հայացքը միշտ սկսված լինի Մայր Հայրենիքին և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, որ Ս. Սարգիս զորավարի նման, ում անունն է կրում այս սրանչելի եկեղեցին, զինավառվեք հավատքով, որպեսզի դիմակայեք կյանքի բոլոր մարտահրավերներին և շարունակեք ապրել մեր լույս հավատքի կենդանարար գորությամբ և հայրենական ավանդներով:

Աղոթքի այս նվիրական պահին երախտագիտության Մեր խոսքն ենք ուղղում Միացյալ Նահանգների իշխանություններին, որոնց ազնիվ վերաբերմունքի ներքո մեր ժողովուրդը ազատ է ապրելու և արարելու, իր հոգևոր և ազգային կյանքը կառուցելու: Մեր աղոթքն է, որ Տերը միշտ խաղաղության ու բարօրության մեջ պահպանի Միացյալ Նահանգները և նրա աստվածասեր ժողովրդին:

Հայրապետական օրհնությամբ Մեր բարձր գնահատանքն ենք բերում Ձեզ, սիրելի Սրբազան, հայոց Արևելյան տիրախնամ թեմում ծառայող հոգևոր սպասավորներին և բարեպաշտ ողջ ժողովրդին: Հայցում ենք Տիրոջից, որ պարզևի ձեզ կյանքի երջանիկ ու երկար օրեր և արդյունավորի ձեր եկեղեցաշեն և ազգանվեր ծրագրերը, արդար ու բարի բոլոր գործերը:

Շնորհք, սեր և խաղաղություն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեսեան. Ամեն:

Արարողության ավարտից հետո ի պատիվ Վեհափառ Հայրապետի ընդունելություն կազմակերպվեց եկեղեցուն կից Սարգիս և Պապի Հակոբյան սրահում:

Հոկտեմբերի 13-ին Վեհափառ Հայրապետը ժամանեց Մեյթն-Փիթերզպուրկ, ուր Նորին Սրբությանը դիմավորելու էին եկել շրջանի հոգևորականները, Ս. Հակոբ եկեղեցու ծխական խորհրդի անդամները, դպրոցականներ և բազմաթիվ հայորդիներ:

Երեկոյան ժամը 19.30-ին նորին Սրբությունը Դոնբացեքի արարողությամբ մուտք գործեց Ս. Հակոբ եկեղեցի, ուր Նորին Սրբությանը բարիգալստյան խոսքով դիմեց Խաժակ Սրբազանը՝ ի մասնավորի ասելով. «Այսօր մենք ականատես կըլլանք հրաշքի մը իրագործման: Իրապես հրաշք մըն է, որովհետեւ տասը ամիս առաջ այս եկեղեցիին վայրը գեղեցիկ հողի շերտ մըն էր՝ գնումս տեսլապաշտ ծխականներու կողմէ՝ ապագային եկեղեցի մը կառուցելու մտադրությամբ: Աստուծոյ հաւատքը իրենց սրտերուն մէջ՝ ծովի հաւատաւոր եւ նուիրեալ անդամները ամեն զոհողութիւն յանձն առնելով տասը կարճատեւ ամիսներու ընթացքին կառուցին այս գեղեցիկ եկեղեցին, որուն Դոնբացեքի արարողութիւնը կատարեց Ամենայն Հայոց Սրբազնագոյն Կաթողիկոսը»:

Հավաքվածներին այնուհետև գնահատանքի և օրհնության իր խոսքն ուղղեց Հա-

յոց Հայրապետը՝ ասելով. «Այս օրը մեզ համար պատրաստված է Տիրոջ կողմից: Եկեք ցնծանք, ուրախանանք այս օրը: Միրելի բարեպաշտ զավակներ մեր, Հովվապետական մեր երկրորդ այցն ենք կատարում Միացյալ Նահանգների Արևելյան թեմ: Եկել ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնից, եկել ենք, որպեսզի այս օրը, աստվածապարզն այս օրը, կատարյալ լինի մեր ուրախությունը: Հայրապետ և հավատացյալ հոտ, եպիսկոպոսներ, հոգևորականներ միասին աղոթքով բանանք դռները նորակառույց այս եկեղեցու, որ Աստծո պարզն է այստեղ ապրող մեր զավակներին: Փառք և գոհություն Աստծուն, որ վերագարթոնքի նոր շրջան է բացել մեր ժողովրդի համար»:

Դոմագեքի արարողությունից հետո եկեղեցուն կից սրահում տեղի ունեցավ ընդունելություն, որի ընթացքում ներկաները համբուրեցին Վեհափառի աջը՝ ստանալով Հայոց Հայրապետի օրհնությունը:

Հոկտեմբերի 14-ին տեղի ունեցավ նորակառույց Ս. Հակոբ եկեղեցու օծումը՝ ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Հայրապետական Ս. Պատարագը մատուցվեց առընթերակայությամբ Տ. Խաժակ և Տ. Վիգեն արքեպիսկոպոսների, որոնք կատարեցին նաև օծումը եկեղեցու որմերին զետեղված խաչքարերի:

Ս. Պատարագի երգեցողությունը կատարեց Ս. Հակոբ եկեղեցու դպրաց դասը՝ ղեկավարությամբ Նյու Յորքի Ս. Վարդան Մայր Տաճարի դպրապետ, խմբավար Խորեն Մեյխանիջյանի, որն եկել էր հատուկ այս առիթով:

Հընթացս Ս. Պատարագի հավաքվածներին օրհնության և գնահատանքի իր խոսքը բերեց Վեհափառ Հայրապետը.

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ ՖԼՈՐԻԴԱՅԻ Ս. ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՌԻԹՈՎ
 (16 հոկտեմբերի 2007 թ.)

*«Զմի խնդրեցի ի Տեառն էւ զսոյն աղաչեմ,
 բնակել ինձ ի տան Տեառն զամենայն աւուրս
 կենաց իմոց»*

*«Մի բան խնդրեցի Տիրոջից և նույնն եմ ա-
 դաչում, որ կյանքիս բոլոր օրերին բնակվեմ
 Տիրոջ Տանը»:*

(Սղմ. ԻԶ 4)

Միրելի Սրբազան,

Միրելի հավատավոր զավակներ մեր Սուրբ Եկեղեցու,

Այս պահին ցնծություն ու բերկրանք է ապրում Հայրապետիս հոգին և գոհությոն ու փառք է վերառաքում առ Բարձրյալն Աստված, որ այս բարեպատեհ առիթը պարզնեց Հովվապետական Մեր երկրորդ այցելությամբ բերելու Միածնաէջ Մայր

Տաճարի և Արարատյան Հայոց հողի քրիստոսաշող լույսն ու օրհնությունը Միացյալ Նահանգներում ապրող բարեպաշտ զավակներին:

Կրկնակի է Մեր ուրախությունը, քանզի տոնախմբում ենք Ամերիկայի Միացյալ Նահանգների Սուրբ Պիտսբուրգ քաղաքում հավատքի տան՝ նորակառույց Սուրբ Հակոբ եկեղեցու օծումը: Այսպիսի իրադարձությունները քաջալերություն են մեր կյանքում՝ ընթանալու դեպի մեր հույսերի և տեսիլքների մարմնավորում, դեպի եկեղեցաշեն ու հայրենանվեր նոր ծրագրերի իրագործում:

Տոնական այս ուրախ առիթով Հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք բերում ամենքին և հայցում, որ Բարձրյալն Աստված Ամենախնամ Իր Աջի ներքո խաղաղ ու ապահով, սիրով միաբան և պայծառացյալ պահպանի Միացյալ Նահանգների հայոց Արևմտյան թեմը, Սուրբ Հոգու շնորհներով զարդարյալ ու զորացյալ պահի Ձեզ, սիրելի Սրբազան, ծառայասեր բոլոր հոգևորականներին, վարչական մարմինների բարեջան բոլոր անդամներին և համայն բարեպաշտ մեր ժողովրդին ի Միացյալ Նահանգս:

Այս մաղթանքով ենք շրջում հարյուր տասը տարիների էջերը՝ անդրադառնալու համար այն պատմական օրվան, երբ երջանկահիշատակ Խրիմյան Հայրիկ Հայրապետը Սրբատառ Կոնդակով հաստատեց հայոց Արևելյան թեմը: Մխիթարություն էր Հայոց Հայրիկի և համայն հայության համար Նահանգներում թեմի հռչակումը: Հայոց դեմ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Օսմանյան Թուրքիայում իրականացվող հալածանքների և կոտորածների հետևանքով հայրենի դարավոր երկրից որբացած, գաղթականության ճամփան բռնած հայերը Աստծո օգնականությամբ ապաստան ու ապահովություն գտան Միացյալ Նահանգներում: Իրենց ջանքերի շնորհիվ, Աստծուն ապավինած՝ ձևավորեցին համայնքային կյանք, կառուցեցին եկեղեցիներ, մշակութային ու կրթական հաստատություններ՝ ապրելու համար սերնդե սերունդ հայրերի հավատով ու աղոթքով՝ «Զմի խնդրեցի ի Տեառնէ եւ զսոյն աղաչեմ, բնակել ինձ ի տան Տեառն զամենայն աւուրս կենաց իմոց»: Արևելյան թեմը հաստատվում էր որպես հայոց վերածննդի վկայություն: Մկրտիչ Ա Խրիմյան Հայոց Հայրապետը հռչակում էր հայ ժողովրդի ապրելու հավատը, առ Աստված հույսով հառնելու, ստեղծելու և արարելու ուժը, հավատարմությունը՝ հայրերի վառ հավատին ու հայրենյաց սրբություններին:

Փառք և գոհություն Երկնավոր Հորը. հարյուր տասը տարիներ առաջ սկզբնավորված առաքելությունն այսօր բարի արդյունքներով շարունակվում է: Այսօր դուք, սիրելի բարեպաշտ ժողովուրդ, Ձեր հայրերի օրինակով, նվիրումով ու սիրով կառուցել եք ձեր եկեղեցին, որի կողքին հառնելու են դպրոցն ու ազգային հաստատությունները, որոնք՝ բազմապատկված ու զորացած, պիտի շարունակեն անմար պահել լուսավորչյան հավատո կանթեղի լույսը և մեր հայրերի սրբազան ժառանգությունն ու մշակութային ավանդները: Ահավասիկ, այսօր շնորհապարզն Սուրբ Մյուռոնով օծեցինք Սուրբ Հակոբ Հայրապետի անունը կրող եկեղեցու սրբազան Խորանը և տասնվեց սյունները՝ վերստին հնչեցնելով մեր ժողովրդի շուրթերին դաբերով ապրած սաղմոսերգուի խոսքը. «Մի բան խնդրեցի Տիրոջից և նույնն եմ աղաչում, որ կյանքիս բոլոր օրերին բնակվեմ Տիրոջ Տանը»: Թող Բարձրյալն Աստված Ե-

կեղեցու խնկաբույր այս հարկը միշտ պահի անսասան և լեցուն բարեպաշտ ու աղոթասեր մեր զավակներով:

Սիրելի Սրբազան, հավատավոր բարեպաշտ զավակներ Մեր, այսօր Մենք հոգու քաջալերությամբ բարձր գնահատանքով ենք անդրադառնում, որ դուք որդիական սիրո նախանձախնդրությամբ ձեր ջանքերն եք բերում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պայծառությանը և մեր Հայրենիքի ազատ նոր կյանքի կառուցմանը: Ձեր աջակցությամբ ու ներդրումներով Հայաստանում և Արցախում իրականացվում են հոգևոր-կրթական, տնտեսական ու մշակութային կյանքի բարելավման ուղղված բազմաթիվ ծրագրեր, որոնք ծառայելով երկիր հայրենին շենացնելու ձեր նվիրումին՝ զորացնում են նաև մեր բոլորի հավատը՝ շուտով մարմնավորված տեսնելու մեր հույսերն ու իդեալը: Հայրենի անկախության և հայ կյանքի այս հուսառատ օրը երազն էր մեր հայրերի:

Պատարագի սրբազան խորհրդով, սիրելիներ, աղոթք բարձրացնենք երկինք հոգիների համար երջանկահիշատակ Խրիմյան Հայրիկ Հայոց Հայրապետի, Արևելյան թեմի հոգևոր կյանքը առաջնորդած շնորհազարդ եկեղեցականների, որոնց շարքում են երջանկահիշատակ Գարեգին արքեպս. Հովսեփյանը, Տիրան արքեպս. Ներսոյանը և Սիոն արքեպս. Մանուկյանը, ովքեր բազում երախտիք են թողել մեր Եկեղեցու անդաստանում: Աղոթենք շնորհով լի, եկեղեցասեր ու ազգասեր հոգեւորյա բոլոր զավակների համար մեր ժողովրդի, որ ծառայեցին տիրախնամ թեմի պայծառությանը, մեր Սուրբ Եկեղեցուն ու Հայրենիքին: Աղոթենք բարեջան Ձեր Առաջնորդի և եկեղեցական սպասավորների համար, ովքեր բերում են ամեն ջանք ու նվիրում, անմնացորդ սեր ու նախանձախնդրություն՝ խնամելու և պայծառ պահելու հոգևոր և ազգային կյանքը թեմում, շարունակելու հայրերի ավանդները:

Հայրական Մեր պատգամն է, որ սիրով միաբան մեր Եկեղեցու հոգևոր հարազատ տան մեջ զորանաք հավատով և ազգասեր ու հայրենասեր նույն ոգով ու նվիրումով շարունակեք ձեր ընթացքը՝ Բարի գործերով զարդարելով համայնքային կյանքը, որպեսզի մեր զավակներին անկորուստ փոխանցեք առ Աստված հույսն ու ապավինությունը, հայրենի հիշատակներն ու սրբությունները, որպեսզի սերունդներն ապրեն հայրերի օրինակով և առ Աստված անդադրում հայցով՝ «նույնն եմ առաջում, որ կյանքիս բոլոր օրերին բնակվեմ Տիրոջ Տանը»: Տիրոջով օրհնյալ ու արգասավոր՝ մեր ժողովուրդը պիտի շարունակի իր քրիստոնեական առաքելությունը, ազգերի կողքին՝ հանուն խաղաղ ու բարօր աշխարհի:

Պատարագի այս նվիրական պահին բերկրաշատ հոգով Հայրապետական Մեր օրհնությունը և ի Քրիստոս սիրո եղբայրական մեր ողջույնն ենք բերում այստեղ ներկա Միացյալ Նահանգների իշխանությունների և մեր քույր Եկեղեցիների ներկայացուցիչներին՝ քաջառողջ կյանքի և Բարի գործոց հաջողությունների մաղթանքով:

Աղոթում ենք, որ Ամենախնամ Աստված խաղաղ պահի Միացյալ Նահանգները, բարօր ու երջանիկ՝ նրա մեծահոգի ժողովրդին, ձեզ բոլորիդ, սիրելիներ, և Իր շնորհների ներքո միշտ շեն ու պայծառ պահպանի Ամերիկայի հայոց Արևելյան թեմը:

Թող Տերը օրհնի մեր Հայրենիքի նոր կյանքը, մեր ժողովրդի արդար հույսերն ու ընթացքը:

Ողջ լերուք ի Տէր զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւետ օրհնեալ ի մէնջ. Ամէն:

Հավարտ Ս. Պատարագի Վեհափառ Հայրապետը նորած եկեղեցուն նվիրեց մի սկիի և «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրեց Ս. Հակոբ եկեղեցու գլխավոր կնքահայր Կրեկրի Էքիզյանին:

Երբ Նորին Սրբությունը եկեղեցուց դուրս եկավ, ճերմակ աղավնիներ արձակվեցին երկինք՝ ի նշան խաղաղության և բոլորին համակած ուրախության:

Կեսօրին տեղի ունեցավ համայնքային ճաշկերույթ, որի ընթացքում նախ սրտի խոսք ասացին Ս. Հակոբ եկեղեցու ծխական խորհրդի ատենապետ Արսեն Պայանտրյանը և Կրեկրի Էքիզյանը, ապա բարիգալստյան խոսքով Վեհափառ Հայրապետին դիմեց Խաժակ Սրբազանը: Գնահատանքի իր խոսքում Հայոց Հայրապետը շեշտեց, որ եկեղեցին կառուցում ենք առաջին հերթին Աստծուն փառք տալու և Տիրոջ օրհնությունները ստանալու և պատվիրանները պահելու ու հետևելու համար և երկրորդ՝ եկեղեցու միջոցով պահելու մեր ազգային ինքնությունը:

Հոկտեմբերի 15-ի առավոտյան Նորին Սրբությունը Հայրապետական շքախմբով ժամանեց Ֆլորիդայի Բոքա Ռաթոն շրջան:

Վեհափառ Հայրապետը այստեղ նախ հանդիպեց Ս. Էջմիածնի բարեկամների հանձնախմբի անդամների հետ, ապա այցելեց Ս. Դավիթ եկեղեցու Ալեք և Մարի Մանուկյան վարժարանը, որից հետո հանդիպում տեղի ունեցավ երիտասարդության հետ:

Երեկոյան 19.00-ին Գարեգին Բ Կաթողիկոսը «Հրաշափառով» առաջնորդվեց Ս. Դավիթ եկեղեցի: Թեմակալ առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանի բարիգալստյան խոսքից հետո հավաքվածներին Հայրապետական իր գնահատանքը ուղղեց Վեհափառ Հայրապետը՝ ասելով. «Մենք տեսանք, սիրելիներ, որ դուք և ձեր հայրերը առ Աստված նույն հավատարմությամբ և առ հայրենին նույն սիրով ապրել և շենացրել եք ձեր կյանքը հեռավոր Միացյալ Նահանգներում: Վկա՝ ձեր եկեղեցիները, որոնք խոսում են ձեր՝ առ Աստված ունեցած հավատի մասին, որից ոչինչ կարողացել է շարժել, ոչ մի դժվարություն, ոչ մի նեղություն, ոչ մի ցավ ու տառապանք: Քրիստոսով դուք հաղթանակել եք, Քրիստոսով դուք կառուցել եք, շենացրել ազգային ու հոգևոր ձեր կյանքը: Ձեր հավատքի բարի պտուղներն են այն ամենը, ինչ որ տեսանք Հովվապետական մեր այցելության ընթացքին Միացյալ Նահանգների յուրաքանչյուր ծուխ: Քիչ առաջ մենք եղանք Ալեք և Մարի Մանուկյան դպրոցում, և այնտեղ Մենք տեսանք Մեր նորահաս գանձերին, մեր բողբոջ գանձերին, ձեր զավակները՝ որոնք և ձեր գանձերն են, ձեր սիրո ու գուրգուրանքի առարկան. և այդ գանձերը ձեր խնամքով, ձեր կրթությամբ ու դաստիարակությամբ, պիտի դառնան ազգի հավերժական գանձեր, անկորնչելի գանձեր՝ մեր Հայրենիքի և մեր երկնավոր Հոր համար, Ով առանձնահատուկ շնորհ ունեցավ մեր ազգի համար, Արա-

րատի վրա հանգեցրեց Նոյյան Տապանը, որտեղից երկրորդ անգամ ծնունդ առավ մարդկությունը: Աստված շնորհ արեց, որ իր Միածին Որդին երկրորդ անգամ աշխարհ իջնի Հայոց երկրում՝ մեզ պարզնելով Մայր Աթոռ Ս. Էջմիածինը»:

Հավարտ արարողության տեղի ունեցավ ընդունելություն եկեղեցուն կից Մարտիկյան սրահում:

Հոկտեմբերի 16-ին Վեհափառ Հայրապետը Խաժակ Սրբազանի ընկերակցությամբ այցելեց Աթենքի և համայն Հունաստանի Արքեպիսկոպոս Խրիստոդուլոսին: Հունաստանի Արքեպիսկոպոսը բարդ վիրահատությունից հետո ապաքինման ջրջան էր անցնում այստեղ: Երկու կրոնապետերը ջերմությամբ հիշեցին 2006 թ. իրենց հանդիպումը Ստամբուլում, որը տեղի էր ունեցել Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարք Բարդուղիմեոս Ա-ի և Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Սուրաֆյանի հրավերով:

Որպես եղբայրական զգացումների արտահայտություն՝ Հայոց Հայրապետը Հունաց Արքեպիսկոպոսին նվիրեց հայկական մի խաչ, իսկ Խրիստոդուլոս Արքեպիսկոպոսը Հայոց Հայրապետին նվիրեց մի արծաթյա ափսե և Խաժակ Սրբազանին՝ մի սրբանկար: Երկու կրոնապետերը միասնաբար աղոթեցին հունարենով և հայերենով: Խրիստոդուլոս Արքեպիսկոպոսը իր ուրախությունը հայտնեց, որ ԱՄՆ ներկայացուցիչների տան արտաքին հարաբերությունների հանձնաժողովը ընդունել է հայկական ցեղասպանության ճանաչման բանաձևը:

Հայոց Հայրապետը ասաց, որ այս հանդիպումից հետո գնալու է Ֆլորիդայի Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցին, որտեղ հավաքված հավատացյալների հետ աղոթելու է Հունաց Արքեպիսկոպոսի ապաքինման և առողջության համար:

Ս. Մարիամ եկեղեցում Նորին Սրբությունը կատարեց նաև խաչքարի օրհնություն, ապա եկեղեցուն կից սրահում տեղի ունեցավ համայնքային ընդունելություն:

Հոկտեմբերի 16-ին Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակությունը մեկնեց Նյու Օրլինզ, ուր օդանավակայան դիմավորելու էին եկել տեղի հայ համայնքի և Հաբիթաթի ներկայացուցիչները:

Նյու Օրլինզի հայ համայնքը թեև այնքան էլ մեծ չէ, սակայն միասնական է և համախմբված:

Ավանդական աղ ու հացի օրհնությունից հետո Շերաթոն հյուրանոցում տեղի ունեցավ հանդիպում Հաբիթաթի ներկայացուցիչների հետ: Նորին Սրբությունը իր գնահատանքը բերելով հավաքվածներին՝ ասաց. «Փառք և գոհություն ենք հայտնում երկնավոր մեր Տիրոջը, որ հասարակական մեր կյանքում կան Հաբիթաթի նման բարեսիրական կազմակերպություններ, որ Քրիստոսի պատվիրաններն ու պատգամները գործնական կյանքում են կիրառում՝ աջակցելով ոչ միայն կարիքավորներին, այլ նաև բարեկամության կամուրջներ ձգելով տարբեր ազգությունների ներկայացուցիչների միջև»:

Այնուհետև պատասխան խոսքով հանդես եկան ԱՄՆ եկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Դիֆաթ Զաքին և Հաբիթաթի Միչիգանի կազմակերպության նախագահ Քեն Պենսոն: Նրանք իրենց ուրախությունը հայտնեցին

Մայր Աթոռի և Հաբիթաթի միջև մի քանի տարի առաջ սկսված գործակցության համար, որի արդյունքում անցնող այս տարիների ընթացքում Հաբիթաթը տարեկան 35-40 տոնն է կառուցում Հայաստանում, և հույս հայտնվեց որ հաջորդող տարիներին կրկնապատկվելու է այդ թիվը: Այս բնակարանները կառուցվում են Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունով, ինչպես որ Ամերիկայում նույն տները կառուցվում են Միացյալ Նահանգների նախկին նախագահ Ջիմ Քարտերի անունով»:

Հոկտեմբերի 17-ին Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակությունը այցելեց Նյու Օրլինզի երաժիշտների ավան, ուր մի նոր շենք էր կառուցվում Հաբիթաթի միջոցներով: Նորին Սրբությունը և Հայրապետական շքախմբի անդամները իրենց մասնակցությունը բերեցին ընթացող շինարարական աշխատանքներին:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը հանդիպեց լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ և պատասխանեց նրանց հարցերին:

Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակությունը նույն օրը ժամանեց Բաթոն Ռուժ, ուր դիմավորվեց տեղի Ս. Կարապետ եկեղեցու ներկայացուցիչների կողմից:

Հայոց Հայրապետը իրիկնադեմին «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Կարապետ եկեղեցի: Արարողության ավարտից հետո Նորին Սրբությունը օրհնեց եկեղեցուն կից հայկական գերեզմանատունը:

Եկեղեցուն կից սրահում երեկոյան տեղի ունեցավ Աջհամբույր և Հայրապետական օրհնություն:

Հոկտեմբերի 17-ին, կեսօրին, Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակությունը ժամանեց Դալաս (Տեխասի նահանգ): Տեղի Ս. Սարգիս եկեղեցուն կից սրահում Նորին Սրբությունը 18.00-ին հանդիպեց պատանիների և երիտասարդների հետ: Ներկայացված գեղարվեստական հայտագրից հետո հավաքվածներին իր խոսքն ուղղեց Նորին Սրբությունը, ասելով. *«Ձեր հոգին մեր ազգային արժեքների հանդեպ սիրով ու հպարտությամբ է լցվում, երբ դուք ծանոթանում եք մեր ժողովրդի պատմությանը: Ինչպես կարող է մարդն ինքն իրեն ներկայացնել, եթե ինքը չգիտի, թե ով է: Այսօրվա հաղորդակցական հնարավորություններն այնքան մեծ են, որ հնարավորություն են տալիս անգամ հեռվից ծանոթանալու Հայաստանին, Ս. Էջմիածնին և Արցախին»:*

Հանդիպումն ավարտվեց Աջհամբույրով և Հայրապետական օրհնությամբ:

Հոկտեմբերի 19-ի առավոտյան Վեհափառ Հայրապետը հանդիպեց քույր Եկեղեցիների ներկայացուցիչների հետ: Նորին Սրբությունը խոսեց Հայոց Եկեղեցու առջև ծառացած հիմնախնդիրների մասին, ինչպես նաև անդրադարձավ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հիմնախնդրին, որը կարևորեցին նաև քույր Եկեղեցիների ներկայացուցիչները:

Ժամը 13.30-ին Վեհափառ Հայրապետը այցելեց Ողջակիզման թանգարան: Այս այցելության ընթացքում Նորին Սրբությանը ուղեկցում էր Դալասի սենատոր Հարիսոնը: Սենատորը դատապարտելով Հայոց ցեղասպանությունը՝ խորհրդանշական մի հուշանվեր հանձնեց Հայոց Կաթողիկոսին:

Երեկոյան Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Դալասի Ս. Սարգիս հայկական եկեղեցի: Եկեղեցում օրհնելով խմբված ժողովրդին և գնահատանքի իր խոսքը ուղղելով նրանց, Ամենայն Հայոց Կաթողիկոսն ասաց. *«Միրելի բարեպաշտ զավակներ Մեր, փառք և գոհություն ենք բարձրացնում Մեր հոգուց առ Աստված, որ Տերը Մեր քայլերը առաջնորդեց Հովվապետական այցի դեպ Միացյալ Նահանգների Արևելյան թեմը, այցելելու ձեզ, հանդիպելու ձեզ հետ, աղոթելու ձեզ հետ, Մեր օրհնությունը և Մեր պատգամը ձեզ բերելու և փոխանցելու: Եվ այսօր իրապես խնդություն է ապրում իմ հոգին, որ այս խոնարհ հարկի ներքո համախմբվել ենք մեր հավատով զորեղ, մեր սիրով միասնական, մեր ինքնությամբ հաստատուն, հավաքվել ենք՝ վերանորոգելու մեր ուխտը առ Աստված, որ պիտի շարունակենք մեր բարի ընթացքը մեր ազգային արժեքներին, մեր քրիստոնեական սուրբ հավատքին հավատարիմ»:*

«Հրաշափառի» արարողությունից հետո տեղի ունեցավ համայնքային հանդիպում Նորին Սրբության հետ:

Երեկոյան Վեհափառ Հայրապետը այցելություն տվեց տեր և տիկին Սարգիս Գալթագյաններին՝ կատարելով նրանց նորակառույց շինության օրհնությունը:

Հոկտեմբերի 20-ին՝ առավոտյան, Հայոց Հայրապետի գլխավորած պատվիրակությունը ժամանեց Հյուսթոն (Տեխասի նահանգ): Ավանդական աղ ու հացի օրհնությունից հետո Հայրապետական շքախումբը առաջնորդվեց Հյուստոնի Ս. Գևորգ եկեղեցի, որին կից սրահում հայկական վարժարանի սաները հանդես եկան գեղարվեստական տարբեր կատարումներով՝ արժանանալով Վեհափառ Հայրապետի օրհնությանը և ի հիշատակ այս հանդիպման հուշանվեր ստանալով Նորին Սրբությունից:

Կեսօրին տեղի ունեցավ հանդիպում երիտասարդների հետ, որն ընթացավ ազգային եկեղեցական հիմնախնդիրներին վերաբերվող անմիջական և անկեղծ քննարկմամբ:

Երեկոյան ժամը 19.00-ին Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Գևորգ եկեղեցի: Այստեղ ժողովրդին ուղղված օրհնության խոսքում Նորին Սրբությունը հատկապես շեշտեց այն իրողությունը, որ դարեր շարունակ հայ ժողովուրդը իր գործությունը պահել է շնորհիվ իր ամուր և անսասան հավատի:

Հրաշափառի արարողությունից հետո տեղի ունեցավ ընդունելություն Հեքիմյան սրահում, ուր Նորին Սրբությունը կատարեց և Տնօրինների արարողություն:

Այստեղ պատասխանելով Նյու Յորքի «Արձագանք» հեռուստալայանի լրագրողի հարցին, հայոց Հայրապետը ասաց. *«Միշտ գոհություն և փառք ենք հայտնում Աստուծուն, որ առիթը ընծայեց Մեզ Հովվապետական երկրորդ այցով գտնվելու Միացյալ Նահանգների Արևելյան թեմում և Մեր օրհնությունը բաշխելու Մեր հավատավոր զավակներին: Այցելության այս ընթացքին նախատեսված է հանդիպում 18 քաղաքներում ապրող Մեր զավակների հետ: Արդեն իսկ տասից ավելի համայնքներում եղանք և ամենուր հոգևոր ուրախություն ապրեցինք՝ տեսնելով ազգային և հոգևոր շեն կյանքը Մեր ժողովրդի հավատավոր զավակների, տեսնելով նրանց նախանձախնդրությունը հանդեպ իրենց ազգային սրբությունները, հանդեպ*

իրենց ազգային ինքնությունը, նրանց սերը՝ հանդեպ Մայր Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, հանդեպ Հայոց Հայրենիքը՝ Հայաստան և Արցախ մեր երկիրը: Ծանոթացանք նաև առկա որոշակի խնդիրներին, դժվարություններին, սակայն լավատես ենք, որ պիտի կարողանան իրենք իրենց հավատքի զորությամբ, ազգային մեր սրբությունների հանդեպ իրենց սիրով ու նվիրումով, ազգային ժառանգությունները պաշտպանելու նախանձախնդրությամբ, հաղթահարել այդ ամեն դժվարությունները: Ծաղկող համայնքներ են՝ հայկական ոգով և հայկական շնչով ապրող: Մեզ համար հատկապես հուզիչ էին հանդիպումները երեխաների և պատանիների հետ, որոնք ծնված հեռավոր այս ափերում, երկրորդ-երրորդ սերունդը լինելով, խոսում են հայերեն, աղոթում են հայերեն, արտասանում են հայկական բանաստեղծություններ և երգում հայկական երգեր. Հայ հոգին է խոսում իրենց մեջ, Հայ զգացումը և Հայի հպարտությունը: Ես հավատում եմ, որ հպարտության այդ զգացումով մեր ժողովուրդը պիտի գոյատևի այս ափերում՝ վերանորոգելով իր ուժերը, վերակազմակերպելով իր ուժերը, և այս ամենը կատարելով Աստուծո օգնականությամբ: Այն, որ Մենք գրեթե ամենուրեք տեսանք՝ սիրով համախմբված ծուխեր, մեծ կամ փոքր, ծառայական ոգով սպասավորում են միմյանց, օգտակար են դառնում միմյանց՝ գիտակցությամբ, որ իրենց ծառայությամբ է, որ պիտի ծաղկի ու զորանա իրենց համայնքը, պիտի դառնա ցանկալի օջախ ու տուն յուրաքանչյուր հայորդու համար, և ոգին այդ միասնական, ոգին այդ համախմբումի իրապես դրական արգասիքներ են ստեղծել ու արձանագրել իրենց կյանքից ներս. յուրաքանչյուրը նվիրում ունի ազգային կյանքին, իր ներդրումն է բերում, մեկը իր նյութականն է ծառայեցնում, մյուսը իր ժամանակը, մյուսը իր աշխատանքը և մյուսը իր տաղանդը. և այսպես շենանում են, շենանում է ազգային կյանքը փոքրիկ այս համայնքների մեջ: Մենք աղոթող ենք, որպեսզի Տերը Իր օրհնությունը և Իր շնորհը հովանավոր պահի Մեր ազգի զավակների վրա ամենուրեք՝ ի սփյուռս աշխարհի. և Մեր ազգի զավակունք կարողանան իրենց առ Աստված սիրով և առ հայրենին սիրով շարունակեն ապրել և փառավորել Մեր ժողովուրդի անունն ու պատիվը»:

Հոկտեմբերի 21-ին Հյուստոնի Ս. Գևորգ եկեղեցում Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությանը Ս. Գևորգ եկեղեցի բարիգալստյան խոսք ասաց Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը. «Այսօր բացառիկ օր մըն է Հիւսթընի Ս. Գէորգ Եկեղեցւոյ հաւատացեալներուն համար՝ որովհետեւ առաջին անգամն է որ Ամենայն Հայոց Կաթողիկոս մը կ'այցելէ Հիւսթըն եւ Ս. Պատարագ կը մատուցանէ: Ես վստահ եմ որ այս բացառիկ օրը պատմական նշանակութեամբ պիտի արձանագրուի Հիւսթընի Ս. Գէորգ Եկեղեցւոյ պատմութեան մէջ»:

Հավաքվածներին այնուհետև Հայրապետական իր պատգամը և օրհնությունը բերեց Նորին Սրբությունը:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ ՀՅՈՒՍԹՈՆԻ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ**

(21 հոկտեմբերի 2007 թ.)

«Երանի ազգի որոյ Տէր Աստուած աւգնական է նմա. ժողովուրդ զոր ընտրեաց ի ժառանգութիւն Իւր»:

(Սաղմ. ԼԲ 12)

Միրելի հավատավոր հայորդիներ,

Փառք և գոհություն ենք մատուցում առ Աստված, որ շնորհեց Հայրապետական այցելությամբ կրկին լինելու Ամերիկայի օրհնյալ երկրում և այցելել Հյուսթընի Ս. Գևորգ Եկեղեցի՝ բերելու ձեզ Հայրապետական Մեր սերը, օրհնությունն ու աղոթական գորակցությունը: Եկել ենք, սիրելիներ, առ Աստված հայրենյաց մեր ուխտը վերանորոգելու կոչով, քրիստոնեական հավատի մեր ջահը մշտավառ պահող Առաքելական Սուրբ Եկեղեցու շուրջ համախումբ ու միասնական մնալու հորդորով ու պատգամով:

Ամեն անգամ, Հայրապետական Մեր այցելությունների ընթացքին, մեր ժողովրդին համախումբ տեսնելով Հայրենիքից հեռու օտար ավերում և սիրով լեցուն մեր Եկեղեցու հանդեպ, մեր սրբազան ավանդների ու ազգային արժեքների հանդեպ, երանություն է ապրում Մեր հոգին և սաղմոսերգում. «Երանի ազգի որոյ Տէր Աստուած աւգնական է նմա. ժողովուրդ զոր ընտրեաց ի ժառանգութիւն Իւր»: Բոլոր երանի ազգին, որին Աստված օգնական է:

Փառք և գոհություն Աստուծոյ, որ ընտրեց ազգս հայոց իրեն սեփական ժողովուրդ: Մեր երկիրն ու պատմությունը կրում են Աստծո հոգածության ու խնամքի վկայությունները: Համաշխարհային ջրհեղեղից հետո մարդկային կյանքն Աստված վերահաստատեց Արարատ լեռան ստորոտին: Այդտեղ արդար Նոյ նահապետի հետ կնքվեց առաջին ուխտը Աստծո և մարդու միջև: Աստված շնորհ արեց մեր ժողովրդին՝ Միածին Որդու էջրով հայոց հողին հիմնելով քրիստոնեությունը առաջինը պետականորեն ընդունած իր ընտրյալ ազգի աղոթատեղին:

Մենք, իբրև Աստծո հարազատ զավակներ, Քրիստոսի ընտանիքի անդամներ, Մեր կյանքով ու Մեր գործերով պարտավորությունն ունենք շարունակելու մեր հայրերի սրբազան ավանդները՝ իրագործել աստվածային պատվիրանները, որով միայն պիտի արտահայտվի մեր սերն ու նվիրումն առ Աստված և որով պիտի հաստատենք Աստծո ժողովուրդ լինելը:

Խորհրդանշական է, որ տիրախնամ ձեր թեմը Հովվապետական մեր այս այցելության տարվա համար ընտրել է «Եկեղեցի և տուն-մեկ հոգի դարձած» կարգախոսը: Այս օրերին բազում առիթներ ունեցանք՝ օրհնելու հայ օջախներ՝ մշակութային, խնամատարական, ազգային այլ հաստատություններ, ուր համախմբվում են մեր մեծ քրիստոնեական ընտանիքի անդամները: Ընտանիքը մանրակերտն է Եկեղեցու, որի խաղաղ անդորրը, համերաշխությունն ու սերը, որպես անուշաբույր աղոթք, բարձրանում են առ Աստված: Ընտանիքը սրբազան իրականություն է մարդկային կյանքում՝ հիմնված Աստծո օրհնությամբ և Աստծո կողմից՝ որպես ինքնակազմակերպման և բարգավաճման մի վայր: Եղեմական դրախտում Աստված ստեղծեց

մարդուն՝ իբրև ընտանիք, օրհնեց մեր նախածնողների՝ Ադամի ու Եվայի սրբազան միությունը և վստահեց արարչագործության շարունակականությունը՝ ասելով. «Աճեցէք եւ բազմացարուք եւ տիրեցէք դմա»։ Եդեմական պարտեզն Աստված հանձնեց մարդկային նորակազմ ընտանիքին որպէս կացարան և պատվիրեց մշակել և խնամել այն։

Աստծո Միածին Որդին ևս ընտրեց ընտանեկան սրբազան հարկը փրկագործական Իր ծրագիրն իրականացնելու համար։

Երջանկահիշատակ մեր Հայրապետներից Խրիմյան Հայրիկը հետևյալ գեղեցիկ պատկերումն է անում ընտանեկան հարկի. «Տուն և ընտանիք մի փոքրիկ թագաւորութեան երկիր ու սահման է, որու նահապետական աթոռին կը նստին ծնողք. հայրն՝ իբրև թագաւոր, և մայրն՝ իբրև թագուհի, և կը կառավարեն հպատակ ընտանիքը։ Սոյն ընտանեկան պալատին ու թագաւորութեան մէջ ո՛չ ոստիկան կայ, ո՛չ սուր, ո՛չ բռնութիւն, ո՛չ զաւազան, այլ ամենուն տեղ՝ հայրական և մայրական գործունէն է դաստիարակ և խրատ՝ ծնողաց կենդանի օրինակ»։

Հայ ավանդական, նահապետական ընտանիքը, սիրելիներ, դարեր շարունակ մեզ համար եղել է և է սրբության հարանորոգ արժեքների կրողը։ Դարերի խորքից եկող այդ սրբազան օջախի ծնունդ են բոլոր ժամանակների հերոսական հայորդիք։ Պատմության քառուղիներում շարունակ հայկական պետականության բացակայության ժամանակ Ընտանիքը և Եկեղեցին եղել են մեր ժողովրդի միակ ապաստարանը ստեղծագործ կյանքի և հայապահպանության, այն ապառաժ վեմը, որի վրա հիմնվել և գոյատևել է հայ ժողովուրդը՝ ընդդէմ թշնամեաց կործանարար բռնության։

Այսօրվա մեր ազատ և անկախ Հայաստանում, նաև Մփյուռքում, հայ ընտանիքի առջև ծառացած բազում խնդիրներին և մարտահրավերներին ընդառաջ մենք պետք է անկասկած վերագտնենք հայ նահապետական ընտանեկան հյուսվածքի կարևորությունը, որը հիմնական կորիզն է հասարակության և մանրակերտը եկեղեցական համայնքի։

Հայրապետական Մեր հորդորն է ձեզ, Ամերիկայում ապրող մեր հայ ընտանյայց հայրեր ու մայրեր, որ առաջին դաստիարակներն էք մեր մանուկների, ձեր իսկ անձերի օրինակով նրանց հոգիներում առ Աստված հավատի ու հայրենյայց սիրտ առաջին սերմերը սերմանեք իբրև ժրջան և հոգատար մշակներ՝ նորածիլ այդ սերմերը ոռոգելով հայրական և մայրական սիրտ քաղցրանուշ հոգածությամբ։

Միրասուն երիտասարդներ Մեր, որ կենսախինդ ներկան և խոստումնալից ապագան էք մեր Եկեղեցու և մեր ժողովրդի, սրբազան պահեցեք ձեր հայրերի ավանդը և ձեր հոգու հայացքը հառած Մայր Հայրենիքին և Սուրբ Էջմիածնին, շարունակեք ապրել Աստծո հավատարմության մէջ և ձեր ազգային անգին ու նվիրական արժեքներով՝ հավատով, լեզվով, կրթությամբ և հայկական մշակույթով։

Յուրաքանչյուր հայ այսօր պետք է քաջ գիտակցի, որ չնայած մենք սփռված ենք ողջ աշխարհով մեկ, բայց մենք զավակներն ենք նույն ժողովրդի, Հայ Առաքելական մեկ և նույն Եկեղեցու աստվածահիմն ընտանիքի՝ մի «Տուն Թորգոմայ» և մի Եկեղեցի, «գոր ընտրեաց Աստուած ի ժառանգութիւն Իւր»։

Այս նվիրական պահին Մեր երախտագիտության խոսքն ենք ցանկանում արտահայտել հանդեպ Միացյալ Նահանգաց իշխանությունները և նրա մարդասեր ժողովուրդը այն բոլոր բարիքների համար, որ Հայ Եկեղեցին և իր հավատացյալները վայելում են այստեղ: Աղոթում ենք, որ Աստված հավետ խաղաղ ու շեն պահի երկիրն այս հյուրասեր՝ համայն աշխարհի խաղաղությամբ ու բարօրությամբ:

Մեր գնահատանքի և օրհնության խոսքը ձեզ բոլորիդ՝ Գերաշնորհ և կորովի առաջնորդ Խաժակ Սրբազան, ուխտապահ և անձնվեր հոգևոր հայրեր, Թեմական խորհրդի և եկեղեցական վարչության ժրաջան անդամներ և հավատավոր ու շինարար զավակներ Մեր, ձեզ հոգևոր ուժ և կորով, որպեսզի կանգուն, անսասան և ծաղկյալ պահեք ձեր քրիստոնեական հավատքը, ձեր սուրբ Եկեղեցին ամերիկյան այս հյուրընկալ երկրի մեջ:

Թող որ մեր այսօրվա Սուրբ Պատարագը դառնա գոհաբանական հայց առ Աստված բյուր բարյաց համար հանդեպ հայ ժողովուրդը և Հայ Առաքելական մեր Մայր Եկեղեցին:

Թող Բարձրյալ Տերն օրավուր գորացնի քրիստոնեական հավատը, հույսը և սերը մեր մեջ, որ մարդիկ տեսնեն մեր հավատավոր գործերն ու փառաբանեն Աստծուն՝ մեր Հորը, Ով երկնքում է:

Շնորհք, սեր և խաղաղություն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ այժմ եւ յաւիտեան:

Հընթացս Ս. Պատարագի Վեհափառ Հայրապետը «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրեց Քրք Խաչիկյանին Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ իր նվիրումի և Ս. Գևորգ եկեղեցուն կատարած բարեգործությունների համար:

Շքանշանի պարգևաբաշխության Սրբատառ Կոնդակը ընթերցեց Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Ս. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը: Այնուհետև Վեհափառ Հայրապետը Ս. Գևորգ եկեղեցուն նվիրեց մի սրբանկար, իսկ եկեղեցու հոգևոր հովիվ Ս. Զենոբ ավագ քին. Նալբանդյանին՝ լանջախաչ:

Հավարտ Ս. Պատարագի եկեղեցուն կից սրահում տեղի ունեցավ հյուրասիրություն, որն սկսվեց Հայաստանի Հանրապետության և ԱՄՆ-ի ազգային օրհներգերի կատարմամբ:

Հանդիսության բացման խոսքը ասաց Ս. Գևորգ եկեղեցու ծխական խորհրդի առնապետ Վրեժ Քոլանջյանը, իսկ Դեյվիդ Օհանյանը կարդաց Հայոց Հայրապետին ուղղված Տեխասի նահանգապետի բարիգալստյան խոսքը:

Բարիգալստյան խոսք ասացին նաև Ս. Զենոբ ավագ քին. Նալբանդյանը և ԱՄՆ հայազգի դեսպան Էդուարդ Ջերեջյանը:

Հոկտեմբերի 22-ին Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակությունը ժամանեց Գլիվլենտ: Օդանավակայանում Նորին Սրբությանը դիմավորելու էին եկել տեղի Ս. Գրիգոր Նարեկացի ծխական համայնքի անդամները և մեծ թվով երեխաներ՝ գլխավորությամբ Ս. Գևորգ եկեղեցու հոգևոր մատակարար Ս. Արտակ սրկ. Խաչիկյանի: Ավանդական աղ ու հացի օրհնությունից հետո Հայոց Հայրապետը ան-

չափ հուզվեց, երբ երեխաներից մեկն ասաց, թե «Աստված պապան մեզի եկած է»:

Վեհափառ Հայրապետը Գլիվենտի Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցուն կից սրահում կեսօրին հանդիպեց եկեղեցու Կիրակնօրյա վարժարանի և տեղի հայկական դպրոցի աշակերտների, ինչպես նաև երիտասարդական կազմակերպության անդամների հետ:

18.30-ին Հայոց Հայրապետը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցի: Օրհնության իր խոսքը բերելով այստեղ խոնաված հայորդիներին՝ Նորին Սրբությունն ասաց. *«Մեր հորդորն ու պատգամն է, սիրելիներ, որ արժանավոր զավակները և հպարտ քաղաքացիները լինեք այս երկրի, ինչպես նաև ձեր օժանդակությունը բերեք մեր հայրենիքին»:*

Այնուհետև Նորին Սրբությունը մի սրբանկար նվիրեց եկեղեցուն և «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրեց այս ծխական համայնքի երկարամյա անդամ Մոնա Գարողլանյանին: Ապա այս նահանգից սենատոր Յաս Մեյսնը Վեհափառ Հայրապետին հանձնեց Օհայոյի նահանգի նահանգապետի ողջույնի պաշտոնագիրը:

Երեկոյան տեղի ունեցավ համայնքային ընդունելություն ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի: ՀՀ և ԱՄՆ օրհներգերի կատարումից հետո հանդիսության բացման խոսք ասաց ծխական խորհրդի ատենապետ Արշավիր Անտոնյանը: Շնորհակալության խոսք ասաց Հայրապետական բարձր գնահատությանն արժանացած Մոնա Գարողլանյանը:

Խոսք ասաց նաև եկեղեցու հոգևոր մատակարար Արտակ սրկ. Խաչիկյանը:

Այնուհետև օրհնության և գնահատանքի խոսքով ներկաներին դիմեց Վեհափառ Հայրապետը՝ ի մասնավորի ասելով. *«Հայոց կյանքի հորիզոնի վրա նոր արևածագ է, նոր ուժգնությամբ է ճառագայթում հույսի ու հավատի լույսը մեր կյանքի վրա: Մենք այս ժամանակի օրհնյալ զավակներն ենք, որ առավելաբար պարտք ունենք մեր հայրենիքի այդ լույսը, մեր հայրենիքի ապագայի հանդեպ հավատքը առավել զորացնելու, ամրացնելու, աննահանջ դարձնելու, անդառնալի դարձնելու: Այսօր Հայաստանն ազատ է, անկախ է, Արցախը ազատագրված է: Հակառակ բոլոր դժվարություններին մենք տեսնում ենք զարգացումը, առաջընթացը մեր կյանքի: Այսօր հայորդիք վերադառնում են հայրենի երկիր, գալիս են իրենց տունը կառուցելու մեր հայրենի սրբազան հողում: Նորոգվում են դպրոցները, կառուցվում են նոր ճանապարհներ, գեղեցկանում է Երևանը, բարվոքվում է կյանքը՝ հույսով, հավատով և լավատեսությամբ լցված»:*

Հանդիսությունն ավարտվեց Հայոց Հայրապետի օրհնությամբ և Տերունական աղոթքով:

Հոկտեմբերի 23-ի առավոտյան Նորին Սրբությունը Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցու բակում նախ կատարեց տնկվող մշտադալար ծառի օրհնությունը, ապա Տնօրինեք և հրաժեշտի խոսք ասաց Գլիվենտից մեկնելուց առաջ:

Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակությունը կեսօրին մեկնեց Միլուոքի (Ուիսքոնսոն): Օդանավակայանից Նորին Սրբությունը առաջնորդվեց Սեյնթ

Ֆրանսիա Սեմինըրի, ուր Միլոտքի կաթուղիկ առաջնորդարանի արքեպիսկոպոս Տիմոթի Տոլնը ընդունելություն էր կազմակերպել միջեկեղեցական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Այս ընդունելության համար շնորհակալության իր խոսքում Գարեգին Երկրորդ Կաթողիկոսն ասաց. *«Ուրախ եմ, որ Հովվապետական այցով գտնվելով Միացյալ Նահանգներում՝ ջերմ ընդունելության եմ արժանանում ինչպես մեր ժողովրդի հավատավոր զավակների, այնպես էլ քույր Եկեղեցիների և տարբեր կրոնների ներկայացուցիչների կողմից, որը մեծ ուրախություն և մխիթարություն է պարգևում»:*

Վեհափառ Հայրապետը հանդիպման ավարտին մի լանջախաչ նվիրեց Տիմոթի արքեպիսկոպոս Տոլնին, ապա ուղևորվեց Ռեյսինի (Ուիսքանսն) Սինեա կենտրոնը, ուր հանդիպեց շրջանի հայ եկեղեցիների ծխական խորհուրդների ատենապետներին և անդամներին, հայ վարժարանների ուսուցիչներին, երիտասարդական կազմակերպությունների և տիկնանց միությունների անդամների հետ:

Ժամը 19.00-ին «Հրաշափառի» արարողությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մուտք գործեց Ռեյսինի Ս. Մեսրոպ եկեղեցի, ուր իր հովվապետին էր սպասում հավատացյալների հոծ բազմությունը: Նորին Սրբությանը այս եկեղեցի բարիգալստյան խոսքով դիմելով Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը ասաց. «Ամերիկայի Արեւելեան թեմին համար բացառիկ ուրախութեան առիթ է Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հովուապետական այցելութիւնը՝ երբ բոլորս Հիւսիսէն-Հարաւ, Արեւելքէն-Արեւմտոտք կը վայելենք ներկայութիւնը մեր սիրելի Հայրապետին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի: «Հովուական այցելութիւն՝ հաւատքը տուն բերող» կարգախօսն է այցելութեանը Նորին Սրբութեան, որ որպէս բարի հովիւ՝ Ամենայն Հայոց Հայրապետը կ'այցելէ մեր թեմի մեծ ու փոքր ծուխերը՝ ցոյց տալու համար իր հոգածութիւնն ու սէրը Իր հօտին հանդէպ, Իրեն հետ բերելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնութիւնները եւ ողջոյնները մեր հայրենի քոյրերուն եւ եղբայրներուն»:

Այնուհետև օրհնության և գնահատանքի իր խոսքը բերեց Նորին Սրբությունը՝ ասելով. *«Փառք եմ տալիս Աստծուն, որ մեր ժողովուրդը շարունակում է ապրել որպէս արժանավոր զավակը Քրիստոսի, մեր հավատը մեր մաշկի գույնն է դարձել և այս պատճառով երբ ասում ենք հայ, հասկանում ենք քրիստոնյա և քրիստոնեական հավատը, որ ունենք Աստծո հանդէպ, մեզ ազատել է ամեն տեսակ վտանգներից»:*

Աստծո սիրո համար մենք նահատակվեցինք, Աստծո սիրո համար Գողգոթա բարձրացանք, սակայն միշտ ապրեցինք հարության հավատով, որովհետև մենք երբեք չհեռացանք մեր Տիրոջից և Տերը մեզ երբեք մենակ չթողեց մեր տառապանքի մեջ: Հարությունն է ուղեկցել մեր ժողովրդին պատմության ընթացքում, հարությունը այս եկեղեցին է, որ ձեր հայրերը կառուցել են, և ուր դուք աղոթում եք առ Աստված: Պահեցեք ձեր հավատը առկայծ և բարի գործեր կատարեցեք ձեր հավատից բխող»:

Հայրապետական այս պատգամից հետո Նորին Սրբությունը մի սրբանկար նվիրեց Ս. Մեսրոպ եկեղեցուն և մի լանջախաչ եկեղեցու հովիվ Տ. Եփրեմ ավագ քահանա Գրըճյանին:

Ռեյսինի Ս. Մեսրոպ եկեղեցու սրահում կազմակերպված ընդունելությունից հետո Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակությունը մեկնեց Զիկագո:

Հոկտեմբերի 24-ի առավոտյան Նորին Սրբությունը հանդիպեց Կաթոլիկ Եկեղեցու Զիկագոյի կարդինալ Ջորջին: Հանդիպման ընթացքում քննարկվեցին Հայոց և Կաթոլիկ Եկեղեցիների հարաբերություններին ու գործակցությանը վերաբերվող հարցեր: Ի հիշատակ այս հանդիպման Հայոց Հայրապետը Զիկագոյի կարդինալին նվիրեց ոսկեգոծ լանջախաչ:

Կեսօրին Վեհափառ Հայրապետը կատարեց Զիկագոյի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու նոր պատրաստված և գեղակերտ դռների օծումը: Այնուհետև եկեղեցուն կից սրահում տեղի ունեցավ հանդիպում, որի ընթացքում Նորին Սրբությունը պատասխանեց տեղի հայ համայնքի անդամներին հուզող հարցերին:

Վեհափառ Հայրապետը ապա այցելեց Էվսթինի Ս. Հակոբ եկեղեցու բարերարներից տեր և տիկին Ժան և Մարի Իփեճյանների բնակարանը, ուր Տնօրինների արարողություն կատարեց համահունչ ԱՄՆ Արևելյան թեմի «Եկեղեցին և Տունը մեկ հոգի դարձած» կարգախոսին: Տնօրինների արարողությանը ներկա էին բազմաթիվ հրավիրյալներ:

Ս. Պողոս - Ս. Պետրոս հույն ուղղափառ եկեղեցում 17.00-ին տեղի ունեցավ «Հրաշափառի» արարողություն: Հայոց Հայրապետին բարիգալստյան խոսք ասացին եկեղեցու ավագերեցը և Խաժակ Սրբազանը:

Հավաքվածներին այնուհետև հայրապետական իր պատգամը ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ասելով. *«Փառքդ շատ լինի, Տեր, հույսդ մեծ լինի, ժողովուրդդ հայոց: Մեծ եղեռնից տասնամյակներ անց՝ Ամերիկայի այս օրհնյալ հողի վրա տունդ ես վերստին կանգնեցրել, հոգևոր և ազգային կյանքդ շենացրել: Երջանկահիշատակ մեր Հայրապետներից Վազգեն Առաջինը հայ ժողովրդի հոգևոր վերածնունդը կոչել է «Հայ հավատի հրաշքը»: Ամերիկայի հայությունը վառ վկայությունն է հայ ժողովրդի հարության հրաշքի, նրա վերածնվելու գործության, որի ակունքը կյանքի հավատքն է Քրիստոսով: Միբեյիներ, ձեր ընտանիքների կյանքի հավատքն է Արևելյան թեմի պատմությունը: Այն սկիզբ է առնում պանդխտության մեջ ձեր հայրերի տքնաջան աշխատանքով, արդար վաստակով և այս վաստակի արդյունքը Հայ Եկեղեցիին, հայ դպրոցին, ազգային խնամատար և մշակութային հաստատություններին ընծայաբերումով, զոհողությամբ ու անմնացորդ ծառայությամբ ազգային կյանքին»:*

Ի հիշատակ այս այցելության Հայոց Հայրապետը մի խաչքար և սրբապատկեր նվիրեց եկեղեցու ավագերեցին: Հուշանվերներ հանձնվեցին նաև Զիկագոյի և շրջակայքի հայ եկեղեցիների հովիվներին:

Այնուհետև եկեղեցուն կից սրահում տեղի ունեցավ հանդիպում և Աջհամբույր:

Հոկտեմբերի 25-ի առավոտյան Վեհափառ Հայրապետը այցելեց Զիկագոյի կրոնական առաջնորդների խորհուրդ:

Օրվա երկրորդ կեսին Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակությունը

ուղևորվեց Մինեսոտա:

Վեհափառ Հայրապետը 17.00-ին «Հրաշափառ»-ով մուտք գործեց տեղի Ս. Սահակ եկեղեցի: Արարողությանը ներկա էին քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, եկեղեցու ծխական խորհրդի անդամներ, եկեղեցական կազմակերպությունների ներկայացուցիչներ և մեծ թվով հավատացյալներ:

Հայոց Հայրապետը Ս. Էջմիածնից բերված մի սկիհ նվիրելով եկեղեցուն՝ հավաքվածներին ուղղված իր պատգամում ասաց. *«Ձեր հոգու մեջ կրեք Հայաստանի հույսերն ու տեսիլքները, Ձեր սրտի մեջ կրեք Ս. Էջմիածնի լուսեղեն պատկերը և կապրեք հավերժ, կապրեք հայաշունչ, կապրեք Ս. Սահակի և Ս. Մեսրոպի հետ, կապրեք Ս. Նարեկացու հետ, Ձեր շուրթերին կհնչի աղոթքը Շնորհալու, Ձեր շուրթերին կհնչի երգը Կոմիտասի և Ձեր հոգին արի կլինի Վարդանանց շնչով ու ոգով»:*

«Հրաշափառի» արարողությունից հետո, ձեռամբ Վեհափառ Հայրապետի, օծվեց եկեղեցու մկրտարանը, որի, ինչպես նաև եկեղեցու, գլխավոր բարերարներն են Սթիվն և Շաքե Սքալները:

Հոկտեմբերի 26-ին Վեհափառ Հայրապետը այցելեց Մինեսոտայի Սուրբ Թովմաս համալսարան, որտեղ բարերարությամբ Ջերալդ Գաֆեսճյանի ուսանում են Մայր Աթոռի միաբաններից:

Սուրբ Թովմաս համալսարանի ռեկտոր Հայր Դենիս Դիսը պատվո դոկտորի վկայական հանձնեց Վեհափառ Հայրապետին: Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնեց այս կոչման, ինչպես նաև Մայր Աթոռի միաբանների հանդեպ ցուցաբերվող հոգածության համար:

Ի պատիվ Վեհափառ Հայրապետի այնուհետև կազմակերպվեց հյուրասիրություն, որին ներկա էին Մինեսոտայի քաղաքապետը, Կաթոլիկ Եկեղեցու տեղի արքեպիսկոպոսը, տեր և տիկին Քաֆեսճյանները իրենց զավակների հետ, ինչպես նաև մի շարք այլ հրավիրյալներ: Հյուրասիրության ավարտին հայրապետական Սրբատառ Կոնդակով Ջերալդ Քաֆեսճյանը պարգևատրվեց «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով՝ ի գնահատություն ազգային-եկեղեցական կյանքից ներս իր կատարած բարերարությունների (տե՛ս «Էջմիածին», 2007, Թ, էջ 23):

Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակությունը երեկոյան վերադարձավ Նյու Յորք: Այստեղ Մետրոպոլիտեն ակումբում հյուրասիրություն էր կազմակերպել Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը:

Հոկտեմբերի 27-ի առավոտյան Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ի արարողությամբ մուտք գործեց Ֆերլոնի Սրբոց Նահատակաց եկեղեցի, ուր հավաքվել էին 500 դպրոցականներ և ավելի քան 200 ուսուցիչներ և ծնողներ: Դիմելով հավաքվածներին՝ Նորին Սրբությունն ասաց. *«Այս եկեղեցին այսօր լեցուն է հրեշտակներով: Դուք տեսնո՞ւմ եք հրեշտակներ այս եկեղեցու մեջ՝ ոչ: Դուք եք հրեշտակները և Մենք սիրում ենք ձեզ, որովհետև դուք Մեր հրեշտակներն եք: Այժմ, երբ կանգնած եմ ձեր դիմաց, մտածում եմ Մեր կյանքի ու առաքելության նշանակության մասին: Մենք ամեն օր քարոզում և աղոթում ենք, որպեսզի Աստված ստեղծի մի աշխարհ, որի մեջ մենք կարողանանք ապրել որպես մանուկներ՝ մաքուր սրտով, պատվով և սի-*

րով»:

Ի հիշատակ այս հանդիպման Նորին Սրբությունը մի սրբանկար նվիրեց Սրբոց Ղևոնդյանց եկեղեցուն:

«Հրաշափառ»-ի արարողությունից հետո եկեղեցուն կից սրահում կազմակերպվեց ընդունելություն, որը սկսվեց ՀՀ և ԱՄՆ պետական օրհներգերի կատարմամբ: Նորին Սրբությանը բարիգալստյան խոսք ասացին Սրբոց Ղևոնդյանց եկեղեցու հոգևոր Հովիվ Տ. Տիրան քին. Բոյաջյանը և առաջնորդարանի երիտասարդական և կրթական բաժանմունքի համակարգող Ջենիֆեր Մորիսը:

Նյու Յորքի և շրջակայքի երեք ամենօրյա հայկական վարժարանների և տասներկու միօրյա ու կիրակնօրյա դպրոցների աշակերտները ներկայացրեցին գեղարվեստական գեղեցիկ մի հայտագիր: Ամերիկահայ նոր սերնդին Վեհափառ Հայրապետը մաղթեց պահպանել ազգային դիմագիծը, դառնալ արժանավոր զավակները հայ ժողովրդի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն այստեղից մեկնեց Էմբրսնի Տարեցների տուն, ուր կատարեց Տնօրինների արարողություն, օրհնեց այստեղ բնակվողներին, որոնց անունից շնորհակալության սրտի խոսք ասաց Տարեցների տան բնակիչ Տ. Վահրիճ ալ. քին. Շիրինյանը, ում Նորին Սրբությունը նվիրեց լանջախաչ:

Հայոց Հայրապետը այստեղից ուղևորվեց ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդարան, ուր նախագահեց Երիտասարդաց կազմակերպության կենտրոնական խորհրդի ժողովին՝ մոտիկից ծանոթանալով և իր գնահատանքը հայտնելով խորհրդի ծրագրերին և գործունեությանը:

Ժամը 17.00-ին Նորին Սրբությունը Նյու Յորքի Ֆորտհամ համալսարանի սրահում հանդիպեց տեղի քոլեջներում սովորող երկու հարյուր ուսանողների հետ: Վեհափառ Հայրապետին հանդիսասրահի մուտքի երկու կողմերում շարք կազմած դիմավորեցին «Շուշի» պարախմբի անդամները հայկական տարազով:

Այստեղ Վեհափառ Հայրապետին ողջույնի բարիգալստյան խոսքով դիմեցին առաջնորդարանի քոլեջական ուսանողների հայտագրի համակարգող Զուլի Հովիվաճյանը և նրա օգնական Լիդա Քյուրջյանը: Ողջույնի խոսք ասացին նաև Թալին Խըթիկը (Չիկագոյի Ս. Գրիգոր Լուսավորիչ ծխական համայնքից), Գրեգրի Կյուրոյանը (Ուայթ Փլեյզնի Ս. Գրիգոր Լուսավորիչ ծխական համայնքից), Ալեքս Թովաքբաշյանը (Ուինսթոն Ս. Սահակ-Ս. Մեսրոպ եկեղեցու ծխական համայնքից) և Բեմադրիչ Կարլա Կարապետյանը: Երաժշտական կատարմամբ հանդես եկավ Կարինե Հովնանյանը (Չելթենհամի Ս. Երրորդություն ծխական համայնք):

Թեմակալ առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի խոսքից հետո հավաքվածներին հայրապետական իր պատգամը ուղղեց Հայոց Հայրապետը՝ ասելով. «Հայրապետական մեր այս այցելության համար որպես կարգախոս ընտրված են «Հայրապետական այցելություն՝ հավատքը տուն բերող» խոսքերը, որովհետև հավատքը այստեղ է, հավատքը Ձեր տների մեջ է, Ձեր սրտերի մեջ է, Ձեր եկեղեցիների մեջ է, Ձեր համայնքների, Ձեր հանդիսասրահների, Ձեր դպրոցների և Ձեր կյանքի մեջ: Մեր հավատքը մեզ բերեցին առաքյալները, մեր հավատքը մեզ բերեցին մեր եկեղեցու հայրերը՝ Ս. Գրիգոր Լուսավորիչը, Ս. Մեսրոպ Մաշտոցը և Ս. Սահակ Պարթևը: Նրանք են, որ շաղախեցին մեր հավատքը մեր կյանքով, մեր ինքնությամբ, մեր նկարագրով և մեր անվամբ: Իմ այցելությունը մեկ նպատակ ունի՝

հիշելով այս բոլորը մեր հավատքը ավելի վառ պահել և ուխտել, որ հավատարիմ պետք է մնանք մեր հայրերի հավատքին»:

Հոկտեմբերի 28-ին ձեռամբ Վեհափառ Հայրապետի Ս. Պատարագ մատուցվեց Նյու Յորքի Ս. Վարդան Մայր Տաճարում: Մինչ Ս. Պատարագի մատուցումը բարի-գալստյան խոսք ասաց թեմակալ առաջնորդ Խաժակ Սրբազանը՝ շեշտելով, որ Հայոց Հայրապետի այցելությունը խանդավառ մթնոլորտ է ստեղծել բոլոր ծխերում:

Հրնթացս Ս. Պատարագի՝ Տերունական աղոթքից առաջ, հավաքվածներին Հայրապետական իր պատգամը ուղղեց Նորին Սրբությունը:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՔԱՐՈԶԸ ՆՅՈՒ ՅՈՐԹԻ Ս. ՎԱՐԴԱՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ**

(28 հոկտեմբերի 2007 թ.)

«Հաստատուն մնացեք ի Տեր»

(Փիլ. Դ 1)

«Եթե Տերը տունը չկառուցի, իզուր են չար-չարվում այն կառուցողները, եթե Տերը քաղաքը չպահպանի, իզուր են հսկում պահապանները նրա»:

(Սղմ. ՃԻԶ)

*Միրելի և հարազատ զավակներ
Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու.*

Միաձնաէջ Մայր Տաճարում մատուցված աղոթքով սկսեցինք Հովվապետական Մեր այցելությունը ձեզ՝ Մեր հոգում բազմապատկված ուրախությամբ, որ Աստծո կամքով Մեզ կրկին առիթ է շնորհվում Սուրբ Էջմիածնից աստվածային շնորհ և օրհնություն բաշխելու Ամերիկայում ապրող հավատացյալ մեր ժողովրդին, որ մեծ սիրով և բազում զոհողություններով պահպանում է հավատքի իր վկայությունը:

Հովվապետական մեկամսյա այցի ընթացքում աղոթեցինք Արևելյան թեմի հավատավոր զավակներիդ հետ, խոսեցինք ու լսեցինք ձեզ, իբրև Հովվապետ ուրախացանք ձեր հաջողություններով, մտահոգվեցինք ձեր առջև ծառացող խնդիրներով և մարտահրավերներով: Մենք տեսանք ձեր հանձնառությունները և հաղորդ դարձանք ձեր ջանքերին, որոնցով պայծառ են ձեր եկեղեցիները, լուսավոր՝ դպրոցները, շեն ու գորացյալ հոգևոր ու ազգային կյանքը: Դուք անմնացորդ նվիրում եք բերում, որպեսզի հավատքի լույսը, որ Տիրոջ ողորմությամբ ծագեց Արարատի փեշերին ու վահան եղավ մեր ժողովրդին հողմերի դեմ և լուսավորեց նրա տարագրության ճանապարհները, շարունակի ապրել մեր կյանքում, ապրել մեր զավակների հոգում և առաջնորդել մեր ժողովրդի ընթացքը:

Այսօր այս Սուրբ Տաճարի կամարների ներքո փառք և գոհություն ենք առաքում առ Աստված, որ Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի մեր Եկեղեցու մեծ ընտանիքը՝ իր հավատացյալներով, բարերարների բույլով և հոգևորական դասով համախումբ, ապրում և գործում է հաստատուն ի Տեր, Աստծո Սուրբ Աջից ճառագող շնորհքով և Աստծո խնամքի ներքո, Նրա ներկայության հավատով:

Հին և Նոր Կտակարանների Սուրբ Գրքերը պատմում են մեզ Աստծո Հայտնությունը մարդկության պատմության մեջ և մարդու կյանքում: Աստված Իր Միածին Որդուն ուղարկելով աշխարհ, Իրեն, Իր բնությունը կամեցավ հայտնել մեզ, որպեսզի հարազատորեն և ճշմարտորեն Իրեն ճանաչելով՝ սիրենք Նրան և բնակվենք Իր մեջ, և Նա բնակվի մեր մեջ Իր օրհնությամբ ու պարգևներով:

Աստված մեր մեջ բնակվում է Իր արարչագործությամբ, ստեղծագործելու՝ մեզ պարգևած գործությամբ: Արդարև, Աստված աղբյուր է յուրաքանչյուր գոյության և ամեն բարության: Եվ երբ ճանաչում ու զգում ենք այս իրողությունը՝ մենք էլ հրաշքով դառնում ենք աղբյուր բարյաց, աղբյուր գիտության ու արարումի: Աստված մեր մեջ բնակվում է Իր սիրով, որով ստեղծել է արարչությունը և որով խնամում է, որով փրկել է մարդուն, որպեսզի նա մաքուր սրտի կատարյալ հավատով հաստատուն մնա դեպի իր Արարիչը ընթացքի մեջ՝ միշտ հայցելով շնորհը, սերը և աստվածային սրբարար գործությունը՝ լինելու աստվածային Սուրբ ընտանիք:

Փառք և գոհություն ենք վերառաքում առ Աստված, որ շնորհ է պարգևել նաև մեր ժողովրդին՝ Իր երկու առաքյալներով հրավիրելով մեզ մաս կազմելու Իր ընտանիքին: Մեզ շնորհել է նաև մեր Հավատքի Հորը՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչին որպես հոգեխնամ առաջնորդ, որ առանց մոլորվելու մենք գտնենք Աստծո տունը Հայոց Առաքելական Սուրբ Եկեղեցում և ինչպես մեր հայրերը՝ հավիտենական ուխտ կնքենք մեր Փրկչի հետ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում:

Մենք բոլորս անդամն ենք Աստծո հաստատած հոգևոր ընտանիքի, Էջմիածնադրոշմ հայոց ազգի, որի բարեկարգության և բարօրության համար պարտավոր ենք հոգալ՝ որպես վկայություն առ Աստված սիրո, որպես վկայություն մեր կյանքում Աստծո ներկայության: Բոլորս Աստծո տաճարներ ենք և միայն Աստծո բնակությանն արժանի սրտեր և հոգիներ պարտավոր ենք ունենալ, քանզի Աստված չի կարող բնակվել չարիքով կամ սատանայական խորհուրդներով հագեցած, հնարամիտ, շահախնդիր, կեղծավոր և հաճոյալի մարդկանց մեջ: Այնտեղ, ուր Աստված չի կարող բնակվել, այնտեղ սկսվում է ստեղծագործական խաթարումը, ավերը, թալանը, մսխումը և կործանումը: Հիրավի՝

Եթե Տերը տունը չկառուցի, իզուր են շարչարվում այն կառուցողները,

եթե Տերը քաղաքը չպահպանի, իզուր են հսկում պահապանները նրա:

Տիրախնամ ձեր թեմում այս տարվա առաջնորդող գաղափարական է հռչակվել «Եկեղեցի և տուն-մեկ հոգի դարձած» կարգախոսը: Ընտանիքը միշտ նկատվել է ինչպես Եկեղեցու, նույնպես և արդար հասարակական կյանքի հիմքը և հանդիսանում է հոգու սնուցման ու ներշնչանքի առաջին աղբյուր, ազնիվ ու անկեղծ հոգածությամբ՝ կրթիչ և դաստիարակիչ միջավայր: Այն բոլոր արժեքները, որ կազմում են ընտանիքի հոգին, փոխանցվում են զավակներին, նաև՝ ազնվություն, արդա-

րություն, ճշմարտասեր հոգի, աշխատասեր կամք ու արժանավոր նպատակի նվիրում, շնորհներ, որոնցով կենդանի է մարդու հոգին և ոչ մեռած: Ինչպես երջանկահիշատակ Գարեգին Ա Հովսեփյան կաթողիկոսն է ասել. «Հայ ընտանիքը Եկեղեցու մանրանկարն է, որի առաջին պաշտոնյան մայրն է»:

Մեր ժողովուրդը ընտանեկան առաքինի կյանքը նկարագրել և շրջագծել է «ընտանեկան սրբություն» բնորոշմամբ: Սրբությունը Աստծո ստորոգելին է և Նրանից է միայն բխում ու տարածվում: Սրբությունը առաքինի վարք ու բարի գործեր կատարել չէ միայն: Որքան էլ այս հասկացողությունները կարևոր լինեն, չեն կարող լիարժեք պարփակել և ամբողջական ու հարազատ ներկայացնել սրբության իմաստն ու նշանակությունը: Սրբությունն Աստծո հետ մարդու առնչությունն է և դրանից բխած ընթացքն ու գործերը: Ինչո՞ւ է Եկեղեցին Սուրբ: Որովհետև Աստծո կողմից է հիմնված և Աստծո գործն է անում: Ինչո՞ւ են Ավետարանը, առաքյալները, սկիհը կամ խաչը սուրբ: Որովհետև Աստծո խոսքն են, Աստծո ընտրյալները, Նրա մարմինն ու արյունը մեզ բերողը և Աստծո՝ մեզ տված փրկության նշանը:

Մեր ժողովրդի համար հայ ընտանիքը նույնպես սուրբ է, որովհետև ստեղծողն Ինքն Աստված է: Ընտանիքի միջոցով Աստված կյանք պարգևելով՝ տնօրինել է, որ այդ միջավայրի մեջ, հավատքի, հույսի և սիրո առաքինություններով մարդը աճի և զարգանա՝ ընթանալով դեպի բարին ու կատարյալը: Այդ է ընտանիքի սուրբ նկարագիրն ու առաքելությունը: Դժբախտաբար, այսօր փոխվում է ընտանիքի ճշմարիտ բնույթը, նույնիսկ անտեսվում է հիմնական սկզբունքը՝ այր և կնոջ աստվածային սիրով պսակված միությունը և որդեծնությամբ բախտավորվելու և երջանկանալու պատիվը: Մենք չենք կարող ընդունելի համարել և անտարբեր մնալ այս ցավալի իրականության հանդեպ, որքան էլ արդիական հնչեղություն ունենան, որքան էլ ժողովրդավարության և մարդու իրավունքի պաշտպանության անվան ներքո հանդես գան: Եկեղեցու պարտքն է Աստծո Օրենքը գործադրել: Եկեղեցու պարտքն է Աստծո Կամքը, աստվածադիր կյանքը ցոլացնել: Եկեղեցին, որպես ընտանիք, պետք է ճանաչի և պաշտպանի ու պահպանի այն, ինչը Աստված է կազմել ու կարգավորել:

Մեր Հայրապետական կոչն է բոլորիդ՝ ամուր պահել և պահպանել հայ ընտանիքը, նրա աստվածային նկարագիրն ու հայկական դիմագիծը: Հայ ընտանիքը մանրակերտ մի մատուռ է, փոքրիկ հայրենիք, բարության և արիության օրրան, առաջին դպրոցը, հոգևոր բարոյական արժեքների առաջին սնուցողը: Ոչ մեկ հիմք և պատճառ մենք չենք տեսնում փոխելու հայ ընտանիքի նկարագիրը: «Հաստատուն մնացեք ի Տեր», սիրելիներ: Այս է մեր հավիտենական նշանաբանը՝ պահպանել ամեն հոգևոր նվաճում և արժեք ծնող մայր՝ հայ ընտանիքը, որպեսզի հավատքի, հույսի և սիրո երեքսրբյան շնորհներով պահպանենք ու զարթոյալ նորոգենք մեր միասնական կյանքը մեր մեծ ընտանիքում՝ Հայ Եկեղեցու հարկի ներքո և իրականություն դարձնենք մեր իդձերն ու ձգտումները մեր մեծ տան մեջ՝ հայոց Հայրենիքում: Հայրապետական մեր հորդորն է. «Հաստատուն մնացեք ի Տեր», քանզի

Եթե Տերը տունը չկառուցի, իզուր են չարչարվում այն կառուցողները,
եթե Տերը քաղաքը չպահպանի, իզուր են հսկում պահպանները նրա:

Աստծուն ապավինած՝ կառուցենք մեր Հայրենիքի ազատ կյանքը, որ սերունդներ շարունակ մեր ժողովրդի մեծ զավակների երազն է եղել: Այսօր Մեր ձգտումն է տեսնել մեր Հայրենիքը բարօր ու բարեկեցիկ, գիտությամբ, մշակույթով, հավատավոր հոգու ազնիվ լույսով պայծառ: Այսօր ավելի հուսառատ են մեր սրտերը և լավատես են մեր հոգիները, քանզի արդյունավորվում են մեր ժողովրդի համախումբ ջանքերը ի սեր Հայրենիքի, նաև ավելի մոտ ենք տեսնում Արցախի հայության ազատ ապրելու իրավունքի ճանաչումը և Հայոց ցեղասպանության համընդհանուր ընդունումն ու դատապարտումը: Հավատքով զորացած պաշտպանենք մեր արդար իրավունքները, որոնց ճանաչումն ու հաղթանակը քայլ պիտի լինեն առանց բռնությունների, խաղաղ աշխարհի ընթացքների մեջ:

Մեր Տիրոջ խաղաղությունն ենք հայցում աշխարհին, ձեր կյանքին և կրկին օրհնում ու հանձնարարում ենք ձեզ. «Հաստատուն մնացեք ի Տեր»: Նրանով գիտենք՝ ինչ գրահ հագնել չարին հանդիման, ինչ վահան պարզել ստին ընդդեմ: Նրանով կենդանի է մեր հոգին և առատաբուխ ակունք է կենդանության՝ ճշմարտությամբ ու խաղաղությամբ բարեբեր:

Մեր գնահատանքն ենք բերում Ձեզ, սիրելի Սրբազան, որ անձնվեր սպասավորն եք մեր Եկեղեցու և արդյունաշատ հոգևոր վաստակ ունեք Միացյալ Նահանգների Արևելյան թեմում: Մեր գնահատանքն ենք բերում ձեզ՝ ուխտապահ սպասավորներ մեր Եկեղեցու, մեծարգո բարերարներ, Թեմական վարչությանց անդամներ, կրթության ու մշակույթի նվիրյալներ, մեր սիրելի ու հարազատ ժողովուրդ, ձեր անմնացորդ ջանքերի ու նվիրումի համար, եկեղեցասեր ու ազգասեր ձեր ոգու համար, մեր Եկեղեցուն, մեր Հայրենիքին մատուցած ծառայությունների համար:

Աղոթում ենք առ Աստված, որ միշտ խաղաղ, բարօր ու բարգավաճ պահպանի Ամերիկայի Միացյալ Նահանգները, միշտ շեն ու պայծառ՝ հայոց Արևելյան թեմը, մեր Սուրբ Եկեղեցին, որ շարունակի լինել հոգևոր մեր տունը՝ Իր հաստատած, կառուցած ու պահպանած:

Մնանք հաստատուն ի Տեր, և թող Տերը մեր՝ Հիսուս Քրիստոս առաջնորդի մեր ճանապարհները, խնամի ու արդյունավորի մեր գործերը, որ լինեն արդար ու բարերար՝ ի սեր Իր հավիտենական փառքի, Իր փրկագործ կենսաբեր տնօրինության: Ամեն:

Հավարտ Ս. Պատարագի Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպս. Խաչատրյանը ընթերցեց Հայրապետական Սրբատառ Կոնդակը, որով Նորին Սրբությունը պաշտոնապես հաստատում է «Ս. Էջմիածնի բարեկամներ» հիմնադրամը, որպեսզի այն մշտական նեցուկ և ապավինություն դառնա Մայր Աթոռին:

Նույն օրը, հետմիջօրեին, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, հանդիսավոր ճաշկերույթ կազմակերպվեց Գրանդ Հայաթ պանդոկում, որին մասնակցեց յոթ հարյուր հոգի ոչ միայն ամերիկահայ համայնքից, այլև հատուկ այս նպատակով Հայաստանից, Սիրիայից, Ֆրանսիայից, Արգենտինայից, Կանադայից և Թուրքիայից եկած հայորդիներ: Այս հանդիսությունը վարեցին Սարգիս Ճեպեճյանը և Արա Նազըրյան-Հարությունյանը: ԱՄՆ և ՀՀ օրհներգերը կատարեցին Անուշ Պարզլին և Վա-

դարշակ Օհանյանը:

Վեհափառ Հայրապետին բարիգալստյան խոսքով դիմեցին այս հանդիսության կազմակերպման կարգադիր հանձնախմբի ատենապետ Հրանտ Գյուլյանը, Թեմական խորհրդի ատենապետ Ասկըր Թադոսյանը, ԱՄՆ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Թաթուլ Մարգարյանը, ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը, Հայրապետական այս այցելության կենտրոնական հանձնախմբի ատենապետ Ջեյմս Գալուստյանը, ՀԲԸՄ նախագահ Պերճ Մեղրակյանը, «Մարոյան» հաստատության տնօրեն Հայկ Մարտիկյանը: Վերջինս Հայոց Հայրապետին նվիրեց նաև Վիլյամ Մարոյանի՝ ջրաներկով արված մի նկար:

Գեղարվեստական կատարումներով հանդես եկան երգչուհի Տաթևիկ Հովհաննիսյանը, դաշնակահարներ Տիգրան Մկրտիչյանը և Վահրապ Կյուրճյանը, դուդուկահար Ռուբիկ Վարդանյանը, ջութակահար Սամի Մերսինյանը, Անուշ Պազրլին և Վաղարշակ Օհանյանը (զուգերգ):

Հանդիսության ընթացքում ցուցադրվեց Մայր Աթոռի կողմից անցնող ութ տարիների ընթացքում իրականացված եկեղեցաշինական, բարեսիրական առողջապահական և կրթական ծրագրերը ներկայացնող մի ժապավեն:

Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը իր խոսքում ասաց. «Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի այցելութիւնը Ամերիկայի Արեւելեան թեմ, անցնող մօտ երեսուն օրերու ընթացքին, աննախընթաց երեւոյթ մը ստեղծեց. ինչպէս վերնատան մէջ երբ առաքելները միասին սեղան նստած էին՝ եւ երբ Ս. Հոգին կրակի նման անոնց վրայ իջաւ, պահ մը շփոթեցան, սակայն Ս. Հոգիով զօրացած Քրիստոսի ճշմարիտ աշակերտները դարձան: Այդ նոյն երեւոյթը այսօր զգալի դարձաւ մեր բոլոր ծովսեւորուն մէջ, ուր որ Վեհափառ Հայրապետը այցելեց. մեծէն փոքրը, Հիւսիսէն Հարաւ, Արեւելքէն Արեւմուտք, ուր որ գնաց Վեհափառ Հայրը Իր խօսքով, Իր անձով, Իր սիրոյ արտայայտութեամբ եւ Իր պատգամներով հոգեւոր մեծ խանդավառութիւն ստեղծեց: Նորին Սրբութիւնը մեզի յիշեցուց թէ ուր է մեր տունը, հայկական տունը՝ սուրբ տուն է, հիմնուած Քրիստոսի հաւատքին վրայ, զարդարուած մեր ազգային-մշակութային գեղեցիկ աւանդութիւններով: Վեհափառ Հայրապետը այդ է որ յիշեցուց մեզի: Քսաներորդ դարուն մեր ժողովուրդին վիճակուած դժբախտութիւններուն պատճառաւ Հայ ժողովուրդը որոշ չափով հեռացաւ իր արմատներէն, Եղեռնի պատճառաւ, Հայաստանի սովետականացումով, եւ այլ ընդհանրական երեւոյթներու պատճառաւ հեռացաւ իր արմատներէն: Ամենայն Հայոց Հայրապետը այս նոր դարուն, ազատ ու անկախ Հայրենիքի շունչով մեզի յիշեցուց թէ եթէ առողջ Հայ տուն կայ՝ առողջ Հայ Եկեղեցի կայ եւ կա՛յ առողջ Հայոց Հայրենիք եւ հայկական իրականութիւն: Երախտապարտ ենք Վեհափառ Տէր, Ձեր հայրական հոգածութեան համար, երախտապարտ ենք ձեր օրհնութեան համար եւ երախտապարտ ենք ձեր պատգամներուն համար»:

Խաժակ Սրբազանը նաև նշեց, որ Նորին Սրբության այցելության առաջ բերած խանդավառ մթնոլորտում Բաթն Ռուժի (Լուզիանա) Ս. Կարապետ եկեղեցու ծխական խորհրդի ատենապետ Վազգեն Գալթաթյանի հորեղբայրը՝ Մարգիս Գալթաթյանը Մայր Աթոռի թանգարանին է նվիրել Լևոն թագավորի

գահակալության շրջանին վերաբերվող հիշատակներ, ինչպես նաև Արևելյան թեմի ծխերը 350.000 դոլար նվիրատվությամբ իրենց մասնակցությունն են բերել «Հաբի-թաթի կողմից Հայաստանում անապահով ընտանիքների համար կառուցվող և «Գարեգին Բ» անվանումը կրող տնաշինական ծրագրին: Որպես շնորհակալության արտահայտություն՝ Խաժակ Սրբազանը Ս. Վարդան մրցանակը հանձնեց Հայրապետական այցելությունը համակարգող Լին Բեյլերյանին:

Հավաքվածներին այնուհետև Հայրապետական օրհնության և գնահատանքի իր խոսքը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը.

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ ՆՅՈՒ ՅՈՐԳՈՒՄ ՏՐՎԱԾ
ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻ ԺԱՄԱՆԱԿ**

(28 հոկտեմբերի 2007 թ.)

Հոգևոր եղբայրներ, բարեպաշտ, հավատավոր զավակներ,

Ուրախ ենք մեծապես ձեզ կրկին հանդիպելու համար: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից դեպի ձեզ ճանապարհվեցինք առ Աստված գոհության մաղթանքով, որ տարիներ անց վերստին պարզնեց Մեզ հնարավորությունը՝ այցելելու Ամերիկայի օրինյալ հողում ապրող հարազատ զավակներին մեր Եկեղեցու:

Մենք ուրախ ենք ողջունել և մեր հավատքի օրրան Սուրբ Էջմիածնից, Հայաստան և Արցախ հայրենի աշխարհից օրհնություն բերել ձեզ՝ Միացյալ Նահանգներում Հայաստանի Հանրապետության դեսպան, մեծարգո Տիար Թաթուլ Մարգարյան, ՄԱԿ-ում Հայաստանի Հանրապետության դեսպան մեծարգո Տիար Արմեն Մարտիրոսյան, ՀԲԸՄ նախագահ Տիար Պերճ Սեդրակյան, պետական այրեր և Ռաբի Շնայեր:

Աստծո ողորմած կամքով է, որ ութ տարի առաջ ընտրվեցինք և կոչվեցինք Ամենայն Հայոց Հայրապետության՝ բազմելու Լուսավորչի գահին: Ազգային քաղաքական ողբերգական իրադարձությունների ծանր ապրումներով սկսեցինք մեր գործունեությունը: Բայց ապավինած Աստծուն և մեր ժողովրդի ուժերին՝ եկանք հույսով և տեսիլքով և գործեցինք որքան հնարավորությունները ներեցին: Հայաստանի անկախությունը և Արցախում հաստատված խաղաղությունը բարի հույս էին ավետում վերափոխումների և պահանջ դարձնում հրատապ գործունեությունը: Դուք տեսաք ֆիլմը, որը ներկայացնում է Մայր Աթոռի վերջին ութ տարիների գործունեությունը, կյանքի կոչված ծրագրերը հոգևոր կրթության ու դաստիարակության, վարչակազմակերպչական, հրատարակչական ու ընկերային ասպարեզներում: Պատեհ ենք նկատում մեկ անգամ ևս բերելու ձեզ Մեր գնահատանքի խոսքը:

Միբեկիներ, Հայրապետական անդրանիկ Մեր այցի օրերին, որ կատարեցինք Ամերիկայի հայոց Արևելյան թեմ մեր Եկեղեցու կյանքում մեծ տոնակատարության՝ քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի տարում, հորդոր ու կոչ ուղղեցինք ձեզ՝ աջակցություն և մասնակցություն բերելու Հայրենիքի առջև ծառա-

ցող խնդիրների հաղթահարմանը և նոր կյանքի կառուցմանը: Տեսանք որդիական սիրո ջերմ արձագանքը, որով դուք շտապեցիք գործել, հայրենաբնակ ձեր եղբայրների ու քույրերի հետ ջանք ու ներդրում բերել Հայրենիքի վերածնվող կյանքին: Դպրոցաշինության, առողջապահության, մշակույթի զարգացման, տնտեսության առաջընթացի, սոցիալական ապահովության, ճանապարհաշինարարության և այլ կարևոր ոլորտներ են ներառում ձեր կողմից կյանքի կոչված բազմաթիվ ծրագրերն ու նախաձեռնությունները: Ձեզանից շատերը հանձն առան նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ծրագրերի հովանավորությունը՝ նորոգելով ու կառուցելով եկեղեցիներ, եկեղեցապատկան կառույցներ, Հայորդյաց տներ՝ ներդրում բերելով եկեղեցականների պատրաստության, հայրենաբնակ մեր գավակների հոգևոր կրթության ու քրիստոնեական դաստիարակության գործին և այլ ծրագրերի:

Այս մեծ իրագործումների գոհունակության զգացումով Մեր բարձր գնահատանքն ենք բերում ձեզ ազգասեր ու հայրենասեր ձեր ոգու համար, Հայրենիքին բերած ձեր աջակցության, ազգային կյանքին՝ ներդրումի, նաև՝ անդուլ և աննկուն ձեր ջանքերի համար, որով Արևելյան թեմը շարունակում է մնալ շեն ու պայծառ: Եկել ենք սատարումի նոր հորդոր ուղղելու ձեզ: Հայրենիքը և մեր Սուրբ Եկեղեցին դեռևս զգում են ձեր աջակցության կարիքը: Դեռ անելիքներ ունենք երկրի առաջընթացի, ժողովրդի բարեկեցության, հոգևոր և մշակութային վերագարթոնքի ճանապարհին: Վերակառուցման ու բարեկարգման կարիքն ունեն բազմաթիվ գյուղական բնակավայրեր, տնտեսապես զարգանալու անհրաժեշտություն՝ սահմանային շրջանները: Դեռևս բազմաթիվ եկեղեցիներ կան, նաև հնագույն ու նշանավոր վանքեր, որ սպասում են նորոգության, բազմաթիվ բնակավայրեր կան, որ չունեն աղոթատներ: Հարկ է լրացնել քրիստոնեական իմացության պակասը, նաև շտկել արմատավորված թյուր իմացությունը, միտումնավոր ու սխալ մեկնաբանությունները հավատի ու քրիստոնեության և մեր Եկեղեցու մասին:

Եղեռնի և խորհրդային տարիների հարվածները և ցավագին հետևանքները իր մարմնի և հոգու վրա կրում է աշխարհասփյուռ մեր Եկեղեցին և ողջ ժողովուրդը: Փլուզված եկեղեցական կառույցը վերականգնված չէ Հայաստանում, Արցախում և Սփյուռքի որոշ թեմերում: Մառը պատերազմի պայմաններում, երբ էապես դժվարացան և մեծապես տկարացան Սփյուռքի թեմերի հետ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կապերը, Սփյուռքի հայությունը՝ զերծ Սուրբ Էջմիածնի հոգևոր և վարչական լիարժեք և ամբողջական առաջնորդությունից, տարբեր երկրներում հաճախ հարկադրված եղավ ինքնուրույն կազմակերպելու և պահպանելու իր հոգևոր և ազգային կյանքը: Տարբեր երկրներում տիրող իրավիճակների արդյունքում եկեղեցական կյանքում ծնունդ առած հարցերն ու խնդիրները հաճախ վճռվել են տեղական անհրաժեշտությամբ, այդ պահին հարմար՝ երբեմն նույնիսկ՝ կամայական որոշումներով: Արդյունքում համայնքներում և թեմերում տեղ են գտել կանոնական, ծիսական և կազմակերպական բնույթի խախտումներ՝ շփոթություններ ու դժվարություններ առաջ բերելով մեր եկեղեցական կյանքի մեջ: Ոչ նվազ բարդությունների պատճառ է դառնում բացակայությունը Հայ Եկեղեցու Մահմանադրության և թեմական տիպային կանոնադրության՝ հաստատված մեր Եկեղեցու կանոնական սկզբունքների

և ավանդույթների վրա, որպեսզի պահպանվեն եկեղեցական կյանքի մեջ կանոնական ոգին ու սկզբունքները, և հիմնարար դրույթները ընդհանուր լինեն թեմերի ու համայնքների համար:

Այսօր Սփյուռքի հայության կարևորագույն հրամայականը ծխական կյանքը ազգային կյանքի կենտրոն դարձնելն է՝ լինի կանոնադրական, ծիսական բարեփոխման, արդյունավետ հովվական ծառայության, տեխնիկայի արդի հնարավորությունների օգտագործման, ընդդեմ նյութականացման՝ հոգևորի գորացման, թե այլ միջոցներով: Եղեռնից հետո չորրորդ սերունդն է Սփյուռքում, և աննվազ պիտի լինի մեր ջանքը սնուցելու և զորացնելու նոր սերնդի հոգում հավատքի ու սիրո կապը իր ինքնության հետ, իր ազգային և եկեղեցական կյանքի հետ: Ծիսական արարողությունը այսօր չի կարևորվում երիտասարդ սերնդի կողմից, երբ ունենալով լավագույն համալսարանական կրթություն, չունեն անհրաժեշտ հոգևոր և ազգային կրթություն, քրիստոնեական ճանաչողություն:

Քրիստոնեական ճանաչողության ու հավատքի գորացման, ազգային ժառանգության պահպանության հրամայականները պահանջում են կանոնական, կազմակերպական ու ծիսական հարցերի արագ արձագանքներ ու պատասխաններ, որպեսզի Եկեղեցու խնամքի ու հովվության ներքո բնականոն ընթանա մեր ժողովրդի հոգևոր ու ազգային կյանքը, որպեսզի խնդիրները այսուհետ վերաբերվեն ոչ թե պակասը լրացնելուն, այլ զարգացմանն ու առաջընթացին:

Բարեփոխումները Եկեղեցու պատմության և ավանդույթի մաս են կազմել և քննարկվել եպիսկոպոսական ու ազգային-եկեղեցական ժողովներում: Մեր Եկեղեցու հայրերը փոփոխություններին վերաբերվել են՝ նկատի առնելով կենսական անհրաժեշտությունը, թե որքանով է նպաստում հավատացյալի հոգևոր առաջընթացին, հավատի գորացմանը, Եկեղեցու պայծառությանն ու ամրապնդմանը, որքանով է պահպանում ընտանիքը, զորացնում և շենացնում ազգը: Այս ընթացքին հավատարիմ պիտի գործենք և այսօր մենք ձեզ հետ միասին:

Եթե 20-րդ դարը գոյատևելու ժամանակաշրջան էր մեր ժողովրդի համար, 21-րդ դարը վերածննդի ժամանակաշրջան պիտի լինի: Աստծո ողորմությամբ և մեր ժողովրդի նախանձախնդրությամբ պիտի հաղթահարենք հինգ տասնամյակ շարունակվող ներեկեղեցական պառակտումը: Ամենայն Հայոց Հայրապետության և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հանձնախմբերը այդ ուղղությամբ աշխատանքներ են իրականացնում, որոնք, հավատում ենք, պիտի հանգեն անհրաժեշտ արդյունքի՝ ի սեր մեր Եկեղեցու գորության ու պայծառության: Ներկայիս, երբ ազատ է Հայրենիքը, երբ միաբանությունը ազգի հրամայական պահանջ է, և խանգարող ու խոչընդոտ չեն այլևս քաղաքական իրավիճակներից բխող անջրպետվածությունն ու զգուշավորությունը, ժամանակն է, որ հաղթահարվեն նաև դրանց ցավալի հետևանքները:

Հայրենիքում և Սփյուռքում մեր Եկեղեցին պիտի շարունակի լինել հավատի լուսավոր ու պայծառ ակունք, մեր հայրենյաց ավանդներով սնուցող ակունք, ինչպես եղել է իր գոյության ողջ ընթացքում, դարեր շարունակ, փորձությունների ու նեղությունների մեջ, նահատակությունների ճանապարհին, պիտի լինի այսօր, երբ

հայոց երկնքում փայլում է հույսի աստղը:

Այսօր լավատես ու քաջալեր ենք բոլորս, քանզի խաղաղության մեջ մեր Հայրենիքը առաջընթաց է ապրում՝ հակառակ դժվարությունների, որոնք դեռևս առկա են: Համակարգային վերափոխումներին զուգընթաց նկատելի է կյանքի բարելավումը, տեսանելի են դառնում զարգացման ուղիներ ու հեռանկարներ: Մեր ժողովրդի զավակները ազատորեն կարող են այցելել Հայաստան և Արցախ, ճանաչել Հայրենիքը, խոնարհվել մեր սրբություններին: Շարունակական են դարձել համահայկական ծրագրերը, մշակութային ու մարզական միջոցառումները, որոնք ներշնչանք ու քաջալերություն են դառնում երիտասարդության համար: Հայրենիքի ազատ կյանքը դյուրին է դարձնում մեր ժողովրդի՝ միասնաբար ապրելու ձգտումը, իր իղձերը իրականացնելու, իր մտքի և հոգու կարողությունները օգտագործելու, իր տաղանդը դրսևորելու հնարավորությունները: Հայրենիքը եղել ու մնում է հույսը հայության, ներշնչանքն ու զորությունը, պարծանքն ու փառքը: Վերականգնած հայրենի պետականությունը, Հայաստանի ու Արցախի լուսավոր գալիքով վերածնված, աշխարհասփյուռ իր կենսական ուժերով միասնական՝ մեր ժողովուրդը կերտելու է իր կյանքի վերածնունդն ու հարատևությունը: Նվիրումով ու համատեղ պիտի շարունակենք ջանալ, որպեսզի Աստծո օրհնությամբ իրավական ճանաչում գտնի արցախահայության ազատ ապրելու իրավունքը, հաղթանակի մեր արդար դատը: Համատեղ ուժերով պիտի հասնենք նաև Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչմանը, որում իր կարևորությամբ պատմության գնահատանքին է արժանի ամերիկահայության ներդրումը:

Հայրապետական օրհնությամբ վերստին Մեր գնահատանքն ենք բերում Ձեզ, սիրելի Սրբազան, ուխտապահ սպասավորներ մեր Եկեղեցու, մեծարգո բարերարներ, Թեմական վարչությանց անդամներ, կրթության ու մշակույթի նվիրյալներ և համայն ամերիկահայ մեր սիրելի ու հարազատ ժողովրդին:

Աղոթում ենք, որ Տերը խաղաղ ու բարօր պահպանի Միացյալ Նահանգները, պարզևի ավելի ու ավելի առաջընթաց՝ Հայաստան և Արցախ հայրենի մեր երկրին և Իր շնորհի ներքո պայծառ պահի Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, հայոց Արևելյան թեմը, օրհնի ձեր կյանքը երջանկությամբ ու բարի արդյունքներով:

Նորին Սրբությունը սեղանի խաչ նվիրեց թեմակալ առաջնորդ Խաժակ Սրբազանին և հուշապնակներ՝ Թեմական խորհրդի ատենապետ Ասկր Թադոսյանին, հայրապետական այցելության կենտրոնական հանձնախմբի ատենապետ Ջեյմս Գալուստյանին և այցելության ընթացքը համակարգող Լին Բեյլերյանին:

Հանդիսությունը ավարտվեց Տերունական աղոթքով և Նորին Սրբության ասած «Պահպանիչով»:

Հոկտեմբերի 29-ի առավոտյան Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակությանը նախաճաշի էր հրավիրել ՄԱԿ-ի մոտ Վատիկանի մնայուն դիտորդ Սելեստինո արքեպս. Միլիտորին: Ներկա էին ՄԱԿ-ում ՀՀ լիազոր և մնայուն դեսպան Արմեն Մարտիրոսյանը և քույր Եկեղեցիների բարձրաստիճան ներկայացու-

ցիչներ:

Միլկորի արքեպիսկոպոսի ողջույնի խոսքից հետո հավաքվածներին ուղղված իր խոսքում Վեհափառ Հայրապետը ասաց. *«Մենք փոքր ազգ ենք, սակայն եկեղեցական հարաբերություններում մեր կեցվածքը բնորոշ է գորավոր եկեղեցիներին և գորավոր ազգերին: Փոքր ազգերին բնորոշ է ամփոփված մնալը՝ պահելու համար իրենց արժեքները, իրենց ավանդությունները և պաշտպանելու իրենք իրենց, որից սակայն չեն վախենում ո՛չ մեր Եկեղեցին և ո՛չ էլ մեր ազգը: Մեր կյանքն ու գործունեությունը բնորոշ է մեծ և գորավոր ուժեր ունեցող ազգերին: Այդ ուժը մենք ստանում ենք Տիրոջից, Նրա հանդեպ ունեցած մեր հավատից: Չենք կարող մեր ճանապարհը շարունակել, եթե այն Աստծո կամքը չլինի»:*

«Խղճմտանքի կոչ» հաստատության նախագահ Բաբբի Արթուր Շնայերը իր խոսքում անդրադարձավ այն խանդավառությանը, որն առաջ էր եկել իր գլխավորած համայնքում:

Ժամը 12.00-ին Ասորի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Տ. Մար Սիրիլ արքեպս. Աֆրամ Քարիմի հրավերով Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորած պատվիրակությունը Ս. Մարկոս Եկեղեցում մասնակցեց հայ և ասորի հոգևորականների մատուցած համատեղ աղոթքին, որին ներկա էին և Ուղղափառ ու Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչները, ինչպես նաև մեծ թվով հավատացյալներ:

Վեհափառ Հայրապետը Խաժակ Սրբազանի հետ այնուհետև ՄԱԿ-ի կենտրոնակայանում հանդիպեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Բի-Մունի հետ:

Նույն օրը Հայոց Հայրապետը եղավ նաև Նյու Ջերսիի Մոնմաութ համալսարանում, որի մուտքին Նորին Սրբությանը դիմավորեց համալսարանի ռեկտոր դոկտ. Պոլ Կաֆնին:

Համալսարանում կազմակերպված ընդունելությանը ներկա էին նաև կոնգրեսական Ժոզեֆ Կիրիլիոսը, Բեռ Պանքի քաղաքապետ Փաթ Մեննան և Լոնկ Պիչի քաղաքապետ Ադամ Շնայդը, որոնք հատուկ արարողությամբ իրենց քաղաքի բանալիները հանձնեցին Նորին Սրբությանը:

Երեկոյան ժամը 19.00-ին Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Նյու Ջերսիի Ս. Ստեփաննոս Եկեղեցի: Հայոց Հայրապետի այս այցելությունը համընկավ Ս. Ստեփաննոս Եկեղեցու օծման քսանամյակին: Մինչ Եկեղեցի մտնելը Նորին Սրբությունը ասաց. *«Ահա այսպիսի գեղեցիկ տեսիլք ունեցան 20 տարի առաջ տեր և տիկին Հովնանյանները, իրենց սերը դեպ հայ ժողովուրդը և իրենց սերը դեպ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և Հայոց Եկեղեցին նրանց մղեց այստեղ հաստատված մեր զավակների համար կառուցելու այս գեղեցիկ, այս հիասքանչ, այս պայծառաշուք եկեղեցին՝ այն կոչելով Սուրբ Ստեփաննոսի անունով: Նրանք իրենց հոգում կրող եկեղեցին էր, որ մարմնավորեցին ազգի համար»:*

Մենք գիտենք, սիրելիներ, որ եկեղեցին միայն քարեղեն կառույց չէ, որ եկեղեցին միայն շինություն չէ, որ եկեղեցին մարդկանց հոգին է, ուր Աստված բնակվում է մարդկանց հոգիների եկեղեցում:

Կառուցելով այս եկեղեցին՝ բարերարների ազնիվ փափագն էր տեսնել, որ այս եկեղեցին պիտի կառուցվի յուրաքանչյուր հայորդու հոգուց ներս՝ այնպիսի փառա-

շուք եկեղեցի, որ իրենք կառուցեցին ձեզ համար»:

Նորին Սրբությունը եկեղեցուն նվիրեց մի սրբանկար, իսկ եկեղեցու հովիվ Ս. Մամիկոն վրդ. Քիլեճյանին՝ վարդապետական լանջախաչ:

Արարողությունից հետո եկեղեցուն կից սրահում տեղի ունեցավ հյուրասիրություն, որի ընթացքում գեղարվեստական հայտագրով հանդես եկան երեխաները:

Հոկտեմբերի 30-ի առավոտյան առաջնորդարանի դահլիճում Հայոց Հայրապետը նախ հանդիպեց Կաթողիկ Եկեղեցու Նյու Յորքի առաջնորդ կարդինալ Իկլնի, ապա Հույն Եկեղեցու Նյու Յորքի առաջնորդ Տիմոթեոս արքեպիսկոպոսի հետ:

Ի պատիվ Վեհափառ Հայրապետի կեսօրին առաջնորդարանում կազմակերպվեց հյուրասիրություն, որին հրավիրված էին «Ս. Էջմիածնի Բարեկամներ» հիմնադրամի վարչության անդամները ու ևս վաթսուն հրավիրյալներ: Հյուրասիրության ընթացքում Նորին Սրբությունը իր գնահատանքը բերեց հիմնադրամը հաստատողներին և «Ս. Ներսես Շնորհալի» շքանշան հանձնեց հիմնադրամի աջակից Բարեկամներին:

Հայոց Հայրապետը այնուհետև առաջնորդարանի դահլիճում Ս. Վիգեն արքեպս. Ալքազյանի հետ միասին հանդիպեց Խաղաղության կրոնների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Ուենտլիի և խորհրդի վարիչ Հայր Քիշքովսկիի հետ:

Նույն օրը տեղի ունեցավ նաև առաջնորդարանի Գրիգոր և Կլարա Զոհրապ տեղեկատվության վերանորոգված և վերակազմակերպված կենտրոնի բացումը՝ ձեռամբ Հայոց Հայրապետի, ի ներկայության թեմակալ առաջնորդ Ս. Խաժակ արքեպս. Պարսամյանի, Բարձրաստիճան հոգևորականների և առաջնորդարանի պաշտոնեական:

Հանդիսության ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը վարդապետական լանջախաչ նվիրեց ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանին և լանջախաչ Ս. Վարդան Մայր Տաճարի լուսարարապետ Ս. Մարտիրոս քին. Չկյանին:

Նյու Յորքից Լոնկ Այլնտի օդանավակայան ճանապարհին Նորին Սրբությունը այցելեց Նյու Յորքի Տարեցների տուն, ուր կատարեց Տնօրինների արարողություն՝ օրհնելով այստեղ բնակվող տարեցներին և աղոթելով նրանց առողջության համար:

Այստեղից Նորին Սրբության գլխավորած պատվիրակությունը ուղևորվեց օդանավակայան, ուր նրանց դիմավորեց Դեյտրոյտի «Մասկո» ընկերության հայկական բաժանմունքի նախագահ Երվանդ Ազատյանը: Հայրապետական շքախմբի անդամները «Մասկո» ընկերության օդանավով մեկնեցին Դեյտրոյտ, ուր քաղաքի օդանավակայանում դիմավորվեցին տեղի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հոգևոր հովվի, ծխական խորհրդի անդամների և դպրոցական աշակերտների կողմից:

Հոկտեմբերի 31-ի առավոտյան Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակությունը այցելեց «Մասկո» ընկերության կենտրոնատեղին, ուր հյուրասիրություն էր կազմակերպվել Հաբիթաթի պատասխանատուների մասնակցությամբ:

«Մասկո» ընկերության նախագահ Ռիչարդ Մանուկյանի բարիգալստյան խոսքից հետո ցուցադրվեց Հաբիթաթի Հայաստանի մասնաճյուղի գործունեության մասին մի ժապավեն:

ԱՄՆ հայոց Արևելյան թեմի թեմական պատվիրակ և միջեկեղեցական հարաբերությունների վարիչ-տնօրեն Տ. Վիգեն արքեպս. Այքազյանը ներկայացրեց Հաբիթաթի և այս կազմակերպության՝ Հայաստանում ծավալած գործունեությունը:

Կեսուրին Ս. Հովհաննես Մկրտիչ Եկեղեցու սրահում տեղի ունեցավ հանդիպում հայ և քույր Եկեղեցիների հոգևորականների մասնակցությամբ, որին ներկա էին Դեյտրոյտի Կաթոլիկ Եկեղեցու արքեպիսկոպոսարանից՝ կարդինալ Ադամ Մայիտան, Հույն Ուղղափառ Եկեղեցուց՝ Նիկոլաս արքեպիսկոպոսը և Ռումինական Եկեղեցուց՝ Նաթանիել արքեպիսկոպոսը: Այնուհետև խոսք ասաց Վեհափառ Հայրապետը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՄԻՋԵԿԵԴԵՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Սիրելի եղբայրներ և քույրեր ի Քրիստոս,

Գոհություն և փառք ենք մատուցում Բարձրյալին, քանզի այսօր Հյուսիսային Ամերիկայում հայ համայնքին ու հավատացյալ հոտին Մեր Հովվապետական այցի շրջանակներում ուրախալի մի առիթ ընձեռեց Մեզ՝ որպես Հայրապետ Հայոց հանդիպելու Ձեզ և ողջունելու յուրաքանչյուրիդ՝ եղբայրության և սիրո այս ջերմ մթնոլորտում:

Եկել ենք այսօր ողջունելու և բարեմաղթանքներ հղելու Մեր եղբայրներին և քույրերին ի Քրիստոս: Եկել ենք հեռավոր Հայաստանից՝ աշխարհասփյուռ հայության հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ բերելու Հայաստանում բնակվող Մեր զավակների սերն ու հարգանքը:

Գոհունակ սրտով ենք անդրադառնում Հայոց Մեծ եղեռնից և տարագրությունից մազապուրծ Մեր զավակների համար հայրենիք դարձած հյուրընկալ այս երկրում տիրախնամ Մեր թեմերի և Ձեր միջև առկա եղբայրության և գործակցության բարի օրինակին, որի արդյունքում առաջին անգամ չէ, որ հանդիպում ենք միասին:

Հիշում ենք եղբայրական սիրո այն անմոռաց պահերը, երբ Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելեցին ԱՄՆ Եկեղեցիների տարբեր պատվիրակությունները, ընկերակցությամբ և ուղեկցությամբ ԱՄՆ-ի հայ հոգևորականաց դասի և առաջնորդների՝ ավելի զորացնելու Մեր եղբայրական հարաբերությունները, հաղորդ դառնալու Հայ Եկեղեցու հոգևոր ժառանգությանը և ծանոթանալու Հայ Եկեղեցու ձեռքբերումներին և առաջընթացին Հայաստան աշխարհում:

Հարաբերությունները Հայ Եկեղեցու և ԱՄՆ-ում գործող Եկեղեցիներին և էկումենիկ կազմակերպություններին միջև արդեն իսկ իրենց բարի պտուղներն են տալիս. գորավիզ ենք միմյանց նեղության և դժվարության պահին, սատարում ենք միմյանց՝ օգնելով կարոտյալներին՝ բնակարաններ կառուցելով և ապաստան տալով նրանց, որ դրա կարիքն ունեն: Խնդակից ենք նաև ուրախության մեջ, քանի որ

մարդկանց ջերմություն ենք պարզևում և սիրո լույսը՝ Սուրբ Ավետարանի:

Աղոթական հարատև ջանքերի և տքնաջան աշխատանքի արդյունքն է, որ այսօր ապրում ենք միասին անթաքույց սիրով լի Մեր եղբայրությունը: Մաքառումների և ամուր կամքի դրսևորման շնորհիվ հաղթահարեցինք շատ պատնեշներ, որոնք բաժան էին հանդիսանում Եկեղեցիների, երկրների ու քաղաքակրթությունների միջև:

Արդարև, բազմաթիվ են հնարավորություններն այսօր՝ ավելի զարկ տալու փոխադարձ մեր հարաբերություններին և համատեղ վկայելու Մեր ժառանգած աստվածատուր պարզևները, ընթանալու միության տիրավանդ ճանապարհով: Տիրոջ պատգամն է. «Որպեսզի ամենքը մի լինեն. ինչպես Դու, Հա յր, Իմ մեջ, և Ես՝ Քո մեջ, որպեսզի նրանք էլ մեր մեջ լինեն, և որպեսզի աշխարհն էլ հավատա, թե Դո՛ւ ուղարկեցիր Ինձ» (Հովհ. ԺԷ 21):

Միբելի քույրեր և եղբայրներ, դեռ շատ չուծված խնդիրներ կան մեր առջև: Հակառակ ձեռքբերումներին, կարիք ունենք էլ ավելի համատեղելու մեր ուժերը՝ ժամանակակից կյանքի և աշխարհայնության մարտահրավերները համատեղ վկայությամբ դիմագրավելու համար:

Բազմաթիվ կանայք, երեխաներ և ծերեր, տարբեր հասակի մարդիկ, մեր քույրերն ու եղբայրները, աշխարհի զանազան մասերում, տառապանքի և կարոտի մեջ են այսօր: Տարածաշրջանային վեճերը, զինված բախումները և աճող բռնությունը՝ արտահայտված կրոնական ծայրահեղականությամբ, փոխադարձ հոգևոր, մշակութային և բարոյական արժեքների ու իրավունքների ոտնահարմամբ, ցավ են պատճառում ամենքիս: Մեր ուշադրության կենտրոնում են շրջակա միջավայրի պահպանության խնդիրները, արագընթաց աճ ունեցող ժամանակակից տնտեսական հարաբերություններում արդարության և համահավասար զարգացման հրամայականը:

Փառք ենք տալիս Աստծուն, որ մեր միջև հաստատված ամուր կապերի, տարբեր Միջեկեղեցական, ինչպես նաև միջկրոնական կազմակերպությունների միջոցով կարողանում ենք խորհրդածել միասին և համագործակցել տարբեր կրոնների և քաղաքակրթությունների ներկայացուցիչների միջև խաղաղ և անվտանգ կյանքի համար՝ մեր ձայնը լսելի դարձնելով ու մեր կոչերն ուղղելով աշխարհի բարի կամքի տեր մարդկանց:

Միջեկեղեցական հարաբերությունները հրամայական են Մեզ համար: Հայ Եկեղեցին, հանդուրժողականության և համագործակցության սիրո ոգով առլեցուն, քույր Եկեղեցիների հետ գործակցելու և այլ կրոնների ներկայացուցիչների հետ խաղաղ համակցության իր հինավուրց և հարուստ ավանդությամբ, շարունակելու է ներդրում ունենալ միջեկեղեցական և միջկրոնական հարաբերություններում՝ զարկ տալով երկխոսությանն ու եղբայրությանը՝ քանզի սիրո և փոխադարձ հարգանքի վրա հիմնված հարաբերությունները վստահություն են ծնում, վերացնում են վախի և կասկածի զգացումները՝ մարդկանց մղելով հաշտության, անկեղծ և կառուցողական համագործակցության:

Նույն մղումներով այսօր եկել ենք այստեղ՝ զորացնելու Մեր սերը, աղոթելու միասին, որ Բարձրալին Աստված օրհնի մեր ջանքերը՝ ի սեր մարդկության առա-

*ջընթացի և հաշտության, նոր և խաղաղ կյանքի կառուցման, բոլոր հույսերի ու իդ-
ձերի մարմնավորման:*

*Թող Աստված օրհնի ձեր ընտանիքները, համայնքներն և Եկեղեցիներն ու նրանց
առաջնորդներին: Թող Տերն Իր երկնառաք շնորհներով զարդարի ձեզ բոլորիդ՝ խա-
ղաղ և անվրդով կյանք պարգևելով ամենքին:*

Ամենայն Հայոց Կաթողիկոսը 16.00-ին հանդիպեց Կանադայի հայոց թեմի ա-
ռաջնորդ Տ. Բագրատ եպս. Գալստանյանի և Կանադայի Թեմական խորհրդի ան-
դամների հետ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը 17.00-ին «Հրաշափառ»-ով առաջնորդվեց Ս. Հով-
հաննես Մկրտիչ եկեղեցի, ուր իր պատգամը հղեց հավաքված հավատացյալ հա-
յորդիներին:

Նոյեմբերի 1-ի առավոտյան Հայոց Հայրապետի գլխավորած պատվիրակություն-
նը այցելեց ՀԲԸՄ Ալեք և Մարի Մանուկյանների վարժարան, որն ունի 340 աշա-
կերտ, որոնք հանդես եկան գեղարվեստական ճոխ հայտագրով: Նորին Սրբությու-
նը իր գոհունակությունը և ուրախությունը հայտնեց աշակերտների կատարումնե-
րի համար և Ս. Էջմիածնից բերված փոքրիկ խաչեր բաժանեց:

Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն կից սրահում երեկոյան կազմակերպվեց հա-
մայնքային հյուրասիրություն ի պատիվ Վեհափառ Հայրապետի, որին ներկա էր
600 հոգի, այդ թվում եկեղեցու ծխական համայնքի իննսուն տարեկանից բարձր
քսան անդամներ, և օրվա կարգախոսն էր «Համայնքի ամենատարեց անդամների
վերապրումը»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը 15.00-ին այցելեց Ալեք Մանուկյանի անվան ծերա-
նոց՝ հանդիպելով այստեղ բնակվողների հետ, ապա օրհնեց ծերանոցի շրջափա-
կում կանգնեցված խաչքարը:

Նոյեմբերի 3-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հա-
յոց Կաթողիկոսը, ավարտելով Հովվապետական այցը ԱՄՆ հայոց Արևելյան թեմ,
վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Օդանավակայանում Նորին Սրբությանը դիմավորեցին Վանական խորհրդի
նախագահ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը, Մայր Աթոռի Միջեկեղեցական
հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը,
Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ
արքեպիսկոպոս Կճոյանը, Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս
Գալթազյանը, փոխղիվանապետ Տ. Մեսրոպ աբեղա Պարսամյանը և Տեղեկատվա-
կան համակարգի տնօրեն Տ. Վահրամ քահանա Մելիքյանը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Նորին Սրբությանը դիմավորեցին Մայր Աթոռի
միաբանները, և Մայր Տաճարի զանգերի դողանքների ներքո Վեհափառ Հայրապե-
տին թափորով առաջնորդեցին Մայր Տաճար, ուր Իջման Ս. Սեդանի առջև կատար-
վեց բարիգալստյան արարողություն: Հավարտ աղոթքի Մայր Աթոռի միաբանութ-

յան անունից Նորին Սրբությանը ողջունեց Փառեն Սրբազանը՝ մեծապես կարևորելով Հայոց Հայրապետի այցն ԱՄՆ Արևելյան թեմ: Այնուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսը, փառք և գոհություն հայտնելով Աստծուն, ուրախություն հայտնեց, որ վերստին Մայր Աթոռի միաբանության հետ է և անդրադարձավ Հովվապետական մեկամսյա այցի մանրամասներին:

Գարեգին Երկրորդ Վեհափառ Հայրապետի աշխարհասփյուռ հայությանը տրված հովվապետական մյուս այցելությունների նման այս այցելությունը ևս դարձավ հոգենորոգության ու մեր ազգային եկեղեցական արմատների առավել ամուր կառչելու մի նոր լիցք և խթան:

Լարված և խիտ ժամանակացույցով այս այցելությունը թե ինչպիսի անկրկնելի պահեր պարգևեց ու հայապահպանության ինչպիսի հզոր լիցքեր հաղորդեց ամերիկահայությանը, առավել կապելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, կենդանիորեն արտացոլված է ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդարանի դիվանի Վեհափառ Հայրապետի Հովվապետական այցելության ավարտվելուն վերաբերվող հետևյալ գրությունում, որով էլ եզրափակենք այս ուղևորության նկարագրությունը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԻԱՄՍԵԱՅ ՀՈՎՈՒԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԱԻԱՐՏԵՑԱԻ

«ՀՈՎՈՒԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ՝ ՀԱԻԱՏՔԸ ՏՈՒՆ ԲԵՐՈՂ»

Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի Հովուապետական միամսեայ այցելությունը՝ Ամերիկայի Արևելեան թեմին աւարտեցաւ Ուրբաթ Նոյեմբեր 2՝ երբ առաւօտուն Նորին Սրբութիւնը Տիբորյթէն ճամբայ ելաւ դէպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Այս այցելութեան կարգախօսն էր «Հովուական Այցելութիւն՝ Հաւատքը տուն բերող»: Թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան՝ Ս. Վարդան Մայր տաճարին մէջ տեղի ունեցած առաջին «Հրաշափառի» արարողութեան ընթացքին իր բարեգալստեան խօսքին մէջ ըսաւ. «Ո՛վ կրնայ հաւատքը տուն բերել՝ եթէ ոչ Ամենայն Հայոց Հայրապետը»: Իրապէս ալ՝ մէկ ամսուան ընթացքին՝ Նորին Սրբութիւնը ուր որ գնաց՝ «հաւատքը տուն բերաւ»:

Ամերիկայի Արևելեան թեմին համար աննախընթաց երեւոյթ էր, կը կարծենք որ աննախընթաց երեւոյթ էր նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին համար, որ մէկ ամսուան ընթացքին այցելէ մէկ թեմի մը 18 շրջանները, մեծ, փոքր կամ նորակազմ ծուխեր եւ Իր Հայրապետական օրհնութիւններն ու պատգամները բաշխէ անխտիր իր բոլոր զաւակներուն:

Պատրաստուած էր շատ խճողուած յայտագիր մը եւ ժամանակացոյց մը, որոնք գործադրուեցան չնչին փոփոխութիւններով:

Բազմաթիւ հայորդիներ չէին տեսած Ամենայն Հայոց Կաթողիկոս մը, եւ կը կարծէին որ Ան անմերձենալի անձնաւորութիւն մըն էր: Մակայն այս այցելութեան ըն-

թացքին ի յայտ եկաւ որ կարելի էր Անոր մօտենալ, կարելի էր Անոր հետ խօսիլ, Անոր դպչիլ եւ Անոր հետ ողջագործուիլ: Ամենայն Հայոց Կաթողիկոսը «մարդացած» անձնաւորութիւն մըն է՝ որ մանուկին հետ՝ մանուկին լեզուով կը խօսի, երիտասարդին հետ կը բաժնէ անոր մտահոգութիւնները եւ համբերութեամբ կ'ունկնդրէ տարեցին ու կը մխիթարէ եւ կը յուսադրէ զայն: Ա՛յս Ամենայն Հայոց Կաթողիկոսն է որ տեսան եւ վայելեցին Ամերիկայի Արեւելեան թեմի հաւատացեալները:

Երեսուն օրերու խիստ յոգնեցուցիչ այցելութիւն մը, որուն աւարտին ո՛չ Ամենայն Հայոց Հայրապետին եւ ո՛չ ալ ամէն տեղ Անոր ընկերացող թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանի դէմքերուն վրայ յոգնութեան նշոյլ մը երեւցաւ: Ամէն տեղ՝ կարծէք առաջին այցելութիւնն էր. նոյն խանդը, նոյն եռանդը եւ նոյն ոգեւորութիւնը:

Ամենայն Հայոց Հայրապետը այս ամիսը եկաւ պատգամելու որ հայը իր ընտանեկան յարկը անեղծ պահպանէ, առ Քրիստոս իր հաւատքը առաւել եւս զօրացնէ, անխախտ պահէ ազգային-եկեղեցական աւանդութիւնները, անվերապահօրէն սիրէ հայ ժողովուրդի հոգեւոր կեդրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, Մայր Հայրենիքը եւ տէրը կանգնի իր արդար դատին եւ իրաւունքներուն:

Մէկ ամսուան այցելութեան ընթացքին Նորին Սրբութիւնը բազմաթիւ առիթներով, երբեմն նոյն վայրին մէջ երկու անգամ, Իր խօսքը ուղղեց հաւատացեալներուն, եւ ամէն անգամ նորութիւն մը ունէր ըսելիք, պատգամելիք ու յորդորելիք:

«Հրաշափառի» արարողութիւններու շարք մը տեղի ունեցաւ, Նորին Սրբութիւնը նորակառոյց եկեղեցի օծեց, հանդիպում ունեցաւ հայ հոգեւորականներու, մանուկներու, երիտասարդներու, տարեցներու, Հ.Բ.Ը.Միութեան նախագահին եւ անդամներուն, «Ս. Էջմիածնի Բարեկամներու Հիմնադրամի» անդամներուն, ՄԱԿ-ի Ընդհանուր քարտուղարին, ինչպէս նաեւ ոչ հայ միջեկեղեցական եւ միջկրօնական բարձրաստիճան եկեղեցականներու եւ անձնաւորութիւններու հետ: Ամենուր Իր սրտի անկեղծ խօսքը ըսաւ եւ հայ ժողովուրդի իրաւունքները պաշտպանեց: Նոյնիսկ Ամերիկայի Ներկայացուցիչներու Տան ժողովի բացման աղօթքին մէջ յիշեց Հայոց ցեղասպանութիւնը, եւ ոչ հայ շրջանակներու մէջ ըսաւ որ Հայոց ցեղասպանութիւնը պէտք է ճանաչում գտնէ՝ որպէս զի այլեւս նման ցեղասպանութիւններ չպատահին որեւէ մէկ այլ տեղ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հովուապետական այցելութեան մասին արձագանգ հանդիսացան բոլոր շրջաններու տեղական ծանօթ թերթերը:

Խանդավառութեան, ոգեւորութեան եւ հպարտութեան պահեր ապրեցան Արեւելեան թեմի հաւատացեալները՝ իրենց սիրելի Հայրապետին այցելութեան ամբողջ տեւողութեան: Հայրենիքէն հեռու ապրող այս հայորդիներուն հաւատքը զօրացաւ եւ «տուն եկաւ», ազգային ոգին առաւել եւս բոցավառուեցաւ Մայր Հայրենիքի եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի շունչով, եւ ամերիկահայը «վերագտաւ» իր ինքնութիւնը:

Բարի ճանապարհի սիրելի Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց:

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԱՂՈՒՄՅԱՆ

ՆՇՎԵՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁՆ

Նոյեմբերի 4-ին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության ութերորդ տարեդարձի օրը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողոսյանը:

Հավարտ Ս. Պատարագի Մայր Աթոռի միաբանության անունից Վեհափառ Հայրապետին շնորհավորական խոսք ուղղեց Ներսես արքեպիսկոպոսը: Գերաշնորհ Սրբազանն անդրադարձավ Նորին Սրբության գահակալության ութ տարիների ընթացքում արձանագրած բազմաթիվ ձեռքբերումներին. «Ամեն տեղ նոր շինություններ բացվեցին, Մայր Աթոռն սկսեց բարգավաճել ու զեղեցկանալ, հիմնվեցին ու բացվեցին նորանոր եկեղեցիներ, Հայորդյաց տներ ու կիրակնօրյա վարժարաններ՝ ի խնդիր մատաղ սերնդի դաստիարակության: Ավելի բարելավվեցին Եկեղեցու և պետության հարաբերությունները: Էկոմենիկ միտքը մյուս Եկեղեցիների, ինչպես նաև այլ կրոնների պետերի հետ հարաբերություններում նորանոր հաջողություններ է արձանագրում, որպեսզի Հայ Եկեղեցու նավը կարողանա խաղաղությամբ հասնել իր նավահանգստին»:

Այնուհետև Իջման Սուրբ Մեղանի առջև կատարվեց Հայրապետական մաղթանք՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պայծառության ու անսասանության և Նորին Սրբության քաջառողջության ու կենսաց արևշատության համար:

*ՄԱՅՐ ԱԹՐԱՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏՈՒ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՒՄ

Նոյեմբերի 15-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելեց պաշտոնական այցով Հայաստան ժամանած Բուլղարիայի Հանրապետության վարչապետ Սերգեյ Ստանիշևը: Բուլղարիայի Հանրապետության վարչապետին և նրա գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Անդրանիկ Մանուկյանի և երկու երկրների դեսպանների, ընդունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Ողջունելով Բուլղարիայի վարչապետի այցը Մայր Աթոռ՝ Նորին Սրբությունը ներկայացրեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելությունը հայ ժողովրդի կյանքում: Ապա Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց երկու երկրների միջև զարգացող սերտ համագործակցության համար:

Հայոց Հայրապետը վերհիշելով 2002 թ. հունիսին Բուլղարիա կատարած իր Հովվապետական այցելությունը՝ ու հյուրընկալությունը Բուլղար Ուղղափառ Եկեղեցում՝ շնորհակալություն հայտնեց հայ համայնքի նկատմամբ ցուցաբերվող ուշադրության և հոգատարության համար: *«Ուրախ եմք, որ մեր ժողովրդի զավակները որպես արժանավոր քաղաքացիներ իրենց կարևոր ներդրումն են բերում Բուլղարիայի հասարակական, քաղաքական և մշակութային կյանքում: Առանձնակի գոհունակությամբ ցանկանում ենք ընդգծել նաև Մայր Աթոռի և Բուլղարիայի դեսպանատան միջև առկա ջերմ հարաբերությունները, որոնք արտացոլում են մեր ժողովուրդների դարավոր կապերի և երկրների համագործակցության»*, - ասաց Նորին Սրբությունն իր խոսքում:

Վեհափառ Հայրապետը նաև իր ողջույններն ու բարեմաղթանքները հղեց Բուլղար Եկեղեցու Մաքսիմ Պատրիարքին և Բուլղարիայի բարեպաշտ ժողովրդին:

Իր հերթին վարչապետ Սերգեյ Ստանիշևը շնորհակալությամբ ընդունեց Հայրապետի բարեմաղթանքները և ուրախություն հայտնեց Սուրբ Էջմիածին այցելելու համար: Վարչապետն անդրադարձավ Հայաստանի և Բուլղարիայի միջև հարաբերությունների դինամիկ զարգացմանը՝ նշելով, որ քաղաքական և տնտեսական հարաբերություններից բացի կարևոր են նաև մշակութային և հոգևոր կապերը: Պրն Ստանիշևը խոսեց նաև Հայ Առաքելական և Բուլղար Ուղղափառ Եկեղեցիների ընդհանրությունների և իրենց ժողովուրդների կյանքում ունեցած կարևոր դերակատարությունների մասին:

Հանդիպման ընթացքում անդրադարձ եղավ նաև Եկեղեցի-պետություն հարաբերություններին, քույր Եկեղեցիների միջև առկա կապերին:

*ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Նոյեմբերի 26-28-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ գումարվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի ժողով:

Ժողովը բացվեց Տերունական աղոթքով: Ողջունելով Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին՝ Ամենայն Հայոց Հայրապետն իր օրհնությունն ու գնահատանքը հայտնեց ժողովականներին Հայ Եկեղեցուն և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին մատուցած իրենց նվիրյալ և նախանձախնդիր ծառայությունների համար:

Այնուհետև Նորին Սրբությունը ներկայացրեց Գերագույն Հոգևոր Խորհրդի նոր անդամներին՝ Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Ս. Նորվան արքեպիսկոպոս Զաքարյանին, Սյունյաց թեմի առաջնորդ Ս. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանին, Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Ս. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանին, Վիրահայոց թեմի առաջնորդ Ս. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանին, Մայր Աթոռի դիվանապետ Ս. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանին և տիար Ռուբեն Վարդանյանին (Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմ):

Եռօրյա նիստերն ատենապետելու հրավիրվեցին Ս. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը, Ս. Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը և Ս. Աղան արքեպիսկոպոս Պալիոզյանը:

Օրակարգում քննության առնվեցին ներեկեղեցական, միջեկեղեցական կյանքին առնչվող հարցեր:

Վեհափառ Հայրապետի՝ հոկտեմբեր ամսին Միացյալ Նահանգներ կատարած Հովվապետական այցի մասին որպես Հայրապետական շքախմբի անդամ զեկուցեց Ս. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը: Այնուհետև Ս. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը և Ս. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը երախտագիտություն ու շնորհակալություն հայտնեցին Վեհափառ Հայրապետին՝ ներկայացնելով Արևմտյան և Արևելյան թեմերից ներս տիրող այն ոգևորությունն ու հոգևոր խանդավառությունը, որ առաջացել էր Նորին Սրբության շնորհաբեր այցի առիթով: Վեհափառ Հայրապետը գնահատանք հայտնեց առաջնորդ Սրբազան Հայրերին՝ Հովվապետական այցը նախանձախնդրորեն և բարձր մակարդակով կազմակերպելու համար:

Ֆրանսիայի հայոց նորահաստատ թեմի գործունեության վերաբերյալ զեկույցով հանդես եկավ առաջնորդ Ս. Նորվան արքեպիսկոպոս Զաքարյանը և ներկայացրեց թեմի գործունեությունը, նաև առկա դժվարությունները թեմի կազմակերպական աշխատանքներում: Նորվան Սրբազանը խոսեց նաև թեմը հոգևորականներով համալրելու անհրաժեշտության մասին:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը քննարկեց նաև թեմական կանոնադրության ուղենշային փաստաթղթի լրամշակված տարբերակը: Զեկուցող Ս. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը ներկայացրեց նախագծի վերաբերյալ թեմերից ուղարկված դի-

տողությունները և առաջարկությունները: Որոշում կայացվեց, որ լրամշակված նախագիծը վերստին առաքվի թեմակալ առաջնորդներին՝ թեմերից ներս իրենց ծխերում կազմակերպելու փաստաթղթի քննությունը և իրենց դիտարկումները ներկայացնելու մարտին կայանալիք Գերագույն Հոգևոր Խորհրդի ժողովին:

Ժողովում քննարկվեց նաև Արևելյան Ուղղափառ - Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների և Աստվածաշնչային Միացյալ Ընկերությունների միջև փոխըմբռնման և համագործակցության հուշագրի նախագիծը, որով վերահաստատվում է Աստվածաշնչային Ընկերակցությունների գորակցությունն Ուղղափառ Եկեղեցիներին Սուրբ Գրքի տարածման գործում և այդ նպատակի իրագործման համար հետագա համագործակցության ուղենիշերը: Գերագույն Հոգևոր Խորհուրդը, կատարելով համապատասխան լրամշակումները փաստաթղթի առնչությամբ, հավանություն տվեց Հուշագրի հաստատմանը:

Օրակարգում ընդգրկված էին նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևոր-քարոզչական առաքելության, ինչպես նաև կարգապահական հարցեր: Մասնավոր ուշադրություն դարձվեց եկեղեցականների պատրաստության խնդրին: Կարևորվեց Հայաստանի և Սփյուռքի ազգային-եկեղեցական կյանքում առկա մարտահրավերները դիմագրավելու համար անհրաժեշտ գիտելիքների ուսուցանումը ճեմարանականներին, ինչպես նաև Հայաստանում և Սփյուռքում ծառայող եկեղեցականների փոխայցելությունների աշխուժացումը:

Ժողովը փակվեց Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքով և «Պահպանիչ» աղոթքով:

*ՄԱՅՐ ԱԹՐԱՆ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*



**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿՆ ԱՇՈՏ ԱՐՄԵՆՅԱՆԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԽԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՑ ՏԻԱՐ ԱՇՈՏ ԱՐՄԵՆԵԱՆ,
ՈՐ Ի ԶԵՐՄՈՒԿ**

Յարգարժան պրն Արսէնեան,

Լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Մեր հոգին այսօր լցուած է նուիրական զգացումներով, քանզի Բարձրեալ Տիրոջ կամքով ու օրհնութեամբ, Սուրբ Էջմիածնի Սրբալոյս Միւռնոնով եւ փառաբանական Մեր աղօթքներով ու մաղթանքներով եւս մէկ եկեղեցի օծեցինք քրիստոնէական յիշատակութիւններով ու վաղ միջնադարեան սրբատեղիներով յայտնի հայոց Միւնեաց աշխարհի այս գողտրիկ վայրում, Հայրենի մեր նուիրական հողում: Սուրբ Գայանէ եկեղեցին, որի կառուցումը հովանաւորեցիք ինքնաբոյս նուիրումով, օրհնութիւն է Ձերմուկ քաղաքի հաւատաւոր Մեր զաւակների համար՝ առաւել զորաւոր եւ հաստատուն դարձնելու նրանց մեր հայրերի լոյս հաւատքի մէջ: Գոհութիւն Աստուծոյ, որ հայրենաբնակ Մեր զաւակները նախանձախնդիր են եկեղեցաշէն ծրագրերի իրականացման՝ վկայելով իրենց հաւատն առ Աստուած եւ սէրը՝ առ Մայր Եկեղեցին ու հարազատ ժողովուրդը:

Բարձր գնահատելով Ձեր մատուցած ծառայութիւնները մեր Սուրբ Եկեղեցուն ու

հաւատաւոր ժողովրդին, Սուրբ Գայանէ եկեղեցու օծման ուրախ առիթով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ի Ո Ր Ի Չ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Տիրոջ հանապազ օրհնութեամբ լինէք միշտ եռանդուն ու կորովաշատ եւ շարունակէք Ձեր գնահատելի ծառայութիւնը բերել մեր Մայր Եկեղեցուն եւ հաւատաւոր ժողովրդին:

Թող Սուրբ Գայանէ կոյսի բարեխօսութեամբ ընտանեկան Ձեր յարկը շնորհընկալը լինի Բարձրեալի շնորհների եւ ամենախնամ օրհնութեան:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 18-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2007 եւ ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 445

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով նոյեմբեր ամսին

«Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» շքանշանով պարգևատրվել են.

Նուբար Բերբերյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)

Վաղինակ Գալայճյան (Հունաստանի հայոց թեմ)

Օրհնության գիր է տրվել.

Ս. Հարություն եկեղեցու ծխական խորհրդին (Ավստրալիայի հայոց թեմ)

Երուսաղեմի հայ երիտասարդաց միությանը (Երուսաղեմի հայոց
պատրիարքություն)

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ
ԱՂԱՍԻ ԱՅՎԱԶՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

Նոյեմբերի 21-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը անվանի արձակագիր, կինոսցենարիստ և կինոռեժիսոր Աղասի Այվազյանի մահվան կապակցությամբ ցավակցական գիր է հղել հանգուցյալի ընտանիքի անդամներին ու բոլոր մերձավորներին: Ցավակցագրում ասված է.

«Սրտի խոր ցավով տեղեկացանք մեր ժողովրդի արժանավոր զավակ և հայ գրականության երախտավոր, արձակագիր Աղասի Այվազյանի մահվան մասին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր անկեղծ ցավակցությունն ենք բերում հանգուցյալի ընտանիքի անդամներին, բոլոր հարազատներին, արվեստագետ ընկերներին ու մերձավորներին:

Հոգեւոյս Աղասի Այվազյանը աստուածատուր իր շնորհով ստեղծեց մեծարժեք գործեր, որոնք հարստացնում են հայ գրականության լուսավոր անդամատանը: Մեծ ճանաչում ունեն և սիրված են նաև նրա սցենարներով նկարահանված կինոնկարները՝ լինելով հայ կինոարվեստի լավագույն ձեռքբերումներ: Հայ մշակույթին բերած իր ավանդով հանգուցյալը բարի հիշատակ է թողնում մեր ժողովրդի հոգում՝ ի Տեր ննջելով արժանավոր գործերի հարուստ վաստակով:

Լուսահոգի Աղասի Այվազյանի բեղմնավոր գործունեությունը և ծառայությունները մեր ժողովրդին ու Հայրենիքին գնահատված են նաև Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու բարձր պարգևով՝ «Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ» պատվո շքանշանով:

Ի խորոց սրտի Մեր աղոթքն է, որ Բարին Աստված Իր առատ ողորմությամբ գրթա հավատավոր Իր ծառային՝ նորոգ հանգուցյալ Աղասի Այվազյանին, և խաղաղության մեջ ընդունի նրա լույս հոգին՝ արժանացնելով երանական հանգստյան:

Թող Երկնավոր Տերը Սուրբ Հոգու շնորհով սփոփանք ու մխիթարություն պարգևի Այվազյան ընտանիքի սգակիր անդամներին, բոլոր հարազատներին ու բարեկամներին»:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ
ԱԼԲԵՐՏ ՑԱՎՈՒՐՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

Նոյեբերի 6-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Գերագույն Հոգևոր Խորհրդի և Սուրբ Էջմիածնի միաբանության անունից ցավակցական գիր է հղել անվանի արվեստագետ Ալբերտ Յավուրյանի հարազատներին, մերձավորներին ու գործընկերներին:

Հայրապետական գրում մասնավորապես ասվում է. «Հոգեւոյս Ալբերտ Յավուրյանը մեր ժողովրդի կողմից սիրված ու գնահատված էր որպէս տաղանդաշատ կինոօպերատոր և արվեստագետ, ով իր հայրենապատում ֆիլմերով մեծ ավանդ և մնայուն հետք է թողել հայ կինեմատոգրաֆիայի պատմության մեջ: Ալբերտ Յավուրյանի ֆիլմերը մեծապէս գնահատվել են նաև օտար հանդիսատեսի կողմից՝ ներկայացվելով զանազան միջազգային փառատոներում և մրցույթներում:

Մենք անձնապէս ճանաչել ենք Ալբերտ Յավուրյանին որպէս ազնիվ և բարեպաշտ, Հայրենիքի ու հայրենական ավանդների հանդէպ մեծ սեր ունեցող անձի, ով իր հոգում կրում էր Հայաստան մեր երկրի լուսավոր գալիքի երազը:

Աղոթք ենք բարձրացնում առ Աստված, որ Ամենողորմ Տերը արարչական Իր սիրով և անսահման գթությամբ երկնային լուսեղեն հարկերում ընդունի հանգուցյալի հոգին և Իր Սուրբ Հոգու մխիթարությունն ու սփոփանքը պարգևի Ձեզ և վշտակիր բոլոր հոգիներին»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԿԱՐԳԱԼՈՒՅԾ Է ՀՌՉԱԿՎԵԼ Տ. ՎԱԶԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՆԱՆՅԱՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Վազգեն վարդապետ Նանյանը:

Հայրապետական վճռի համար հիմք է ծառայել Վազգեն վարդապետի՝ հոգևոր ծառայությունը թողնելու դիմումը:

Կարգալույծ հռչակված հոգևորականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքը՝ Բաբկեն Նանյան ավագանի անունով:

ՄԱՅՐ ԱԹՐԱՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ ԲԱՑՎԵՑ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԿԻՍԱՆՂՐԻՆ

Նոյեմբերի 29-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ, Մկրտիչ Ա Վանեցի Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան 100-ամյակի կապակցությամբ բացվեց Խրիմյան Հայրիկի կիսանդրին և տեղի ունեցավ հանդիսություն:

Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանի բացման խոսքից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը կատարեց կիսանդրու բացումը, որից հետո Գևորգյան Հոգևոր Ճեմարանի դահլիճում տեղի ունեցավ հանդիսություն՝ նվիրված Խրիմյան Հայրիկին:

Հանդիսության ընթացքում ելույթ ունեցավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչի պաշտոնակատար Տ. Սահակ վարդապետ Մաշալյանը: Հայր սուրբն իր խոսքում ընդգծեց, որ արդի իրականության մարտահրավերներին դիմակայելու համար ամենակարևորը Խրիմյանի օրինակով ազգային, հոգևոր և մշակութային արմատներին հաստատուն մնալն է:

Այնուհետև «Խրիմյան Հայրիկը եկեղեցականի տիպարի մասին» բանախոսությամբ հանդես եկավ ԳԱԱ Պատմության ինստիտուտի աշխատակից, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր տիկին Էմմա Կոստանյանը:

Հանդիսությունը եզրափակվեց Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով: Նորին Սրբությունը, անդրադառնալով այն մեծ սիրուն ու հարգանքին, որ տաճում է հայ ժողովուրդը Խրիմյան Հայրիկի հանդեպ, ընդգծեց այն անմնացորդ նվիրվածությունն ու վաստակը, որով «Հայրական խնամքը Աստծուց իրեն վստահված ժողովրդի հանդեպ Մկրտիչ Ա Խրիմյան Հայրապետը նույն նախանձախնդրությամբ պահպանեց մինչև խոր ծերություն: Իր հոգում կրելով բազմաթիվ վշտեր ու նեղություններ, որոնք բաժին էին ընկել մեր ժողովրդին, մեծ Հայրապետը աննվազ ջանքեր բերեց հոգևոր դպրեվանքների բարեկարգմանը, եկեղեցիների բարեգարդմանը, թեմական և համայնքային վերակազմմանը, եկեղեցական և ազգային կյանքի բարեփոխմանը՝ միշտ մնալով լուսավորության, գիտության ու առաջընթացի ջատագով: Այսօր էլ նրա թողած ժառանգությունը, նրա կյանքի օրինակը խոսում են մեր զավակների հոգիների հետ Հայրենի երկրի հիշատակներով, մեր պատմության անմոռանալի դրվագներով, խոսում են առ Աստված սիրով և ապավինությամբ և շարունակելու են հոգուց հոգի զրույցը սերնդեսերունդ»:

Վեհափառ Հայրապետը այնուհետև կոչ արեց աղոթելու և ձգտելու, որպեսզի «... Աստծո օրհնությամբ մարմնավորվեն Խրիմյան Հայրիկի և ազգի հոգսերը իրենց ուսերին կրած մեր ժողովրդի մեծ զավակների արդար հույսերը՝ խաղաղ աշխարհի մեջ տեսնելով ազատ Հայրենիքով միասնական, ապահով ու բարօր և հոգևոր լույ-

սով ու գիտությամբ պայծառ հայոց կյանքը: Թող Տերը զորացնի մեզ բոլորիս մեր առաքելության մեջ և արգասավորի մեր ջանքերը ի սեր Հայրենիքի և համայն հայ կյանքի»:

Հանդիսության ընթացքում Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաներն ասմունքեցին ու ընթերցեցին Խրիմյան Հայրիկի ստեղծագործություններից, գեղարվեստական կատարումներով հանդես եկավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի երգչախումբը՝ դեկավարությամբ Շոթա Վարդանյանի:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

**«ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉ»
ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ**

Նոյեմբերի 19-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ և մասնակցությամբ ՀՀ Կրթության և գիտության նախարար տիար Լևոն Մկրտչյանի, տեղի ունեցավ հանրակրթական դպրոցների ուսուցիչների մրցանակաբաշխություն: Արդեն չորրորդ տարին է, որ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովանավորությամբ ՀՀ ԿԳ նախարարության կողմից Հայաստանում անցկացվում է հանրակրթական դպրոցների ուսուցիչների մրցույթ, որի հաղթողներին Ամենայն Հայոց Հայրապետը հանձնում է վկայականներ և դրամական պարգևներ:

Մրցանակաբաշխության արարողությունը բացվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Ղուկաս աբեղա Զաքարյանի ողջույնի խոսքով, որում ուրախություն հայտնվեց, որ կրկին Մայր Աթոռի հովանու ներքո առիթ եղավ հանդիպելու և խորհելու ուսուցչի խորհրդի ու առաքելության շուրջ: Հայր Սուրբը վստահեցրեց, որ Հայ Եկեղեցու մշտական ուշադրության կենտրոնում է հայ դպրոցն ու կրթությունը, քրիստոնեական դաստիարակությունը:

Այնուհետև մրցույթի ծրագիրը հավաքվածներին ներկայացրեց ՀՀ ԿԳ նախարարության հանրակրթական վարչության պետ Նարինե Հովհաննիսյանը, ով նշեց նաև, որ մրցանակների են արժանանում ինչպես Հայ Եկեղեցու պատմության և հայոց լեզվի ու գրականության, այնպես նաև բնագիտական առարկաների ուսուցիչներ:

Կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանն իր խոսքում ընդգծեց Հայ Եկեղեցու անբաժան և անզնահատելի դերը կրթության գործում. «Երկրի ապագան, ժողովրդի ապագան, ազգի հարատևության գաղտնիքը երկու հենասյուների մեջ է՝ մեր առաքելական սուրբ հավատքի և կրթական համակարգի: Անբաժան միասնություն են դրանք, և մենք պարտավոր ենք անկախության այս տարիների ընթացքին ապահովել այդ միասնության երաշխավորությունը: Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ ժամանակին անզնահատելի օգնություն ցույց տրվեց մեր կրթական համակարգին. մենք ունենք «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկան՝ իր գեղեցիկ դասագրքերով: Այսօր երևի ամենաբարդ խնդիրն է մեր առջև. մենք պետք է կարողանանք մեր կրթական համակարգի, կրթական ծրագրերի մեջ մուտք անել մեր բարոյական արժեքները, մեր գաղափարախոսությունը, մեր քրիստոնեական արժեհամակարգը՝ անկախ նրանից, թե ի՞նչ առարկա ենք դասավանդում, անկախ նրանից, թե ի՞նչ խնդիրներ են մեր առջև դրված տվյալ առարկայի դասավանդման ընթացքում, որովհետև, ի վերջո, չմոռանանք, որ մեր կրթության, հատկապես առաջին տարիների կրթության առավել քան կեսը պարտավոր ենք

հատկացնել դաստիարակությանը: Եվ Եկեղեցին է այն մեծ հենարանը, որը պետք է օգնի, որ մենք ունենանք մեր Հայրենիքին, մեր պետությանը նվիրված ազնիվ քաղաքացիներ»:

Հանդիսության ընթացքում հայտարարվեցին մրցույթի վերջնական արդյունքները, և 39 ուսուցիչներ Ամենայն Հայոց Հայրապետից և ԿԳ նախարարից ստացան վկայականներ, դրամական պարգևներ և հոգևոր գրականություն:

Խրախուսական մրցանակների հանձնումից հետո ներկաներին իր օրհնությունն ու գնահատանքի խոսքն ուղղեց Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը, բարձր գնահատելով կրթության դերը մարդու կյանքում, մասնավորաբար նշեց. *«Կրթությունը ոչ միայն ընտանիքի հիմն է, հասարակության հիմն է, պետության հիմն է, այլ նաև կրթությունը ճանապարհ է աստվածճանաչության: Կրթությունը մարդուն առաջնորդում է, որպեսզի մարդ արարածը ճանաչի Աստծո արարչագործությունը, ընկալի Աստծո պատվիրաններն ու պատգամները և իր կյանքը կառուցի այդ նվիրական արժեքների վրա»:*

Նորին Սրբությունը նաև իր գնահատանքը բերեց ԿԳ նախարարին և նախարարության պաշտոնեությանը սերտ համագործակցության և Եկեղեցուն գորակցության ու մատուցած ծառայության համար՝ կոչելով բարի իրագործումներով խանդավառել ու ոգևորել կրթության և գիտության հայ մշակներին, որպեսզի նրանք նախանձախնդրորեն լծվեն հայ պատանու ու մանկան կրթության սրբազան գործին: Վեհափառ Հայրապետը, բերելով իր օրհնությունն ուսուցիչներին, ընդգծեց այն կարևոր առաքելությունը, որին ձեռնամուխ են եղել նրանք. *«Երեխաների հոգին այսօր ձեր ձեռքերի մեջ է: Ինչպիսի կրթություն, ինչպիսի դաստիարակություն որ դուք ջանքեր նրանց, այդ երեխան այդ արժեքներով պիտի դաստիարակվի և իր կյանքը պիտի ապրի նաև այդ արժեքներով: Այսպիսով մեծապես գնահատվում է ձեր աշխատանքը թե՛ հանրության, թե՛ պետության և թե՛ Եկեղեցու կողմից, ընդհանրապես մեր ժողովրդի զավակների կողմից, որպեսզի մեր զավակները լինեն արժանավոր քաղաքացիներն այս երկրի, լինեն արժանավոր ժառանգներն իրենց հայրերի՝ հաղորդ իրենց պատմությանը, հաղորդ իրենց ազգային նվիրական արժեքներին, որ մեր հայրերը կերտել են և ավանդ թողել մեր ժողովրդին»:*

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

Հ. ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ՄԱԳՍՈՒՏԵԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՀՈՎՈՒԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ ԽՈՂԵՐ

Երջանկայիշատակ Վազգեն Ա. Ամենայն Հայոց Հայրապետը 1987 թուականին երբ իր հովուական երրորդ այցելության եկաւ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմը, Նիւ Եորքի մէջ կայացած պաշտօնական հանդիսութեան մը ընթացքին ցաւ յայտնեց, որ անցնող տասնինն տարիներուն, այսինքն 1968 թուականէն ի վեր, առիթ չէր ունեցած գալու այս հեռավոր ամառը եւ մխիթարելու իր սիրելի հօտը: Այդ առիթով հանգուցեալ Վեհափառը ներկայ հանդիսականներուն խոստացաւ աւելի յաճախ այցելել Ամերիկա: Այդ խոստումը ստիպուեցաւ իրագործել կամքէ բոլորովին անկախ պատճառով, երբ տարի ու կէս ետք պատահեցաւ Սպիտակի ահռելի երկրաշարժը: Հայոց Հայրապետը՝ հակառակ իր յառաջացեալ տարիքին՝ եկաւ Նիւ Եորք՝ գլխավորելու համար կարօտեալ արկածահարներու ի նպաստ ըլլալիք հանձնարարութիւնը:

Վազգեն Կաթողիկոս, որ օժտուած էր բնածին իմացականութեամբ եւ տարիներու ընթացքին խորապէս իմաստնացած էր Միածնաւէջ Տաճարին մէջ իր ստացած Հայրապետական Սուրբ Օծութեան շնորհիւ, Միացեալ Նահանգներ իր կեցութեան օրերուն զգացած էր Հօտապետին անմիջական ներկայութեան կարեւորութիւնը հօտին մէջ: Անցնող քսան տարուան ընթացքին՝ հին սերունդը, որ դիմաւորած էր հիւրասիրած էր Վեհափառը 1960 եւ 1968 թուականներուն, արդէն զիջած էր իր տեղը նորերու: Ծխական եւ թեմական մակարդակներու վրայ եկած էին նոր դեկավարներ: Եկեղեցիները եւ մշակութային սրահները լեցնող հաւատացեալները զաւակներն ու թոռներն էին հին գաղթականներուն: Որպէս բարի հովիւ՝ Վեհափառը կանգնադառնաւ, որ ինք անձամբ պարտաւոր էր մօտէն ճանչնալու իր աշխարհասփիւռ հօտը, եւ իր հոգեւոր զաւակներն ալ կարելոր էր որ ճանչնային իրենց հայրը, Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի յաջորդը:

Վազգեն Կաթողիկոսին յաջորդը՝ երջանկայիշատակ Գարեգին Ա. Հայրապետ եւս՝ իր կարճատեւ գահակալութեան ընթացքին՝ հեռակայ հոգածու եղաւ իր հօտին: Քաղաքական պայմանները փոխուած ըլլալով՝ նորընտիր Հայրապետը շուտով եկաւ Ամերիկա եւ հովուական այցելութեամբ շրջեցաւ այլեւայլ քաղաքներ՝ քարոզելով, խանդավառելով հայկական ոգին եւ խրախուսելով, որպէս զի հայութիւնը նոր անկախացած Հայաստանի իրականութեամբ տոգորուի եւ աւելի սերտ կերպով կապուի իր հայրենիքին եւ Մայր Աթոռին:

Արեւմտահայութիւնը Վազգեն Կաթողիկոսէն առաջ անձանօթ էր հայրապետական այցելութիւններու: ԺԷ. դարէն ի վեր քաղաքական բարդ կացութիւններ եւ տիրապետող կայսրութեանց միջեւ թշնամական յարաբերութիւններ աննպաստ դարձուցած էին Ամենայն Հայոց Հայրապետներու ճամբորդութիւնը հեռավոր երկիրներ: Այդպէս չէր անցեալին: ԺԸ. դարէն առաջ՝ մէկէ աւելի հայրապետներ ուխտաւորաբար այցելած էին Ս. Երուսաղէմ եւ այլ վայրեր: Եղած էին կաթողիկոսներ, որոնք զացած էին Արեւմուտք՝ հայ ժողովուրդի ազատագրութեան ի խնդիր: Իսկ այլը ո-

մանք հայկական հին գաղութներին ջանացած էին գումարներ հանգանակել՝ Մայր Աթոռի վրայ ծանրացած ահաուր պարտքերը թեթեւցնելու։ Այսօր՝ հայ ժողովուրդի ազատագրութիւնը եւ Հայաստանի անկախացումը իրականացած են, եւ գոհութիւն Տեառն՝ Մայր Աթոռը այլեւս չի հեծեր դաժան տիրակալներու պարտքի մուրհակներուն ծանրութեան ներքեւ։ Հայրապետական այցելութիւններ անցնող կէս դարու ընթացքին կատարուած են զուտ հովուական նպատակներով։

Մայր Աթոռի այժմու ազգընտիր գահակալը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց, օգտուելով մերօրեայ քաղաքականութեան ընձեռած նպաստաւոր պայմաններէն, իր գահակալութենէն անմիջապէս ետք իսկ երիտասարդական արտակարգ եռանդով մասնաւոր հոգածութիւն ցոյց տուաւ ի սփիւռս աշխարհի ցրուած իր զաւակներուն՝ անձնապէս երթալով մեր հայրենիքին մերձակայ եւ կամ հեռաւոր վայրեր, ուր կայք առած են հայու բեկորներ։ 2001 թուականին Վեհափառը պաշտօնական այցելութեամբ եկաւ Նիւ Եորք՝ մեր թեմի ժողովուրդին հետ նշելու համար Հայոց դարձի 1700-ամեակը։ Իսկ այս անգամ Հայրապետը եկած էր իր հօտը հայրենի փարախին մէջ, այսինքն՝ եկեղեցւոյ հովանիին ներքեւ, հաւաքելու, ողջունելու, իրենիները ճանչնալու եւ իրենիներէն ճանչցուելու նպատակով։

Այս տողերը գրողը ուշադրութեամբ օրը օրին հետեւեցաւ ընդհանրական Հովուապետին կողմէ մեր ընդարձակ թեմին այլեւայլ շրջաններուն եւ ծովներուն տրուած շնորհաբաշխ այցելութիւններուն։ Ամէն տեղ որեւէ բանէ առաջ ակներեւ էր մեր ժողովուրդին կողմէ ընծայուած ջերմ ընդունելութիւնը Վեհափառ Հայրապետին եւ իր շքախումբին։ Անձնապէս ականատես եղայ Գէմպրիճի (Մասսաչուսեց) Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ Հայրապետին հանդէպ բազմահարիւր հաւատացեալներու ջերմեռանդ եւ երկիւղած վերաբերմունքին, որ պարզապէս յուզիչ էր։ Յատկանշական երեւոյթ էր Ս. Պատարագի մատուցման ընթացքին երկու երիտասարդ արքեպիսկոպոսներու ներկայութիւնը որպէս պատարագիչ Վեհափառին առնթերակայ։ Երիտասարդ Հովուապետին կողքին երիտասարդ արքեպիսկոպոսներու, Գանատայի եւ Ռուսաստանի առաջնորդներուն, մասնակցութիւնը կը խորհրդանշէր Հայոց. Եկեղեցւոյ երիտասարդացումը։ Հայրապետին եւ իր շքախումբին ցոյց տրուած ջերմ ընդունելութիւնը եւ այլ պարագաներ գրգիռ հանդիսացան մտածելու կարգ մը երեւոյթներու եւ իրողութիւններու մասին։

Վազգէն Կաթողիկոսի չորս այցելութիւնները Ամերիկա տեղի ունեցած էին Սովետական տիրապետութեան շրջանին։ Վերեւ արդէն նշուեցաւ որ առաջին երկու այցելութիւններուն (1960 եւ 1968 թթ.) դեռ կար «երկիր»էն եկած հին սերունդը, որ իր սրտին մէջ ուներ կարօտը հայրենիքին։ Անողոք քաղաքականութիւնը աշխարհը «երկաթեայ վարագոյր»ով մը բաժնած էր, որուն անմիջականօրէն միւս կողմը կը գտնուէր Հայաստանի Խորհրդային Հանրապետութիւնը։ Վազգէն Վեհափառ իր կրօնապետի հանգամանքին առնթեր հայրենիքէն եկած շատ սիրելի կռունկն էր, որ խապրիկ մը կը բերէր բռնի *դարիպութեան* դատապարտուած հայրենատուջոր իր զաւակներուն։

1990 թուականէն ասդին ժամանակները փոխուեցան։ Խորհրդային կայսրութեան փլուզումէն եւ Հայաստանի վերանկախացումէն ետք՝ հայրենիքի դռները լայն բացուեցան եւ Ամերիկահայ շատ մեծ թիւով հայորդիներ, մեծաւ մասամբ երիտասարդ եւ միջին տարիքի անձեր, մէկ ու կէս տասնամեակէ ի վեր ազատօրէն գացին հայրենիք։ Ոմանք նոյնիսկ երկար ժամանակով կը մնային հոն՝ մօտէն շփուելով հայրենաբնակ հայ ժողովուրդին հետ։ Գարեգին Բ. Հայրապետին ընդառաջ ելնող

հայերեն շատ շատեր առիթ ունեցած են տեսնելու Վեհափառը Ս. Էջմիածնի մէջ՝ հայրապետական գահին վրայ: Իր պապենական հողէն պոկուած ժողովուրդի մը հայրենակարօտ զգացումները հին սերունդին հետ անհետացած են այսօր: Բայց կայ այլ զգացում մը որ դեռ կը պարտադրէ հայու բեկորներուն, որպէս զի ամեն կողմէն գան եւ ներկայ գտնուին եկեղեցական արարողութեանց եւ հանդիսութիւններու՝ ստանալու համար Հայոց Հայրապետին օրհնութիւնը:

Հակառակ որ վերջին երկու տասնամեակներուն անձնապէս ականատես եղած էի շատ տխուր իրադարձութիւններու, որոնք կը ցուցնէին հայկական սփիւռքին կարելոր մաս կազմող մեր գաղութին տակաւ առ տակաւ տկարացումը, հիւծումը, ապագայնացումը եւ ի վերջոյ ուծացումը, հայրապետական ներկայ այցելութեան ընթացքին ամենուրեք մասնաւորաբար գօտեպնդիչ երեւոյթ էր ժողովուրդի լայն զանգուածներուն մէջ տեսնել մեծ թիւով փոքրիկներու, պատանիներու, երիտասարդներու եւ միջին տարիք ունեցողներու ներկայութիւնը: Ասոնցմէ շատեր (երկրորդ, երրորդ եւ մինչեւ իսկ չորրորդ սերունդ ամերիկահայեր) կանգնած էին վերջին տարիներուն Ամերիկա գաղթած հայերու կողքին, հայեր, որոնք նոյնպէս ծնած ու մեծցած էին օտար երկիրներու մէջ: Երեւոյթը ինքնին կը բացայայտէր մեր ժողովուրդի սրտին մէջ գոյութիւն ունեցող զգացական կապ մը, որ դեռ կը ծառայէր որպէս հասարակաց յայտարար ի սփիւռս Ամերիկայի վայրաժատնեալ հայութեան:

Այդ զգացական կապն է որ մեր օրերուն պատճառ կը հանդիսանայ որպէս զի մենք գոյատեւենք: Այդ կապը կը պարտինք մեր հինաւուրց աւանդական միջոցներուն՝ հայ ընտանիքի ծոցէն ստացուած դաստիարակութեան եւ Հայց. Եկեղեցւոյ հոգեւոր եւ ազգային գործունէութեան: Հայց. Եկեղեցին միշտ եղած է սերմնացանը կամ մշակը եւ իր դաշտն ալ՝ հայ ընտանիքը: Այս երկրին մէջ՝ եկեղեցւոյ տարած ջանքերուն շնորհիւ՝ տասնամեակներու ընթացքին կարելի եղած էր երկրէն եկած հին սերունդէն նոր սերունդներուն փոխանցել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ մեր հայրենիքի հմայքն ու սէրը: Այսօրուան սերունդները քաջատեղեակ են, որ Ս. Էջմիածինը՝ որպէս Հայոց մեծագոյն սրբավայրը եւ նստավայրը Ամենայն Հայոց Հայրապետին՝ է նաեւ խորհրդանիշը մեր հայրենիքին, մեր հաւատքին, մեր աւանդութեան եւ մեր պատմութեան: Իսկ Ամենայն Հայոց Հայրապետը իր անձին մէջ կը մարմնաւորէ թէ՛ Միածնաւէ սրբավայրը, թէ՛ մեր պատմական հայրենիքը եւ թէ՛ ալ 17 դար դիմացած Հայոց Մեծաց եպիսկոպոսապետական ընդհանրական վերատեսչութիւնը:

Ժողովուրդին մօտ Մայր Աթոռին եւ Հայրապետին ունեցած հմայքը կու գայ անգամ մը եւս հաստատելու ճշմարտութիւնը հիներու այն համոզման, որ անխզելի պէտք է պահել Ս. Էջմիածնի հետ հայկական գաղթաշխարհի կապը եւ ամեն ջանք պէտք է ընել՝ աւելի զօրացնելու համար գայն: Վասն զի հայ կեանքի մէջ ուրիշ ոչ մէկ վայր եւ ոչ մէկ հոգեւոր պաշտօն կամ աստիճան չեն կրցած ցարդ ունենալ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Ամենայն Հայոց Հայրապետութեան հմայիչ ազդեցութիւնը: Եւ մինչեւ այն ատեն որ դեռ այդ հմայքը ազդեցիկ է գաղութէ մը ներս, ժողովուրդը իր ազգային եւ կրօնական զգացումներէն պարպւած չի կրնար ըլլալ: Եւ այդ հմայքին տակաւ զօրացումը կամրապնդէ հայորդիներու սրտերուն մէջ մեր ազգային եւ հոգեւոր աւանդութեան կառչած մնալու ձգտումը:

Բարեբախտաբար մեր ժողովուրդին մէջ այլեւս բնագոյ դարձած է որպէս համայնքային կեդրոն որեւէ բանէ առաջ եկեղեցի կառուցել: Վերջին տարիներուն՝ մեր թեմին մէջ գոյութիւն առին քսանէ աւելի փոքրիկ նոր համայնքներ՝ Միացեալ Նա-

հանգներու այլեւայլ կողմերը՝ յաճախ հեռաւոր վայրերու մէջ: Կէս դար առաջ ալ կային նման համայնքներ: Հետաքրքրական է նշել այն իրողութիւնը, որ ծխական եկեղեցւոյ մը կառուցման ծրագիրը իրականացնող համայնքներ դիմացան, մինչ եկեղեցիէ զուրկ նոյնիսկ գործունէայ համայնքներ բոլորովին ուծացան եւ ժողովուրդը ցրուեցաւ: Ուրախալի երեւոյթ է, որ Վեհափառ Հայրապետը այս անգամ այցելեց կարգ մը նորակազմ ծուխեր, օծեց եւ կամ օրհնեց նոր եկեղեցիներ՝ հայրապետական օրնութեան կնիքով յաւերժացնելով հեռաւոր այդ վայրերու հայ հաւատացեալներուն հաւաքական կեանքը:

Վեհափառ Հայրապետին հովուական այցելութիւնը մեծապէս խանդավառեց յիշեալ նորակազմ համայնքներու պատասխանատու մարմինները, ժողովուրդը եւ երիտասարդութիւնը: Պատանիներու եւ փոքրիկներու վրայ մեծ տպաւորութիւն գործեց Ամենայն Հայոց Հայրապետին ժողովրդասիրութիւնը եւ մարդամօտութիւնը: Տենդագին գործունէութեան լծեց այդ համայնքներու հաւատացեալները, որպէս զի պատշաճ կերպով հիւրասիրեին իրենց Հայրապետը: Իսկ այն շրջաններուն մէջ, ուր մեր ծուխերը մօտ են իրարու, միջծխական գործակցութեամբ կարելի դարձաւ ժողովրդական զանգուածի ներկայութիւնը ապահովել եկեղեցական եւ այլ հանդիսութիւններուն: Այցելութիւնը առիթ ծառայեց նաեւ միջեկեղեցական հանդիպումներու, որոնք մեծապէս օգտակար են մեր Եկեղեցիին եւ մեր ազգային նպատակներու հետապնդման համար: Իսկ օտար մամուլին մէջ երեւցող լրատուութիւնները օտար հասարակութեան ծանօթացուցին մեր ժողովուրդը, մեր Եկեղեցին եւ մեր հայրենիքը:

Հայրապետական այցելութեան աւարտին՝ պարտաւոր ենք գոհունակութիւն յայտնել Վեհափառ Հայրապետին, որ լման ամիս մը յատկացուց մեր թեմին՝ անխոնջ կերպով ծուխէ ծուխ երթալով եւ իր հօտին հանդէպ իր հովուական պարտականութիւնը լի ու լի կատարելով: Իսկ հովուապետական այցելութիւններու դրական արդիւնքները կը յուշեն կարեւոր կէտ մը: Նման այցելութիւններ ուծացման վտանգին ենթակայ թեմի մը համար երբեք պերճանք կարելի չէ նկատել, այլ անհրաժեշտութիւն: Ամենայն Հայոց Հայրապետը ժողովուրդին կամ ազգին ընտրեալն է եւ այդ հանգամանքով է, որ ան կը ստանայ ձեռնադրութիւն եւ օծում՝ դառնալու համար Աստուծոյ ընտրեալին (Հիները երբ Ամենայն Հայոց Հայրապետին նամակ կը գրէին, կը դիմէին անոր «Աստուածաբեալ Հայրապետ» բացատրութեամբ): Ժողովուրդը իր ծոցին մէջ հիւրընկալելով Աստուծոյ եւ իր ընտրելին՝ զօրացած կը զգայ՝ որպէս անքակտելի «մասն ու բաժին»ը հայ հաւաքականութեան: Կարժէ, որ հայ հաւատացեալներու իւրաքանչիւր սերունդ ունենայ այդ ապրումը մէկէ աւելի անգամներ:

ՔԱՐՈՉԽՈՍԱԿԱՆ

Տ. ԻՍԱՀԱԿ ԱՔԵՂԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՔԱՐՈՁԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(11 նոյեմբերի 2007 թ.)

«Իսկ երբ Հիսուս լսեց, նրան պատասխանեց և ասաց. «Մի՛ վախեցիր, միայն հավատա՛, և նա կապրի»»:

(Ղուկ. Ը 50)

Միրելի հավատացյալներ,

Քիչ առաջ օրվա Ավետարանական ընթերցվածը մեր առջև բացեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի կյանքի և տնօրինականքի մի դրվագ ևս: Երկրորդ անգամը լինելով Ղուկասու Ավետարանի մեջ մենք ականատեսն ենք, թե ինչպես Քրիստոս բազում-անհամար բժշկություններից զատ, բացորոշ կերպով հրաշագործում է. ննջեցյալը աստվածային անշեղ և արդար օրենքների մխիթարական ներգործությամբ հարություն է առնում: Մարդկային մտառության սահմանն անկարող է որևէ կերպ իր հայեցողության կենտրոնում պահելու այն ամենը, ինչ որ կանխագետն Աստված ամբողջական կերպով Իր իշխանության մեջ է հաստատել: Առավել հասկանալի դարձնելու համար Իր հատկանշական երկրային կյանքն ու հղկելու, վերանորոգելու, բարձրացնելու համար մեր հոգևոր ճաշակը, Քրիստոս մեկ հորդոր, մեկ պատգամ է հղում մեզ՝ «Հայրուսի աղջկա» հարության պատմությամբ. «Մի՛ վախեցիր, միայն հավատա՛ և կապրես»:

Ամենքը լալիս ու ողբում էին նրա վրա... ծաղրում էին, որովհետև գիտեին, որ աղջիկը մեռած է (հմմտ. Ղուկ. Ը 52-53): Եվ ամենքին դուրս հանելով՝ բռնեց նրա ձեռքից, գոչեց և ասաց. «Վեր կաց, կանգնի՛ր, ով մանուկ»: Եվ նրա հոգին վերադարձավ, և մանուկը իսկույն կանգնեց (Ղուկ. Ը 55):

Ղուկաս Ավետարանիչը, բավականին նրբությամբ ներկայացնելով ժամանակի խոտվահույզ վիճակը, մարդկային անկատար ջանքի ու կամքի բարոյակրոնական կախման անհրաժեշտությունն Աստծուց և Քրիստոսի հեղինակավոր մասնակցության հրաշալի իրողության անհրաժեշտությունն ու կարևորությունը մարդկության պատմության մեջ, հորդում է մեզ՝ ընտրելու ճշմարիտ ճանապարհը, ճիշտ ուղու վրա բերելու մեր ներքին հոգեկան ապրումները, խորամուխ լինելու արտաքին աշխարհից դեպի մեր ներքին անձը՝ գործունյա հավատքով և զորացյալ ուժականությամբ, որ է՝ քրիստոնեական բնավորության իսկական հավասարակշռությունը:

Ահավասիկ, այս նկատի ունի մեր Տեր Հիսուս Քրիստոսը՝ ասելով՝ մի՛ վախեցիր, միայն հավատա՛:

Ավետարանիչների շարքում լինելով համեմատաբար ավելի մատչելին ու բացատրասերը, Քրիստոսի կյանքի բարեպաշտ ճշմարտությունները փոխանցելու ճա-

նապարհին, Ղուկաս Ավետարանիչն, այդուհանդերձ, չի խոսում Հայրոսի ունեցած ապրումների մասին, թե որքան մեծ և խորն է ծնողական սիրո զգացական աստիճանը, որքան կարևոր նշանակություն ունի ծնողի և «հոր» հավատքը և օրինակը զավակի կյանքի մեջ, այլ շտապում է մատուցելու ուրախության բաժակը՝ հիշեցնելով ու հասկանալ տալով, որ մեզ պարտ է նախ Աստծուն հուսալ:

«Մի՛ վախեցեք, հավատացե՛ք և կապրե՛ք»։ քրիստոնեական կյանքի ողջ վարդապետությունն է խարսխված այս հենքի վրա, որովհետև լույսն ամենուր լույս է և լուսավորում է: Ամենասերն Աստված ողջ մարդկության ընթացքն ուղղում և ուղղորդում է դեպի մի՛ նպատակ, ուր նախքան մեր խնդրելը Աստված կանխավ գիտե, թե ինչ է մեզ անհրաժեշտ (հմմտ. Մատթ. Գ 7), ուր յուրաքանչյուրը պետք է շահեցնի իրեն հանձնված քանքարը (Մատթ. ԻԷ 14) և ուր փորձության ժամին, ամբողջական ազատության մեջ հոգևոր ընթացքը կանխատեսում է և հոգեղեն վերազարթոնք, քանի որ այս դեպքում հաղթահարված է այլևս ժամանակի և տարածության, ճշմարտության անմնացորդ, բայց անվերջանալի թվացող փնտրտուքը:

Մա այլ բան չէ, եթե ոչ մարդու կամքի համերաշխորեն ներդաշնակում Աստծո կամքի հետ, եթե ոչ՝ կյանքի հաղթանակը մահվան նկատմամբ, եթե ոչ՝ վերականգնվող և վերագտնվող քրիստոնեական ինքնություն: Եվ ինչպես որ Ղուկասու Ավետարանում հիշատակվող աստվածատես մարմինը կենդանացավ, այդ կերպ էլ բոլոր այն քաջարի նահատակները, որոնց արյան ուղին գծեց դեպի երկինք տանող հոգևոր-բարոյական այն ճանապարհը, որի վրա իրենց ունեցած բոլոր կարգավիճակներում իբրև մեն-մի բանավոր, բայց խոսուն ավանդություններ բարձրացան մեր հոյակերտ եկեղեցիները: Եվ այսօր էլ մեր ժողովրդի անցած ճանապարհի առլեցուն դրվագների միջից նույնքան իրական և անառարկելի մեզ են ուղղված մեր Տեր Հիսուս Քրիստոսի ասես հետևյալ խոսքերը. «Ո՛վ հայ ժողովուրդ, մի՛ վախեցիր, միայն հավատա՛, և կապրես», որովհետև արդեն իսկ ապրում ես թե՛ գոյությամբ և թե՛ մանավանդ հոգևոր կյանքի փորձառություններով:

Հայ ժողովուրդն իր արյան մեջ մշտատև ունենալով հարության ավետիսը, միշտ էլ կարողացել է հաղթահարել իրեն բաժին ընկած փորձություններն ու վտանգները, հաստատել հոգևոր-ազգային և ազգային-կրոնական ավանդույթներ ու չափանիշներ, որպիսիք հավասարապես սուրբ են, անփոփոխ և անկորնչելի, և բոլոր նրանք, ովքեր չեն բաժանում այս հոգևոր ուրախությունը, օտար են, անհարազատ, պիղծ ու բարեկամ աներևույթ թշնամիներին, որովհետև չկամեցան մաս և բաժին ունենալ ա՛յն փրկության բաժակից, որը մեր Տեր Հիսուս Քրիստոս իր առաքյալների և աշակերտների միջոցով ուղղեց հայոց հաղթական ազգին, որովհետև չկամեցան տեսնել ինքն իրեն վերագտած Եկեղեցի, ժողովուրդ և հայրենիք, պատգամով, օրինակով, հիշատակով և անմահ հավատքով, որովհետև վախեցան, չհավատացին և չընդունեցին ապրելու, որով և փրկվելու հրավերը, հետևաբար ո՛չ լույսը տեսան, ո՛չ լուսավորողին՝ հարատևելով խավարի մեջ:

«Մի՛ վախեցիր, միայն հավատա՛ և կապրես»։ Քրիստոնեական կյանքի այս նշանաբանով մեր սրբազան նախնիք ապրել են և հավիտյանս արժեվորել իրենց կյանքի մեն մի սուրբ վայրկյանը՝ ստեղծելով և փոխանցելով այնպիսի հոգևոր արժեք-

ներ, որոնք այսօր էլ անխախտ են, հաստատուն և մեծագույնս կենցաղավարելի ո՛չ միայն հայ, այլև համա՛յն մարդկության դիտակետից:

Այժմ ժամանակը մերն է, սիրելի հայորդիներ. ժամանակն է, որպեսզի մեզանից յուրաքանչյուրը մեր հայրերի օրինակով տնօրինի մեզ հանձնվածը, շահեցնի մեր քանքարը զավակի՝ իրավունքով, այն զավակի՝, որը ժառանգել է մի մեծ և հարուստ պատմություն, մի չքնաղ երկիր, որը տուն է մեզ համար՝ հայրենի և հայրենավանդ:

Այսօր մեծապես ուրախալի է, ոգևորիչ և հավասարապես գոտևորող, երբ կազմավորվող բազում հոգևոր օջախներին, հաստատություններին ու բարձրացող եկեղեցիներին զուգընթաց հոգևոր վերազարթոնք է ապրում մարդը, հայը. մեր ժողովրդի զավակները պատրաստակամ են իրենց հոգևոր, գոյավոր ներկայությամբ ապրելու, հավատքով արժեվորելու իրենց կյանքը, սրբագրելու իրենց հոգու հայացքը առ Ամենաբարին Աստված, առ իր նմանը և առ սեփական անձը, որովհետև մեկ Աստված կա հայ ժողովրդի համար՝ Հիսուս Քրիստոս, մեկ հավատք և մեկ Եկեղեցի, որ հոգևոր օրրան է և օրորոցը թե՛ մեր ծննդյան և թե՛ բարի, ազնիվ ու լուսավոր երազների:

Արդ, աղոթենք, սիրելի՛ հավատացյալներ, որպեսզի Սերն Աստված հավիտյանս անխախտ պահի Ամենայն Հայոց Հավերժարան Սուրբ Էջմիածինը, հայ ժողովուրդն ու Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, որտեղից այսօր էլ համայն աշխարհի խաղաղասփյուռ դողանջների միջից մեզ են ուղղվում մեր Տեր Հիսուս Քրիստոսի խոսքերը.

«Մի՛ վախեցեք, այլ միայն հավատացե՛ք և պիտի ապրեք»:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ամենեսեանս. Ամէն»:

**Տ. ՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՇԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(25 նոյեմբերի 2007 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

*«Անմիտ մարդ, այս գիշեր իսկ հոգիդ քեզմէ
պիտի առնվի: Որո՞ւն պիտի մնա պատրաս-
տածներդ»:*

(Ղուկ. ԺԲ 20)

Տեր Հիսուս այս գորավոր ազդարարական խոսքերը կուղղէ անոնց, որոնք ամեն գիշեր քուն կմտնեն ու շատ վստահ են, որ առավոտուն պիտի արթնանան: Բայց Տերը կհիշեցնէ մեզի կյանքի մեծագոյն ճշմարտությունը՝ մա՛հ կա: Ամեն երկվայրկյան, որ ժամացույցը կգարնէ, երկու հոգի կմեռնի, օրը կհաշվվի հարյուր հիսուն հազար մարդ: Երեկ այս օրը կվայելէին անոնք, այսօր չկան այլևս:

Այս խոսքերը Տեր Հիսուս կարտահայտէ այսօրվան Ավետարանի մեջ ընթերցված առակի մը վերջավորությամբ: Երբ որ Տեր Հիսուս կխոսէր, բազմություն կար իր շուրջը, մարդիկ կլսէին, բայց ամենը մտիկ չէին ընէր, իրենց աչքերով կդիտէին Հիսուսը, կլսէին, ինչ կըսէր, բայց ամենը խոսվածները չէին առնէր իրենց ներսը: Եվ անոնց մեջը մարդ մը կար, որուն սիրտն ու միտքը զբաղված էր իր ժառանգության խնդիրով: Իրենց հայրը մեռած էր ու ժառանգությունը բաժնված էր երկուքի, սակայն եղբայրը հավանաբար քիչ մը ավելին ստացած էր՝ իբր անդրանիկի իրավունք: Հետևաբար ինքը դժգոհ էր անկէ: Եվ իր միտքը շարունակ դրամով, փողով զբաղված էր, երբ Հիսուս կխոսէր:

Ես դասախոս մըն եմ, աշակերտներ ունիմ և բոլոր անոնք, որոնք դաս կուտան կամ կուսուցանեն ժողովրդին, շատ լավ գիտեն, որ բոլոր ձեզ դիտողները, որոնք իրենց աչքերը բաց կնային ձեր երեսը ունկնդրողի տեսք ստացած, իրականության մեջ չեն լսէր ձեզի, որովհետև իրենց միտքը ուրիշ տեղ է: Նույնպէս, ահա՛, Տեր Հիսուսը կըսէր. «Ես եմ կյանքը, ճշմարտությունը, ճանապարհը», իսկ այս մարդը կըսէր. «Փո՛ղ, քիչ մը ավելի փող»:

Տեր Հիսուս կըսէր. «Ո՛վ բոլոր հոգնածնե՛ր, բեռնավորվածնե՛ր, Ինձի եկեք, Ես ձեզ հանգիստ կուտամ», իսկ այս մարդը իր մեջէն կըսէր, «Փո՛ղ, մի քիչ ևս փող, ավելի հանգիստ ըլլալու համար»:

Եվ ի վերջո Տեր Հիսուսը կըսէր. «Սիրեցեք միմյանց, սիրեցեք ձեր թշնամիները նույնիսկ, ձեր հակառակորդներու համար աղոթեցեք, բարիք մաղթեցեք»: Այս մարդը սակայն իր մտքի մեջ կմեռցնէր իր հարազատ եղբայրը փողի համար, որովհետև

փողի խնդիրով մշուշապատված աչքերով տեսնելու սկսեք էր իր եղբայրը՝ թշնամիի մը պես: Հիսուս երբ ավարտեց խոսքը, սպասեց, որ հարցումներ ուղղեն մարդիկ, ինչպես միշտ կընէին: Այս մարդը անմիջապես առաջ ցատկեց, որովհետև տեսավ, որ Հիսուսի խոսքերը շատ ազդեցիկ էին, և բազմությունը շատ լավ կլսեր անոր, ուրեմն կրնար այս վարդապետը իր եղբոր համոզել, որ մի քիչ ավելի փող տա իրեն: Եվ ըսավ. «Վարդապետ, խոսե՛ իմ եղբորս, որ մեր հորմե ինկած ժառանգության բաժինը ինձի տա»: Եվ Հիսուս զարմացած ըսավ. «Ա՛յ մարդ, այս երկրին մեջ դատարաններ կան, դատավորներ կան, ո՞վ կարգեց ինձի դատավոր կամ բաժանարար ձեր ժառանգության խնդիրը լուծելու համար»: Եվ մարդուն աչքերուն նայեցավ և հոն ազահությունը տեսավ: Ինքը, իբր ժառանգություն ստացած էր իր արդար բաժինը, սակայն չէր գոհանար անով: Եվ Հիսուս սկսավ առակ մը պատմել.

«Սիրելիներ, ուշադիր եղե՛ք, որովհետև մարդուն կյանքը իր ունեցածներու շատութենեն կախված չէ: Մարդ մը կար, շատ հարուստ էր, այնքան հարուստ էր, որ այդ տարի, երբ որ հունձքը քաղեց, իր ունեցվածքը դնելու տեղ չունէր, կմտածեր, թե՛ ո՞ր կարելի էր դնել այսքան ունեցվածքը: Եվ գիշեր մը հանկարծ կգտնէ պատասխանը, կըսէ ինքնիրեն. «Գտա՛ ի՛նչ պիտի ընեմ, վաղը բոլոր իմ հին ամբարները պիտի փլեմ, մեծը պիտի շինեմ, ավելի մեծը և իմ բոլոր ունեցվածս հոն պիտի կուտակեմ ու հետո պիտի ըսեմ ես ինձի. ո՛վ հոգիս, շատ աշխատեցար ու հոգնեցար մինչև հիմա, իսկ այժմ կյանքը քուկդ է, կե՛ր, խմե՛, կյանքը վայելե՛: Բայց Աստված անոր ըսավ. «Անմիտ մարդ, այս գիշեր իսկ հոգիդ քեզմե պիտի առնվի, որո՞ւ պիտի մնա պատրաստածներդ»:

Հարկավ թե պատասխանը շատ հստակ է. աշխարհը պիտի մնա, ուրիշները պիտի վայելեն: Բայց ինչո՞ւ համար է այսքան տքնություն, այսքան բժախնդրություն, այսքան վազք, այսքան կռիվ, այսքան պատերազմ: Դիզել, դիզել, դիզել և հետո ի՞նչ: Եկեղեցին կըսէ մեզի, որ կյանքը պատրաստություն մըն է, հսկա պատրաստություն մըն է, բայց ինչի՞ պատրաստություն: Աստուծո ղիմավորելու պատրաստությունն է ան. մեր ամբողջ այս աշխարհիկ կյանքը Աստուծո ղիմավորելու համար է, պետք է մենք սորվինք Աստուծո ղիմավորել: Անոր համար մեծ եկեղեցական դեպքերեն առաջ, զոր օրինակ, Սուրբ Ծնունդ կամ Սուրբ Զատիկեն առաջ, Եկեղեցին պատրաստության շրջան կդնէ: Զոր օրինակ հիմա մենք հիսնակի մեջ ենք: Հիսնակը հիսուն օրեր կտևէ: Մինչև Հիսուս Քրիստոսի Ծնունդը մենք հիսուն օրեր կպատրաստվինք պահեցողությամբ, ընթերցումներով, խորհրդածելով:

Եվրոպայի մեջ արդեն սկսավ այս շրջանը, բոլոր ծառերը զարդարվեցան, խանութները լեցվեցան գեղեցիկ ապրանքներով, ամեն մարդ արդեն բան մը գնել կսկսի, ու կապիտալիզմի մեծ անիվը ավելի արագորեն պտտվելով շուկան կաշխուժանա: Բայց ինչ որ է Պողոս առաքյալի ասածին պես. «Պետք է ուրախ ըլլանք. քանի որ ամեն կերպով Քրիստոսն է, որ կքարոզվի»:

Կյանքը նախապատրաստություն մըն է մահվան. ահա՛ դառն իրականություն մը. ինչ որ մենք չենք ուզեր լսել, ինչ որ մենք չենք փափաքիր հիշել երբեք: Սակայն մեր կյանքը, սիրելիներ, պատրաստություն մըն է մահվան: Այս աշխարհը սպաս-

ման սենյակ մըն է լոկ, ուր կսպասենք մեր հերթը: Քանի որ դյուրին չէ սպասել, նոյնիսկ դաժան է, տալ կուզենք այս իրականությունը մոռացության և սպասելու ձանձրություն փրկվելու համար ամեն մեկս բան մը կընենք, բանով մը կզբաղվինք, մինչև որ մեր կարգը հասնի «մնա՛ք բարով» ըսելու:

Ճամփորդ մը կուզե, որ իմաստուն մը՝ մեծ գրագետ ու փիլիսոփա մը այցելե այդ քաղաքը բնակվող: Ժամադրություն կառնե. ներս կմտնե ու կտեսնե, որ միայն աշխատասեղան մը կա սենյակին մեջ ու պատերը գիրքերով լեցուն, պարզ անկողին մը դրվեր է անկյունը: Ճամփորդը զարմանքով հարց կուտա, «Վարպետ, կահ ու կարասիներդ ո՞ր են»: Իմաստունը կը պատասխանե ուրիշ հարցումով մը. «Իսկ քու կարասիներդ ո՞ր են»: «Բայց, - կըսե հյուրը, - Ես ճամփորդ մըն եմ այս քաղաքը այցելող»: Կժպտի իմաստունը. «Ես ալ ճամփորդ մըն եմ այս աշխարհի վրա»:

Ուրեմն մենք ալ պետք է այս իմաստությունը ձեռք բերենք, պետք է ասոր համար քիչ մը զատվինք ուրիշներեն, մտածենք մեր ապագայի մասին ու մենք մեզի գտնինք Աստուծո խոսքի լույսին ներքև, պատրաստվինք հավիտենական կյանքին: Ամբոխին մի խառնվիք, սիրելիներ, որովհետև ամբոխները կըշվին, կտարվին հոսանքներեն: Եկեղեցին ամբոխ մը չէ: Եկեղեցին հավատացյալներու, գիտակից հավատացյալներու հավաքման վայրն է, նպատակավոր հավաքականություն մը: Հետևաբար մենք ամբոխ մը չենք ըստ բախտի հավաքված: Ամբոխները կերթան առանց գիտնալու, թե ո՞ր: Իսպանիո մեծ դիկտատորին՝ Ֆրանկոյին, հարց կուտա թղթակից մը, «Իսպանիո պես եվրոպական երկիր մը, եվրոպական զարգացած ազգ մը ինչպե՞ս երեսունվեց տարի կըցար տիրապետել»: Կժպտա տիրապետը ու կըսե. «Երկու բան. ֆուտբոլ ու ցլամարտ», այս բաները տվի ժողովուրդին, անոնք ալ միշտ գոհ էին իրենց ստացվածքով: Ժողովուրդը միշտ շարժման մեջ է առանց գիտնալու, թե՛ ու՞ր կերթա և ինչո՞ւ:

Մի պատկանիք անոնց, եղի՛ր քրիստոնյա, ականջ դիր քո Տիրոջ խոսքերուն: Ամբողջ կյանքը պատրաստություն է մեկ գիշերվան համար, որ պիտի մեռնիս, հաշիվ պիտի տաս քու Արարչիդ առջև: Այս է մեր կյանքի փիլիսոփայությունը: Կհավնիք, չեք հավնիր, ձեր գիտնալիքն է նա. բայց այս է մեր կյանքի փիլիսոփայությունը, և ուրիշ փիլիսոփայություն չենք ճանչնար մենք: Կյանքի իմաստությունը կպարտադրե, որ մենք պետք է կյանքին նայինք՝ տեսնելով ապագան, հեռու ապագան, գերեզանեն անդին:

Ժողովուրդի հետ Սուրբ գիրքի դասեր կընեի անցյալին: Կհիշեմ անոնցմե մեկը այս նյութի շուրջ: Ունկնդիրներուն առաջարկեցի, որ ամեն մարդ իր աչքը փակե ու մտածե, որ գերեզմանոցե մը ներս կմտնե, հետո կմոտենա շիրիմի մը, շիրիմին վրա թվական մը կա, իր ծննդյան թվականն է, հետո նկար մը կա, իր նկարն է ան, այո՛, այդ իր գերեզմանն է: Եվ «ծաղիկ մը ձգեցեք ձեր գերեզմանին» ըսի անոնց: Հետո հարցուցի, թե՛ ինչ զգացին այդ պահուն, որոշ մարդիկ քրտնած էին, ըսին, որ «երբեք չկրցանք մտածել մենք մեր մահը, ուրիշին մահը կրնանք մտածել, բայց մեր մահը չենք կրնալ մտածել»:

Ուրիշներու համար շատ դժվար էր նույնիսկ մտածել, իրենց համար խաղալիքի պէս եկած էր այդ փորձը: Բայց, սիրելիներ, ճիշտ քրիստոնյան այդ անձն է, որ կերթա հիսուն տարի առաջ, իր գերեզմանի առջև կկենա, նույնիսկ ծաղիկ կդնէ հոն, հետո ետ կուգա և իր կյանքը ըստ այնմ կապրի, երգի մը նման, գեղեցիկ, առանց վնաս տալու ուրիշին, ծառ տնկելով իր պարտեզին մեջ ապագայի համար, այդպէս լեցուն, այդպէս իմաստալի: Ուրեմն մենք պիտի մերժենք ապրիլ առանց ապագան նկատի առնելով ու գամվելով միմիայն ներկայի, անցողական ու խաբուսիկ այս ներկայի վրա:

Երկրորդը, սիրելիներ, աշխարհիկ կյանքին մեջ շատ մի թաղվիք, մի մտնեք անոր մեջ ձեր ամբողջ էությամբ: Աֆրիկյան առակ մը կըսէ, որ «հիմար է այն մարդը, որ չգիտցած ջուրին մեջ, որ պղտոր է՝ երկու ոտքով կմտնէ»: Կյանքը չէք գիտեր, վաղը չէք գիտեր, պղտոր է անիկա: Մեկ ոտքով մտնէք միայն, իսկ ձեր մյուս ոտքը միշտ հաստատ մնա հավատքի վրա ամրապնդված, Ավետարանի վրա խաբսիված, այս եկեղեցիին մեջ գամված. այսպէս ապրեցեք ահա՝ ձեր երկրային կյանքը, իմաստունի մը նման:

Մահվան մասին ես բոլոր խոսքերը չեմ կրնար սպառել, այն խորունկ փիլիսոփայությունն է. ուստի իմաստուն մարդը անոր հետ կգրադի ու կանգ կառնէ այդ խորհորին առջև հարգալիք: Ուրեմն իմ վերջին խոսքս այս պիտի ըլլա: Այս գիշեր պիտի քնանանք, ամեն գիշերվան պէս պիտի քնանանք, եկե՛ք, անմիտ չըլլանք, Աստուծոմէ «անմիտ» բառը չլսենք, կարծելով, որ վաղը՝ առավոտը անպայման պիտի արթնանանք: Գիշերը, որուն հետ անկողին կմտնենք, առավոտուն ալ անոր հետ կարթնանանք: Ուրեմն ամեն գիշեր խաչ հանեցեք, «Հայր մեր» ըսեք, ըսեք, որ «Տեր Հիստ՛ւս՝ հարյալ Փրկիչ, քեզի հետ մտնել կուգեմ քուն, քեզի հետ արթնանալ կուգեմ»: Երանի անոնց, որ ի Քրիստոս կննջեն ոչ միայն գերեզմանի մեջ, բայց ամեն գիշեր:

Տերը օրհնէ ձեր բոլորին:

ՊԱՏՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՐՂԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՎԱՐՂԱՆԱՆՔ ԵՎ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Հայոց պատմության 4-5-րդ դարերի կարևորագույն իրադարձություններն են՝ Հայոց Դարձը, Գրերի գյուտը և Ավարայրի ճակատամարտը, և երեքն էլ կատարվել են եկեղեցի-պետություն գործակցությամբ՝ Տրդատ Մեծ-Գրիգոր Լուսավորիչ, Վռամշապուհ թագավոր-Ս. Սահակ և Ս. Մեսրոպ, Վարդանանք-Ղևոնդյանք։ Ավարայրում հայ ուխտապահ նախարարները հավաքաբար Վարդանանք անվանվեցին, իսկ Ավարայրից հետո նահատակված հոգևորականները՝ Ղևոնդյանք։

Հանուն հավատի և հայրենիքի նահատակվածների հիշատակը Հայոց եկեղեցին սկսել է կատարել դեռևս Վրթանես քահանայապետի հայրապետության օրերից (կթդ. 333-341 թթ.)։ Փավստոս Բուզանդը գրում է, որ երբ իր զինակիցների հետ զոհվում է հայոց սպարապետ Վաչե Մամիկոնյանը, «Վրթանես մեծ քահանայապետը օրենք սահմանեց մեր աշխարհում տարեցտարի նրանց հիշատակը կատարել, ինչպես նաև նրանց, որոնք նույն կերպով աշխարհի փրկության համար ընկան»¹։

Բուզանդի այս խոսքերից երևում է, որ Վրթանես հայրապետի սահմանած տոնը վերաբերվել է ոչ միայն Վաչե սպարապետին և նրա հետ զոհվածներին, այլև բոլոր նրանց, ովքեր կրնկնեին հանուն հայրենիքի պաշտպանության, և ինչպես գրում է Ռ. Վարդանյանը, սկզբնապես «Վարդանանց հիշատակի օրը տոնվեց Մակաբայեցվոց և Վաչեյանների հետ միասին, անշարժ տոնական օրով մինչև 8-րդ դարի 20-ական թվականները»²։

Տոնացույցի վերախմբագրումից և հիշյալ տոնից Վարդանանց օրվա առանձնացումից հետո այն դարձյալ Ավարայրի ճակատամարտի օրը՝ մայիսի 26-ին չնշվեց, որովհետև «Զատիկ-Պենտեկոստե հատվածում արգելվում էր սրբերի հիշատակի օրը կանոնելը ըստ ավանդության, որը վերագրվում է Հովհան Մանդակունի կաթողիկոսին»³։ Վարդանանց տոնի այս նոր կարգավորման մասին Ռ. Վարդանյանը գրում է. «Հովհան Օձնեցին Վարդանանց հիշատակի օրը կանոնեց Բուն Բարեկենդանից առաջ ընկնող երեքշաբթի, այն է՝ Բուն Բարեկենդանի կիրակիից ետ հաշված 4-րդ օրը, և անշարժ տոնի օրը վերածվեց շաբթականի»⁴։ Հետագայում Բուն Բարեկենդանին նախորդող այս երեքշաբթի օրը սահմանվեց Ղևոնդյանց քահանայից տոնը, իսկ Վարդանանց տոնը սկսեց կատարվել Բուն Բարեկենդանին նախորդող հինգշաբթի օրը։ Տոնի ամբողջական անվանումն է՝ «Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց՝ հազար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատե-

¹ Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, էջ 47։

² Ռ. Վարդանյան, Հայոց Տոնացույցը, Երևան, 1999, էջ 402։

³ Նույն տեղում։

⁴ Նույն տեղում։

րագմին»:

Վարդանանց հիշատակը Բուն Բարեկենդանին նախորդող հինգշաբթի օրը կատարելը, տոմարական համապատասխան հաշվարկներով պայմանավորված կարգավորումից բացի, բացատրվում է և Վրթանես կաթողիկոսի հետևյալ խոսքերով. «Նրանք, որ իրենց կյանքը չխնայեցին այս բոլորի համար, նրանք պետք է պատվվեն Քրիստոսի վկաների հետ: Ուրեմն նրանց չլանք, այլ արժանապես պատվենք նահատակների հետ. մշտական կարգ սահմանենք ամբողջ մեր աշխարհում, որ ամեն ոք անխափան կատարե սրանց քաջության հիշատակը՝ ինչպես Քրիստոսի նահատակների: Իսկ մենք տոն կատարենք և ուրախ լինենք, որ Աստված նրանցով մեզ հետ հաշտ լինի և այսուհետև խաղաղություն շնորհի»⁵:

Վարդանանց տոնը Բուն Բարեկենդանին տոնելը բացատրվում է ուրախ լինելուն վերաբերվող այս կապակցությամբ, ինչպես որ Բարեկենդանն էր ուրախության մի օր Մեծի Պահոց տրտմալից շրջանից առաջ⁶:

Վարդանանց տոնը Մեծի Պահոց շրջանին նախորդող հինգշաբթի օրը տոնելը նաև հոգևոր մի այլ խորհուրդ ունի: Ինչպես գրում է Տ. Ղևոնդ քահանա Մայիլյանը. «Այդ օրերից հետո սկսվելու է Մեծ Պահքը՝ անձնաքննության և աղոթքի օրերը, երբ մեզանից ամեն մեկը պետք է քննի իր անցած ճանապարհը՝ հետազայում նույն սխալները չկրկնելու միտումով, հիշելու մեր հայրերի անցած ճանապարհը և նրանց հավատարիմ մնալու: Մեծի Պահոց օրերին ամեն մի անհատ պիտի վճռի, թե ո՞ւմ է պատկանում, ու՞մ վրա պիտի իր հույսը դնի, ո՞ր ճանապարհով պիտի գնա՝ Վասակի՞, թե՞ Վարդանի ու Ղևոնդի, այլ ճանապարհ չկա: Մեկը տանում է ստրկության ու մահվան, իսկ մյուսը՝ փրկության:

Մեծի Պահոց շրջանն էլ մի Ավարայր է ընդդեմ չար խավարի: Ահա այս խորհրդով էլ Եկեղեցին իմաստուն ձևով կարգել է տոների այս հերթականությունը՝ մինչև Մեծ Պահքի սկսվելը, մեզ խրատելով Վարդանանց օրինակով, Ղևոնդյանների նվիրումով»⁷:

Յուրաքանչյուր եկեղեցական տոնի արարողության ժամանակ Աստվածաշնչից եկեղեցում ընթերցվում են սուրբգրային հատկապես այն հատվածները, որոնք թեմատիկ մի ընդհանրություն ունեն տվյալ տոնի հոգևոր խորհրդի հետ: Համանման ձևով Վարդանանց տոնն սկսվում է Սողոմոնի Իմաստության գրքի երրորդ գլխի մեկից տասներկուերորդ տողերի ընթերցմամբ, որոնցում շեշտվում է, որ նահատակների նահատակությունը զուր չանցավ:

Տոների եկեղեցական արարողության ժամանակ երգվում են նաև տվյալ տոնին նվիրված շարականներ: Ղևոնդյանց տոնին նվիրված շարականները գրել են 11-րդ դարի նշանավոր մատենագիր և բանաստեղծ Հովհաննես Մարկավազ Իմաստասերը, ինչպես նաև Ներսես Շնորհալի հայրապետը (կթղ. 1166-1173 թթ.), իսկ Վարդանանց նվիրված շարականների հեղինակն է Շնորհալի հայրապետը: Յուրաքանչյուր տոնի ներքո հավաքված շարականների ամբողջությունը կոչվում է կանոն, և Հայոց Եկեղեցու տոներին նվիրված շարականների գրքի՝ Շարակնոցի մեջ Ղևոնդյանց և

⁵ Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, էջ 47:

⁶ Այս մասին տե՛ս Լ. Ա. Սարգսյան, Գ. Ս. Սիմոնյան, Ռ. Հ. Վարդանյան, Վարդանանց տոնի կանոնականացումը, Աստվածաբանական ֆակուլտետի տարեգրքի Բ գրքում, Երևան, 2007, էջ 24:

⁷ Տ. Ղևոնդ քհն. Մայիլյան, Ոսկեփորիկ, Երևան, 1992, էջ 22:

Վարդանանց տոները ներկայացված են առանձին կանոններով:

Ղևոնդյանց նվիրված կանոնի առաջին շարականի առաջին տան մեջ ասվում է.

*Որ յառաջագոյն սահմանեցեր ըզփրկութիւն Հայաստանեայց,
Շնորհելով մեզ հրաւիրակ զերանելին ըզՍուրբ Գրիգոր
Օրհնեմք ըզքեզ ընդ զօրս անմարմնականացն՝ Հայր ամենակարող⁸:*

Շարականագիրն այս խոսքերով դիմելով Աստծուն և նկատի ունենալով, որ առաջինը հայ ժողովուրդն է պետականորեն ընդունել քրիստոնեությունը, ասում է, թե Հայր ամենակալ, որ սկզբնապես փրկությունը սահմանեցիր Հայաստան աշխարհի համար և մեզ շնորհեցիր Քո հրավիրակին՝ պատգամաբերին, երանելի Սուրբ Գրիգորին, օրհնում ենք Քեզ հրեշտակների զորքերի հետ միասին:

Երկրորդ տան մեջ ասվում է, որ Աստված Իրեն խաչակից ընտրեց քահանայից դասին՝ նրանցից կարգելով, նշանակելով հովիվներ և վարդապետներ: Երրորդ տան մեջ, ուղղակիորեն նկատի ունենալով Ղևոնդյանց նահատակ քահանաներին, ասում է, որ Քո անվանը զինվորյալները, ովքեր պայծառացան իրենց թափած արյամբ, հաղթությամբ պսակվեցին:

Հաջորդ շարականում, դարձյալ նկատի ունենալով Ղևոնդյանց նահատակներին, ասվում է. «Պայծառացան այսօր սուրբ եկեղեցիք»: Շեշտվում է, որ երկնային հրեշտակների համար ևս ցնծություն եղավ արյամբ զարդարվածների նահատակությունը:

Ինչպես հայտնի է, պատարագը մատուցում են քահանաները: Քրիստոս, որպես բանական պատարագ, զոհ Իրեն մատուցեց աշխարհի փրկության համար: Ղևոնդյանց քահանաների՝ հանուն Հայոց աշխարհի նահատակությունը նման մի պատարագ ներկայացնելով և նկատի ունենալով նրանց նահատակությունը, այսինքն՝ պատարագվելը կրակապաշտների ձեռքով, ասում է, թե ամբարիշտների և ոչ մարդկաների ձեռքով նրանք որպես պատարագ մատուցվեցին աստվածային սեղանին:

Այս շարականում կա նաև ուղղակի արձագանքը Հայաստանում 11-12-րդ դարերում սելջուկյան արշավանքներից հետո ստեղծված ծանր վիճակի, երբ ավերվում էր Հայոց աշխարհը, իսկ ժողովուրդն էլ դիմում էր արտագաղթի, և ամայանում էր Հայաստան աշխարհը: Ինչպես շարականում է ասվում.

*Հեղմամբ արեան սրբոց Քոց հօտապետաց
Ջեկեղեցոյ Քո ցրուեալ մանկունս ժողովեա,
Յուրախութիւն ըզվարատեալս տրտմութեամբ
Եւ արտասուաց յորդահոս բըղխմամբ,
Փրկութեան մերոյ բաշխօղ:*

Այս տան մեջ, այսպիսով, շարականագիրը, դիմելով Աստծուն, ասում է, որ Քո սուրբ հայրապետների արյան հեղմամբ Քո Եկեղեցու ցրված մանուկներին, այսինքն՝ աշխարհասփյուռ դարձող հայությանը ժողովիր և նրանց տրտմությունը ուրախության փոխիր: Հովհաննես Սարկավագ Իմաստասերը, Անիի անկումից հետո

⁸ Ձայնբաղ շարական, Վաղարշապատ, 1888, էջ 433:

Հայաստանում սպառնալի չափեր ընդունող արտագաղթի պայմաններում, մեր բանաստեղծության մեջ առաջիններից մեկը հնչեցնում է Մայր երկրում ազգահավաքման կոչը:

Իր շեշտված հայրենասիրությամբ առանձնանում է հատկապես Ներսես Շնորհալու «Նորահրաշ պսակավոր» շարականը, որը ոչ միայն Վարդանանց տոնին եկեղեցում է երգվել, այլև հնչել է թե՛ որպես ռազմի երգ և թե՛ նոր շրջանում կատարվել ազգային-հասարակական տարբեր հավաքություններում: Ինչպես որ Եղիշեն է հիշում Վարդան Մամիկոնյանին և Ավարայրում նրա հետ ընկած նախարարներին՝ իրենց զինակիցների հետ, նույն ձևով էլ Շնորհալին է ոգեկոչում նրանց հիշատակը: Շարականի առաջին տունը նվիրված է Վարդան Մամիկոնյանին.

*Նորահրաշ պսակավոր և զօրագլուխ առաքինեաց,
Վառեցար զինու հոգւոյն՝ արիաբար ընդդէմ մահու,
Վարդան քաջ նահատակ, որ վանեցեր ըզթշնամին,
Վարդագոյն արեամբդ քո պսակեցեր զեկեղեցի:*

Ալիտերացիայի՝ նմանաձայնության սկզբունքով Վարդանին նվիրված այս առաջին տան մեջ Շնորհալին ընտրել է հատկապես վ-ով սկսվող բառեր: Միաժամանակ, քանի որ Վարդան Մամիկոնյանը պատմության մեջ հայտնի է նաև Կարմիր Վարդան անվանմամբ, ուր Կարմիրը հավաքական խորհրդանիշն է Ավարայրի հերոսների թափած վառ արյան, Շնորհալին իր պատկերները կազմում է վառ-ով սկսվող բառերով:

Երկրորդ տունը նվիրված է Խորեն Խորխոռունուն, որը Ավարայրի ճակատամարտում եղել է հայոց երկրորդ գնդի հրամանատարը և այստեղ էլ նմանաձայնության նույն սկզբունքով ընտրված են խ-ով բառերը:

*Երկնաւոր թագաւորին զինու յաղթեալ պատերազմին,
Խոհական իմաստութեամբ, խոհեմացեալ անճառապէս,
Խորէն խորհրդական և ծանուցեալ անուն բարի,
Խաչելոյն վկայ եղեալ՝ հեղմամբ արեան պսակեցաւ:*

Երրորդ տունը նվիրված է Արտակ Պալունուն և ասվում է.

*Ըննական լուսով լցեալ, արիացեալն քաջ Արտակ,
Թաթաւեալ ի կարմրութիւն բոսորային բղխեալ աղբերն:*

Շնորհալու այս շարականը գրված է որպես ակորստիքոս, այսինքն՝ յուրաքանչյուր տան առաջին տողի առաջին բառի առաջին տառերի կապակցմամբ, որը հայ գրականության մեջ անվանվում է ծայրակապ, ստացվում է Ներսեսի երգ կապակցությունը: Ահա այս պատճառով երրորդ տունը Շնորհալին սկսել է ինչ-որ տեղ արհեստական թվացող բենական բառով:

Անհրաժեշտ է նշել, որ բանաստեղծ կաթողիկոսը բանաստեղծական մեծ վարպետությամբ և ներշնչանքով կարողացել է թե՛ բանաստեղծության ծայրակապը

պահել, թե՛ հիշվող նահատակների անվանը համահունչ նմանաձայնություն ստեղծել և թե՛ այս ամենը ներկայացնել բանաստեղծական հուզական և ներդաշնակ ձևի մեջ:

Հաջորդ՝ չորրորդ տունը նվիրված է Հմայակ Դիմաքսյանին, ուր այս նմանաձայնությունը արտահայտվում է **Հմայակ հօր ընծայեալ, հոգւովն, հանդիսադրէն** բառերով:

Համանման ձևով՝ հաջորդ տունը նվիրված է Տաճատ Գնթունուն: Նա անվանվում է «Տաճատ զարմանալի»: Այս տան մեջ էլ տ-ի կիրառմամբ նրա նահատակությունը՝ երկինք փոխվելը, ներկայացվում է «տարագնաց ելիք յերկինս» արտահայտությամբ: Այս նմանաձայնությունը վառ է արտահայտվում նրան նվիրված տան հատկապես վերջին երկու տողերում.

*Տաճատ զարմանալի՝ տաճար եղեալ Երրորդութեանն,
Տէրունեան սուրբ խորհրդոյն՝ տուն և տեղի արժանացեալ:*

Հաջորդ՝ Վահան Գնունուն նվիրված տան մեջ Վահան անունը ներկայացնում է սաղավարտ, պաշտպանիչ զրահ իմաստով՝ Ավարայրի այս նահատակին ներկայացնելով որպես հավատո և հայրենիքի պահպանության վահանի մի զրահը:

Յոթերորդ տունը նվիրված է Արսենին, ուր նա բնորոշվում է որպես «Արսէնն ցանկալի», իսկ ութերորդ տունը՝ Գարեգին Սրվանձտյանցին:

Նախավերջին տունը հավաքական կերպով նվիրված է Ավարայրի բոլոր, ինչպես Եղիշեն է նշում՝ հազար և երեսունվեց նահատակներին.

*Բամկական խումբ հազարաց եւ երեսնից թիւ ընդ վեցից,
Որք ընդ նոսին նահատակեալ, արիաբար պատերազմաւ,
Եւ հեղին զարիւնս իւրեանց ի նորոգումն եկեղեցոյ,
Ընդ նոսին պսակելով ի յերկնաւոր հանդիսադրէն:*

Հայրենիքի համար ընկած այն զինվորներին, ովքեր անվանապես չեն հիշվել, Շնորհալին հավաքաբար անվանում է «բամկական խումբ», այսինքն՝ ժողովրդական գունդը, որի զինվորներն արիաբար նահատակվեցին իրենց իշխանների հետ՝ իրենց արյունը հեղելով Եկեղեցու համար և նահատակության պսակն ընդունելով երկնային հանդիսադրից՝ երկնքից իրենց դիտողից՝ Աստծուց:

Այս շարականի վերջին տունը Սուրբ Երրորդությանն ուղղված մի փառաբանություն է, որում ասվում է, թե «եկեղեցիք Հայաստանեայց պայծառապէս զարդարեցան»՝ իրենց բարեխոս ունենալով Վարդանանց սուրբ նահատակներին:

Հայ միջնադարյան բանաստեղծության մի ուրույն տեսակն են գանձերը: Ի տարբերություն շարականների, նրանք թեև մաս չեն կազմել եկեղեցական տոների արարողությունների կանոնի, սակայն դարձյալ ասվել են եկեղեցում:

Առաջին գանձերը գրել է Գրիգոր Նարեկացին: Նա ևս, այս ստեղծագործությունների տների սկզբնատառերով ցանկանալով կազմել իր Գրիգոր անվան ծայրակապը, չափածո այս ստեղծագործություններից մի քանիսը սկսել է «գանձ» բառով, որը հետագայում ընդհանրանալով դարձել է երգվող այս բանաստեղծությունների ընդհանուր անվանումը: Շարականների նման, գանձերը ևս գրվել են եկեղեցական բո-

լոր տոների համար, ըստ այսմ և Գանձարան ժողովածուում գանձերի առանձին կանոններ են նվիրված նաև Վարդանանց ու Ղևոնդյանց: Եկեղեցական տոների գանձարանային կանոնը կազմված էր այդ տոնին նվիրված գանձից, տաղից, փոխից, ինչպես նաև մեղեդիից կամ հորդորակից: Ղևոնդյանց ու Վարդանանց տոները ևս ունեն իրենց գանձարանային կանոնները, որոնք դարերի ընթացքում հարստացել են գանձարանային կանոնի մաս կազմող տարբեր միավորներով:

Ղևոնդյանց նվիրված գանձում նրանք բնորոշվում են այսպես.

Ղևոնդեանց քահանայություն, առաքինասերք յաղթալոք ի մարտի:

Ղուկասի ավետարանի «Մի՛ երկնչիր, հոտ փոքրիկ» և Պատմահոր նշանավոր հայոց փոքր ածուի հետևողությամբ՝ շարականագիր Մովսես վարդապետն ասում է, թե դուք քարոզեցիք «հաւտիս այս փոքու», այսինքն՝ հայ ժողովրդին՝ նրանց հորդորելով «ի մարտ մաքառման», որով և բարի հիշատակ թողեցին «որպէս զքաջք արիք ի մարտի»⁹:

Մեկ այլ՝ «Գանձ Ղևոնդեանց եւ Սրբոց Վարդանանց» գործի վերնագրում իսկ շեշտվում է Ղևոնդյանց քահանայից և Վարդանանց միասնությունը:

Այս գանձի ծայրակապը հոդում է Խաչատուր անունը և ամենայն հավանականությամբ այս գանձի հեղինակն է Խաչատուր Կեչառեցին (մոտ 1260-մոտ 1330 թթ.):

Եղիշեն երբ գրում էր իր պատմությունը, թեև արդեն ընկել էր Արշակունյաց թագավորությունը, սակայն թագավորության գաղափարը դեռևս վառ էր, և պատմիչը իր հիշատակած վայրերը հարաբերում է Արշակունյաց հիշատակների հետ: Այսպես Արտաշատը պատմիչը անվանում է «թագավորանիստ վայր»¹⁰: Եղիշեն նաև գրում է, որ Ավարայրից առաջ գործը հավաքվեց Արտաշատում և այստեղից շարժվեց դեպ Արտազի դաշտը¹¹:

Արտաշատը հաջորդող դարերում Խոր Վիրապի հիշատակով արդեն սերտորեն հարաբերվում է հայ ժողովրդի հոգևոր կենտրոն և միասնականության խորհրդանշ Վաղարշապատի Կաթողիկեի՝ Ս. Էջմիածնի հետ:

Խաչատուր Կեչառեցին երբ գրում էր այս գանձը, թեև անշքացած վիճակում էր հայոց եկեղեցիների մայր եկեղեցին, սակայն ազգային-հոգևոր գիտակցությամբ Ս. Էջմիածնին էր վերապահված հայ ժողովրդի ազգահավաքման գործը, որն իր գեղարվեստական ամբողջական արտահայտությունը գտավ Ստեփաննոս Օրբելյանի «Ողբ ի դիմաց Ս. Կաթողիկեին» չափածո ստեղծագործությունում: Եվ Խաչատուր Կեչառեցին հիշյալ գանձում հոգևոր մեծ ընդհանրացվածությամբ Արտաշատի փոխարեն հիշում է Վաղարշապատի կաթողիկեն, թե Վարդանանք այստեղ միաբանության ուխտ հաստատեցին մինչև Ավարայրը:

*Անդ ժողովեալ իշխանքն յԱյրարատ, ի Միածնին իջման առագաստ,
Դաշնաւորեալ միաբան ի դատ անքակելի մնալ ու անարատ:*

⁹ Երևանի Մաենադարան, ձեռ. հմր. 7785, թերթ 121բ:

¹⁰ Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, աշխտ. Ե. Տեր Մինասյանի, Երևան, 1971, էջ 39:

¹¹ Նույն տեղում, էջ 97:

Այսպես հոգևոր մի ընդհանրություն ստեղծելով Ս. Էջմիածնից մինչև Արտագ, այնուհետև գրում է, որ Ավարայրից առաջ հայոց զորքը

*Չոզան ի դաշտն Արտագ զաւառի, ուր էր տապանն Թադէոսի,
Աստուածառաք սուրբ աշակերտի եւ հրաշագեղ կուսին Սանդխտի,
Երկրպագեն Սրբոյն Գեղարդի, որ մխեցաւ ի կողն Յիսուսի¹²:*

Ինչպես հայտնի է, համաձայն հայ մատենագրության, Թադէոս առաքյալը, գալով Հայաստան, Եդեսիայում նախ բժշկում է Աբգար թագավորին՝ իր հետ ունենալով Փրկչի կողք խոցած Աստվածամուխ Սուրբ Գեղարդը, ապա անցնում է Արտագ գավառ, ուր գտնվում էր Սանատրուկ թագավորը: Թադէոս առաքյալի վկայաբանությունում ասվում է, որ առաքյալի՝ Արտագում քարոզության ընթացքում շատերն են քրիստոնյա դառնում, այդ թվում և Սանատրուկի Սանդուխտ դուստրը, և երբ Սանդուխտը չի լսում հորը՝ ետ դառնալու քրիստոնեությունից, զայրացած Սանատրուկը նախ նահատակում է Սանդուխտին, ապա և՛ առաքյալին¹³:

Արտագում Սանդուխտի և Թադէոսի նահատակության վայրում է կառուցված Թադէոս առաքյալին նվիրված Թադէի վանքը:

Վարդանանց մասին գրող պատմիչներից որևէ մեկի մոտ որևէ հիշատակություն չկա, թե Վարդանանք ուխտի եկած լինեն Թադէի վանք, որը հինգերորդ դարում դեռևս պետք է լիներ առաքյալի նահատակությունից հետո այստեղ կառուցված մատուռ, թեև բացառված չէ, որ Վարդանանք կամ հայոց բանակից մի խումբ զորականներ այցելեին նվիրական այս վայրը՝ հայցելու առաքյալի և սրբուհի կույսի բարեխոսությունը:

Հատկանշական է, սակայն, որ այս գանձում ասվում է, թե Վարդանանք այստեղ երկրպագել են նաև Ս. Գեղարդին: Պատմական աղբյուրներն այս մասին ևս ոչինչ չեն հաղորդում: Ինչպես հայտնի է, 13-րդ դարի կեսից Ս. Գեղարդը սկսում է պահվել Պոռշանների տոհմական տիրույթ դարձած Այրիվանքում, որը կարճ ժամանակ անց, ի պատիվ Ս. Գեղարդի, սկսում է անվանվել Գեղարդավանք, և նույն այս շրջանում է, որ պատրաստվում է Ս. Գեղարդի նշանավոր պահարանը:

Մատենագրական աղբյուրները նաև բավական քիչ տեղեկություններ են հաղորդում, թե մինչև Այրիվանքը որտեղ է պահվել Ս. Գեղարդը: Հնարավոր է, որ առաքյալի նահատակությունից հետո այն պահված լինի Արտագում: Թադէի վանքում անգամ 14-րդ դարում գրված հիշատակարաններում հիշվում է Ս. Գեղարդի՝ այստեղ պահվելու մասին: Այսպես, 1315 թ. Թադէի վանքում գրված մի ձեռագրի հիշատակարանում ասվում է, որ այն գրվել է «ի սուրբ և յերկնահանգեւ, ի հռչակաւոր ուխտս, ի յաթոռս և ի հանգիստ սուրբ առաքելոյս Թադէոսի, ընդ հովանեաւ ամենագաւր Աջոյն Յիսուսի, առ ոտս Սուրբ Աստուծային արեամբ ներկեալ նշանիս՝ Սուրբ Գեղարդեանս և սուրբ կուսին Սանդխտոյ»¹⁴:

Այս հիշատակարանում փաստորեն ասվում է, որ Թադէի վանքում է պահվում

¹² Երևանի Մատենադարան, ձեռ. հմր. 8251, թերթ 114բ:

¹³ Տե՛ս Մովսէս Խորենացի, աշխտ Ստ. Մալխասյանցի, Երևան, 1981, գիրք Գ, գլ. Լ-ԼԳ: Սովորեք Հայկականք, Վենետիկ, 1853, հտ Ը:

¹⁴ ԺՂ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 114:

Ս. Գեղարդը: Հիշատակարանի այս խոսքերից, սակայն, կարելի է նաև հասկանալ, որ Ս. Գեղարդը ոչ թե այդ ժամանակ ևս այնտեղ է պահվել, այլ որ հիշյալ ձեռագիրը գրվել է նրա հովանու ներքո, ինչպես որ գեղարդը հիշելուց առաջ գրիչը ասում է Հիսուսի ամենագոր Աջի ներքո: Ուստի այս հիշատակարանից կարելի է նաև ենթադրել, որ ժամանակին այստեղ պահված Ս. Գեղարդը հովանի է այդտեղ գրվող ձեռագրին: Հնարավոր է նաև մեկ այլ տարբերակ: Ինչպես հայտնի է, կային լեզվական կայուն կաղապարներ, որոնք ձևավորվում էին մի տևական ժամանակի ընթացքում և կիրառվում դարձյալ մի տևական ժամանակ: Լեզվական նման կաղապարները, որոնցով բնորոշվում էր ձեռագրի գրության համար տեղի ծառայած այս կամ այն վանքը, բառացիորեն համընկնում են տասնամյակների ընթացքում գրված մի շարք ձեռագրերում, ասես դրանք ոչ միայն նույն գրիչը գրած լինի, այլև մի ձեռագրի համապատասխան հատվածը արտագրած լինի նույն վայրում գրված մեկ այլ ձեռագրից: Ուստի կարելի է ենթադրել, որ Թադեի վանքի սրբությունները թվարկող լեզվական այս կաղապարը ստեղծվել է այն ժամանակ, երբ Ս. Գեղարդը պահվել է այստեղ, ապա շարունակել փոխանցվել ընդօրինակությունից ընդօրինակություն Ս. Գեղարդի՝ Այրիվանք տարվելուց հետո ևս:

Թադեի վանքում 1330 թ. գրված մի Ավետարանի հիշատակարանում դարձյալ հիշվում է Ս. Գեղարդը: Այս հիշատակարանում ասվում է, որ այն գրվել է «ի գաւառս, որ կոչի Արտագ, ընդ հովանեաւ Սուրբ առաքելոյս Թադէոսի և աստուածամուկի Սուրբ Գեղարդեանս»¹⁵: Այս հիշատակարանից ևս կարելի է եզրակացնել, որ ոչ թե այդ ժամանակ այդտեղ է պահվել Ս. Գեղարդը, այլ ժամանակին այդտեղ պահված Ս. Գեղարդը դարձել է վանքի հովանավոր գործություններից մեկը:

Վասն հավատո և վասն հայրենյաց գիտակցված նահատակության ընթացող Վարդանանք, ուստի, բացառված չէ, որ ուխտի գային Ավարայրի շրջագծում գտնվող՝ նահատակության գաղափարն իրենում խտացնող այս սրբավայրը, և որ հիշյալ գանձի հեղինակը մատենագրական մեզ ոչ հայտնի որևէ աղբյուրից կամ Արտագում պատմվող ավանդություններից վերցնել այս տեղեկությունը:

Սուրբ Գեղարդին նվիրված մեկ այլ գանձում, որի հեղինակն է Առաքել Բաղիշեցին, ասվում է, որ Ս. Գեղարդը Թադեոս առաքյալի նահատակությունից հետո այդտեղ է պահվել, և Գրիգոր Լուսավորիչը հետո այն տարել է Այրիվանք:

Նոյն եւ զԳեղարդն Սուրբ տիրական, զմածեալն արեամբ լուսոյն հայրական,

*Առեալ Գրիգոր զնշանն յաղթութեան, զգործին մահու և կենդանութեան,
Զէն Արարչին մերոյ փրկական, զազատութիւն տանս աղամական,
Տարեալ յԱյրիվանքն հրաշագան ու եկեղեցի շինեաց պատուական¹⁶:*

Ս. Գեղարդը հիշվում է նաև Վարդանանց նվիրված մի տաղում ևս, որում ասվում է.

Ի գաւառն Արտագու խումբ առեալ, զօրութեամբ Գեղարդին քաջացեալ,

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Երևանի Մատենադարան, ձեռ. հմր. 427, թերթ 297բ:

*Ըզվրան Սուրբ Սարգսին յօրինեալ, սուրբ մարմնոյ և արեան հաղորդեալ*¹⁷:

Ինչպես տեսնում ենք, այստեղ ոչ միայն Ս. Գեղարդն է հիշվում, այլև ասվում է, որ Վարդանանք Ս. Սարգսին նվիրված խորան են կանգնեցրել: Ս. Սարգսի վկայաբանությունից գիտենք, որ նա նահատակվել է Պարսկաստանում և մասունքները բերվել են Հայաստան: Այսպիսով, Վարդանանք նվիրված այս գործերում նշվում է, որ դեպ Արտազ՝ դեպ Ավարայրի դաշտ ընթացող հայոց բանակը մինչև ճակատամարտը հոգևոր մի հաղորդության մեջ է մտնում Արտազի հետ հարաբերվող սրբությունների հետ:

Գանձերը եթե ներկայացնում են տվյալ տոնի պատմությունը, ապա տաղերը, որ ծավալով անհամեմատ փոքր ստեղծագործություններ են, արդեն հուզական վերաբերմունք են արտահայտում գանձում պատմված իրադարձության մասին՝ ըստ այդմ ունենալով առավել հուզական և գեղարվեստական շունչ: Ղևոնդյանց և Վարդանանք նվիրված գանձարանային կանոններից նման բնորոշ օրինակ է ստորև ներկայացվող տաղը.

*Մաքուր հոգով, արիք մարմնով,
Լերո՛ւք ողբակից հայոց հաւատով,
Լացե՛ք սգով, անդադար երգով,
Ալէլուա, ալէլուա:*

*Աստղ աննրման, սպարապետին
Սրբբոյն Վարդանա քաջ նահատակին,
Գըլուխ կացեալ մեծի հանդիսին,
Ալէլուա, ալէլուա:*

*Թորգոմաճին վրկայն Գարեգին,
Ջատագով եղեալ խաչեալ արքային,
Մեռաւ փութով եւ եհաս Փրկչին,
Ալէլուա, ալէլուա:*

*Է իմ ասել վասըն ռամին,
Ջոր գունդքըն հայոց քաջ գոլ պատմեցին,
Խորէն, Վահան, Արտակ, Հըմայակ,
Ալէլուա, ալէլուա:*

*Ողբամ զկորուստ հասեալ աշխարհիս Հայոց,
Գերեալ զպարծանք ազգիս զհարքըն հաւատոյս,
Քահանայիւք հանդիսիւ ուխտոյս,
Ալէլուա, ալէլուա:*

¹⁷ Երևանի Մատենադարան, ձեռ. հմր. 6495, թերթ 174բ:

*Սուրբն Յովսէփ, զհայրն Բսահակ,
ԶՂենոնդ վարդապետ կապեալ քարշեալ յատենի,
Խորտակեցին և գլխատեցին,
Ալէլուա, ալէլուա¹⁸:*

Ավարայրի ճակատամարտի՝ Եղիշեի նշանավոր նկարագրության հետևողութ-
յամբ գանձերում ևս գտնում ենք Ավարայրի ճակատամարտի նկարագրությունը,
ինչպես օրինակ՝ Վարդանանց գանձի կանոնի միավոր եղող այս տաղի հետևյալ
հատվածում.

*Ջանգիտեալ յոյժ պարսից արքային, զխորություն
այն Տըղմուտ մեծ գետին,
Գունդք հայոց փոյթ ի գետն հասին, և մըտեալ
ի ջուրն անկանէին,
Ձիարշաւ հարձակմամբ խաղային, անողորմ
ըզիրեարս խոցէին:
Երկոքին կողմքն անդէն զինէին, սրտմըտեալ
բարկութեամբ խաղային,
Քան ըզգագանս ընդ իրեար խառնէին, և նիզակ
և սուսեր փայլէին:
Ի ճօճել նիզակացն ահագին հրաձգութիւնք
ի յերկիր եռային,
Եւ լինէր անդ տագնապ ահագին, և վատուժքն
սըրտիւ ճըմլէին:
Եւ ճայթմունք աղեղանց և լարին մեծ հընչմունք
որոտմանց լինէին,
Ջքարանձաւս լերանց շարժէին, զդաշտըն մեծ
դողացուցանէին,
Խառնեցան ընդ միմեանս երկոքին և լախտաւք
զմիմեանքս հարին¹⁹:*

¹⁸ Երևանի Մատենադարան, ձեռ. հմր. 8251, թերթ 117բ-118ա:

¹⁹ Երևանի Մատենադարան, ձեռ. հմր. 6495, թերթ 175բ-176ա:

ԱՐԱ ՀԱԿՈՒՅԱՆ

Արվեստագիտության թեկնածու

ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐԱԳՈՒՅՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայկական դեկորատիվ-կիրառական արվեստի, մասնավորապես գործվածքի պատմության նկատմամբ գիտական հետաքրքրությունը մեզանում սկսվել է XIX դ. վերջին տասնամյակներից: Այդ ժամանակներից էլ փաստորեն հետևողական ընթացք ստացավ միջնադարյան արվեստի մյուս ճյուղերի ուսումնասիրությունը: Արդեն անցյալ դարի վերջում հայկական մատենական նկարչության, որմնանկարչության և ճարտարապետության մարզերում չուսումնասիրված բաց կետերը նվազագույնի հասան: Մինչդեռ գործվածքեղենի ոլորտը այդ առումով մնաց ոչ բարվոք վիճակում:

Եկեղեցական վարագույրների, զանազան տիպի ծածկոցների, սփռոցների, առավել ևս գոբելենային գործվածքների մասին տեղեկությունները առայսօր կարող են համակարգման ու համակողմանի լուսաբանման¹: Ձուտ մասնագիտական քննության տեսակետից կարևորվում են վաստակաշատ ազգագրագետ Մերիկ Դավթյանի աշխատությունները, հատկապես «Հայկական կարպետը»²: Լուրջ ներդրում էր այդ մարզում ՀԳԱԱ արվեստի ինստիտուտի աշխատակից Զեփյուռ Թառայանի «Դաջարվեստը Հայաստանում» գիրքը³:

Հայկական գործվածքեղենի արվեստին ընդհանուր կամ տեղեկատվական ձևով անդրադարձել են ակադեմիկոս Բաբկեն Առաքելյանը⁴ և Վալենտինա Աբրահամյանը⁵: Անշուշտ, արժանին պետք է մատուցել միջնադարյան մշակույթի և ընդհանրապես հայկական ժողովրդական արվեստի անխոնջ և բեղուն հետազոտող մեծն Գաբրիել Կաթողիկոս Հովսեփյանին, որի դրույթները կարող են ուղեցույց հանդիսանալ եկող սերունդների համար⁶:

Մեծապես գնահատելի է միջնադարյան հայ արվեստի երախտավոր Լիդիա Դուռնովոյի ուսումնասիրությունը՝ նվիրված ձեռագրակազմերի դաջածո կտորպահպանակներին⁷:

Սույն աշխատության մեջ նպատակ ունենք՝ ա. հնարավորինս ընդհանուր պատկերացում տալ հայկական եկեղեցական վարագույրների, նրանց բնույթի և բովանդակության մասին, բ. հայ արվեստի բնագավառում քննության առարկա դարձնել գոբելենային գործվածքի պատմությունը⁸:

¹ Գործվածքների ոչ դիմացկուն բնույթը, որոնք աննպաստ պայմաններում քայքայվում են, ինչպես նաև հեշտությամբ տեղափոխվելը, առիթ են դարձել կողոպուտների ու մասսայական կորուստների:

² Մ. Դավթյան, Հայկական կարպետ, Երևան, 1967:

³ Յ. Թառայան, Набойка в Армении, Ер., 1978.

⁴ Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ., Երևան:

⁵ Վ. Աբրահամյան, Արհեստները Հայաստանում IV-XVIII դդ., Երևան, 1956:

⁶ Գաբրիել Կաթողիկոս Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Ա, Երևան, 1983, հ. Բ, 1994:

⁷ Լ. Ա. Դուռնովո, Армянская Набойка, М., 1953: Մեզանում դաջածո կտորեղենի հնագույն նմուշները հանդիպում են XII-XIII դարերից: Լ. Դուռնովոն մատնանշում է Մատենադարանի NN 809, 84, 805 և 1175 ձեռագրերը:

⁸ Հայ արվեստագիտական գրականության մեջ գոբելենին և նրա պատմությանը վերաբերող որևէ մե-

ա. Վարագույր. հին և գործածական պարագայք ժողովրդական կենցաղում և թե՛ առավելապես, կրոնական արարողություններում: «Նոր բառգիրք Հայկազեան լեզու-ի» բառարանում գրված է. «Առագաստ, ծածկոյթ ի վերուստ ի վար կամ ի վերայ ա-գուցեալ. պատրուակ... անջրպետ պարզեալ ձգեալ ... վարագոյր դրան խորանին և դրան սրահին...»⁹: Վարագույրը նույն ձևով է բացատրվում 1967 թ. հրատարակված «Հայերեն հոմանիշների բառարանում»՝ «պատսպարել, քողարկել, անջրպետել, ծածկել, թաքցնել...»¹⁰: Նույնիմաստ բացատրությունն է տրվում նաև մյուս բառա-րաններում:

Վարագույրների իմաստային այս բնույթը ամենից ավելի դիտելի է եկեղեցական արարողակարգի ոլորտում: Այստեղ վարագույրի գործածությունը համընդհանուր բնույթ է կրել: Վարագույրն իր խորհրդաբանությամբ, գունային և պատկերային համակարգով ի սկզբանե կապված է եղել եկեղեցու կազմավորման հետ՝ լինելով նրա ծիսական գործառնության անքակտելի մասը:

Աստվածաշնչում, ի շարս կառուցվելիք խորանի վերաբերյալ տված ցուցումնե-րի, Սինա լեռան վրա Աստված Մովսես մարգարեին պատվիրում է հետևյալը. «Եւ կանգնեսցես զխորանն ըստ օրինակին, որ ցուցաւ քեզ ի լերին անդ: Եւ արասցես վարագոյր ի կապուտակէ եւ ի ծիրանոյ եւ ի կարմրոյ մանելոյ եւ ի բեհեզոյ նիւթե-լոյ. գործ անկածոյ գործեսցես զնա քերովքի... եւ խոյակք նոցա ոսկիք, եւ խարիսխք նոցա արծաթիւ. եւ ձգեսցես զվարագոյրն սիւնէ ի սիւն»¹¹:

Նույն այս գլխի սկզբում ասվում է. «Նրբահյուս բեհեզից, կապույտ, ծիրանի և կրկնակի կարմիր կտավից տասներանի վարագույրով խորան կպատրաստես: Այն կգարդարես ասեղնագործ քերովքներով: Վարագույրի ամեն շերտի երկա-րությունը պետք է լինի քսանութ կանգուն, իսկ լայնությունը չորս կանգուն...»¹²: Այս գլխի մեկ այլ հատվածում ասվում է. «Խորանի համար այժի մազից հյուսված ծած-կոց կպատրաստես... կապույտ, ծիրանի ու կարմիր կտավից և նրբահյուս բեհեզից վարագույր կպատրաստես: Այն կգարդարես ասեղնագործված քերովքով: Այն կամրացնես կարծր փայտից շինված և ոսկով պատված չորս մույթերի վրա: Դրանց խոյակները թող լինեն ոսկուց, իսկ խարիսխները՝ արծաթից: Վարագույրը կձգես մույթից-մույթ...»¹³: «Բակի դռան վարագույրի բարձրությունը թող լինի քսան կան-գուն: Կապույտ, ծիրանի ու կարմիր կտավից և նրբահյուս բեհեզից պատրաստված թող լինի այն՝ նկարագեղ ասեղնագործությամբ: Դրանց մույթերը թող լինեն չորս հատ, խարիսխներն էլ՝ չորս հատ»¹⁴:

Խոսքն այստեղ մետաքսից (բեհեզ) պատրաստված վարագույրների մասին է, ո-րոնց վրա թելերից հյուսված կամ տարբեր գույնի ներկերով պատկերվել են աստ-վածաշնչական ու տերունական կերպարներ¹⁵: Քրիստոնեության առաջին շրջա-նում, հատկապես արևելյան եկեղեցիներում, վարագույրներն ունեցել են գերագույն

նագրություն կամ հողված գոյություն չունի:

⁹ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. II, Վենետիկ, 1837, էջ 769:

¹⁰ Ս. Սուրբիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, 1967, էջ 601:

¹¹ Ելք ԻԶ 30-37:

¹² Ելք ԻԶ 1-2:

¹³ Ելք ԻԶ 31-34:

¹⁴ Ելք ԻԵ 16:

¹⁵ Հ. Քյոսեյան, Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության, Ս. Էջմիածին, 1995, էջ

սրբություններին հաղորդակից դարձնելու ու քրիստոնեական հիմնական գաղափարները ցուցադրելու կանոնակարգված բնույթ, ասել է, թե՛ իկոնոստասային (պատկերակալ) նկարագիր: Ընդհանրապես արևելյան հնագույն եկեղեցիները խուսափել են պատկերակալներ օգտագործելուց՝ բավարարվելով միայն վարագույրներով:

Առաջին այդ դարերում, քանի դեռ քրիստոնեական միջավայրում մեծ թիվ էին կազմում հեթանոսներն ու կռապաշտները, եկեղեցու հայրերը զգուշանում էին այն բանից, որ հեթանոսները կարող էին օգտագործել խորաններում դրված սրբապատկերների օրինակը և իրենք էլ իրենց կուռքերի պատկերները ստեղծել՝ համագործելով դրանք քրիստոնեական սրբություններին¹⁶: Ուրեմն պետք է ենթադրել, որ նշված հնագույն եկեղեցիների վարագույրները, սկզբնական շրջանում, ինչպես վերևում նշեցինք՝ հեթանոսների ու կռապաշտների առկայության հետևանքով, կրել են սոսկ գունային ընդհանուր սեմանտիկ բնույթ՝ առանց տերունական թեմաների: Դրա վկայությունն է նաև վարագույրներին նվիրված աստվածաբանների մեկնաբանություններն ըստ եկեղեցու խորանների:

Այսպես, VII դ. մատենագիր Հովհաննես Մայրագոմեցին խոսելով եկեղեցական վարագույրների խորհրդաբանական նշանակության մասին՝ նշում է, որ դրանք լինում են կարմիր (հրեղեն) և կապույտ (ջրեղեն): Վկայակոչելով Գրիգոր Աստվածաբանին՝ Մայրագոմեցին գրում է, որ առաջին հրեղեն վարագույրը Աստծուն բաժանում է հրեշտակներից, իսկ երկրորդ ջրեղեն վարագույրը հրեշտակներին բաժանում է ժողովրդից: Հ. Քյոսեյանը նշում է, որ վարագույրների մասին խորհրդաբանական այդ մտքերը նախապես արտահայտել է Փիլոն Եբրայեցին. «Վարագուրան որոշի և մեկնի ներքին արտաքնոցն, քանզի ներքինն սուրբ է և, արդարև, աստուածային, իսկ արտաքինն սուրբ և նա, բայց իբր որ նմին բնութեան հասին»¹⁷: Ասել է, թե՛ կարմիրը Աստծո պայմանական «դրսևորումն» է, իսկ կապույտը՝ լոկ նրա առաքինության:

Խոսելով վարագույրների միջնորդավորող դերի մասին՝ Հ. Քյոսեյանը շարունակում է. «Առաջին վարագույրը «Աստվածային գոյը» սահմանազատում է «ստորադաս արարածներից» իր կարմիր գույնով, որն Աստծո Գաղափարի կրողն է: Կարմիրը, շարունակում է բանասերը, այստեղ ոչ միայն Աստվածությունը քողարկող պայմանանիշ է, այլ Աստծո, մարդուն մատչելի «դրսևորումը»¹⁸: Աստվածության գունային խորհրդանշման վերաբերյալ այս մտքերը խարսխված են հինկտակարանային, դավանաբանական կարգախոսների վրա¹⁹: Ըստ էության, կարմիր գույնը (տվյալ դեպքում վարագույրների) Աստծո և մարդու հաղորդակցումը իրագործող խորհրդանիշ է:

Երկրորդ վարագույրը ջրեղեն է (կապույտ), որը հրեշտակների պայմանանիշն է: Սա երևույթի գեղագիտական աստիճանակարգման հնօրյա սովորույթի և հոգևոր գուգահեռական համադրության վարդապետական արժեվորումն է՝ Աստված՝ կարմիր և հրեշտակներ՝ կապույտ հարաբերության նկատառումով: «Գույնը այլաբանական ցուցիչը լինելով Գոյի, իր գեղագիտական – հոգևոր բովանդակությամբ նվիրա-

¹⁶ 3. Тарахн, ук. соч. с. 84.

¹⁷ Հակոբ Քյոսեյան, նշվ. աշխ. էջ 60-61:

¹⁸ Հակոբ Քյոսեյան, նշվ. աշխ. էջ 61: Այդ մասին տե՛ս նաև Вл. Лосский, Боговидение в библейской образе мысли и богочисли отцов претых веков ("Богословские труды, М., 1978, с. 125).

¹⁹ Ելք ԺԳ 21-22, ԺԴ 24, Թիմ ԺԴ 14, Բ, Ա 33, Դ 12, 15, 24, 33, Ե 4-5, 22, 23, 26, Ժ 4 (տե՛ս նաև Հ. Քյոսեյան, նշվ. աշխ., էջ 61):

պետական բնավորություն է ստանում հայ և ոչ միայն հայ միջնադարյան աստվածաբանության մեջ»²⁰:

Վարագույրի մասին միջնադարյան գեղագիտության, առավելապես Աստվածաբանության մեջ ընդունված գաղափարներն իրենց մեկնաբանությունն են ստացել նաև հայ հոգևոր գործիչ Հովհան Օձնեցու մոտ: «Յաղագս եկեղեցոյ» աշխատության մեջ կարդում ենք. «Վարագուրին անջրպետութիւն զառաջին երկնից ցուցանէ որոշումն, որ միայնակ Սուրբ Երրորդութիւնն, ասի բնակիլ յերկինս երկնից, եւ այն եւս անջրպետ, որն ընդ մեր մէջ եւ անմարմին էութեանցս կայ»: Այնուհետև մատնանշվում է այն, որ առաջին վարագույրը, որ «Աստվածային գոյը» սահմանազատում է «ստորադաս արարածներից», իր կարմիր գույնով Աստծո գաղափարի կրողն է: Կարմիրն այստեղ ոչ միայն աստվածայինի բաղկացյալ մասն է, այլև՝ Աստծո էության դրսևորումը: Երկրորդ՝ կապույտ վարագույրում անմարմին հրեշտակներն են բնակվում²¹:

Եկեղեցական վարագույրների խորհրդաբանության մասին նմանատիպ մտքեր շարադրված են 7-րդ դարի հայ եկեղեցական մատենագրության երևելի ներկայացուցիչ Հովհան վարդապետ Մայրավանեցու «Վերլուծութիւնք կաթողիկէ եկեղեցոյ» աշխատության մեջ: Այս դեպքում էլ հանդիպում ենք մեզ ծանոթ մտքերին. «Կարմիր (հրեղեն) վարագույրի ետևում՝ բեմի խորքում «Սուրբ Երրորդութիւնն ծածկի յանմարմնոցն, իսկ կապույտ («ջրեղեն») վարագույրի ետևում «անմարմին զարութիւնքն՝ ի մարմնականացս»:

Ինչպես նշում է Հ. Քյոսեյանը, իր այս մտքերն առավել վավերական դարձնելու համար Մայրավանեցին վկայակոչում է Գրիգոր Նազիանզացու «Խաղաղական» խորագիրը կրող ճառաշարքի ենթագլուխներից մեկը, որը նվիրված է վարագույրների աստվածաբանական - այլաբանական նշանակությանը²²: «Երկու խորանները, որոնք բնակատեղին են Աստծո և հրեշտակների, միմյանցից խստորեն սահմանազատված են վարագույրներով, որոնք եկեղեցական նվիրապետության եռաստիճան պարունակները տարբորոշողի հանգամանք ունեն²³:

Այսպես՝ քրիստոնեական, մանավանդ արևելյան Եկեղեցու կայացման ու գաղափարախոսության ձևավորման շրջանում վարագույրները մեծ մասամբ ներկայացվել են ավելի խորհրդաբանական լակոնիկ բնորոշմամբ՝ շեշտելով գունային հատկանիշը: Վարագույրներին վերապահված էր ծիսաարարողական խիստ կարևոր դեր: Վարագույրը յուրատեսակ միջնորմ է, որը կոչված էր վերին և ստորին արժեքների հարաբերությունը սահմանելու ու կարգավորելու: Պատկերազարդ և գունեղ վարագույրի առկայությունը տաճարում որոշակի ակնարկ է այնտեղ Աստծո ներկայության: Ասել է, թե վարագույրը Աստծո և մարդու ծիսական հաղորդակցման

²⁰ Հ. Քյոսեյան, նշվ. աշխ., էջ 63: Տե՛ս նաև **А. А. Каждан**, Византийская культура (X-XII вв.), М., 1968, с. 166. Եկեղեցում գտնվող հավատացյալը եկեղեցական արարողության ընթացքում նայելով գունագեղ վարագույրներին տեսնում էր հոգևոր աստիճանակարգումը՝ Աստված բարձրագույն իրողությունն է. հրեշտակները Աստծո նկատմամբ ցածր կարգույթի էակներ (**Л. А. Сараджева**, Сравнительное – типологическое исследование цветowych обозначений в древнеармянском и старословянском языках («Պատմաբանասիրական հանդես», 1976, N 4, էջ 186):

²¹ Հ. Քյոսեյան, նշվ. աշխ., էջ 78:

²² Հ. Քյոսեյան, նշվ. աշխ., էջ 77:

²³ Հ. Քյոսեյան, նշվ. աշխ., էջ 76: Տե՛ս նաև «Կնիք Հաւատոյ», Էջմիածին, 1914, էջ 38-39 («Լորին խաղաղականէն՝ արձակէ ինձ լեզու»):

խորհուրդն է²⁴: Այս ընկալումներն արտահայտվում են նաև Փիլոն Եբրայեցու մոտ. «Վարագուրան որոշի և մեկնի ներքինն արտաքնոց, քանզի ներքինն սուրբ է, և արդարև, աստվածային, իսկ արտաքինն սուրբ և նա, բայց իբր ոչ նմին բնութեան հասին»²⁵: Այս գաղափարին անդրադարձել են նաև Դիոնիսիոս Արիսպագացին, Հովհան Ոսկեբերանը և այլ աստվածաբաններ:

Աստիճանաբար, պայմանավորված քրիստոնեական ուսմունքի տարածման, միաժամանակ նաև՝ եկեղեցական միջավայրում հեթանոս ու կռապաշտ խմբավորումների վերացման հետ վարագույրների գունային ընդհանուր խորքի վրա հայտնվում են թեմատիկ տերմինական պատկերներ: Վարագույրների պատկերագրման բնույթը մեզանում վեր է ածվում ազգային կայուն ավանդույթի: Բնչ վերաբերում է ավագ խորանի սեղանին, ապա Հայ Եկեղեցին, իր դավանաբանական առանձնահատկություններից ելնելով, ավագ խորանի գեղարվեստական համակարգում նախապատվությունը տալիս է վարագույրին՝ ավագ սեղանի վրա թողնելով արծաթե կամ ոսկեջրած խաչը՝ իր խորհրդաբանությամբ²⁶:

Սկզբնական շրջանում վարագույրի վրա նկարում էին թեմատիկ պատկերներ՝ ձգտելով դրանք մոտեցնել վաղ սրբապատկերներին, որոնք մի զգալի չափով ստեղծված էին լինում կտավի վրա: Մասնագետները նույնիսկ հնարավոր են համարում, որ վերջիններս (կտավների վրա կատարած սրբապատկերները) գալիս են խորանները ծածկող պատկերակիր վարագույրների ավանդույթներից, երբեմն էլ դրանք «իկոնային» նշանակություն են ունեցել²⁷:

Պրոֆ. Պ. Ուսպենսկին գրում է, որ Սինայի վանքի գլխավոր տաճարում երբեմն վարագույրների փոխարեն օգտագործվել են պատկերակալներ (իկոնոստաս)՝ ծիսական արարողություններին համապատասխան բնույթով²⁸:

Հայ Եկեղեցին հատկանշվել է հետևողական պահպանողականությամբ՝ վերջինիս դրական նշանակությամբ՝ հարազատ մնալով հին ավանդներին ու խուսափելով ծիսական կարգի փոփոխություններից: Դա վերաբերում էր նաև ավագ խորանի գեղարվեստական ձևավորման համակարգին: Եթե կաթոլիկ և օրթոդոքս եկեղեցիներում դեռևս վաղ միջնադարից բացարձակ նախապատվություն ստացավ պատկերակալների կիրարկման սովորույթը, որը գնալով ընդունում էր ճոխ ձևեր, ապա Հայ Եկեղեցին, հավատարիմ պատկերակիր վարագույրներին, ընդհուպ մինչև XVII-XVIII դարերը ավագ խորանի սեղանի վրա ընդունում էր միայն մետաղյա խաչ դնելու սովորույթը²⁹:

Այսպես, ուրեմն, Հայ Եկեղեցին նախապատվությունը անվերապահ տվել է և օգտագործել է վարագույրը, որն իր պատկերակիր բովանդակությամբ հիմնականում կատարել է այն դերը, ինչը կաթոլիկ և օրթոդոքս եկեղեցիներում՝ իկոնոստասը: Մեծակառույց եկեղեցիներում, ըստ խորանների քանակի՝ երկրորդ, երրորդ, գոր-

²⁴ Ղևոն ՀԱ 23, Թիւք Գ 10, Դ 25, ԺԸ 7:

²⁵ Փիլոն Եբրայեցույ Մնացորդք ի հայ ..., Վենետիկ, 1826, 1826, էջ 529:

²⁶ Հր. Հակոբյան, Հայոց Տերունական Սրբապատկերներ, Երևան, 2003, էջ 26-58:

²⁷ 3. Тарахан, ук. соч., с. 84-85:

²⁸ П. Успенский, Первое путешествие в Синайский Монастырь, СПб., 1856, стр. 167.

²⁹ XVII դ. հետո առավել նշանավոր եկեղեցիներում մասամբ փոխվում է ավագ խորանի սեղանի գեղարվեստական հարդարանքը: Բացի այն, որ տրվում են գերագույն սրբությունների պատկերները, նաև մեծ խաչակալների վրա պատկերվում կամ դրոշմվում են տերունական պատկերներ: Հայ եկեղեցում ծիսական արարողակարգի և տոների մեջ կատարված բարեփոխումների մասին տե՛ս Սիմեոն Կաթողիկոսի գալակալության տարիների (1763-1780 թթ.) բարեփոխումները (Մ. Օրմանյան, Ծիսական բառարան, Անթիլիաս, 1979):

ծածվել են տարբեր վարագույրներ, որոնք նվիրված էին լինում Տերունական առանձին նշանակության տոների³⁰:

Հայկական եկեղեցին օգտագործել է պատկերազարդ վարագույր: Այժմ հետաքրքրական է իմանալ, կա՞ն կոնկրետ փաստեր՝ իմանալու, թե դրանք ո՞ր դարերից են գործածվել, որտե՞ղ են գտնվում հնագույն նմուշները: Ցավոք, հայոց երկրի քաղաքական աննպաստ պայմանները և, ընդհանրապես, գործվածքային նյութի ոչ դիմացկուն բնույթը հնարավոր չի դարձրել պահպանել հնագույն նմուշները: Մինչև XVII դարը մենք ունենք միայն հավաստի տեղեկություններ, որոնք գտնվում են մատենագրական սկզբնաղբյուրներում: Այդ մասին առաջին վկայությունը գտնվում է VII դ. հայ եկեղեցական նշանավոր գործիչ Վրթանես Քերթոզի «Յաղագս պատկերամարտութեան» աշխատության մեջ: Այստեղ հոգևոր երևելի հայրը, պարսավելով պատկերամարտությունը, հավաստում է հայկական եկեղեցիների պատկերահարգությունը և դրանցում պատկերների առկայությունը, և մյուս կողմից վավերացնում Հայ Եկեղեցու պատկերահարգական վարդապետությունը, նկարագրում հայկական եկեղեցիներում առկա պատկերազարդ վարագույրները³¹: Վրթանես Քերթոզը գրում է. «Քանզի պատկերաց օրինակ նախ Մովսէս արար ի խորանին հրամանաւն Աստուծոյ, երկուս քերոբս ոսկիս ճախարակեացս թնասորս մարդակերպս ի վերայ քաւութեանն, յորոց միջոյ խոսէր Տէրն Տէրանց (Ելք ԻԵ 28-20)... Սոյնպէս և զվարագոյրն զոր Տէրն ասաց առնել, նարօտով նկարուի, և պէս-պէս յօրինուածովք զարդարել, որ է բեհեզ և ծիրանի, կարմիր և կապուտակ, ոչ ապաքէն դեղք էին երանգ նարօտոց վարագուրին. և էին նկարք վարագուրին քերովբի («Թուղթ առ եբրայեցիս», Թ. 5)»³²:

Արվեստաբան Զեփյուռ Թառայանը վերը հիշված իր գրքում Վրթանես Քերթոզից բերել է մի հատված, որն, ինչպես նշում է, քաղված է Մատ. N 2966 ձեռագրից. «... նկարքն յեկեղեցիս զոր գիրք սուրբք պատմեն ոչ ապաքեն դեղով գրեալ է զգիրս, զնոյն բան դեղով նկարեալ է յեկեղեցիս, ի գրոցն ականջք մտացն լսեն, իսկ զնկարսն աչօք տեսանեն և ականջօք լսեն և տեսանեն, ահա յայտ է իցէ արտաքոյ գրոց պաշտել զպատկերսն, նոյնպէս զվարագոյրսն, զոր Տէր ուսոյց առնել նարօտով նկարովք և պէս պէս յօրինուածովք զարդարեալ, որ է բեհեզ և ծիրանի, և կապուտով ոչ ապաքէն դեղք էին երանգք նկարաց վարագուրին և էին նկարք վարագուրի քերովբէք»³³:

«Մատենագիրք հայոց»-ի մեջ մեզ հետաքրքրող հատվածում տարբերակն այսպիսին է. «... նոյնպէս եւ զվարագոյրն, զոր Տէրն ասաց առնել նարաւտով, նկարք ի պէս-պէս յարինուածեալ զարդիւք, որ է բեհեզ եւ ծիրանի կարմիր և կապուտակ, ոչ ապաքէն դեղք էին երանգք նկարուց վարագուրին, եւ նկարք վարագուրին՝ քերաւբէքս...»³⁴:

Վրթանես Քերթոզի խոսքերը ընդհանուր հայտարարության բնույթ չեն կրում և ոչ էլ քրիստոնեական Եկեղեցու գեղարվեստական գաղափարախոսությանը վերա-

³⁰ «Օննդյան», «Վերափոխման», «Հարության» և այլն:

³¹ Այդ մասին տե՛ս **Դուրեան Ե.**, Ուսումնասիրությունը և քննադատությունը, Երուսաղեմ, 1935, էջ 299-308: **Զարբհանայան Գ.**, Հայկական հին դպրություն, Վենետիկ, 1897, էջ 465-468:

³² **Ս. Տեր-Ներսիսեան**, Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975, էջ 8:

³³ **З. Тараян**, Набойка в Армении, с. 83.

³⁴ Մատենագիրք Հայոց, Գ, Անթիլիաս, 2004, էջ 493 (քննական բնագիր, ուր օգտագործված է նաև 2966-ը):

բերող դրույթներ են: Դրանք (հինկտակարանյան փաստերի վկայակոչումով) կոնկրետ իրականությունից բխած փաստեր են՝ հավաստելու Հայ Եկեղեցու պատկերահարգությունը: Քերթողի նպատակը դա է եղել՝ փաստերով պատասխանել Հայ Եկեղեցուն պատկերամարտության մեջ մեղադրողներին: Ուրեմն 7-րդ դարում Հայ Եկեղեցին օգտագործել է պատկերագարող վարագույրներ. այս է ճշմարտությունը: Ի դեպ, ուշագրավ է, որ հայկական մանրանկարչության օրինակներում ևս տարբեր թեմաների մեջ պատկերված են խորաններից կախված վարագույրներ³⁵:

Ասվեց, որ հին ժամանակներից մինչև XVII դ. վարագույրներ չեն պահպանվել. գուցե հետագայում հայտնաբերվեն, բայց առայսօր մեզ հայտնի չեն: Այս մասին տեղեկությունները սուղ են նաև պատմական սկզբնաղբյուրներում՝ հայ պատմիչների ու մատենագիրների գործերում: Բայց ահա XIII դարում հանդիպում ենք եզակի արժեք ունեցող մի տեղեկության: XIII դ. ճշմարտապատում պատմիչ Կիրակոս Գանձակեցին, խոսելով Արցախի Վախթանգ Հաթերքցի իշխանի մասին, պատմում է, որ այդ հեռատես և համարձակ իշխանի կինը՝ Արգուխաթունը, իր դուստրերի հետ մեծաչափ վարագույրներ է գործել Նոր Գետիկի, Հաղպատի, Մակարա և Դաղի վանքերի համար՝ «Ծածկույթ սուրբ խորանին»: Ըստ էության, իշխանուհի Արգուխաթունը և նրա դուստրերը, հավանաբար օգնողներ էլ կլինեին, «ազնվական արհեստանոց»³⁶ են ունեցել՝ վարագույրներ գործելով հայկական եկեղեցիների համար: Ուրեմն թե՛ Վրթանես Քերթողի, թե՛ Հովհան Մայրագոմեցու վկայությունը և թե՛ Կիրակոս Գանձակեցու տողերը անառարկելիորեն վկայում են, որ Հայաստանում ոչ միայն կանոնակարգված ձևով օգտագործվել են պատկերագարող վարագույրներ, այլև՝ դրանք ստեղծվել են հայ շնորհաշատ կանանց ձեռքով: Խորապես ցավել կարելի է միայն, որ Հայաստանում ստեղծված կիրառական արվեստների այդ ընտիր նմուշներից առայսօր որևէ բան հայտնի չէ մեզ:

³⁵ Օրինակ, Ավետարանիչների պատկերներում, Տյառնընդառաջի տեսարանում՝ Սիմեոն Ծերունու թիկունքի եկեղեցու ավագ խորանում նկատվում է զարդարուն վարագույրը: Հիսուսի խաչելության պահին պատվում է եկեղեցու վարագույրը: Քրիստոսի գերեզմանի պատկերում (Տեմպլետո) կրկին ներկայացված է վարագույր. վարագույրներ ներկայացված են ևս մի քանի այլ տեսարաններում:

³⁶ Գոբելենի հայրենիք համարվող Ֆրանսիայում այդ գործվածքը համարվել է թագավորական մանուֆակտուրայի արտադրանք: Գոբելենը պատրաստվել է պալատների, թագավորական ընտանիքի անդամների ու ազնվականների համար՝ իբրև նվեր: Այն ենթակա չի եղել վաճառքի: Ըստ էության, Հայաստանում ևս գոբելենի գործվածքով զբաղվել են ազնվականները:

ՍՈՒՄԱՆՆԱ ԱԴԱՄՅԱՆ

*ՀՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի աշխատակից*

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՂԻՍԿՈՂՈՍ ՍՄԲԱՏԱՆՑԻ ՎԻՍԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

XIX դարի սկզբներին Հայաստանը շարունակում էր մնալ սուլթանական Թուրքիայի և շահական Պարսկաստանի տիրապետության տակ: Անկախ պետականության բացակայության պայմաններում երկիրը ենթարկվում էր քաղաքական, մշակութային, ազգային, տնտեսական մշտական ճնշումների: Նույնիսկ նման պայմաններում զարգանում էր հայ գիտական միտքը: Դա պայմանավորված էր եվրոպական բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթված հայ մտավորականների, ինչպես նաև Մայր Աթոռի միաբանության անդամների ազգաշահ և հայրենասիրական քայլերով: Պատահական չէ, որ այս շրջանում ձևավորվում էին գիտական ուսումնասիրության տարբեր բնագավառները: Որպես գիտության առանձին ճյուղ՝ սկզբնավորվում է վիմագրագիտությունը, որը սահմանափակվում էր տեղագրական ուսումնասիրությունների մակարդակով:

Մինչ օրս հայտնի ամենահին հայատառ վիմագրերը վերաբերում են V դարի երկրորդ կեսին¹: Այսինքն՝ գրերի արարումից մի քանի տասնամյակ անց հնագույն եկեղեցիների որմերին փորագրվել են արձանագրություններ (Տեկոր, Եղվարդ և այլն), որոնք հիմնականում ունեցել են շինարարական բովանդակություն: Հետագա դարերին Հայաստանի ողջ տարածքում փորագրվել են նվիրատվական, իրավականոնական, հիշատակագրային, արտոնագրային բնույթի հազարավոր արձանագրություններ:

Հայկական վիմագրերի հավաքման, ուսումնասիրման գործընթացն սկզբնավորվել է XIX դարի առաջին քառորդին: Դրանում կարևոր դեր ունեցավ վիրահայոց հոգևոր առաջնորդ Ներսես Աշտարակեցին (Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ 1843-1857 թթ.): «Աշտարակեցին ԺԹ դարի առաջին կեսին մեր եկեղեցական, ազգային և մշակութային զարթոնքի ամենաինքնատիպ և բազմալստակ մեծություններից մեկն է, որպես հայ անձնավորություն, Մայր Աթոռի միաբան, լուսավորության և հառաջադիմության ջատագով մտավորական, թեմակալ առաջնորդ, հայրենասեր ու մեծա-

¹ Ամենահին թվագրությամբ շինարարական արձանագրությունը (V դար) պահպանվել է Տեկորի եռանավ բազիլիկ շինության արևմտյան մուտքի բարավորի վրա, որը Ն. Մառը համարում է IX դարի արձանագրություն: Տե՛ս **Ա. Մանուչարյան**, Քննություն Հայաստանի IV-XI դդ. շինարարական վկայագրերի, Երևան, 1977, էջ 39: Իսկ Կ. Ղաֆադարյանի պնդմամբ այն գրվել է 480-ական թթ: Տե՛ս **Կ. Ղաֆադարյան**, Տեկորի տաճարի V դարի հայերեն արձանագրությունը և մեսրոպյան այբուբենի առաջին տառաձևերը, ՊԲՀ, 1962, թիվ 2, էջ 39-54:

գործ հոգևորական»²: Վիմագրերը կորստից փրկելու նպատակով նա կարգադրում է հավաքել Հայաստանի տարածքի պատմական հուշարձանների որմերին և հուշակոթողների վրա փորագրված վկայագրերը³: Աշտարակեցու կարգադրությունն անարձագանք չմնաց: Վիմագրեր հավաքելու և ուսումնասիրելու գործընթացում մեծ ներդրում ունեցան Մ. Բժշկյանցը, Մ. Ջալալյանցը, Մ. Բարխուդարյանը, Մ. Սմբատյանցը, Հովհ. Շահխաթունյանցը, Մ. Էմինը, Ղ. Ալիշանը, Ե. Լալայանը, Կ. Կոստանյանը և ուրիշներ: Թեև նրանց վերծանություններն ունեցել են որոշակի անճշտություններ, սակայն անուրանալի է նրանց վաստակը: Տեղագիր ուսումնասիրողների հրապարակումների շնորհիվ հարյուրավոր վիմագրերի քարեղեն ապացույցները թեև մեզ չեն հասել, սակայն առկա ընդօրինակությունները այսօր սկզբնաղբյուր են համարվում: Այդ առումով հիշյալ տեղագիրների ուսումնասիրությունները մեծ արժեք են ներկայացնում հայագիտության համար:

Սույն հոդվածում կանդրադառնանք Մ. Սմբատյանցի գիտական գործունեությանը, ով առանձնահատուկ դեր է ունեցել վիմագրագիտության սկզբնավորման գործում:

Իր իսկ գրառումների համաձայն⁴, Սմբատյանց տոհմը սերում է XVI դարում Վայոց ձորում իշխող Սմբատ իշխանից, որի նստավայրն է եղել Նախիջևանը: Թուրք-պարսկական պատերազմների պատճառով նրա սերունդները ստիպված են եղել տեղափոխվել տարբեր բնակավայրեր և, ի վերջո, 1828 թ. հաստատվել Նախիջևանում: Տոհմի ներկայացուցիչներից էր Աբրահամ Տեր-Կարապետյան Սմբատյանցը: Նա ուսյալ հոգևորական էր, Նախիջևանի Փորադաշտ գյուղի ավագ քահանան, Ջավահիր անունով կնոջ հետ ունեցել են ինը զավակ, որոնցից Մ. Սմբատյանցին վիճակված էր կրելու թե՛ հոգևոր սքեմը, թե՛ հայագետ-ուսումնասիրողի պատիվը:

Մ. Սմբատյանցը ծնվել է 1833 թ. մարտի 10-ին Նախիջևանի Փորադաշտ գյուղում: Հայրը՝ Տեր Աբրահամը, քահանայական սպասավորություն է իրականացրել տարածաշրջանի Նորս գյուղում, որտեղ էլ անցել է Մ. Սմբատյանցի մանկությունը:

1833 թ. մարտի 18-ին Մեսրոպ Սմբատյանցը մկրտվել և անվանակոչվել է Գրիգոր: Նախնական կրթությունը ստացել է հոր մոտ (1840-1845 թթ.), ապա՝ Նախիջևանի գավառական ուսումնարանում (1845-1847 թթ.): Այն ավարտելուց հետո, Հովհ. Շահխաթունյանցի տեսչության տարիներին, ընդունվել է Էջմիածնի Ժառանգավորաց դպրոց՝ ուսանելով Մակար վարդապետի մոտ (1885-1891 թթ.): Ամենայն Հայոց Կաթողիկոս Մակար Ա Թեղուտցի: Դպրոցն ավարտելով՝ ստացել է դպրության չորս աստիճաններ: Եղել է ընթերցասեր, բարեմիտ, քաջածանոթ Սուրբ Գրքին, աստվածաբանությանը: «Նա չի սիրում կատարեալ տգիտությունը և քարոզում է սկզբնական կրթութիւն, կարգին երգեցողութիւն, ատելով ատում է մանա-

² Արթուր Հատիսյան, Ներսես Աշտարակեցի, «Էջմիածին», 1970, Թ, էջ 6:

³ Դիվան հայ վիմագրության, պրակ I, (Հ. Օրբելու խմբագրությամբ) Առաջաբան, էջ XVIII:

⁴ «Կենսագրական տվյալներ Մեսրոպ արք. Սմբատյանի մասին» (1910 թ.), ՀԱԱ, ֆոնդ 429, ցուցակ 1, գործ 239, էջ 38-39:

ւանդ տգետ ու անշնորհք քահանային, որը ոչ մի բանից տեղեկութիւն չունի...»⁵: Հատկապէս իր դժգոհությունն է հայտնել Հայաստանի տարբեր շրջաններում պահպանված և անուշադրության մատնված հոգևոր հուշարձանների նկատմամբ ժողովրդի անտարբերության վերաբերյալ, ավելին, ըստ նրա՝ քահանաների «...անշնորհքութիւնից ո՛չ եկեղեցական տօմար կար և ո՛չ հաշիւ»⁶:

1851 թ Մ. Սմբատյանցը նշանակվում է Մայր Աթոռի քարտուղար: 1856 թ. մայիսի 16-ին ձեռնադրվել է սարկավագ, իսկ մեկ տարի անց Պողոս եպիսկոպոս Մալխասյանցի կողմից ձեռնադրվել է արքեպիսկոպոս Մեսրոպ անվամբ: Արքեպիսկոպոս ձեռնադրությունից հետո զբաղվել է վանական-վարչարարական, գրական, հավաքչական ակտիվ գործունեությամբ: 1858 թ. նրան վստահվում է Վեհաբանի տնտեսական մասի կառավարչի, ապա՝ Էջմիածնի շրջանի 75 գյուղերի (Բաշ Ապարանից՝ Սարդարապատ) գործակալի պաշտոնները:

1860 թ. Մ. Սմբատյանցը գլխավորել է Մուղնու Ս. Գևորգ վանքի միաբանությունը: Այստեղ կառուցել է արևելյան վերնահարկի սենյակները, բարեկարգել պարտեզը: 1860 թ. հունվարի 20-ի կաթողիկոսական տնօրինությամբ Սմբատյանցին շնորհվել է մետաքսյա ծաղկյա կապույտ փիլոն կրելու իրավունք⁷, իսկ 1861 թ. կաթողիկոսի կողմից նշանակվել է Մայր Աթոռի արտաքին և ներքին գործերի վանական կառավարիչ, ստացել վարդապետական ականակոտ խաչ:

1862 թ. կարգվել է Նոր Բայազետ քաղաքի և գավառի՝ Քանաքեռից մինչև Զիբուխու և Բասարգեչար ընկած գյուղերի հոգևոր գործակալ: Այդ տարիներին Սմբատյանցը զբաղվել է ոչ միայն հոգևոր քարոզչությամբ, այլև շրջագայել է գավառի գյուղերում⁸ (այդ թվում և մալական, քուրդ, պարսիկ), ուր հնարավոր էր, որ հայկական հուշարձաններ գտնվեին: «Նա սիրում է հիւրասիրել և օրհնաբանութիւն կարդալ Աստուածանից տւած ամեն բարիքի համար. նա իւր աչքը չի փակում և գիտէ զմայլել և փառաւորել դաշտերի, լեռների, անտառների, ծովի տեսարաններով, բայց ամենից առաջ, իբր հետախոյզ, նա սիրահար է հնութիւնների և արձանագրութիւնների»⁹:

1862-63 թթ. ուսումնասիրությունների արդյունքում գրել է իր «Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ», որը տպագրվել է 33 տարի անց՝ 1895 թ Վաղարշապատում¹⁰: Աշխատությունն ունի հայագիտական մեծ արժեք: Այն պարունակում է պատմական, աշխարհագրական, հնագիտական, ազգագրական, վիճագրական հարուստ տեղեկություններ ոչ միայն Գեղարքունիք, այլև հարևան գավառների վերաբերյալ: Սակայն վիճագրական ուսումնասիրություն-

⁵ Ա. Ա., Գրախօսութիւն, «Մուրճ», 1896, էջ 1589 :

⁶ Մ. Սմբատյանց, Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի, Վաղարշապատ, 1895, էջ 364 :

⁷ Ծաղկյա փիլոնը քահանան, որպէս իր հոգևոր գործունեության գնահատություն, կրում է կաթողիկոսի թույլտվությամբ: «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», Երևան, 1980, հատոր IV, էջ 650:

⁸ ՀԱԱ, ֆոնդ 429, ցուցակ 1, գործ 234, էջ 15:

⁹ «Գրախօսութիւն», «Մուրճ», 1896 թ , էջ 1589 :

¹⁰ Տպագրության ձգձգման պատճառը ուրարտերեն սեպագիր արձանագրությունների վերծանումն էր, որը Սմբատյանցը ցանկանում էր զետեղել գրքի էջերում:

ների առումով կարևորը տարբեր դարաշրջաններին վերաբերող հուշարձանների վրա պահպանված վկայագրերի հարուստ հավաքածուն է:

Անշուշտ կան արձանագրություններ, որոնք դուրս են մնացել նրա տեսադաշտից: Ընդհանուր առմամբ գրքում տեղ են գտել ավելի քան չորս հարյուր մեծ ու փոքր վիմական արձանագրություններ¹¹, որոնց մի մասի բնօրինակները մեզ չեն հասել: Այդ առումով, Սմբատյանցի ընդօրինակած վիմագրերը համարվում են եզակի սկզբնաղբյուր: Հեղինակը համեստորեն է ներկայացնում իր աշխատությունը՝ հավակնություն չունենալով, որ այն կարող է դառնալ հայագիտության համար արժեքավոր գործ. «...գրածս մի երևելի բան չէ, ո՛չ հեղինակություն և ո՛չ թարգմանություն, այլ իսկապէս ժողովածու արձանագրութեանց և կրկնութիւն բանից քանի արտագրողների և ճանապարհորդների. ուստի մեծայոյս եմ թէ՛ բանագիտաց ներողամտութեան արժանի կը լինի»¹²:

1864 թ. Ս. Սմբատյանցը կարգվել է Նախիջևանի գավառի Շամբի (Մաղարդա) Ս. Ստեփաննոս Նախավկա վանքի վանահայր: 1866 թ. գլխավորելով Տաթևի վանական միաբանությունը՝ գրել է հիշյալ հաստատության վանահայրերի համառոտ պատմությունը կամ գավազանագիրքը (Գրիգոր Տաթևացուց սկսած), կազմել Ստ. Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» երկի անվանացանկը, վանքում պահվող գրչագրերի, ձեռագիր մատյանների ցուցակը:

1867 թ. Ս. Սմբատյանցը ստանձնում է Նախիջևան քաղաքի և շրջանի գյուղերի հոգևոր առաջնորդությունը: Պաշտոնավարության ընթացքում նա շրջագայել է գավառի գյուղերով¹³, կատարել ուսումնասիրություններ և իր տպավորությունները շարադրել «Գաւառացոյց Նախիջևանայ» անտիպ աշխատությունում, որը ևս պարունակում է վիմագրական հարուստ նյութեր: 1868 թ. Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի Ամենայն Հայոց Կաթողիկոսը (1866-1882 թթ.) նրան շնորհում է Երևանի փոխթեմակալի պաշտոնը, իսկ 1870 թ. ծայրագույն վարդապետի աստիճան¹⁴: Կաթողիկոսի առաջարկությամբ և ռուսական Ալեքսեյ Բ Նիկոլանիչ ցարի հաստատմամբ Ս. Սմբատյանցը եղել է Ս. Էջմիածնի Սինդի անդամ (1870-87 թթ.): 1871 թ. նշանակվում է Ս. Էջմիածնի տպարանական ժողովի նախագահ:

1872 թ. մարտի 26-ին ձեռնադրվել է եպիսկոպոս: Բարեկարգել և ցուցակագրել է Էջմիածնի նորակերտ թանգարանի հավաքածուի միավորները, անոթներն ու զգեստները՝ արժանանալով Վեհափառ Հայրապետի գնահատանքին: Այդ մասին նա գրում է. «Աշխատասիրութեանս վարձատրութիւնն էր հոգելոյս Հայրապետի հայրական սէրն ու խնամքը, որ յիրավի քաղցր է ինձ համար քան զամենայն հարստութիւն, թէն չէր խնայում նաև նիւթականը»¹⁵: 1876 թ. նշանակվել է Ս. Էջմիածնի

¹¹ «Մուրճ»-ի էջերում արձանագրությունների թիվը հասնում է 350-ի : «Մուրճ», 1896, «Գրախօսութիւն», էջ 1589:

¹² «Գեղարքունիք...», էջ 294:

¹³ «Գործ՝ Մեսրոպ արք. Սմբատյանի ծառայության մասին» (1904թ.), ՀԱԱ, ֆոնդ 429, ցուցակ 1, գործ 234, էջ 15:

¹⁴ «Կենսագրական տվյալներ Մեսրոպ արք. Սմբատյանի մասին» (1910 թ.), ՀԱԱ, ֆոնդ 429, ցուցակ 1, գործ 239, էջ 8:

¹⁵ «Նկարագիր Ս. Կարապետ վանից Երնջակա և շրջակայից նորա», Տիդիս, 1904, էջ 74:

Ժամարար: Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրամանով և Օշականի ազգաբնակչության անմիջական օժանդակությամբ կառուցել է Օշականի Ս. Մաշտոց եկեղեցին, որտեղ ամփոփված է Ս. Մեսրոպի մարմինը: Այստեղ է գտնվում վկայարանի պատմությունն ավանդող հետևյալ մեծածավալ արձանագրությունը¹⁶:

«ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 441 ՓԵՏՐՎԱՐԻ 20 / ՎԱՀԱՆ ԱՄԱՏՈՒՆԻ ԻՇԽԱՆՆ ԱՍ/ՓՈՓԵ-ԼՈՎ ԱՍՏ ՅՕՇԱԿԱՆ ԸԶՄԱՐ/ՄԻՆ ՍՐԲՈՅ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՄԵԾԻՆ / ՄԵՍՐՈՎԲԱՅ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ ԿԱ/ՌՈՒՅԵԱԼ Է 'Ի ՎԵՐԱՅ ԴԱՄԲԱՐԱՆԻՍ / ՅԱՆՈՒՆ ՆՈՐԻՆ ԶԵԿԵՂԵՅԻՍ. ԶՈՐ / ՆՈՐՈԳԵԱՅ ԱՄԻ 1640 ՓԻԼԻՊ/ՊՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ. ԵՒ Ի ՎԵՐԶ/ՆՈՒՄՍ ՅԱՄԻՆ 1875 ՆՈՐՈԳԵԱՅ / ԳԷՈՐԳ Դ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ՏՐՕՔ / ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՅ ԵՐԵՒԱՆԱՅ / ԵՒ ԱՅԼ ՎԻՃԱԿԱՅՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ / ԻՍԿ ԶՏԱՊԱՆՍ ԿԱՆԳՆԵԱՅ Ի ՅԻՇԱ/ՏԱԿ Կ.ՊՈԼՍԵՅԻ ԱՆԴՐԷԱՍ ԱՐՔԵՊԻՍ/ԿՈՊՈՍՆ ՅԱՄԻՆ 1882 ԵՒ ՀԱՅՈՅ ՌՅԼԱ»:

Որպես կատարած գործի հատուցում, 1881 թ. հոկտեմբերի 10-ին կաթողիկոսը նրան է ընծայում իր մետաքսյա ծաղկյա փիլոնը: 1882 թ. կարգվել է Ս. Էջմիածնի վանական կառավարության նախագահ: 1886 թ. նորընտիր Մակար Կաթողիկոսի կոնդակով վարում է Ս. Էջմիածնի ճեմարանի վերատեսչի պաշտոնը:

Կաթողիկոսական կոնդակով և Ալեքսեյ III ցարի հաստատմամբ 1887-94 թթ. Մեսրոպ Սմբատյանցը վարում է Շամախու, Բաքվի, Անդրկասպյան տարածքների թեմակալ առաջնորդի պաշտոնը: Այդ տարիներին բարեկարգում է Սաղիանի Ս. Ստեփաննոս վանքը՝ հոգևոր հաստատության պատերին թողնելով մի շարք արձանագրություններ վերանորոգման, նվիրատվությունների, նաև եկեղեցու օժանդակ վերաբերյալ: Դրանցից հիշատակելի է տաճարի հարավային դռան ճակատի արձանագրությունը.

«ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅՈՅ ԹԵՄԻՆ ՇԱՄԱԽՈՒՅՈՒՄ ՄԵՍՐՈՎԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏԵԱՆՅ ՆԱԽԻԶԵԻԱՆՅԻ ԷՕԾ ԶՏԱՃԱՐՍ՝ ՅԵՏ ԲԱՆԱԼՈՅ ԶՀԱՐԱԽԱՅԻՆ ՆՈՐ ԴՈՒՌՍ Ի ՅԻՇԱՏԱԿ ԾՆՈՂԱՅՆ, ԵՒ ՅԱԻԱՐՏՍ ԱԾԵԼՈՅ ԶՇԻՆՈՒԹԻՒՆ ՏԱՃԱՐԻՆ՝ 'Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՏԵԱՌՆ ՄԱԿԱՐԱՅ. ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1887 ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ 4378»¹⁷:

Ինչպես նաև տաճարի կաթողիկեի կառուցման վերաբերյալ հետևյալ արձանագրությունը. «ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1898 ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ 4385. Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ Տ. ՄԿՐՏՉԻ, ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՄԲ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԹԵՄԻՍ ՄԵՍՐՈՎԵ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՍՄԲԱՏԵԱՆՅ ՇԻՆԵՅԱԻ ԿԱԹՈՒՂԻԿԷՆ ՎԱՆԻՅՍ ՎԵՅ ՀԱՐԻԻՐ ԲՈՒԲԼԻ ՏՐՕՔ ԲԱԳՈՒԱԲԵՆԱԿ ՊԱՐՈՆ ՆԻԿՕԼԱՅԻ ՍՏԵՓԱՆԵԱՆ ԹԱՂՈՍԵԱՆՅ Ի ՅԻՇԱՏԱԿ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՄԱՐԻԱՄՈՒ ԴՍԵՐ ՀՕՐԵՂԲՕՐ ԻՒՐՈՅ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ԶԱՔԱՐԻԱՅԻ ԹԱՂՈՍԵԱՆՅ»¹⁸: Սմբատյանցը նաև ծավալում է շինարարական, բարեգործական մեծ աշխատանքներ հայաբնակ մի շարք վայրե-

¹⁶ Արձանագրությունը գտնվում է եկեղեցու Մ. Մաշտոցի տապանատան արևմտյան պատին, ընդօրինակումը և վերծանությունը կատարվել է հողվածի հեղինակի կողմից:

¹⁷ «Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց, եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից որք ի Շամախոյ թեմի», Տփղիս, 1896, էջ 19:

¹⁸ Նշված աշխ., էջ 79:

րում, ձեռնադրում է 21 քահանա, օծում 7 եկեղեցի, հիմնում 9 դպրոց: Իր այս շինարարական գործունեության մասին են վկայում նրա կողմից թողած արձանագրությունները: «ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1891 ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ 4382. ՀՐԱՄԱՆԱԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԵՍՐՈՎԲ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՇԻՆԵՑԱԻ ՍԵՂԱՆԱՏՈՒՆՍ ՈՒԽՏԱԻՈՐԱՑ՝ ՏՐՕՔ ԲԱԳՈՒԵՅԻ ՀԱՅՈՑ ՎԵՐԱԿԱՅՈՒԹԵԱՄԲ ՔԱՐՔԱՆՋԱՅ ԿԱՐԱՊԵՏ ՔԱՀԱՆԱՅԻ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ»¹⁹: «ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1891 ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ 4382. ՏՆՕՐԵՆՈՒԹԵԱՄԲ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՀԱՅՈՑ ՇԱՄԱԽՈՑ ՎԻՃԱԿԻ ՄԵՍՐՈՎԲ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՍՄԲԱՏԵԱՆՑ ՆԱԽԶԵՎԱՆՅԻՈՑ. Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ՄԱԿԱՐԱՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ, ՆՈՐՈԳԵՅԱԻ ՄԱՏՈՒԹՍ ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ ՆԱՀԱՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ՝ ՏՐՕՔ ԲԱՐԵՊԱՇՏ ԱԶԳԱՅՆՈՑ ՄԵՐՈՑ ՈՐ Ի ԲԱԳՈՒ ՔԱՂԱՔԻ. ՎԵՐԱԿԱՅՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԱՊԵՏ ՔԱՀԱՆԱՅԻ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՔԱՐՔԱՆՋ ԳԵՂՋ»²⁰:

Այդ տարիներին շարադրել է «Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի և միս վանօրէից եւ ուխտատեղեացն Շամախույ թեմի» աշխատությունը²¹: Ծանրաբեռնված լինելով հոգևոր գործունեությամբ՝ նա համեստորեն է ներկայացնում փաստերն ու տեղեկությունները՝ հաշվի առնելով այլ հեղինակների կողմից նախկինում դրանց լուսաբանված լինելը:

Սակար Ա Թեղուտցի (1885-1891 թթ.) Կաթողիկոսի 1888 թ. հունվարի 16-ի թիվ 30 կոնդակով Մ. Սմբատյանցն արժանացել է արքեպիսկոպոսության: 1892 թ. հունվարից դարձել է Մոսկվայի Կայսերական հնագիտական հանձնաժողովի անդամ: Մա անշուշտ գնահատանքն էր ուսումնասիրողի անխնայ, հայրենասնվեր, տքնաջան գիտական աշխատանքի: Մկրտիչ Ա Վանեցի (Խրիմյան Հայրիկ, 1892-1907 թթ.) Կաթողիկոսի ընտրությունից հետո մինչ Մայր Աթոռ հասնելը՝ 1894 թ. դեկտեմբերից մինչև 1895 թ. հուլիսը, եղել է կաթողիկոսական տեղապահ:

Մ. Սմբատյանցը հոգևոր գործունեություն է ծավալել նաև Սյունիքի նահանգի Երնջակ գավառի Ս. Կարապետ վանքում: Վանահայր եղած տարիներին (1897-1907 թթ.) գավառում զբաղվել է շինարարական, բարեգործական, քարոզչական գործունեությամբ: Այդ մասին պահպանվել է Ս. Կարապետ վանքի կաթողիկեի և տանիքի վերանորոգման մասին հետևյալ արձանագրությունը. «ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1900 ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ 4393. ՆՈՐՈԳԵՅԱԻ ԿԱԹՈՂԻԿԵՆ ԵՒ ՏԱՆԻՔՆ ՏԱՃԱՐԻ ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆԻՅՍ, ՀՍԿՈՂՈՒԹԵԱՄԲ ՎԱՆԱՀԱՅՐ ՄԵՍՐՈՎԲ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՍՄԲԱՏԵԱՆՑ, ԾԱԽԻԻՔ ՆԱԽԶԵՎԱՆԱՅ ԳԱԻԱՌԻ ԲԱՐԵՊԱՇՏ ԺՈՂՈՎՐԴՈՑ»²²:

Վերանորոգել է նաև Ս. Ստեփաննոս վանքի տանիքը, իսկ 1900 թ.՝ վանքի ջրաղացը. «ՅԱՄԻ ՓՐԿՉԱԿԱՆ 1865, ԵՒ ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ 1565 ԵՒ ԱԶԳԱԿԱՆ ՌՅԺԴ, Ի ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՏԵԱՌՆ Ա. ՄԱՏԹԵՈՍԻ, Ի ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՅ 2, ԱԼԷՔՍԱՆԴԻ ՆԻԿՈԼԱՅԵԻՉԻ, Ի ԹԱ-

¹⁹ Նշված աշխ., էջ 168:

²⁰ Նշված աշխ., էջ 168:

²¹ «Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի և միս վանօրէից եւ ուխտատեղեացն Շամախույ թեմի», Տփղիս, 1896:

²² Նշված աշխ., էջ 19:

ԳԱՌՈՐՈՒԹԵԱՆ ՊԱՐՄԻՅ ՆԱՍՐԱՏԻՆ ՇԱՀԻ. ԵՒ Ի ՎԱՆԱՀԱՅՐՈՒԹԵԱՆ ՄԵՍՐՈՎԲ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՍՄԲԱՏԵԱՆՅ. ՆՈՐՈԳԵՑԱԻ ՏԱՆԻՔ ՍԵՂԱՆՈՅ ՏԱՃԱՐԻՍ ԱՐԴԵԱՍԲ Վ. ԱԳՈՒԼԵՅԻ ՄԱՀՏԵՍԻ ՊԱՐՈՆ ԳԱԼՍՏԻ, ԵՒ ՈՐԴԻՈՅ ՆՈՐԻՆ ԱԶՆԻԻ ԱԻԵՏԻՍ ԱՂԱՅԻ, ԵՒ ՈՐԴԻՈՅ ՆՈՐԻՆ ԱԶՆԻԻ ԱՂԵՔՍԱՆԴԻՐԻ ՏԵՐԱՆՅ»²³: «ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1900, ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ 4393, ՀՐԱՄԱՆԱԻ ՄԵՍՐՈՎԲ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏԵԱՆՅ ՎԱՆՔԱԿԱՆ ԶՐԱՂԱՅՍ Ի ՀԻՄԱՆՅ ՆՈՐՈԳԵՑԱԻ ՅԻՇԱՏԱԿ ԶՈՒՂԱՅԵՑԻՈՅ, ՈՐՔ ՈՒԽՏԵԱԼ ԵՆ ԶՐԱՂԱՅԻՍ ՔԱՐԵՐԸ ՄԻՇՏ ԸՆԾԱՅԵԼ ՎԱՆՔԻՆ»²⁴: Այդ տարիներին Մ. Սմբատյանը շարադրել է իր «Նկարագիր Մ. Կարապետի վանից Երնջակայ եւ շրջակայից նորա» աշխատությունը:

Շրջագայելով հայաշատ բնակավայրերում՝ եկեղեցիներից, անհատներից հավաքել է Ավետարաններ, հիշատակարաններ, «...միշտ աշխատել է և հավաքել անխոնջ, անձանձրույթ»²⁵: Ընդօրինակել է մոտ 300 ձեռագիր մատյանների հիշատակարաններ:

Մեարոպ Սմբատյանը հավաքել է նաև սեպագիր արձանագրություններ: 1860-90-ական թթ. Հայաստանի տարբեր վայրերից ընդօրինակել է երկու տասնյակ սեպագիր արձանագրություններ: Դրանք ժամանակին տպագրվել են «Արարատ», «Բազմավեպ», «Համբաւաբեր Ռուսիոյ» պարբերականներում: Հետագայում այդ սեպագրերն ամփոփել է «Բնեռաձև արձանագրութիւնք Արարատեան նահանգի 1862-1910 թթ.» աշխատությունում: Այն թարգմանվել և հրատարակվել է նաև ռուսերեն: «Չափազանց մեծ է և շնորհակալ էջմիածնական մեծավաստակ գիտնականի անխոնջ աշխատանքը համաշխարհային բնեռաքանդակ գիտության մեջ: Պատահական չէ, որ բանասեր Կ. Բասմաջյանը նրան անվանել է «անխոնջ հաւաքող Կովկասի Տոսպեան բնեռաքանդակ արձանագրութեանց»²⁶:

Թեև Սմբատյանը հանդես չի գալիս որպես սեպագիր արձանագրությունների վերծանող, սակայն նրա դերն անուրանալի է այս բնագավառում, քանի որ խոր գիտակցությամբ և սրտացավությամբ է ձեռնամուխ եղել քարե վկայարանների ուսումնասիրմանը:

Մ. Սմբատյանը զբաղվել է նաև պատմագրությամբ: Կազմել է 1800-1896 թթ. պատմական իրադարձությունների ժամանակագրությունը, որը թերի է մնացել: Հավաքել է կրոնական, ազգային պատմության, հնագիտական, պաշտոնական, վիճակագրական, նամակագրական, ուսումնական, անձնական և այլ թեմաների վերաբերյալ տեղեկություններ, կաթողիկոսական կոնդակների պատճեններ: Ունի լրագրային հոդվածներ, զանազան գրառումներ: Գիտական կապեր է ունեցել Փարիզի գիտնականների, Վենետիկի Մխիթարյան միաբանների հետ: Իր երկար տարիների պաշտոնավարության համար Արևելյան պատերազմի (1853-56 թթ.) հիշատակին ստացել է բրոնզե խաչ և շքանշան:

²³ «Նկարագիր Մ. Կարապետի վանից Երնջակայ եւ շրջակայից նորա», Տփղիս, 1904, էջ 18-19:

²⁴ Նշված աշխ., էջ 60:

²⁵ **Վահան վրդ. Գալանդարյան**, Մեարոպ արքեպիսկոպոս Սմբատյան, «Էջմիածին», 1958, փետրվար-մարտ, էջ 38:

²⁶ Նույն տեղում:

1910 թ. հունվարի 10-ին գրել է իր կտակը: Դրա համաձայն Էջմիածնի ճեմարանին է թողել տարբեր վայրերից հավաքած 27 ձեռագրեր, իր արծաթյա ոսկեզօծ եպիսկոպոսական գավազանը, իր հարուստ դրամների հավաքածուն, կրոնական և պատմական գրվածքներ: Դրամական կարողություն չի ունեցել, ապրել է ամսական աշխատավարձով: Կտակը թողել է թերի:

Մ. Սմբատյանցը մահացել է 1911 թ. փետրվարի 9-ին Երուսաղեմի գերմանական հիվանդանոցում: Երուսաղեմի Պատրիարքի և միաբանության համաձայնությամբ «նրան թաղել են արժանավայել շուքով և հանդիսությամբ, եպիսկոպոսական հանգստարանում»²⁷:

Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի անձնական արխիվը գտնվել է սկզբում «Ամենայն Հայոց Կաթողիկոսի դիվանում», նո. 57 ֆոնդում: 1971 թ. այն դարձել է Հայաստանի Ազգային Արխիվի ինքնուրույն ֆոնդ՝ 245 միավորով, որոնք ընդգրկում են 1850-1910 թթ. ժամանակահատվածը²⁸: Ֆոնդում կան ձեռագրեր, գրագրություններ, կենսագրական նյութեր, ձեռագիր քարտեզներ և այլն: Թողել է հարուստ տեղեկատվական գրականություն:

Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը, լինելով բարեկիրթ և ուսյալ հոգևորական, իր պարտքն է համարել հայությանը ինչպես հոգևոր արժեքներ հաղորդել, այնպես և կորստից փրկել, պահպանել, վերականգնել հայկական եկեղեցական, կրթական, մշակութային հաստատությունները, ձեռագիր մատյանները, ընդօրինակել դարերի ընթացքում եղծված, անտարբերության մատնված վիմագրերը՝ իր հրատարակած ու անտիպ աշխատություններում ստեղծելով վիմական արձանագրությունների մի սովորածավալ ժողովածու, որի գիտական նշանակությունը արդիական է մինչ օրս:

²⁷ Նույն տեղում, էջ 40:

²⁸ ՀԱԱ, ֆոնդ 429, ցուցակ 1:

ԽԱՉԻԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԿՈՍԻՏԱՍԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1890

Հունվար-փետրվար, Էջմիածին - Ճեմարանի ռուսաց լեզվի ուսուցիչ Հովհաննես Հովհաննիսյանը, նկատելով վեցերորդ դասարանի աշակերտ Սողոմոն Սողոմոնյանի «...առանձնահատուկ ընդունակությունները և երաժշտության հանդեպ ունեցած բուռն փափագը, Ռուսիայեն բերել է տալիս մի քանի երաժշտական դասագրքեր: Կոմիտաս վարդապետը առաջին անգամ սկսում է ծանոթանալ եվրոպական ձայնագրության արվեստին և այդ օրվանից Կոմիտաս վարդապետի մեջ առաջ է գալիս բուռն փափագ տիրապետելու եվրոպական երաժշտության արվեստին»:

«Հայաստանի կոչնակ», Նյու Յորք, 1931, No 33, էջ 1040-1042:

Մարտ 17, Վաղարշապատ - Մայր աթոռի միաբանության անդամ, դպրոցական բաժնի Զ դասարանի աշակերտ Սողոմոն Գևորգի Սողոմոնյանը հոգևոր սանի զգեստով լուսանկարվում է Փեշտմալձյանի մոտ և նկարը ուղարկում է իր հարազատներին:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ., No 177:

«Սովետական արվեստ», 1969, No 10, էջ 56:

Ապրիլ 23, Վաղարշապատ - Էջմիածին այցի է գալիս Իտալիայի գահաժառանգ իշխան Վիկտոր Էմմանուելը, Կաթողիկոսի հետ տեսակցելուց հետո այցելում է Ճեմարան: Մուտքի առաջ Ճեմարանի սաները երգեցողությամբ դիմավորում են մեծարգո հյուրին: Ճեմարանի ներքին կյանքին ծանոթանալուց հետո գահաժառանգը հրաժեշտ է տալիս դիմավորողներին: Աշակերտների երգեցիկ խումբը [որում էր նաև Սողոմոն Սողոմոնյանը] մինչև կառքին հասնելը երգելով ուղեկցում է մեծարգո հյուրին:

«Արարատ», 1890, No 5, էջ 276, 278:

Մայիս [15-25], Էջմիածին - Գևորգյան Ճեմարանում տեղի են ունենում 1889-90 ուսումնական տարվա քննությունները: Սողոմոն Սողոմոնյանը, ավարտելով «զընթացս ուսման դպրոցական բաժնի Ճեմարանիս» (Զ դասարանը), «եմուտ յառաջին լսարան մասնագիտական բաժնի»:

«Արարատ», 1890, No 11, էջ 638:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 3, վավ. 47, թ. 6:

Մայիս 26, Էջմիածին - Տեղի է ունենում Գևորգյան Ճեմարանի մանկավարժական խորհրդի ԻԶ նիստը: Ճեմարանի տեսուչ Ա. Նահապետյանի նախագահությամբ

Ժողովը ամփոփում է տարեկերջի քննությունների արդյունքները: Ժողովի արձանագրությանը կցված է փոխադրվողների և վերաքննություն ունեցողների ցուցակները:

Վեցերորդ դասարանը ավարտողների ցանկում 14-րդ համարի դիմաց գրված է Սողոմոն Սողոմոնյանի անունը:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 365, թ. 20:

Մայիս-հունիս, Վաղարշապատ - Գևորգյան Ճեմարանում ավարտվում են 1889-1890 ուսումնական տարվա դասերը: Այդ ընթացքում Սողոմոն Գևորգի Սողոմոնյանը սովորում էր դպրոցական բաժնի 2 դասարանում: Ըստ տեսուչ Նահապետ աբեղայի տարեկերջյան «Տեղեկագրում» ներկայացրած հաշվետվության՝ 1889-1890 ուսումնական տարում դպրոցական բաժնի 2 դասարանում ծրագրված առարկաները դասավանդել են հետևյալ մանկավարժները.

1. Մեղրակ Մանդինյան - Տրամաբանություն:
2. Կարապետ Կոստանյան - Հայոց Եկեղեցու պատմություն և պատմություն մատենագրության հայոց:
3. Մկրտիչ Պալյան - Հայոց լեզու:
4. Սարգիս Տեր-Գաբրիելյան - Ուսումն Ս. Գրոց:
5. Հովհաննես Հովհաննիսյան - Ռուսաց լեզու:
6. Ստեփան Լիսիցյան - Ընդհանուր պատմություն և ռուսաց պատմություն:
7. Աստվածատուր Պիտանյան - Ֆրանսերեն լեզու:
8. Լևոն Խոջայան - Մաթեմատիկա, բնագիտություն և տիեզերագրություն:
9. Անտոն Տեր-Գրիգորյան - Հայոց պատմություն:
10. Վարդգես Սուրենյանց - Նկարչություն:
11. Ռուբեն Ռուբինյան - Տաճկերեն:

«Արարատ», 1890, No 11, էջ 632, 636:

Հունիս 8, Էջմիածին - Ամենայն Հայոց Կաթողիկոս Մակար Ա-ն «Ըստ վկայութեան անձին իւրոյ և վարչութեան ճեմարանի» (իր ցանկությամբ և ճեմարանի վարչության միջնորդությամբ) համար 232 կոնդակով պատվիրում է Սինդի անդամ Սարգիս եպիսկոպոս Տեր-Գասպարյանին «վերածել ի կարգ սարկաւազութեան զսանունս Հոգևոր ճեմարանի Մայր Աթոռոյս զՍտեփաննոս Եղիազարեան Ղազնաֆարցի, զՍողոմոն Սողոմոնեան Քեօթափեացի, զԼևոն Գեանջեցեան Շուշեցի և զՅուսիկ Զոհրաբեանց Մեծ Սալյեցի»:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 61:

«Արարատ», 1890, No 9, էջ 525:

Հունիս 9, Վաղարշապատ - Մեծն Ներսեսի տոնի օրը Ս. Աստվածածին եկեղեցում Սարգիս եպիսկոպոս Գասպարյանը սարկավագ է ձեռնադրում Գ լսարանի ուսանող Ստեփանոս Եղիազարյան Ղազնաֆարցուն, Ա լսարանի ուսանող Սողոմոն Սողոմոնյան Քեթրափեացուն և երկու այլ լսարանականներին:

«Արարատ», 1890, No 8, էջ 472:

Հունիս, Վաղարշապատ - Մ. Աբեղյանը վերադառնում է ճեմարան և հանդի-

պում Կոմիտասին: «Այդ ժամանակ,- գրում է Մ. Աբեղյանը,- Կոմիտասն արդեն լրջությամբ զբաղվում էր ժողովրդական երգեր ձայնագրելով և բավական շատ ուներ ժողոված»: Աբեղյանի և Կոմիտասի խոսակցությունը դառնում է ժողովրդական երգերի ձայնագրմանը: Նրանք միասին գնում են տպարան, և Կոմիտասը Աբեղյանի խորհրդով գնում է 1874 թվականին Վաղարշապատում տպագրված Արիստակես Սեդրակյանի «Քնար մշեցոց և վանեցոց» խորագրով ժողովածուն:

Մանուկ Աբեղյան, Երկեր, հ. 1, Ե., 1975, էջ 432,433:

Ժամանակ անց - Կոմիտասը հայտնաբերում ու ձայնագրում է այդ գրքի մեջ եղած բոլոր երգերի եղանակները և հիշատակի համար գիրքը նվիրում է Աբեղյանին:

Նույն տեղում, էջ 433:

ՉԱԳԱԹ, Մ. Աբեղյանի ֆ. No 21161:

Հունիսից հետո, Էջմիածին - Գարեգին Լևոնյանը ծանոթանում է Կոմիտասի հետ: «Առաջին անգամ,- գրում է վերջինս իր հուշերի գրքում,- ես պատահեցի նրան 1890 թվականին Էջմիածնում: Կոմիտաս անունը չունեի: Նա այն ժամանակ Ճեմարանի 6-րդ դասարանի աշակերտ էր և վանքում դեռևս հայտնի էր որպես «ձայնեղ երգիչ» Սողոմոն սարկավազ»:

Գ. Լևոնյան, Հուշեր, Ե., 1959, էջ 117:

Հունիս-հուլիս, Վաղարշապատ - Սողոմոն ավագ սարկավազ Սողոմոնյանը Ճեմարանի լսարանական բաժին ընդունվելու շրջանում լուսանկարվում է իր ինը դասընկերների հետ:

Թորոս Ազատյանի գրքում պահպանվել է այդ լուսանկարը և նրա դասընկերների անուն ազգանունները:

Մկրտիչ սրկ. Մկրտիչյան, Գրիգոր սրկ. Պողոսյան, Հուսիկ սրկ. Զոհրաբյան, Մ. Խոշաֆյան, Հարություն սրկ. Այվազյան, Ղևոնդ սրկ., Վաղարշակ սրկ. Նահապետյան և Ա. Մանուկյան:

Թ. Ազատյան, Կոմիտաս վարդապետ, Կ.Պոլիս, 1931, էջ 14:

Օգոստոս 9, Էջմիածին - Սողոմոն Սողոմոնյանի համար լրացվում է «վեցերորդ աստիճանի [լսարանի] կուսակրոն սարկավազ» «վերածվելու» վերաբերյալ «վկայականը»՝ իսկականը (տպագիր) Սարգիս եպիսկոպոս Տեր-Գասպարյանի կնիքով և ստորագրությամբ հաստատված:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 61:

Օգոստոս 10, Էջմիածին - Սողոմոն Սողոմոնյանին «Վեցերորդ աստիճանի կուսակրոն սարկավագության» վկայական տալու փաստը Սարգիս եպիսկոպոս Տեր-Գասպարյանը գրանցում է «Ձեռնադրեալ անձանց» ցուցակի մեջ, 56 համարի ներքո:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 61:

Սեպտեմբեր 6, Վաղարշապատ - Գևորգյան Ճեմարանում սկսվում են 1890-1891 ուսումնական տարվա դասերը: Սարկավազ Սողոմոն Գևորգի Սողոմոնյանը սովո-

րում էր Ճեմարանի լսարանական բաժնի Ա դասարանում:

«Արարատ», 1890, No 8, էջ 472, 1891, No 11, էջ 615:

Սեպտեմբեր 29, Վաղարշապատ - Գևորգյան Ճեմարանի բակում տեղի է ունենում տեսուչ Նահապետյան արքեպիսկոպիտի 1889/1890 ուսումնական տարվա հաշվետվությունը: Հանդեսը սկսում է Ճեմարանական երգչախմբի շարականով: Հաշվետվության մեջ նորից է հիշատակվում, որ հունիսի 9-ին երեք այլ անձանց հետ միաբանության անդամ է դարձել լսարանական Ա բաժնի ուսանող Սողոմոն Գևորգի Սողոմոնյանը: Հանդեսի ողջ ընթացքում մերթ ընդ մերթ երգում էր Ճեմարանի երգչախումբը:

«Արարատ», 1890, No 11, էջ 628:

Նոյեմբեր, Վաղարշապատ - «Արարատ» ամսագրի հերթական համարում հրապարակվում է Գևորգյան Ճեմարանի տեսուչ Ա. Նահապետյանի 1889-1890 ուս. տարվա ուսանողների առաջադիմությանը նվիրված հաշվետվությունը: Այլևայլ հարցերի թվում տեսուչը խոսում է հունիսի 9-ին կաթողիկոսի բարձր հրամանով միաբանության անդամ դարձած և սարկավագ ձեռնադրված չորս սաների մասին, որոնց թվում հիշատակվում է նաև Սողոմոն Սողոմոնյանի անունը:

«Արարատ», 1890, No 11, էջ 628:

Նոյեմբեր, Վաղարշապատ - «Արարատ» ամսագրի հերթական համարում հրապարակվում է 1889-90 ուս. տարվա ընթացքում Գևորգյան Ճեմարանում սովորողների «Տեղագրության» ցուցակը, ըստ որի Ճեմարանում Անատոլիայի Քեոթահիա քաղաքից սովորում էր մեկ ուսանող՝ Սողոմոն Սողոմոնյանը:

«Արարատ», 1890, No 11, էջ 632:

1891

Հունվար 28-30, Վաղարշապատ - Գևորգյան Ճեմարանում ծայր են առնում ուսանողական հուզումներ: Մասնագիտական բաժնի և բարձր դասարանի ուսանողները, դադարեցնելով դասերը, դիմում են Կաթողիկոսին և խնդրում են ազատել տեսուչին և վերացնել խստությունները:

Հետևանքը լինում է այն, որ Զ դասարանից հեռացվում են յոթ աշակերտ: Իբրև բողոքի ցույց՝ Ճեմարանից կամովին հեռանում են 39 սովորող: Ա լսարանը, որտեղ սովորում էր Սողոմոն սարկավագ Սողոմոնյանը, դատարկվում է. 10 ուսանողից յոթը լքում են Ճեմարանը:

«Արարատ», 1891, No 11, էջ 619-620:

Հունվար 31, Էջմիածին - Գևորգյան Ճեմարանում հուզումների պատճառով ընդհատվում են դասերը:

«Արարատ», 1891, No 11, էջ 619:

Փետրվար 12, Վաղարշապատ - Գևորգյան Ճեմարանի տեսուչ Նահապետ արքեպիսկոպիտի, դիմելով Կաթողիկոսին, կամովին հրաժարվում է տեսուչի պարտականությունից:

Վահե Երկանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում,
Ե., 1970, էջ 183:

Փետրվար 13-19, Էջմիածին- Ճեմարանի տեսուչ Նահապետ աբեղայի հրաժարականից հետո Ճեմարանում ժամանակավոր կառավարիչ է կարգվում Սարգիս Եպիսկոպոսը:

«Արարատ», 1891, No 11, էջ 619:

Փետրվար 20, Էջմիածին- Ամենայն Հայոց Կաթողիկոս Մակար Ա-ի կոնդակով Ճեմարանում տեսուչ է կարգվում Սարգիս Եպիսկոպոս Գալստյանը:

Նույն կոնդակով ուսուցիչներ Ստեփան Լիսիցյանը և Լևոն Խոջամիրյանը «Ի պատճառս անհանգիստ բնավորությանց...» զրկվում են Ճեմարանում իրենց զբաղեցրած պաշտոններից:

«Արարատ», 1891, No 11, էջ 619:

Վահե Երկանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում,
Ե., 1970, էջ 183:

Մարտ 5, Էջմիածին - Ճեմարանի մասնագիտական բաժնի Ա լսարանի ուսանող Սողոմոն սարկավազ Սողոմոնյանը, Գ լսարանի ուսանող Արշակ Թաշճյանի խոսքի հիման վրա, ձայնագրում և «Արարատ» ամսագրի խմբագրությանն է հանձնում «Ազգային օրհներգ» վերնագրով խմբերգը (ձայնագրված հայկական ձայնանիշերով խառը խմբի համար):

«Արարատ», 1891, No 3, ներդիր, հավելված:

Նույն օրը, Էջմիածին - Գևորգյան Ճեմարանում վերսկսվում և մինչև ապրիլի 13-ը՝ Զատկվա տոները, շարունակվում են խռովության պատճառով ընդհատված դասերը: Ա լսարանը, որտեղ սովորում էր Սողոմոն սարկավազ Սողոմոնյանը, իրենից բացի դասի են գալիս ևս երկու լսարանական: Հեռացված ուսուցիչների փոխարեն հրավիրվում են նորերը:

Ղևոնդ վարդապետի փոխարեն ձայնագրության դասատու է կարգվում Սահակ աբեղա Ամատունին:

«Արարատ», 1891, No 11, էջ 620:

Մարտ, Վաղարշապատ - «Արարատ» ամսագրի հերթական համարում (իբրև հավելված) հրապարակվում է Գևորգյան Ճեմարանի մասնագիտական բաժնի Ա լսարանի ուսանող Սողոմոն սարկավազ Սողոմոնյանի ներդաշնակած «Ազգային օրհներգ» վերնագրով խմբերգը (քառաձայն խառը խմբի համար) հայկական ձայնանիշերով: Խոսքը՝ «Ամեն հայի սրտից բխած» սկսվածքով՝ Գ լսարանի ուսանող Արշակ Թաշճյանի:

Նոտագրած օրինակը՝ տես *Կոմիտաս*, Երկերի ժողովածու, հ. չորրորդ, Ե., 1976, էջ 16-18:

«Արարատ», 1891, No 3, հավելված 8 (ներդիր):

Մարտ 30, Վաղարշապատ - Հետևելով լսարանական բաժնի ուսանողների բողոքի ցույցին, ստանալով համապատասխան վկայական, Ճեմարանից կամովին հե-

ռանում է դպրոցական բաժնի Դ դասարանի աշակերտ Ավետիք Բսահակյանը:

Ալբերտ Մուշեղյան, Ավետիք Բսահակյան վաղ տարիներ, 1875-1898, Ե., 1983, էջ 32:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, ց. 2, գ. 560, թ. 4:

Ապրիլ 9, Էջմիածին - Ժամանակի ընթացքում իր հավաքած ու ձայնագրած ժողովրդական երգերը (37 երգ), Կոմիտասը «Ձայնագրած ազգային գյուղական երգերի, պարերի հավաքածու» ընդհանուր խորագրով ամփոփում է մի տետրի մեջ: («Հավաքեց և ձայնագրեց Սողոմոն սարկավազ Սողոմոնյան» հավելումով):

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 318:

Կոմիտաս, Ազգագրական ժող., հ. 2, Ե., 1950, էջ 25-46:

Ապրիլ սկիզբ, Էջմիածին - Գևորգյան Ճեմարանում ավարտվում են 1890-1891 ուսումնական տարվա դասերը: Սկսած 1890 թվականի սեպտեմբերի 6-ից Սողոմոն սարկավազ Սողոմոնյանը սովորում է Գևորգյան Ճեմարանի մասնագիտական բաժնի Ա լսարանում:

Ըստ տեսուչի օգնական պ. Հովհաննես Սաղաթելյանի տեղեկագրում ներկայացրած հաշվետվության՝ 1890-1891 ուսումնական տարվա ընթացքում Ա լսարանում ծրագրված առարկաները դասավանդել են հետևյալ մանկավարժները.

1. Սարգիս Տեր-Գաբրիելյան - Քննաբանություն Սուրբ Գրոց, Եկեղեցական պատմություն:

2. Ստեփան Լիսիցյան - Ռուսաց գրականություն:

3. Կարապետ Կոստանյան - Մատենագիրների ուսումնասիրությունը, Հայոց նոր մատենագրություն:

4. Սեդրակ Մանդինյան - Մանկավարժություն:

5. Հովհաննես Հովհաննիսյան - Ընդհանուր գրականություն:

6. Վարդգես Սուրենյանց - Պատմություն քրիստոնեական արվեստի:

7. Աստվածատուր Պիտանյան - Ֆրանսերեն:

8. Ռուբեն Ռուբինյան - Տաճկերեն:

«Արարատ», 1891, No 11, էջ 616-619:

Ապրիլ 16, Էջմիածին - Մայր Աթոռում յոթանասունութ տարեկան հասակում վախճանվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ծայրագույն Պատրիարք Մակար Ա Թեղուտցին՝ ծնված 1813 թ. ապրիլ 13-ին, կաթողիկոս՝ 1885 թվականի հուլիսի 18-ից:

«Արարատ», 1891, No 4, էջ 229, No 5, էջ Ա:

Ապրիլ 18, Վաղարշապատ - Ճեմարանի տեսուչ Սարգիս Եպիսկոպոսը, ստանալով տեղապահ Երեմիա արքեպիսկոպոսի համաձայնությունը, մի հայտարարությամբ դիմում է Ճեմարանից հեռացված ուսանողներին և առաջարկում է վերադառնալ: Հրավերը լայն արձագանք է գտնում, և շատերը, այդ թվում նաև Սողոմոն սարկավազի դասընկերները, վերադառնում են:

«Արարատ», 1891, No 8, էջ 452, No 11, էջ 621:

Ապրիլ 21, Թիֆլիս - «Տարագ» պարբերականի հերթական համարում, «Երաժշտություն» ընդհանուր խորագրի տակ, առանց հեղինակային ստորագրության հրա-

պարակվում է քննադատական հոդված՝ ուղղված «Արարատ» ամսագրի վերջին համարում իբրև հավելված լույս տեսած Սողոմոն սարկավազ Սողոմոնյանի ձայնագրած «Ազգային օրհներգ» խմբերգին:

«Արարատ» ամսագրի վերջին համարի հետ - ասված է «Տարագում» - իբրև հավելված ուղարկված է «Ազգային օրհներգ» անունով հայկական ձայնագրությամբ մի երգ: Այդ երգը ինքնըստինքյան մի շատ անհամ եղանակ է, սակայն զարմանում ենք, թե ինչպես մի մարդ, առանց ուսումնասիրելու երաժշտությունը, առանց հասկանալու, թե կոմպոզիտորության համար պետք է սովորած լինել ձայնական երաժշտության բոլոր կանոնները, թույլ է տալիս իրան չորս ձայնով մի խմբերգ հորինել, հետո ձայները զիլ, բարձր, սոսկ, բամբ անուններով բաժանել, առանց պահպանելու ամենաչնչին կանոնն անգամ:

«Տարագ», 1891, No 15, էջ 226:

Ապրիլ 21-22, Էջմիածին - Մայր Տաճարում տեղի է ունենում Մակար Ա Կաթողիկոսի թաղման կարգը: Արարողությանը մասնակցում է Մայր Աթոռի երգեցիկ խումբը [երգչախմբի մեջ էր նաև Սողոմոն սարկավազ Սողոմոնյանը]:

«Արարատ», 1891, No 4, էջ Ա-Է:

Մայիս 15, Էջմիածին - Տեղի է ունենում Գևորգյան Ճեմարանի ուսումնական խորհրդի ԺԲ նիստը: Հովհաննես Հովհաննիսյանի, Վարդգես Սուրենյանցի և այլոց մասնակցությամբ Ճեմարանի տեսուչը ամփոփում է տարեվերջի քննությունների արդյունքները: Ժողովի արձանագրությանը կցված է փոխադրվողների և մնացողների ցուցակները: «Յուսանողաց մնացելոց առաջնոյ լսարանի» ցանկում 3-րդ համարի դիմաց գրված է Սողոմոն Սողոմոնյանի անունը:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 277, թ. 16:

Մայիս երկրորդ կես, հունիս սկիզբ, Էջմիածին - Նորընտիր տեսուչ Սարգիս Եպիսկոպոսը Ճեմարանում զբաղեցրած պաշտոնից ազատում է ուսուցիչներ Նիկողայոս Քարամյանին, Հովհաննես Հովհաննիսյանին, Վարդգես Սուրենյանցին և Գևորգ Տեր-Բարդուղիմեոսյանին:

Ազատված ուսուցիչների փոխարեն հրավիրվում են Ստեփան Կանայանը, Հովհաննջանյանը, Լևոն Մանվելյանը, Հովհաննես Սաղաթելյանը, Սահակ աբեղա Ամատունին և այլք:

«Արարատ», 1891, No 11, էջ 620-621:

Հունիսի 13 - հուլիսի 6, Վաղարշապատ - Էջմիածնի մատենադարանում հետազոտություն կատարող հայագետ Անտուան Մեյեն իր զարմուհուն Փարիզ հղած նամակում հաղորդում է հետևյալը. «Միակ մարդը,- գրում է նա,- որ գիտե վանքի երգեհոնի վրա նվագել, քսանմեկ տարեկան [մի] երիտասարդ սարկավազ է» [խոսքը վերաբերում է Բ լսարանի ուսանող Սողոմոն սարկավազ Սողոմոնյանին]:

Անտուան Մեյե, Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 1978, էջ 759-760:

Օգոստոս 23, Էջմիածին,-- Սողոմոն Սողոմոնյանի ավագ սարկավազ ձեռնադրելու իրողությունը 1890 թվականի հունիսի 9-ին Սարգիս Եպիսկոպոս Տեր-Գասպարյանի կողմից գրանցվում է «Ձեռնադրեալ անձաց» ցուցակի մեջ, ստորագրվում

է Սինոդի անդամ Արիստակես եպիսկոպոսի կողմից ու վավերացվում «դրոշմամբ արքունի կնքո»:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 61:

Սեպտեմբեր 9, Էջմիածին - Գևորգյան ճեմարանում սկսվում են 1891-92 ուսումնական տարվա դասերը: [Սողոմոն ավագ սարկավագ Սողոմոնյանը սովորում էր ճեմարանի Բ լսարանում]:

«Արարատ», 1892, No 10, էջ 909:

Սեպտեմբերի 28, Վաղարշապատ - Գևորգ Դ Կաթողիկոսի անվանակոչության օրը պատարագից ու հոգեհանգստյան արարողությունից հետո ճեմարանի սրահում միաբանության անդամների, ուսուցչական կազմի և ճեմարանական սաների ներկայությամբ տեղի է ունենում Գևորգյան ճեմարանի հիմնադրման տասնյոթերորդ տարեդարձին նվիրված տոնական հանդեսը:

Հանդեսը բացում է ճեմարանի տեսուչ Սարգիս եպիսկոպոս Գալստյանը: Շարականների կատարումով հանդես է գալիս ճեմարանի երգչախումբը՝ Սողոմոն ավագ սարկավագ Սողոմոնյանի մասնակցությամբ:

«Արարատ», 1891, No 11, էջ 606:

Նոյն օրը, նույն տեղում - Տեսուչի օգնական Հովհաննես Սաղաթելյանը տալիս է անցած 1890-1891 ուս. տարվա հաշվետվությունը և հրապարակում է «Տեղեկագիրը»:

Նոյն տեղում, էջ 610, 620:

Նոյն օրը, նույն տեղում - Ընդհանուր գրականության և ռուսաց լեզվի ուսուցիչ Լևոն Մանվելյանը հանդեսի մասնակիցների համար կարդում է բանախոսություն «Գիտության դերն ու նշանակությունը» թեմայով:

Նոյն տեղում, էջ 622-624:

Նոյն օրը, երեկոյան - Ճեմարանի բակում, լույսերի առատության մեջ, տեղի է ունենում հրավառություն: «Երեկոն,- ասված է «Արարատ» ամսագրում,- կենդանացավ, երբ մի կողմից ճեմարանի երգեցիկ խումբը [մասնակիցների մեջ էր նաև Սողոմոն ավագ սարկավագ Սողոմոնյանը], մյուս կողմից աշակերտներից կազմված նոր նվագախումբը փոփոխաբար սկսեցին երգել ու նվագել:

Նոյն տեղում, էջ 626:

Հոկտեմբեր 13, Էջմիածին - Սողոմոն ավագ սարկավագ Սողոմոնյանը Գևորգյան ճեմարանի ծառա մշեցի Մուշեղից ձայնագրում է «Մշեցոց բինգյուրը» վերնագրով երգը:

Հակոբ Հովհաննիսյանի «Ազգային երգարան» (ձեռագիր), ՉԱԳԱԹ, ֆ. 24, էջ 283:

Կոմիտաս, Ազգագրական ժող., հ. 2, Ե., 1950, էջ 46, 126:

Նոյեմբեր 21, Վաղարշապատ - Ժամանակին ճեմարանից կամովին հեռացած Ավետիք Բսահակյանը նորից վերադառնում է ճեմարան:

ՀՀԴԿՊԱ, ֆ. 312, ց. 2, գ. 560:

Ալբերտ Մուշեղյան, Ավետիք Բսահակյան վաղ տարիներ, 1875-1898, Ե., 1983, էջ 36:

Նոյեմբեր, Վաղարշապատ - «Արարատ» ամսագրի հերթական համարում հրապարակվում է 1890-1891 ուս. տարվա ընթացքում Գևորգյան Ճեմարանում սովորողների «Բնակության տեղի» ցուցակը: Ըստ այդ գրառման՝ Ճեմարանում Անատոլիայի Քեոթահիա քաղաքից սովորում էր մեկ աշակերտ՝ Սողոմոն ավագ սարկավագ Սողոմոնյանը:

«Արարատ», 1891, No 11, էջ 615:

Դեկտեմբեր 29, Էջմիածին- Սովորողների ուժերով Ճեմարանում ներկայացվում է Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» կատակերգությունը:

Ավ. Բսահակյան, Հիշատակարան, Ե., 1977, էջ 27:

1892

Հունվար 3, Էջմիածին - Լսարանցի ուսանողները, Լևոն Մանվելյանի ղեկավարությամբ, ներկայացնում են «Տարտյուֆ» կոմեդիան:

Ավ. Բսահակյան, Հիշատակարան, Ե., 1977, էջ 30:

Փետրվար 20, Էջմիածին - Կոմիտասը «Հիշատակարան» խորագրով մի տետրի մեջ է ամփոփում Էջմիածնի մատենադարանի ձեռագրերից խազագրության, մանրուսման ու երաժշտության վերաբերյալ իր քաղած նյութերն ու կատարած գրառումները:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 652:

Ապրիլ 25, Էջմիածին - Գևորգյան Ճեմարանում ավարտվում են 1891-1892 ուսումնական տարվա դասերը և սկսվում են տարեվերջյան քննությունները: Այդ ընթացքում Սողոմոն Սողոմոնյանը սովորում էր Ճեմարանի մասնագիտական բաժնի Բ լսարանում:

Ըստ տեսուչի օգնական Սաղաթելյանի ներկայացրած հաշվետվության՝ 1891-1892 ուսումնական տարվա ընթացքում Ճեմարանի Բ լսարանում ծրագրված առարկաները դասավանդել են հետևյալ մանկավարժները.

1. Սարգիս Տեր-Գաբրիելյան - Քննաբանություն Ս. Գրոց և եկեղեցական պատմություն:
2. Լևոն Մանվելյան - Ընդհանուր գրականություն:
3. Հովհաննես Սաղաթելյան - Ռուսաց գրականություն:
4. Կարապետ Կոստանյան - Հայոց մատենագիտություն և եկեղեցական պատմություն:
5. Սեդրակ Մանդինյան - Հոգեբանություն:
6. Աստվածատուր Պիտանյան - Ֆրանսերեն:

«Արարատ», 1892, No 10, էջ 909-911:

[Ապրիլ], Էջմիածին- Սարգիս եպիսկոպոս Գալստյանի փոխարեն Գևորգյան

Ճեմարանում տեսուչ է կարգվում Արիստակես եպիսկոպոս Սեդրակյանը:

«Արարատ», 1892, No 7, էջ 678, No 8, էջ 772:

Մայիս [1-4], Էջմիածին - Կոմիտասը դիմում է Ճեմարանի վարչությանը՝ ծննդավայր գնալու թույլտվություն ստանալու և այդ առիթով առաջիկա քննություններից ազատվելու համար:

Ճեմարանի վարչությունը, հանձինս Արիստակես Սեդրակյանի, ստանալով Կոմիտասի խնդրագիրը, պատվիրում է նրան դիմել քննությանը ենթակա առարկաների դասատուներին, վերցնել նրանցից գրավոր կարծիք արձակուրդի ընթացքում ծննդավայր գնալու, ինչպես նաև այդ առիթով նրան քննություններից ազատելու հնարավորության վերաբերյալ:

«Տեղեկագիր», ԳԱ, No 9, էջ 103:

Մայիս 6, Էջմիածին - Քեոթահիա մեկնելու կապակցությամբ Սողոմոն Սողոմոնյանը Ճեմարանի վարչությունից հետ է ստանում իր անցաթուղթը (անձնագիրը): Այս առիթով նա վարչությանն է հանձնում հետևյալ գրությունը. «Հայրենիք գնալիս ետ ստացա անցաթուղթս»:

Գր. Հարությունյան, Կոմիտասի կյանքն ու գործունեությունը նորահայտ վավերագրերի լույսի տակ, «Բանբեր Հայաստանի արխիվների», Ե., 1966, No 2, էջ 152:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 3, վավ. 47, թ. 2:

Մայիս 7, Էջմիածին - Գևորգյան Ճեմարանի քննաբանություն Ս. Գրոց և եկեղեցական պատմության ուսուցիչ Սարգիս Տեր-Գաբրիելյանը Կոմիտասին Քեոթահիա գնալու առիթով իր առարկայի քննությունից ազատելու վերաբերյալ տեսուչ Ա. Սեդրակյանի բանավոր հարցմանը տվել է հետևյալ գրավոր պատասխանը. «Շնորհունակ Սողոմոն սարկավազը պատմելով ինձ, թե Ձերդ սրբազնությունը կարող է միայն այն ժամանակ թույլ տալ գնալ հայրենիք, երբ որ ուսուցիչները նրան քննությունից կազատեն, ուստի ես իմ կողմից ոչինչ արգելք չեմ դնում, քանի որ նա բարեխղճաբար պարապել է ամբողջ տարվա ընթացքում, միևնույն ժամանակ աչքի առաջ ունենալով նորա այն հանգամանքը, որ մոտ տասն տարի հայրենիք չի գնացել և այժմ հարմար դեպքից օգուտ քաղելով գնում է...»:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 3, վավ. 47, թ. 12:

Նույն օրը, Էջմիածին - Գևորգյան Ճեմարանի ֆրանսերենի ուսուցիչ Աստվածատուր Պիտանյանը Կոմիտասին իր առարկայի քննությունից ազատելու վերաբերյալ տեսուչ Արիստակես Սեդրակյանի հարցմանը տվել է հետևյալ գրավոր պատասխանը. «Շնորհունակ Սողոմոն սարկավազը ինձ հայտնում է, որ Ձերդ սրբազնությունը կցանկանար իմանալ, թե արդյոք հնարավոր է ազատել նորան մերձակա քննություններից, որպեսզի կարողանա ավելի շուտ գնալ իր հայրենիքը: Ինչ որ վերաբերվում է ինձ՝ ես աչքի առաջ ունենալով նրա անպայման բարեխիղճ վերաբերմունքը դեպի գործը տարվա ընթացքում, հնարավոր եմ գտնում ազատել նրան իմ առարկայի քննությունից և փոխադրված համարել Գ լսարան:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 3, վավ. 47, թ. 11-54:

Նույն օրը, Էջմիածին - Գևորգյան Ճեմարանի հոգեբանության ուսուցիչ Սեդրակ

Մանդինյանը Կոմիտասին ծննդավայր գնալու առիթով իր առարկայի քննությունից ազատելու վերաբերյալ տեսուչ Արիստակես Սեդրակյանի բանավոր հարցմանը տվել է հետևյալ գրավոր պատասխանը. «Շնորհունակ Սողոմոն սարկավազը Ձեր պատվիրանոք, պատմեց ինձ յուր ուղևորվելու հանգամանքները և հարցնում է իմ կարծիքը նորան թույլ տալու հնարավորության մասին:

Այդպիսի դեպքեր պատահել են Ճեմարանում, որովհետև խնդրողը իմ առարկայից բարեխղճությամբ է պարապել հընթացս ուսման, ես կարող եմ ազատել նորան քննությունից»:

«Տեղեկագիր», ԳԱ, 1956, No 9, էջ 103:

Նույն օրը, Էջմիածին - Գևորգյան Ճեմարանի ռուսաց գրականության ուսուցիչ Հովհաննես Սաղաթեյանը Կոմիտասին Քեոթահիա գնալու առիթով իր առարկայի քննությունից ազատելու վերաբերյալ Ճեմարանի տեսուչ Արիստակես Սեդրակյանի բանավոր հարցմանը տվել է հետևյալ գրավոր պատասխանը. «Ես իմ կողմից հակառակ չեմ Սողոմոն սարկավազի առանց քննության տարեկան թվանշանների հիման վրա փոխադրել 4-րդ լսարան» (պետք է լինի 3-րդ լսարան: Խ. Ս.):

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 3, վավ. 47, թ. 8:

Մայիս [7-8], Էջմիածին - Գևորգյանի Ճեմարանի ընդհանուր գրականության ուսուցիչ Լևոն Մանվելյանը Կոմիտասին ծննդավայր գնալու առիթով իր դասավանդած առարկայի քննությունից ազատելու վերաբերյալ տեսուչ Արիստակես Սեդրակյանի բանավոր հարցմանը տվել է հետևյալ գրավոր պատասխանը. «Այլի առաջ ունենալով, որ սարկավազ Սողոմոնյանը բարեխղճությամբ հետևել է իմ առարկայի դասընթացին, և այն բացառիկ հարգանքը, որի շնորհիվ նորա քննությունից ազատվելը կարևոր կարելի է համարել, իմ առարկայի վերաբերյալ նրան արգելք չեմ տեսնում»:

«Տեղեկագիր», ԳԱ, 1956, No 9, էջ 103:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 3, վավ. 47, թ. 10:

Մայիս [8-15], Վաղարշապատ - Կոմիտասը դուրս գալով Էջմիածնից՝ Թիֆլիս-Բաթում-Կ. Պոլիս ուղեգծով մեկնում է Քեոթահիա:

Մայիս [15-20] Կ. Պոլիս - Քեոթահիա մեկնող Սողոմոն սարկավազը Կ. Պոլսում այցելում է Մաղաթիա արքեպս. Օրմանյանին:

«Էջմիածին», 1966, No 1, էջ 51:

Մայիս [20-31], Քեոթահիա - Տասնմեկամյա բացակայությունից հետո Կոմիտասը գալիս է իր ծննդավայրը: «Երբ վերադառնում է Քեոթահիա,- պատմում է ականատեսներից մեկը,- ողջագուրվում է իր հարազատների հետ և ապա մտնում է իր հայրենական սենյակը ու սկսում է լուռ և գլխիկոր շոշափել ու փայփայել պատերն ու լուսամուտները և հետո մատների մեջ գուրգուրանքով սեղմել այն փոքրիկ գամը, որից իր սիրասուն մոր կենդանագիրն է կախված եղել տասնհինգ տարի առաջ»:

«Էջմիածին», 1950, No 2-3, էջ 22:

Մայիս, Քեոթահիա - Ծննդավայրում գտնվող Սողոմոն ավագ սարկավազ Սողոմոնյանը այցելում է տեղի «Ազգային վարժարան», ուր 1876 թվականից մինչև 1880

թվականը սովորել էր նա: «Մրահ մտնելիս,- պատմել է նրա հայրենակից Սահակ Երեմյանը,- նա բնագդական մղումով վագում է դեպի ձախ անկյունը և ծալապատիկ նստում է փոշոտ ու կեղտոտ տախտակամածի վրա, վճռապես մերժելով խուճապահար թաղականների խնդրանքը՝ թիկնաթոռի վրա նստելու...

«Տարիներ առաջ - ասում է նա,- ոչ ոք չգուրգուրաց իմ վրա՝ երբ ես նստում էի ճիշտ այստեղ, առանց բազմոցի, մինչ ուրիշները գույգ բազմոցների վրա էին նստում: Ես երկու անգամ ծանր հիվանդացել եմ այստեղ: Այժմ թույլ տվեք ինձ իմ հոժար կամքով նստելու ու հիշելու իմ անցյալ դժբախտ օրերը և այս չոր տախտակները»:

«Էջմիածին», 1950, No 2-3, էջ 22:

Մայիս երկրորդ կես, Քեոթահիա - Ծննդավայրում գտնվող Սողոմոն սարկավազը այցելում է այն դպրոցը, որտեղ ստացել էր իր նախնական կրթությունը. «Կրոնավոր տարագով մեր դպրոցի սրահեն ներս մտավ դեղին մորուքով, սիրուն, աշխույժ ժպտադեմ երիտասարդը: Մենք,- շարունակում է կրտսեր դպրոցական Կարո Ուշագլյանը,- փոքրիկ մանուկներս... իրար անցանք»:

«Էջմիածին», 1966, No 1, էջ 51:

«Արևմուտք», Փարիզ, 1946, No 6, էջ 7:

[Մայիս-հունիս], Քեոթահիա - Ծննդավայրում գտնվող Սողոմոն սարկավազը տեղի Ս. Թադևոս եկեղեցում մասնակցում է կրոնական արարողություններին, երգում է պատարագների և ժամասացությունների ընթացքում, կարդում է Ավետարան և այլն...

Նույն տեղում:

Նույն շրջանում, Քեոթահիա - Ընտանեկան հյուրնկալությունների ժամանակ կատարում է «Ազգային ու կրոնական» երգեր, այդ թվում նաև Թադևոս Առաքյալին նվիրված շարականը:

Նույն տեղում:

[Մայիս-հուլիս], Քեոթահիա - Ծննդավայրում Սողոմոն ավագ սարկավագ Սողոմոնյանը իր ազգականներ Հարություն աղա, Կյուլինե և Զմրուխտ Սողոմոնյաններին, ինչպես նաև համագյուղացիներ Խաչիկ Էֆենդի Պալանայանին, Շեքերճի Թորոս աղային, Հարություն Հայրապետյանին, Ներսես Էֆ. Գրիգորյանին, դատախազ՝ Ահմեդ Էֆ., Մարտիրոս Էֆ. Վարպետյանին, Թագուհի Խտրյանին, Հարություն Էֆ. Հեքիմյանին, տիկին Քառուլիներին, Մարիամ Խտրյանին, Արմենակ Էֆ. Տիրունիին, Մարիամ Հայրապետյանին և լուսանկարիչ Մատթեոս Փափազյանին երգել տալով ձայնագրում է ինչպես իր ծնողների, այնպես էլ ուրիշների հորինած շուրջ յոթ տասնյակի հասնող թուրքերեն երգեր:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 352:

Հունիս - հուլիս, Քեոթահիա - Կոմիտասը երգի դաս է տալիս Զարուհի Միմիթյանին և նրա քրոջը: «Ես երբևէ չէի երևակայած - գրում է հետագայում Զարուհի Միմիթյանը - որ օր մը մեր փոքրիկ քաղաքի երբեմնի այս որբ պատանին ոչ թե միայն

իր ծննդավայրին, այլ ամբողջ հայ ժողովրդի պարծանքը պիտի ըլլար և պիտի հիացներ աշխարհն իր տաղանդով»:

«Էջմիածին», 1950, No 2-3, էջ 20:

Օգոստոս 21, Քեոթսահիա - Ծննդավայրում հանգստացող ու ապաքինվող Սողոմոն ավագ սարկավագ Սողոմոնյանը դեռևս փետրվարին (1892) Էջմիածնում հայկական միջնադարյան ձեռագրերում և մանրամասն գրքերում եղած հոգևոր երգերը, ինչպես նաև առանձին անձանց կատարումները սկսում է հավաքել հատուկ «Հոգևոր եղանակներ» վերնագրով տետրերի մեջ: Իր հետ ծննդավայր տանելով այդ գրառումները՝ Սողոմոն սարկավագը սկսում է այդ երգերը ամփոփել առանձին ժողովածուների մեջ: Այդ ժողովածուներից մեկը բաղկացած է 8 թերթից և պարունակում է 15 միավոր:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 337:

Օգոստոս 24, Քեոթսահիա - Ծննդավայրում հանգստացող Սողոմոն սարկավագ Սողոմոնյանը ժամանակ է գտնում և գրառում է «Հոգևոր եղանակների մի այլ՝ 10 միավորից բաղկացած ժողովածու»:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ., No 337:

«Լրաբեր», 1990, No 2, էջ 53, 73:

Հունիս - օգոստոս, Քեոթսահիա - Ծննդավայր եկած Կոմիտասը ականջալուր է դառնում, որ իր հոր և մոր «...տաճիկ լեզվով և եղանակներով հորինած երգերը... դեռ երգում են մեծ հիացմունքով... քաղաքի ծերերը»:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 352:

Սեպտեմբեր սկիզբ, Էջմիածին - Հուսիկ սարկավագ Զոհրաբյանը Պոլսո Պատրիարք Խորեն արքեպիսկոպոսի անունով 50 ռուբլի փող է ուղարկում Կոմիտասին հանձնելու համար:

«Քուլիս», Կ. Պոլիս, 1980, No 793, էջ 6:

Սեպտեմբեր 14, Էջմիածին - Մայր Աթոռի միաբան Հուսիկ սարկավագ Զոհրաբյանը նամակ է գրում Պոլսո Պատրիարք Խորեն արքեպիսկոպոսին. «Սրանից մի քանի օր առաջ, - ասված է նամակում, - Ձերդ բարձր սրբազանության անունով ուղարկել եմ 50 ռուբլի փող, որ պետք է հասնի այժմ Կուսինայում գտնվող Ս. Էջմիածնի միաբան շնորհունակ Սողոմոն սարկավագ Սողոմոնյանին իբրև ճանապարհածախս նրան սրբավայր վերադառնալու համար:

... Գրելով այս նամակս՝ դիմում եմ ձեր հայրական անբավ ներողամտության և ամենախոնարհաբար խնդրում հասցնել հիշյալ փողը Սողոմոն սարկավագին»:

«Քուլիս», Կ. Պոլիս, 1980, No 793, էջ 6:

Հոկտեմբեր սկիզբ, Էջմիածին - Տեսուչ Արիստակես Սեդրակյանի հրավերով Գևորգյան Ճեմարանում երգեցողության ուսուցիչ է կարգվում կոմպոզիտոր Կարա-Մուրզան:

Կարա-Մուրզան Ճեմարանում ընթացք է տալիս երաժշտական տեսության և եվրոպական նոտագրության ուսուցմանը: Իր առաջ խնդիր է դնում դպրոցների հա-

մար պատրաստել ձայնագրագետ ուսուցիչներ ու խմբավորումներ, որոնք կարողանան առաջ մղել եկեղեցական երաժշտության ուսուցումը: Կազմում է 150 հոգուց բաղկացած երգչախումբ և արմատավորում է բազմաձայնության սկզբունքը: Երգչախմբի միջոցով իրականացնում է իր քառաձայն պատարագի կատարումը և կիրակի օրերին քառաձայնը հնչեցնում է Մայր տաճարում:

Մուրադյան Մ. Հ., Քրիստափոր Կարա-Մուրզան և բազմաձայնության արմատավորումը հայ երաժշտության մեջ, Ե., 1956, էջ 101-102:

Հոկտեմբեր 20, Կ. Պոլիս - Սողոմոն ավագ սարկավագ Սողոմոնյանը նամակ է գրում Մեծապատիվ Չոպանյան էֆենդուն: «Երեքշաբթի օրը,- գրում է նա,- եկանք մեր 50 ռուբլին ստանալու, որ Էջմիածնեն եկած էր իմ՝ Սողոմոն սարկավագիս անունով: Ժամը 7 1/2-են մինչ 11 1/2 սպասեցինք և մեր ստակներու մասին ոչ մի տեղեկություն չունինք և այդպես վերադարձանք մեր օթևանը Իմամ Ալի խան և որովհետև սրբազան Պատրիարք հայրը հրամայած էր տալ, այժմ սենեկապետ Ավետիս աղային հանձնեցեք, վասնզի ես տկարությանս պատճառով չեմ կարող գալ:

Սողոմոն ա. ս. Սողոմոնյան Միաբան Մ. Ա. Ս. Էջմիածին:

«Քուլիս», Կ. Պոլիս, 1980, No 793, էջ 7:

Հոկտեմբեր 22, Կ. Պոլիս - Սողոմոնի հանձնարարությամբ Չոպանյան էֆենդին ստանալով հիշյալ գումարը՝ հանձնում է Իմամ Ալի խանի սենեկապետ Ավետիս Պետրոսյանին: Վերջինս «գրության տակ (խոսքը Կոմիտասի հանձնարարական նամակի մասին է - Խ. Ս.) գանձած ըլալը հայտնում է»:

Հովսեփ Ճանիկյանը իբրև վկա այդ գրություն նամակի տակ դնում է իր ստորագրությունը:

Նույն տեղում:

Հոկտեմբեր, Կ. Պոլիս - Կոմիտասը հանդիպում է «Հնությունք Ակնա» գրքի հեղինակ Հովսեփ Ճանիկյանի հետ: «Ակնա ժողովրդական հայերեն երգերու եղանակները անկորուստ մնալու համար» վերջինս դրանցից 8-10 երգ կատարում է Սողոմոն Սողոմոնյանի համար: Կոմիտասը հայկական ձայնախազերով գրի է առնում այդ երգերը:

Հովսեփ Ճանիկյան, Հնությունք Ակնա, Թիֆլիս, 1895, էջ 502:

Հոկտեմբեր, Վաղարշապատ - «Արարատ» ամսագրի հերթական համարում հրապարակվում է 1891-1892 ուս. տարվա ընթացքում Ճեմարանում սովորողների «Բնականության տեղի» ցուցակը:

Ըստ ցուցակում եղած գրառման՝ Ճեմարանում 1891/1892 ուս. տարվա ընթացքում Անատոլիայի Քեոթահիա քաղաքից սովորել է մեկ աշակերտ՝ Սողոմոն սարկավագ Սողոմոնյանը:

«Արարատ», 1892, No 10, էջ 908:

[Հոկտեմբեր վերջ], Կ. Պոլիս - Քեոթահիայից Կ. Պոլսում հանգրվանած և Վաղարշապատ մեկնող Սողոմոն սարկավագ Սողոմոնյանը հյուրընկալվում է «Հայրենիք» լրագրի խմբագրապետ Արփիար Արփիարյանի մոտ:

Զրույցի ընթացքում Սողոմոնը Արփիարյանին ծանոթացնում է իր ծրագրերին,

հայտնում է նրան, որ Արարատի, Շիրակի, Սուրմալուի ու Ապարանի գավառներից հավաքել ու խազագրել է շուրջ 200 երգ: Զրույցից հայտնի է դառնում, որ Սողոմոն Սողոմոնյանը ձեռք է բերել խազագրերի բավականին մեծ քանակություն և հայտնաբերել է եղանակների 128 անուն:

Արփիարյանի խնդրանքով Սողոմոն սարկավազը նրա համար կատարում է «Տըվել եմ, կելնեմ սարը» երգը: «Եղանակը,- գրում է Արփիարյանը, անդրադառնալով Սողոմոնի երգին,- տխուր բան մը ուներ իր մեջ»:

«Հայրենիք», Կ. Պոլիս, 1892, No 309:

Նույն շրջանում, Կ. Պոլիս - Առողջական վիճակը վերականգնելու համար ծննդավայր մեկնած Սողոմոն ավագ սարկավազ Սողոմոնյանը «Պոլսեն անցնելով» մեկնում է Վաղարշապատ:

Նույն տեղում:

[Նոյեմբեր, առաջին կես], Վաղարշապատ - Ապաքինման նպատակով Քեթրահիա մեկնած Սողոմոն Սողոմոնյանը վերադառնում է Վաղարշապատ:

Գևորգյան Ճեմարանի երգեցողության նորընտիր դասատու և երգչախմբի խմբավար Կարա-Սուրբան Սողոմոն սարկավազին ներառում է իր ղեկավարած երգչախմբի կազմում և նրան է հանձնարարում մեներգերի կատարումը: «... Ուսանողների թվում էր,- գրում է երաժշտագետ Մաթևոս Մուրադյանը,- նաև երիտասարդ Կոմիտասը, որ գտնվում էր Ճեմարանի վերջին լսարանում: Կարա-Սուրբան առանձնակի ուշադրություն է դարձնում նրա վրա, որովհետև նա Ճեմարանի ամենաաչքի ընկնող ուսանողն էր և օժտված էր արտակարգ երաժշտական ընդունակություններով:

Սուրադյան Մ. Հ., Քրիստափոր Կարա-Սուրբան և բազմաձայնության արմատավորումը հայ երաժշտության մեջ, Ե., 1956, էջ 101:

Նոյեմբեր 15, Էջմիածին - Սողոմոն Սողոմոնյանը Քեթրահիայում իր հավաքած ու ձայնագրած թուրքերեն երգերը (որոնց մի մասը տաճիկ լեզվով ու եղանակով, հորինել ու երգել են նրա ծնողները) վերադարձից հետո ի մի է բերում և մաքրագիր տարբերակը ամփոփում է «Արևելյան թրքական եղանակներ» ընդհանուր խորագիրը կրող տետրակի մեջ: (Տեսում գետեղված է 66 երգ, ձայնագրումը կատարված է հայկական ձայնանիշերով, խոսքը՝ հայատառ թուրքերեն): Տետրակի վերջում՝ էջ 137 կան գրառումներ [«Վարդան»] օպերայի վերաբերյալ:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 352, էջ 1-75, 137:

Նոյեմբեր 21, Կ. Պոլիս - «Հայրենիք» օրաթերթի հերթական համարում Հրազդան ստորագրությամբ հրապարակվում է Արփիար Արփիարյանի Կոմիտասի հետ ունեցած հանդիպմանն ու զրույցին վերաբերող «Սողոմոն սարկավազ» խորագրով հոդվածը:

Արփիարյանը բարձր է գնահատում երիտասարդ սարկավազի ձեռքբերումները: «Հին երգերու հետքերը գտնել - գրում է նա,- նախնիներու բանաստեղծությունները հավաքել ոչ թե միայն խոսքերովն, այլ եղանակներովը, նորերն ալ անոնց մեջ խառնել ու տոհմային ժողովրդական երգերու հավաքածու մը մեզ տալ. ահա ինչ որ այդ

երիտասարդ սարկավազը իրեն կետ նպատակ դրած էր»:

Ընդառաջելով Արփիարյանի խնդրանքին՝ Կոմիտասը նրա համար երգում է.

Տըվել եմ կելնիմ սար,

Հապրպան, օյ, օյ,

Չըգտա ֆիտան յարը,

Հապրպան, օյ, օյ:

«Հայրենի», Կ. Պոլիս, 1892, No 309

Նոյեմբեր դեկտեմբեր, Վաղարշապատ - Մայր Աթոռում կիրակի և տոն օրերի ընթացքում տեղի էր ունենում Կարա-Մուրզայի հեղինակած Պատարագի արարողակարգը:

Պատարագը իրականացվում էր Կարա-Մուրզայի ղեկավարած քառաձայն երգչախմբի միջոցով, որտեղ մեներգերը կատարում էր Սողոմոն ավագ սարկավագ Սողոմոնյանը:

Մուրադյան Մ. Հ., Քրիստափոր Կարա-Մուրզան և բազմաձայնության արմատավորումը հայ երաժշտության մեջ, Ե., 1956, էջ 102:

Դեկտեմբեր 15, Էջմիածին - Տեղի է ունենում Գևորգյան Ճեմարանի ուսումնական խորհրդի Զ նիստը: Ուսուցիչ Սարգիս Տեր-Գաբրիելյանը ժողովի քննարկմանն է ներկայացնում ավարտական լսարանի ուսանողների շարադրության թեմաները: Ժողովի հավանությանն է արժանանում նաև «Շնորհալին, նրա դարը և նորա ժամանակ հովված կրոնական խնդիրները» թեման, որն ավելի ուշ իբրև ավարտական շարադրություն հանձնարարվում է Սողոմոն Սողոմոնյանին:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 264:

«Տեղեկագիր» Ե., 1953, No 6- 83:

1893

[Հունվարի վերջ-փետրվարի սկիզբ], Վաղարշապատ - Սողոմոն ավագ սարկավագ Սողոմոնյանը հոգևոր զգեստով նկարվում է լուսանկարիչ Փեշտմալճյանի մոտ:

Արտատպությունը տես «Կյանք և արվեստ», տարեգիրք, Փարիզ, 1936, No 6, էջ 146:

Փետրվար 5, Վաղարշապատ - Սողոմոն Սողոմոնյանը իր (հոգևոր զգեստով) լուսանկարը «Որդիական անմոռաց սիրով» մակագրությամբ ուղարկում է Քեոթահիա՝ իր հորաքույր Զմրուխտին:

Լուսանկարի շրջերեսում նա Զմրուխտին է նվիրում հետևյալ Ձոնը.

Թե խորն ու անանց սարեր ու ձորեր,

Կատղած, փրփրած և անծիր ծովեր,

Պատնեշ մը կանգնեն իբրև հսկա կամ քաջ

Դարձյալ ես անահ կը սուրամ առաջ,

Ժպիտն երեսիս

Կրկին կտեսնես:

Թեոդիկ, Ամենուն տարեցույց, Կ. Պոլիս, 1924, էջ 305:

Նույն օրը, Վաղարշապատ - Կոմիտասը իր լուսանկարը «...Բարեկամական քաղցր սիրով և անհուն բերկրառիթ հիշատակներով» մակագրությամբ ուղարկում է Քեոթահիա Կարապետ Պոյաջանին:

Նկարի շրջերեսում նրան է նվիրում հետևյալ քառատողը:

Թանկ է ինձ համար, անկեղծ բարեկամ
Սորա սուրբ սերն է սրտումս անթառամ.
Ինձ բաղդ ու ալիք թող անդունդ ձգեն,
Սակայն, իմ սրտին ազդել կարող չեն:

«Կյանք և արվեստ», տարեգիրք, Փարիզ, 1936, No 6, էջ 146-147:

Թեոդիկ, Ամենուն տարեցույց, Կ. Պոլիս, 1924, էջ 306:

Մարտ 24, Էջմիածին - Սողոմոն Սողոմոնյանը ժամանակի ընթացքում Ճեմարանի աշակերտներից լսած ու ձայնագրած երգերը «Հոգևոր եղանակներ» ընդհանուր խորագրով ամփոփում է մեկ տետրի մեջ և նախապատրաստում է տպագրության (ընդամենը 15 երգ):

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. No 332:

«Կոմիտասական», ժող. հ. 2, Ե., 1981, էջ 83-84:

«Էջմիածին», 1970, No 2, էջ 34, No 4, էջ 36, No 6-7, էջ 72, տրված են այդ երգերի նոտագրված տարբերակները:

Ապրիլ 25, Էջմիածին - Գևորգյան Ճեմարանի լսարանական բաժնի վերջին կուրսի ուսանող Սողոմոն Սողոմոնյանը ուսումնական խորհրդին է ներկայացնում «Շնորհալին, նորա դարը և նորա ժամանակ հուզված կրոնական խնդիրները» վերնագրով ավարտաճառը:

«Էջմիածին», 1950, No 5-6, էջ 23-26, No 7-8, էջ 42-48:

Նույն օրերին, Վաղարշապատ - Էջմիածնում տեղի է ունենում Գևորգյան Ճեմարանի տարեվերջյան քննությունները: Լսարանական բաժնի ավարտական կուրսի ուսանող Սողոմոն ավագ սարկավագ Սողոմոնյանը քննական հանձնաժողովի ներկայությամբ նիստերի ընթացքում տարբեր դասախոսների մոտ հանձնում է քննություն հետևյալ առարկաներից և ստանում է նշված գնահատականները.

Դավանաբանություն Հայաստանյազ եկեղեցվո - հույժ գովելի (5)

Պատմություն քննաբանության Ս. գրոց - գովելի (4)

Պատմություն քրիստոնեական եկեղեցվո - հույժ գովելի (5)

Պատմություն եկեղեցական մատենագրության հայոց - հույժ գովելի (5)

Տրամաբանություն - գովելի (4)

Մեկնաբանություն - գովելի (4)

Հոգեբանություն - գովելի (4)

Բարոյաբանություն - հույժ գովելի (5)

Մանկավարժություն - գովելի (4)

Բեմասացություն - գովելի (4)

Հանրաբանություն աստվածաբանության - գովելի (4)

Պատմություն մատենագրության հայոց - գովելի (4)

Պատմություն մատենագրության ռուսաց - գովելի (4)

Պատմություն ընդհանուր մատենագրության - գովելի (4)

Ֆրանսերեն լեզու - հույժ գովելի (5)

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 3, վավ. 47, թ. 6-7

Մայիս 28, Էջմիածին - Հանձնելով Ճեմարանի ուսումնական խորհրդի կողմից սահմանված քննությունները և «Շնորհալին, նորա դարը և նորա ժամանակ հուզված կրոնական խնդիրները» վերնագրով ավարտաճառի շարադրանքը Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սան Սողոմոն Գևորգի Սողոմոնյանը «Հույժ գովելի վարուք» ավարտում է Ճեմարանի լսարանական բաժնի եռամյա դասընթացը և արժանանում է մրցանակագրի (ղիպլում):

ՀՀՊԿՊԱ, ֆ.3.12, թղթ. 3, վավ. 47, թ. 6-7:

Մայիս 29, Էջմիածին - Տեղի է ունենում Գևորգյան Ճեմարանի ուսումնական խորհրդի 10-րդ նիստը: Տեսուչ Արիստակես Մեղրակյանը ամփոփում է լսարանական բաժնի ավարտական քննությունների արդյունքները: Ժողովի արձանագրությանը կցված է Գ լսարանն ավարտողների ցուցակը: Այս ցանկի հերթական 6-րդ համարի դիմաց գրված է Սողոմոն ավագ սարկավագ Սողոմոնյանի անունը:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 250, թ. 41:

Հունիս 3, Թիֆլիս - Մակար Եկմայանը ցանկանալով իր ներդաշնակած «Պատարագը» ներկայացնել հոգևոր իշխանության հավանությանը, ուղևորվում է Վաղարշապատ՝ Գևորգյան Ճեմարանի երգչախմբի միջոցով իրականացնելու իր ծրագիրը:

«Տարագ», Թիֆլիս, 1893, No 23, էջ 365. «Ծաղիկ», Կ. Պոլիս, 1893, No 7, էջ 51.

«Մասիս» Կ. Պոլիս, 1893, No 3979, էջ 112:

Օգոստոս երկրորդ կես, Էջմիածին - Սպիրիդոն Մելիքյանը, հանձնելով սահմանված քննությունները, ընդունվում է Գևորգյան Ճեմարան՝ իբրև գիշերօթիկ սան:

«Էջմիածին», 1955, No 12, էջ 54-55:

Սպ. Մելիքյան, Հուշեր, նամակներ, փաստաթղթեր, Ե., 1964, էջ 205:

Սեպտեմբեր 13, Վաղարշապատ - Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանը ժամանում է Էջմիածին՝ բազմելու Լուսավորչի հայրապետական գահին: Վեհին ընդառաջ է գնում Կարա-Մուրզայի ղեկավարած քառաձայն երգչախումբը [երգչախմբում էր նաև Սողոմոն Սողոմոնյանը]:

Խումբը կատարում է Կարա-Մուրզայի կողմից Խրիմյանի գալստյան առիթով Ղ. Աղայանի «Առ հայրիկն Խրիմյան» վերնագրով բանաստեղծության հիման վրա հորինված «Մաղթանք Խրիմյան Հայոց Հայրիկին» խորագրով օրհներգը:

Օրհներգը դիմավորողներին՝ Խրիմյանը մտնում է Մայր Տաճար՝ աղոթելու:

«Արարատ», 1893, No 9-10, էջ 793-798, 815:

Կարապետյան Հով., Կարա-Մուրզա, Թիֆլիս, 1904, էջ 70:

Սեպտեմբեր 15, Վաղարշապատ - Նորընտիր Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը այցելում է Ճեմարան: Ուսուցիչների խումբը վերատեսուչ Արիստակես Մեղրակյանի գլխավորությամբ դիմավորում է վեհին և առաջնորդում են հանդիսասարահ, որտեղ նրան դիմավորում է Կարա-Մուրզայի ղեկավարած երգչախումբը, որոնց մեջ էր նաև Սողոմոն ավագ սարկավագ Սողոմոնյանը:

Խրիմյանը իր խոսքում օրհնում է Ճեմարանը և քաջալերում է սովորողներին:

«Արարատ», 1893, No 9-10, էջ 801:

Սեպտեմբեր երկրորդ կես, Վաղարշապատ - Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը Էջմիածին է հրավիրում գրող Ղազարոս Աղայանին և հանձնարարում է նրան Գևորգյան Ճեմարանում զբաղեցնել ավագ վերակացուի և վարժոցի ղեկավարի պաշտոնը: Վերակացուի պաշտոնը վարում էր Ավետիս Ահարոնյանը:

Ղազարոս Աղայանը ժամանակակիցների հուշերում, Ե., 1967, էջ 362, 513:

Սեպտեմբեր 22, Վաղարշապատ - Սողոմոն ավագ սարկավագ Սողոմոնյանն իր լուսանկարը «Բարեկամական նվեր հայր Համազասպ վարդապետին» մակագրությամբ նվիրում է վերջինիս:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, թ. 41:

Սեպտեմբեր 26, Վաղարշապատ - Մայր Տաճարում տեղի է ունենում Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա-ի օծման արարողությունը: Հանդեսի ընթացքում երգում է Կարա-Մուրզայի ղեկավարած երգչախումբը՝ կատարելով Ղ. Աղայանի «Առ Հայրիկն Խրիմյան» բանաստեղծության հիման վրա նրա հորինած «Մաղթանք Խրիմյան Հայոց Հայրիկին» վերնագրով օրհներգը: Արարողության ընթացքում երգում է նաև Ներսես Շահլամյանը:

Այնուհետև վանքի սեղանատանը տրվում է հանդիսավոր ճաշկերույթ: Ստեպանոս ստեպ երգում է Ճեմարանի երգչախումբը՝ Սողոմոն ավագ սարկավագ Սողոմոնյանի մասնակցությամբ:

«Արարատ», 1893, No 9-10, էջ 791, 807-809, 815:

Սեպտեմբեր [27-30], Վաղարշապատ - Կարա-Մուրզան նամակ է գրում եղբորը՝ «Հայրիկը ինձ լավ ընդունեց,- գրում է նա,- և երկու անգամ շնորհակալություն հայտնեց Պատարագի արարողությունը քառաձայն լսելուց հետո:

Կարապետյան Հով., Կարա-Մուրզա, Թիֆլիս, 1904, էջ 70:

Հունվար-սեպտեմբեր, Էջմիածին - Կիրակի և տոն օրերի ընթացքում Մայր Տաճարում իրականացվում էր Կարա-Մուրզայի հեղինակած քառաձայն «Պատարագի» արարողությունը իր ղեկավարած քառաձայն երգչախմբի միջոցով, որտեղ մասնակցում էր նաև Սողոմոն սարկավագ Սողոմոնյանը՝ կատարելով մեներգերը:

Մ. Հ. Սուրադյան, Քրիստափոր Կարա-Մուրզան և բազմաձայնության արմատավորումը հայ երաժշտության մեջ, Ե., 1956, էջ 102:

Սեպտեմբեր, Էջմիածին - Գևորգյան Ճեմարանում Դերենիկ Դեմիրճյանը ծանոթանում է Սողոմոն ավագ սարկավագ Սողոմոնյանի հետ:

Դ. Դեմիրճյան, Կոմիտասի մասին, Երկերի ժողովածու, հ. 14, Ե., 1987, էջ 235-237:

Հոկտեմբեր 5, Էջմիածին - Մկրտիչ Խրիմյանի պատվիրանի համաձայն Ճեմարանի տեսուչ Արիստակես Սեդրակյանը երգեցողության ուսուցիչ Կարա-Մուրզային ազատում է պաշտոնից և նրա փոխարեն Ճեմարանում երգեցողության ուսուցիչ

է կարգում Սողոմոն ավագ սարկավագ Սողոմոնյանին: Այդ առիթով նա Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին է ներկայացնում հետևյալ զեկուցագիրը. «Կարա-Մուրզա արձակեցի ի պաշտոնէ ուսուցչութեան երգեցողութեան և զՍողոմոն սարկավագ կարգեալ ի նոյն պաշտօն»: Միննույն զեկուցագրով Արիստակես եպս. Սեդրակյանը Կաթողիկոսին խնդրում է իրեն ազատել Ճեմարանի տեսուչի պարտականությունից:

«Մկրտիչ Ա-ի օրով,- գրում է Կոմիտասը «Ինքնակենսագրականում», - 1893-ի սեպտեմբերի սկզբից (պետք է լինի հոկտեմբերի սկզբից Խ. Ս.) նշանակվեցի Ճեմարանի երաժշտության ուսուցիչ: Դաս էի տալիս Հայ եկեղեցական երաժշտություն՝ Հայ նորագույն և եվրոպական ձայնանիշերով, մինչև արտասահման գնալս»:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 57, գործ No 202, թ. 64:

«Նոր դար», 1893, No 187, էջ 1:

«Էջմիածին», 1969, No ԺԲ (12) էջ 7:

Հոկտեմբեր 17, Թիֆլիս - «Տարագ» շաբաթաթերթի հերթական համարի «Մանր լուրեր» բաժնում հրապարակվում է հաղորդագրություն Կաթողիկոս Խրիմյանի կողմից Կարա-Մուրզային Ճեմարանի երգեցողության ուսուցչի պաշտոնից ազատելու և նրա փոխարեն «երգեցողության ուսուցիչ է նշանակված Ճեմարանի նորավարտներից Սողոմոն սարկավագ Սողոմոնյանը:

«Տարագ», 1893, No 40, էջ 624:

Հոկտեմբեր 24, Էջմիածին - Գևորգյան Ճեմարանում տեղի է ունենում ուսումնական խորհրդի է նիստը: Ղ. Աղայանի, Լ. Մանվելյանի, Սողոմոն սարկավագի և այլոց մասնակցությամբ ժողովում քննարկվում է ավարտածներին վկայական տալու և լսարանական բաժնում ազատ ունկնդիրներ ունենալու հարցը:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, վավ. 260, թ. 58:

Հոկտեմբեր 29, Էջմիածին - Գևորգյան Ճեմարանում Սողոմոն սարկավագի, Ղ. Աղայանի, Վ. Աբովյանի, Լ. Մանվելյանի և այլոց մասնակցությամբ տեղի է ունենում ուսումնական խորհրդի Ը նիստը:

Ժողովում քննարկվում է լսարանական բաժնում կրոնական առարկաներին հատկացված դասաժամերի և ուսուցիչներից յուրաքանչյուրին որքան դասաժամ հատկացնելու հարցը:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 261, թ. 60:

Նոյեմբեր 3, Էջմիածին - Գևորգյան Ճեմարանում Սողոմոն սարկավագ Սողոմոնյանի, Խորեն Ստեփանյանի, Ղ. Աղայանի, Վ. Աբովյանի, Լ. Մանվելյանի և այլոց մասնակցությամբ տեղի է ունենում ուսումնական խորհրդի Թ նիստը:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 262, թ. 61:

Նոյեմբեր 23, Էջմիածին - Գևորգյան Ճեմարանում Սողոմոն Սողոմոնյանի, Լ. Մանվելյանի և այլոց մասնակցությամբ տեղի է ունենում ուսումնական խորհրդի և Ճեմարանի վարչության միացյալ Ժ նիստը:

Ժողովում լսվում է Բ լսարանում երկու ուսանողների կովի շարժառիթների մա-

սին և երկուսին էլ արվում է հանդիմանություն:

ՀՀՊԿՊԱ, ֆ.312, թղթ. 26, վավ. 263, թ. 62:

Դեկտեմբեր 13, Էջմիածին - Գևորգյան Ճեմարանում Սողոմոն Սողոմոնյանի, Լ. Մանվելյանի և այլոց մասնակցությամբ տեղի է ունենում ուսումնական խորհրդի ԺԱ նիստը:

Ժողովը քննարկում է լսարանական բաժնի ավարտական շարադրությունների հարցը:

ՀՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 26, վավ. 264, թ. 64:

Մեպտեմբեր-դեկտեմբեր, Վաղարշապատ - Գևորգյան Ճեմարանում իբրև ավագ վերակացու և Ճեմարանին կից վարժոցի ղեկավար աշխատում է Ղազարոս Աղայանը:

Ղազարոս Աղայանը ժամանակակիցների հուշերում, Ե., 1967, էջ 513:

Հոկտեմբեր-դեկտեմբեր, Էջմիածին - «Սողոմոն Սողոմոնյանը,- գրում է Դ. Դեմիրճյանը իր հուշերում,- գործի անցավ կոտրված ժպիտով և անհամարձակ... Սովորաբար՝ հայկական նոտաներ էին և միաձայն ժողովրդական երգեր: Ու չնայած որ Կարա-Մուրզան եվրոպական նոտա չէր սովորեցրել և Կոմիտասը սովորեցնում էր եթե ոչ եվրոպական՝ գոնե հայկական, աշակերտները շատ վերապահ էին նրա հանդեպ:

Նրա դասավանդությունը,- շարունակում է հուշագիրը,- հանգիստ, ընկերական էր, մեղմ ոգևորությամբ տոգորված... Նա հիվանդ էր ժողովրդական երգով: Դաս տալիս երգում էր, և նրա ժողովրդական երգի մեջ զգացվում էին ինչ-որ նրբերանգներ, յուրատեսակ ռիթմ, կոլորիտ, որից զուրկ էր Կարա-Մուրզայի ժողովրդական երգը...»:

Դ. Դեմիրճյան, Ե. Ժ., հ. 14, Ե., 1987, էջ 235-237:

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՀԱԿՈՐՅԱՆ

**ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇՅԱՆ.
ՄԵԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐԸ**

Հայ հասարակական կյանքի կենարար ազդակներից մեկը՝ Բարեգործությունը, բուռն զարգացում ապրեց ազգային ազատագրական պայքարի բովում: Բարեգործության ակունքները թեև հասնում էին մինչև պատմական հնագույն ժամանակները, բայց որպես ինքնուրույն ուղղություն այն ձևավորվեց ավելի ուշ շրջանում: Դեռևս 17-րդ դարից Հայաստանի տարբեր վայրերում հիմնվեցին ազգային հիվանդանոցներ, դպրոցներ և այլ հաստատություններ: 18-19-րդ դարերում արդեն ստեղծվեցին Բարեգործական բնույթի տարբեր կազմակերպություններ:

Բարեգործական շարժումն ավելի բազմաբնույթ ու նպատակասլաց էր Արևմտյան Հայաստանում, իսկ Արևելյան Հայաստանում այն ավելի ուշ զարգացում ապրեց: 20-րդ դարի սկզբին Հայաստանի արևելյան և արևմտյան հատվածներում, ինչպես նաև հայաշատ գաղութներում մի շարք Բարեգործական ընկերություններ միավորվեցին՝ ստեղծելով նորերը: Եվ չնայած բոլոր ընկերությունների համընդհանուր խնդիրներ ունենալուն, այնուամենայնիվ, ընկերությունները գործում էին առանձին՝ ունենալով մեկ ընդհանուր նպատակ՝ սատար կանգնել հայ ժողովրդի ազգապահպանման գործին, իրենց շուրջը համախմբել լավագույն կենսունակ ուժերը, ինչպես նաև նպաստել լուսավորական մշակութային վերելքին, մատաղ սերնդի կրթությանը, խթանել գրականության, մամուլի, թատրոնի, արվեստի զարգացմանը:

Բարեգործական շարժման մեջ ներգրավվեցին նաև անհատ մեծահարուստներ ու գործարանատերեր, որոնք նյութական միջոցներ տրամադրելով՝ իրենց ներդրումն էին ունենում ազգանվեր այդ գործում՝ ստեղծելով նյութական ամուր հիմք՝ հասարակական կազմակերպությունների հետագա գործունեության համար: Նրանց դերը վճռական նշանակություն ունեցավ Բարեգործական շարժման ընդարձակման համար:

Բարեգործությանը մեծ կարևորություն է տրվել մեր ժողովրդի կյանքում: Ժողովուրդը իր Բարեգործներին հարազատորեն է ընդունել և նրանց անունները զարմանալի հետևողականությամբ փոխանցել է հաջորդ սերունդներին: Բարեգործական շարժման պատմության մեջ, ի թիվս այլոց, իր անմոռանալի անունն է թողել Ալեքսանդր Հովհաննեսի Մանթաշյանը:

Ալ. Մանթաշյանը ծնվել է 1842 թ. մարտի 3-ին Թիֆլիսում, մանուֆակտուրային վաճառականի ընտանիքում: Հայրը մեծ հոգատարությամբ է վերաբերվել որդու կրթությանը. Ալեքսանդրը նախապես սովորել է Գալուստ վարդապետ Փափազյանցի՝ Թիֆլիսի մասնավոր դպրոցում, ուր ստացել է հիմնավոր կրթություն, սովորել է հայերեն, վրացերեն և ռուսերեն: 1864 թ. հոր հետ մեկնել է Պարսկաստան և նրա հետ աշխատելով՝ հմտացել մանուֆակտուրային առևտրական գործունեության մեջ՝ դրսևորելով բացառիկ կարողություններ ու հմտություններ այս բնագավառում:

Թեհրանի մեծահարուստ Ասատուր բեգ Առաքելյանը, հիանալով Ալեքսանդրի՝ առևտրական աշխարհում կատարած բանիմաց ու համարձակ գործողություններով, խորհուրդ է տալիս Հովհաննեսին՝ որդուն ուղարկել եվրոպական երկրներ՝ առևտրական հարաբերություններ հաստատելու նպատակով: Դա մի հեռանկարային քայլ էր, որի նպատակն էր Ալեքսանդրին դուրս բերել եվրոպական առևտրի ասպարեզ: Այդ շրջագայությունների արդյունքում Մանթաշյանները ծավալում են մանուֆակտուրային մեծածախ առևտուր Թեհրանում: 1878 թ. նրանք տեղափոխվում են Թիֆլիս՝ բնակություն հաստատելով Գանովսկայա փողոցում: Հայրը կտորեղենի խանութ է բացում, իսկ Ալեքսանդրը ավելացնում է երկրորդը: Միաժամանակ նա շարունակում է իր ճանապարհորդությունները եվրոպական քաղաքներ, որոնց ընթացքում էլ տիրապետում է ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն լեզուներին, ծանոթանում է այդ երկրների տնտեսական և մշակութային կյանքին:

Շնորհիվ իր տաղանդի, ուշիմ ու խելացի բնավորության, քսան տարեկանում նա սկսում է վարել իրենց առևտրական տան գործերը: 1886 թ. մահանում է Ալեքսանդրի մայրը, իսկ մեկ տարի անց՝ նաև հայրը: Նրանից ժառանգություն ստացած 200.000 ռուբլի կարողությունը նա, սակայն, չօգտագործեց մանուֆակտուրային առևտրի ծավալման համար, այլ «գնաց Բագու եւ այնտեղ սկսեց պարապել նաֆթային արդինաբերութեամբ, ուր ահագին յաջողութիւն ունեցաւ իւր մտածուած, բայց խիզախ ձեռնարկութիւններով»¹:

Քաջ գիտակցելով, որ նավթի արդյունաբերությունը հնարավոր չէ առանց բանկերի հետ համագործակցելու՝ նա նախապես կարողանում է դառնալ Թիֆլիսի կենտրոնական առևտրական բանկի գլխավոր բաժնետեր: Իր սուր հեռատեսությամբ մեկը մյուսի ետևից գնելով բանկի արտոնագրերի ու բաժնեթղթերի մեծ մասը՝ որոշ ժամանակ անց ընտրվում է նաև բանկի վարչական խորհրդի նախագահ: Թիֆլիսում գործող ժամանակակից մյուս բանկերը սերտորեն համագործակցում են Մանթաշյանի ղեկավարած կենտրոնական առևտրական բանկի հետ և տարբեր գործարքների միջոցով կախում ունենին նրանից: Հատկանշական է այն փաստը, որ բոլոր մանր ու մեծ առևտրական տները գերադասում էին գործարքներ կնքել նրա հիմնարկության հետ, քանի որ վերջինս իր հարստությամբ ու հմուտ գործիմացությամբ վստահություն էր ներշնչում բոլորին:

Դեռևս մանուֆակտուրային առևտրով զբաղվելիս նա հաճախ էր իր ուշադրությունը կենտրոնացնում նավթի արդյունաբերության վրա: Բայց այդ բնագավառին անձանոր լինելու պատճառով երկար ժամանակ միայն ուսումնասիրում էր նավթի արտահանման ու շահութաբերության խնդիրները: Իսկ բանկի կառավարչի իր պաշտոնը հնարավորություն էր տալիս տարբեր գործարքներով իրազեկ լինել այնտեղ առկա իրավիճակին:

Շուտով հանգամանքների բերումով Մանթաշյանը հնարավորություն է ունենում խիզախելու նավթաշխարհում: Դրա համար առիթ է հանդիսանում հայ վաճառական Միքայել Արամյանցը, որը ծագումով Լեռնային Ղառաբաղի Շուշի քաղաքից էր: Նախապես զբաղվելով շաքարի առևտրով՝ Արամյանցն այնուհետև իր հայրե-

¹ «Արարատ», Էջմիածին, 1911, մայիս, էջ 348:

նակիցների՝ Ա. Ծատուրյանի և Գ. Թումանյանի հետ մուտք էր գործել նավթարդյունաբերության աշխարհ՝ հիմնելով «Ա. Ծատուրյանը և մյուսները» ընկերությունը: Նրանց ընկերությունը, սակայն, այնքան էլ լավ վիճակում չէր: Ժամանակի պահանջներին չէին համապատասխանում նավթի փոխադրամիջոցները, չնայած որ երկաթգիծն արդեն հասել էր Բաքու և գործում էր:

Մ. Արամյանը ձեռնամուխ է լինում գնել նավթը տեղափոխող վագոնները՝ նպատակ ունենալով դրանք վարձով տալ նաև մյուս արդյունաբերողներին: Սակայն կանխիկ դրամ չունենալու պատճառով Արամյանը դիմում է Մանթաշյանին՝ առաջարկելով մտնել իրենց ընկերության մեջ և դառնալ բաժնետերերից մեկը: Այս գործարքն էլ հենց առիթ հանդիսացավ, որ Մանթաշյանը հրաժարվի Թիֆլիսի իր մանուֆակտուրային առևտրից և վերջնականապես հաստատվի Բաքվում: Աստիճանաբար գնելով իր գործընկերների բաժնեմասերը և ավելացնելով նավթի հողատարածությունները՝ հիմնում է «Ադ. Մանթաշյանցն ու Կ առևտրական տունը» ընկերությունը, որի միակ բաժնետերերը ինքն ու Արամյանցն էին՝ 1/4 տոկոսով: Սակայն Արամյանը հեռանում է առևտրական ասպարեզից՝ աշխատանքները թողնելով գործընկերոջը: Իսկ Մանթաշյանը ամբողջովին նվիրվելով նավթի արդյունաբերությանը՝ առևտրական բանկեր է բացում Բաքվում և Բաթումում, ապա գնելով խոշոր բաժնետոմսեր՝ դառնում է նաև Պետերբուրգի երկու մեծ բանկերի անդամ՝ միաժամանակ ընտրվելով նրանց վարչության խորհրդի կազմում:

Մանթաշյանի առևտրական գրասենյակը գտնվում էր Թիֆլիսում: Նախապես կատարելով աշխատանքի բաժանումը՝ արդյունաբերության հետ կապված բոլոր բնույթի խնդիրների կազմակերպումն ու լուծումը հանձնարարել էր համապատասխան մասնագետներին, որոնց ծառայությունները գնահատում էր բարձր վարձատրությամբ: Իսկ նրա անմիջական մասնակցությամբ կատարվում էին առևտրական գործարքները, պայմանագրերը, գրագրությունները, բանկերի հետ կապված հարցերը, նավթաբեր հողերի գնումներն ու վաճառքը, տարբեր երկրներում վաճառական գրասենյակների ստեղծումը, նրանց համար մասնագետների ընտրությունը և բազմաթիվ առևտրական այլ հարցեր: Իր գործի հաջողության գրավականներից մեկն էլ այն էր համարում, որ մասնագետներից յուրաքանչյուրին հանձնարարում էր իր նախասիրություններին ու ընդունակություններին համապատասխան աշխատանք:

Ալ. Մանթաշյանի խորաթափանց կանխատեսումների մասին ժամանակակիցները առասպելներ են պատմել՝ նրա հաջողությունները վերագրելով բախտի քմահաճույքին: Դրա համար պատճառ է հանդիսացել այն հանգամանքը, որ նավթաբեր հողատարածություններ գնելիս ինքն անձամբ է այցելել այդ տարածքները՝ մասնագետներով շրջապատված: Ուշադրությամբ գննել է հողի որակը, գույնը, փխրությունն ու հոտը: Իսկ գնումների ավարտից հետո անսպասելիորեն կանգնել է մի տեղում և գավազանը խփելով բացականչել, որ այդտեղ փորեն: Զարմացած մարդիկ սկսում են հորատման աշխատանքները և որոշ խորությամբ փորելուց հետո նավթի հսկայական շատրվան է բացվել: Որպես հմուտ արդյունաբերող՝ նա քաջ գիտեր, որ առերևույթ նավթաբեր թվացող հողերը կարող էին ցամաքել, և հա-

կառակը: Սակայն իր սուր հեռատեսությամբ նա երբեք չէր սխալվում, ինչն էլ հարուցում էր ժամանակակիցների զարմանքն ու նախանձը:

Նավթի արդյունաբերությունում Մանթաշյանը կարևոր է համարել նաև նավթի արտահանման միջոցներն ու վաճառքը: Այդ պատճառով էլ նրա անմիջական մասնակցությամբ ու նախաձեռնությամբ ռուսական կառավարությունը 1897-1907 թթ. կառուցեց նավթամուղ 835 կմ երկարությամբ՝ Բաքվից մինչև Բաթումի, որն այն ժամանակվա պայմաններում ամենաերկարն էր աշխարհում: Զբաղարարվելով այս նոր խոշոր ձեռքբերումով՝ Մանթաշյանը Բաքվում կառուցեց մետաղյա կառուցվածքների գործարան, որն իր հզորությամբ ու արտադրանքի որակով չէր զիջում ժամանակի մյուս գործարաններին և արտադրում էր նավթ տեղափոխող ցիստեռներ ու հատուկ վերելակներ, որոնք իջեցվում էին նավթահորերը:

Նավթի փոխադրամիջոցներում, մանավանդ հեռավոր վայրեր տեղափոխելիս, նախապատվությունը տալիս էր ջրային երթևեկությանը և այդ նպատակով գնել էր մի առագաստանավ և երկու շոգենավ: Այդ մասին վկայում է նաև «Մշակը». «Սև ծովի և Միջերկրականի նավահանգիստներն իր ապրանքները տանելու համար Մանթաշյանը ուներ երեք սեփական շոգենավ: Բացի դրանից նա վարձում էր նաև բազմաթիվ ուրիշ շոգենավեր և առագաստանավեր՝ անգլիական, հունական, իտալական և այլն»²:

Այս բոլոր ձեռնարկումների շնորհիվ Մանթաշյանն ակտիվորեն զարգացրեց իր արդյունաբերությունն ու առևտուրը, որը գնալով հասնում էր միջազգային մասշտաբների: Իր առևտրական գործունեությանը զուգընթաց Մանթաշյանն ակտիվորեն մասնակցել է բարեգործական շարժմանը՝ խոշոր գումարներ նվիրելով ազգային տարբեր ձեռնարկումների իրականացմանը: Դեռևս 1881 թ. նա «Կովկասի հայոց բարեգործական ընկերության» ակտիվ մասնակիցներից էր՝ դառնալով նաև ընկերության Խորհրդի անդամներից մեկը:

Տարբեր առիթներով խոշոր դրամական միջոցներ տրամադրելով ընկերությանը՝ միաժամանակ հետևողականորեն հետևել է վերջինիս գործունեությանն ու լուսավորական աշխատանքներին: Անգամ հեռավոր երկրներում գտնվելիս ակտիվորեն մասնակցել է բարեգործությանը: Ժամանակի հայ մամուլը, որն ակտիվորեն հետևել է Բարեգործականի գործունեության ընթացքին, իր էջերում հիշատակել է նաև Մանթաշյանի ներդրումների մասին, որոնք, ըստ մամուլի, նա հատկացրել է մեծ ուրախությամբ ու ոգևորությամբ: «Սուրհանդակ» հանդեսում պահպանվել է Մանթաշյանի պատասխան-նամակը Խորհրդի անդամների այն դիմումին, որով նրանք տեղեկացնում են Փարիզում գտնվող Մանթաշյանին Թիֆլիսում նոր դպրոցներ բացելու մասին.

«Ստացա պատվարժան Խորհրդիդ 18 հունիսի նամակը՝ Կովկասում հայկական վարժարաններ բացելու վերաբերյալ: Ես արդեն գրել եմ Թիֆլիսի իմ գրասենյակը, 10.000 ռուբլու անվանական արժողությամբ ԽՊՊՈՅՎՏՍՏ Տոքսոնի արժեթղթեր (օբլիգացիաներ) գնեն և հանձնեն Խորհրդիդ, որպեսզի այդ դրամագլուխն անձեռնմխելի պահելով, տոկոսները (տարեկան 900 ռուբլի) գործածեն նոր բացված

² «Մշակ», Թիֆլիս, 1911, ապրիլի 26:

դպրոցների համար:

Խորապես շնորհակալ եմ այն զգացմունքների վերաբերյալ, որ պատվարժան Խորհուրդը արտահայտում է իմ նկատմամբ վերոհիշյալ գրությամբ

Փարիզ, 14 հուլիսի, 1908»³:

Իր շրջագայությունների ընթացքում Մանթաշյանն հաճախ է եղել հայաշատ վայրերում ու հատկապես այն քաղաքներում, ուր Բարեգործականն ուներ իր մասնաճյուղերը: Լինելով այդպիսի վայրերում և հետաքրքրությամբ ուսումնասիրելով այդ կազմակերպությունների գործունեությունը՝ միաժամանակ իր այցերը նշանավորել է խոշոր գումարների նվիրատվությամբ:

Մանթաշյանի բարեգործությունները չեն սահմանափակվում, սակայն, միայն Բարեգործական ընկերության սահմաններում. նա նաև Հայ Եկեղեցու ամենամիլիոնյալ բարերարներից էր. «Իբրև հայ նա ջերմեռանդ ազգասեր էր, պահպանողական, հավատարիմ Հայոց Եկեղեցուն: Սերը դեպի Եկեղեցին մեծ էր նրա մեջ և հարգանքը դեպի եկեղեցական դասակարգը՝ անսահման»⁴:

Իր բարեգործական գործունեությունը Մանթաշյանն նախևառաջ իրականացրել է Եկեղեցու հանդեպ, քանի որ ազգապահպանության ամենակարևոր գործոնը Եկեղեցին էր, որի շուրջ համախմբվում է ժողովուրդն ու կրթական, հասարակական, մշակութային օջախները: Բնակվելով Թիֆլիսում՝ նա առավել ուշադիր է եղել այնտեղի Մայր եկեղեցու հանդեպ, որի վերանորոգումը գնալով անհետաձգելի էր դառնում: 1901 թ. Մանթաշյանն իր վրա է վերցնում եկեղեցու ներքին ու արտաքին, ինչպես նաև շրջակա շինությունների վերակառուցման ծախսերը՝ մոտ 50.000 ռուբլի, միաժամանակ տրամադրում է իր լավագույն ճարտարապետներին ու նկարիչներին, որպեսզի վերակառուցման աշխատանքները ավարտվեն կարճ ժամանակում՝ պահպանելով հայ որմնանկարների սկզբնական տեսքն ու արվեստը: Այս բարեգործության անմիջապես հաջորդում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանի Օրհնության գիրը, որում ի մասնավորի ասվում է. «Գիր օրհնութեան ու գոհունակութեան յանուն Գերագնի պ. Աղեքսանդրի Յովհաննիսեան Մանթաշեանց, յաղագս առատաձեռն օժանդակութեան նորա ծախուց նորոգութեան ներքին մասանց Վանաց Մայր եկեղեցոյ թ. 61»⁵:

Կրոնասիրությունը Մանթաշյանն արտահայտում էր իր յուրաքանչյուր քայլում: Նա բարձր կրթաթոշակ էր նշանակում բոլոր այն երիտասարդներին, որոնք ցանկություն էին ունենում եվրոպական երկրներում ուսումնասիրելու աստվածաբանություն, փիլիսոփայություն, երգարվեստ, բժշկագիտություն և այլն: Նրա նյութական միջոցներով տարեկան 200 ուսանող կրթություն է ստացել բարձրագույն ուսումնական հաստատություններում: Այդ ուսանողների թվում են եղել այնպիսի հայտնի դեմքեր, առանց որոնց դժվար կլիներ պատկերացնել հայագիտության, հայ մշակույթի, արվեստի ու բնագիտական գիտությունների զարգացումը: Այս առումով կարևոր է հիշել Նիկողայոս Ադունցին, ով ստանալով Մանթաշյանի կրթաթոշակը՝

³ «Մուրհանդակ», 1911, էջ 286:

⁴ «Մշակ», Թիֆլիս, 1911, հմր 81:

⁵ «Արարատ», Էջմիածին, 1902, մայիս-հունիս, էջ 417:

Թիֆլիսի ռուսական գիմնազիան ավարտելուց հետո ուսումը շարունակել է Պետերբուրգի համալսարանում, որն ավարտելուց հետո էլ ուղևորվել է եվրոպական քաղաքներ՝ Մյունխեն, Փարիզ, Լոնդոն, Վենետիկ և այլուր՝ ուսումնասիրելու օտար լեզուներ:

Ալեքսանդր Մանթաշյանի կրթաթոշակից է օգտվել նաև Կոմիտաս Վարդապետը: Նա հնարավորություն է ստանում Բեռլինում սովորելու Ռիխարդո Շմիդտի մասնավոր կոնսերվատորիայում և միաժամանակ հաճախում է Բեռլինի Արքունական համալսարանի երժշտական, պատմաֆանասիքական և փիլիսոփայական դասընթացներին, մշակում է ձայնը, սովորում խմբավարություն, դաշնամուր և երգեհոն նվագել: 1899 թ. Կոմիտասը, ավարտելով ուսումը, Ս. Էջմիածին է վերադառնում, ուր իր երաժշտական գործունեությունը շարունակելու հարցում բախվում է մեծ դժվարությունների՝ դաշնամուր չունենալու պատճառով: Որոշ ժամանակ անց, սակայն, այս խնդիրն էլ է կարգավորվում: Մանթաշյանը Պետերբուրգից բերել է տալիս մի շքեղ դաշնամուր և նվիրում Կոմիտասին⁶:

Մանթաշյանի կրթաթոշակից օգտվողների թվում են ժամանակի հայտնի քաղաքական ու մշակութային գործիչներ Ստեփան Շահումյանը, Հայկ Գյանջուցյանը, Արմենակ Շահմուրադյանը, Տիգրան Նալբանդյանը, Ալեքսանդր և Կոնստանտին Խատիսյան եղբայրները և բազմաթիվ այլ տաղանդավոր երիտասարդներ:

Մանթաշյանը առանձնակի հարգանք ուներ Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմյան Հայրիկի նկատմամբ, ում բազմիցս հյուրընկալել էր իր տանը: Սակայն պատմության մեջ մեծ արձագանք է գտել հատկապես 1903 թ. այցելությունը, երբ Մանթաշյանը երիկամների հիվանդության պատճառով չի կարողացել հանդիպել Թիֆլիս ժամանած Կաթողիկոսին, իսկ վերջինս էլ ինքն է անձամբ այցելել նրան: Այդ այցելությունից խիստ զգացված Մանթաշյանը «առաջարկեց Էջմիածնի Մայր Տաճարի նորոգության ծախսը կատարել: Ապաքինվելուց հետո նա իր ճարտարապետներին ուղարկեց Էջմիածին և սկզբնական ծախքերի համար առանձնացրեց 40.000 ռուբլի»⁷:

Ըստ սկզբնական պայմանավորվածության՝ Մանթաշյանը հոգալու էր միայն եկեղեցու ներքին ու արտաքին վերանորոգության ծախսերը: Այդ նպատակով «Ամսոյս 16-ին Մայր Աթոռ եկաւ Պ. Մանթաշեանի փեսայ Պ. Յովսէփ Տիգրանեանը ճարտարապետ Պ. Ռուբինեանի հետ, որոնք երկու օր մնալով առ տեղեան քննեցին տաճարի շինութեան ներկայ դրութիւնը՝ ըստ այնմ նորոգութեան ծախքերի քանակը որոշելու համար: Պ. Մանթաշեանը այդ մասին հաստատ որոշում անելը թողել էր, մինչեւ որ ճիշտ տեղեկութիւններ կունենար, թէ վերանորոգութեան ինչ պահանջներ կան»⁸: Տեղեկանալով, որ Հին Վեհարանի շենքային պայմանները աշխատանքային առումով բավարար չեն, Մանթաշյանը Մայր Տաճարի նորոգությունից բացի որոշում է կառուցել նաև Վեհարանի մի նոր շենք, սակայն առժամանակ հետաձգվում է այս հարցը Խրիմյան Հայրիկի վախճանման պատճառով:

⁶ Այս մասին մանրամասն տե՛ս Քրիշյան Մ., Անմար Կանթեղ, Երևան, 1969, էջ 54:

⁷ Մարուխան Ա., Մանթաշյանց Ալեքսանդր, մեծ վաճառականը և բարեգործը, Վիեննա, 1931, էջ 138:

⁸ «Արարատ», 1903, ապրիլ, էջ 329:

Որոշ ժամանակ անց Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցը Ալ. Շիրվանզադեի խորհրդով դիմում է Մանթաշյանին՝ հիշեցնելով նրա խոստումները Մայր Աթոռի նկատմամբ: Զգացված այս հիշեցումից՝ Մանթաշյանը պարտավորվում է կատարել իր խոստումները: Կարճ ժամանակ անց կազմվում է հանձնաժողով, որը զբաղվելու էր տաճարի ներքին և արտաքին կողմերի վերանորոգման հարցերով: Մեսրոպ վարդապետ Տեր-Սովսիսյանի ղեկավարած հանձնախումբը, սակայն, որոշ տարաձայնությունների պատճառով միայն 1910 թ. է Մանթաշյանին ուղարկում իր վերջնական ծրագիրը: Եկեղեցու վերանորոգության հետ միասին որոշվում է կառուցել նոր Վեհարան՝ ընդարձակ սրահներով ու ընդունարաններով, նաև թանգարանի համար նախատեսված առանձին սրահով:

Երկար աշխատանքներից հետո վերջապես «Յունիսի 6-ին, Հոգեգալստեան կիւրակէ օրը նշանակուած էր Հանգուցեալ Խրիմեան Մկրտիչ Կաթողիկոսի մահարձանի բացումն եւ Նոր Վեհարանի հիմնարկէքը»⁹:

Վեհարանի կառուցման աշխատանքները ղեկավարել է հայտնի ճարտարապետ Զոհրաբյանցը և ավարտին հասցրել 1914 թ. մայիսին՝ Մանթաշյանի մահից երկու տարի անց: Սակայն սկսված Առաջին աշխարհամարտի պատճառով նորակառույց Վեհարանը տրամադրվում է զինվորական հիվանդանոցին, ապա՝ հայկական հեծյալ գնդին: Այս պատճառով Վեհարանի ընդարձակ սրահներն ու ընդունարանները ձևափոխվեցին՝ ենթապատերի միջոցով բաժանվելով փոքր սենյակների: Շինությունն այդ նպատակին ծառայեց մինչև 1957 թ., երբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի դիմումագրով վերադարձվեց Մայր Աթոռին, սակայն շատ անխնամ ու բարձիթողի վիճակում, որից հետո սկսվեցին վերականգնման աշխատանքները Արծրուն Գալիկյանի ղեկավարությամբ՝ ուղեցույց ունենալով սկզբնական գծագրերը:

Մանթաշյանի՝ Հայ Եկեղեցուն կատարած բարեգործություններից է նաև Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ Մայր եկեղեցու շինությունը: Նախապես ունենալով Փարիզում հայկական մատուռ կառուցելու ծրագիր՝ նա այս մասին հայտնում է Ֆրանսիայի ժամանակի հայոց հոգևոր հովիվ Վռամշապուհ ավագ քահանա Քիպարյանին: Ոգևորությունն այնքան մեծ է լինում, որ մատուռի խնդիրը փոխվում է եկեղեցի կառուցելու գաղափարով: Շինարարական աշխատանքները դեռ չսկսված՝ ժամանակի մամուլն արդեն խոսում էր նորակառույց եկեղեցու շինության ու նրա վրա ծախսվելիք գումարի մասին. «Ռուսահայ ծանոթ ազգային մը, Պ. Մանթաշեան, յանձն առեր է իր ծախքով մատուռ մը շինել տալ Բարիզի մէջ: Այդ նպատակին համար Պ. Մանթաշեան 200.000 ռուբլի դրեր է դրամատան մէջ գնուելու համար հարկ եղած գետինը որ կամ Շան-գ Էլըզէի կողմերը և կամ ուրիշ ունէ կեդրոն տեղ մը պիտի ըլլայ»¹⁰:

Եվ իրոք, հողատարածքը գնվում է Փարիզի կենտրոնում՝ Սան Գուժոն փողոցում: Շինարարական աշխատանքները հանձնարարվում է ֆրանսիացի ճարտարապետ Ա. Կիլպերին, որը, սակայն, նախապես չի կարողանում իրականացնել պահանջվածը՝ կառուցել սկզբունքով ու ոճով հայկական, բայց կառուցմամբ նոր՝ ար-

⁹ «Արարատ», 1910, յունիս, էջ 592:

¹⁰ «Արարատ», 1900, դեկտ., էջ 578:

դիական եկեղեցի: Մանթաշյանի հանձնարարությամբ Կիլիկիին են տրամադրվում հայկական եկեղեցիների լուսանկարները, հատակագծերն ու այլ նյութեր: Ուսումնասիրելով և հիմնադրով հայ ճարտարապետության ձեռքբերումներով՝ Կիլիկիին ստանձնում է հայկական եկեղեցի կառուցելու գործն ու, վերջապես, 1902 թ. հոկտեմբերի 5-ին կատարվում է եկեղեցու հիմնարկեքն ու օծումը, որի «արարողությունը կատարել է Երոպայի Հայոց հովիվ Գեորգ Եպս. Իթիմեան»¹¹:

Եկեղեցու կառուցումն ավարտվում է երկու տարի անց, 1904 թ. հոկտեմբերի 2-ին՝ Վարագա Սուրբ Խաչի տոնին: 2002 թ. հոկտեմբերի 6-ին Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ Մայր տաճարում տեղի ունեցավ եկեղեցու հիմնարկեքի հարյուրամյակը՝ հանդիսապետությամբ Գյուտ արքեպս. Նազգաշյանի: Հանդիսությանը ներկա հյուրերի թվում են եղել նաև Մանթաշյանի թոռները:

Մանթաշյանի բարեգործությունների թիվը այսքանով, սակայն, չի ավարտվում և դեռ կշարունակվեր, եթե ազգային այս մեծ բարերարը չմահանար 1911 թ. ապրիլի 19-ին: Կովկասի ողջ մամուլը՝ հայ և օտար, արձագանքել է այս լուրին: Առաջին հոգեհանգիստը կատարվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում «կիրակե, ապրիլի 24-ին Ս. Պատարագից հետոյ, որ մատոյց Սինոդի անդամ Ս. Մաթեոս վարդապետը»¹²: Ապա մի քանի օր անց Էջմիածնի «միաբանության կողմից ներկայացուցիչ ուղարկեց Տփղիս Սինոդի անդամ Ս. Յուսիկ արքեպիսկոպոսին, յանձնարարելով ներկայ լինել յուղարկաւորութեանը եւ թաղմանը եւ Ս. Պատարագ մատուցանել հանգուցեալ Աղէքսանդր Մանթաշեանի յիշատակի համար»¹³:

¹¹ «Արարատ», 1902, սեպտ-հոկտ., էջ 872:

¹² «Արարատ», 1911, մայիս, էջ 344:

¹³ Նույն տեղում:

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

ԳԻՏՆԱԿԱՆԻ ԲՅՈՒԶԱՆԴԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԿՏԵՂՈՒՄԸ

Հրաչ Մ. Բարթիկյան, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հատոր երրորդ, «Մեսրոպ արքեպս. Աշճեան մատենաշար», 19, Երևան, 2006, 316 էջ (ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ)

Hratch M. Bartikian, Studia Armeno-Byzantina, Third volume, Arch. Mesrob Ashjian Book Series, 19, Yeravan, 2006, 316 p. (Akademy of National Siencies of Armenian Republik, Institut of Hisrory)

Դեռևս 2002 թ. Երևանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Տ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանի ջանքերով լույս տեսավ մեր ժամանակների առաջնակարգ բյուզանդագետներից մեկի՝ Հայաստանի ԳԱԱ իսկական անդամ (1996), Աթենքի ակադեմիայի (1980) և Հռոմի «Տիբերիանա» արվեստի, գրականության և գիտության ակադեմիայի արտասահմանյան անդամ (1987) Հրաչ Բարթիկյանի «Հայ-բյուզանդական հետազոտություններ»-ի երկհատորյակը, նրա գիտական հոդվածների ընտրանին (131 հոդված, հինգ լեզուներով հրապարակումներ), որը բավականին մեծ աշխուժություն առաջացրեց գիտական շրջաններում¹:

Գրքի ընդունելությունից ոգեպնդված գիտնականը ձեռնամուխ եղավ առաջին երկու հատորներում չընդգրկված հոդվածների հավաքմանն ու հրատարակության պատրաստմանը: «Հայագիտական հետազոտություններ»-ի երրորդ հատորը բովանդակում է երկհատորյակի լույսընծայումից հետո հեղինակի հրատարակված ավելի քան մեկ տասնյակ հոդվածները (հիարկե հետազոտություններից մի քանիսը հրապարակված են ավելի վաղ), որոնք վերաբերում են հայագիտության և բյուզանդագիտության մի շարք կարևորագույն բնագավառների. Մատթեոսի Ավետարանի հայկական դասական թարգմանության համեմատությանը հունարեն բնագրի հետ, ԺԳ դարի երկրորդ քառորդին հայ-բյուզանդական դիվանագիտական փոխհարաբերություններին, «Դաշանց թղթին» առնչվող պատմաբանասիրական խնդիրներին, ԺԱ-ԺԴ դարերում Բյուզանդական կայսրության տարածքում գործավարած հայկական համայնքներին են: Ժողովածոյի վերջում դրված հրապարակումը Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարք Իոակիմի (1498-1504) մի ներբողյանի հրապարակումն ու հետազոտությունն է. բնագիր, որն ուղղակիորեն բացահայտում է ԺԶ դարի սկզբին Կովկասում տիրող քաղաքական իրավիճակը, հետաքրքիր պատմական ակնարկներ է պարունակում տարածաշրջանում վաղ միջնադարում քրիստոնեության տարածման խնդիրների վերաբերյալ: Աշխատանքներն, ինչպես եռհա-

¹ Գրախոսություն հրապարակվեց Գ. Գրիգորյանի հեղինակությամբ, տե՛ս ՊԲՀ, 2003, 1, էջ 295-300:

տորյակի նախորդ երկու հատորներում, բերվում են ըստ հրապարակման ժամանակագրական հերթականության: Մենք կփորձենք դրանք դասակարգել ըստ գիտնականի հետազոտական հետաքրքրությունների:

Սուրբ Գրքին վերաբերող հետազոտություններ

Ժողովածոյի առաջին հոդվածը հրապարակվում է ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի հրապարակած «Աճեմյան մատենաշարի» առաջին հատորից: Հոդվածն անվանված է «Մատթեոսի Ավետարանը հունարենի և հայերենի բաղդատությամբ» (էջ 5-36): Այս հրապարակումը բազմալաստակ գիտնականի Աստվածաշնչային բնագրերի հետ երկարատև աշխատանքի արդյունք է և ուղղակի շարունակությունը երջանկահիշատակ հայագետ Հակոբ Անասյանի և հայագետների մի ողջ սերնդի բանասիրական պրպտումների: Հր. Բարթիկյանը գիտական բժախնդրությամբ անդրադառնում է Ավետարանի հունարեն և հայերեն կարևորագույն հրատարակություններին՝ հատկապես հիշատակելով հայերեն բնագրի այն տպագրությունները, որոնք ժամանակին համեմատվել են հունարեն բնագրի հետ: Հեղինակն, անդրադառնալով մինչ այժմ եղած համեմատություններին՝ եկել է այն եզրակացության, որ հետազոտությունները կատարվել են ոչ բավարար հետևողականությամբ: Այնուհետև Հր. Բարթիկյանը անդրադառնում է Մատթեոսի Ավետարանի սեփական համեմատություններին՝ Շահե Սրբազանի խորհրդով հայերեն միջնադարյան թարգմանությունը համեմատելով Նեստլե-Ալանդի կազմած հունարեն բնագրի հետ, որի ընթացքում հետազոտողը նկատել է շուրջ 1029 տարբերություն, որոնք բաժանել է 20 ենթախմբերի:

Հր. Բարթիկյանը նկատել է հայերեն բնագրում շուրջ 50 հավելում, որոնք բացակայում են Նեստլե-Ալանդի հունարեն քննական բնագրում, բայց կան հունարեն այլ ձեռագրախմբերում: Առաջին չորս խումբ տարբերությունները վերաբերում են շարահյուսական հատուկ մոտեցումներին, երկու բնագրերում տարբեր բառ-եզրերի օգտագործմանը և հատուկ անունների գրմանը: Հաջորդ խումբ տարբերությունները վերաբերում են հայերենում բացակայող, սակայն հայերեն այլ ձեռագրերում առկա հունարեն նախադասություն-դարձվածքներին, հայերեն բնագրում թույլ տրված թարգմանական վրիպումներին և թյուրըմբռնումներին: Այստեղ չափազանց կարևոր է հեղինակի կողմից նկատված *αγρος, ηγεμων, παλιγγενεσια, επιτροπος, ταφο* և այլ տերմինների հայերեն թարգմանության մեջ առկա տարբերակները, որոնք հետաքննում են հունարեն բնագրի իմաստից: Շեղումների մյուս խումբը վերաբերում է հունարեն միևնույն տերմինի հայերենում այլ տերմիններով թարգմանված լինելուն և հունարենի հոմանիշները հայերենում միևնույն բառով թարգմանելուն: Բերելով հայերեն թարգմանության մեջ հունարեն բնագրի իմաստից շեղվելու մեկ օրինակ (Զ 6՝ Հր. Բարթիկյանը ցույց է տալիս թարգմանչի կառչվածությունը Ավետարանական իմաստին: Իմաստին և ոչ թե հունարենի շարահյուսական կամ բառային պատճենումներին հետևելու մեթոդ է կիրառված թարգմանության մեջ, երբ հունարենի գոյականը փոխարինվում է բայով, այստեղ այլ է հունարեն բայի ժամանակն ու սեռը, գոյականի և բայի թիվը (հոգնակին փոխված է եզակիով, կամ հակառակը), հունարենում առկա եբրայերեն առանձին բառեր տրված են հայերեն թարգմանությամբ:

յամբ, հայերենում գոյություն չունեցող հունական շեշտերի և շնչերի անունները փոխարինված են հայերենի կետադրության տարբեր տերմին-եզրերով, հայերենի քերականությանը անհարիր մի շարք ձևեր (ինչպես, օր.՝ սեռը) թարգմանիչները փորձել են վերարտադրել յուրօրինակ լուծումներով:

Վերջապես, Հր. Բարթիկյանն անդրադառնում է հրատարակիչների թույլ տված որոշ «թերացումներին», որոնք արտահայտվում են կետադրական նշանների ոչ ճիշտ տեղադրումով²: Բյուզանդագետը ուշադրություն է հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» դարակազմիկ հրատարակության աշխատասիրողները (Գ. Ավետիքյան, Խ. Սյուրմեյան, Մ. Ավգերյան), համոզված լինելով Աստվածաշնչի հայերեն թարգմանության անսխալության մեջ, նրա մեջ օգտագործված ողջ բառապաշարն օգտագործում են իրենց բառարանում՝ դրա դիմաց դնելով հունարեն Աստվածաշնչում առկա համապատասխան բառ-եզրը՝ առանձին դեպքերում անգիտանալով վերջինիս ճշգրիտ իմաստը: Նման օրինակներից բյուզանդագետն առանձնացնում է հետևյալ կրկնակները. քաղցր/χρῖστος (պիտանի, օգտակար), վարեմ /σπειρω (ցանեմ), վայրենի /αγριος (դաշտ) դատաւոր /ηγεμων (նահանգապետ), գաւառապետ /επιτρος (վերակացու) ևն.:

Նկատված թարգմանական հատուկներն «վրիպումները», ըստ Հր. Բարթիկյանի, չեն կարող դուրս-ինչ ստվեր նետել Մատթեոսի Ավետարանի Ոսկեդարյան թարգմանության գերազանց որակի վրա: Հր. Բարթիկյանի օրինակելի հետազոտությունը նոր ավանդ է հայերեն Աստվածաշնչի բնագրի ուսումնասիրության ասպարեզում, իսկ նրա կողմից օգտագործված մեթոդիկայի կիրառումը ուղեցույց պետք է լինի գալիք հետազոտողների համար:

Այս նույն թեմային վերաբերում է «Երկու դրվագ Սրբոց Թարգմանչաց ուսումնառության և Աստվածաշնչի հունարեն բնագրից առաջին նախադասության թարգմանության վերաբերող» (էջ 247-253) հոդվածը: Այստեղ Հր. Բարթիկյանը շոշափում է մի կարևոր հարց, որը հայագիտության մեջ ուշադրության առարկա է դառնում առաջին անգամ: Հեղինակը քննարկում է այն խնդիրը, թե ինչո՞ւ «ընկալեալ» թարգմանությունը գլուխ բերելու համար Ս. Սահակն ու Ս. Մեսրոպն իրենց աշակերտներին ուղարկեցին Ալեքսանդրիա: Հեղինակը հետազոտողների ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ հելլենիզմի դարաշրջանում հունարեն լեզվի բազմաթիվ բարբառների հիմքի վրա Ալեքսանդրիայում էր ձևավորվել κωινո³ (ընդհանուր գործածության) հունարենը, որով թարգմանվել և գրվել էին Հին և Նոր Կտակարանի գրքերը: Հունարենի գրական այս տարբերակում «դասական հունարենի համեմատությամբ» միօրինակության էին բերված «բազմաթիվ ձայնավորների, երկբարբառների... և բաղաձայնների» արտասանությունը և ուղղագրությունը, «բազում բառեր փոխել են իրենց նշանակությունը, ուրիշները դադարել են գոյություն ունենալուց և հանդես են եկել նոր բառեր» (էջ 248): Այս նկատառումներին կարելի է հավելել նաև այն հանգամանքը, որ ողջ քրիստոնեական աշխարհը առաջնորդվում էր Աղեքսանդրյան մեկնողական դպրոցի ներկայացուցիչների (Փիլոն Աղեքսանդրացի, Որոգինես, Պլոտին, Աթանաս Աղեքսանդրացի և ուրիշներ) կողմից ճշգրտված Աստվածաշնչային բնագրերի վրա: Այս հոդվածի երկրորդ դրվագում հե-

² Կարծում եմ, նման շեղումները կարելի էր վերագրել նաև հրատարակիչներին:

դինական անդրադառնում է Ս. Մեսրոպի կողմից հայերեն թարգմանված Աստվածաշնչի առաջին նախադասության («Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»։ Առակք, Ա 2(ընկալման խնդրին և հմտորեն վերարտադրում է մեր Ոսկեդարյան թարգմանիչների կողմից այդ արտահայտության մեջ դրած իմաստը. «Հասու լինել գիտության (իմա՝ գիտելիքներին), կրթության, խոհեմ խոսքին»։ Հր. Բարթիկյանի նման ոսկերչական ճշգրտումները նոր մեթոդական հիմքեր են տալիս վերստին ընկալելու Աստվածաշնչի մեր Ոսկեդարյան թարգմանության յուրահատկությունը։

Հայ-բյուզանդական եկեղեցական փոխհարաբերություններ

Հետազոտությունների այս բնագավառը սկզբից ի վեր նշանավոր բյուզանդագետ-հայագետի հետաքրքրությունների կենտրոնում է եղել։ «Գանձասար» Աստվածաբանական հանդեսի յոթերորդ հատորում առաջին անգամ հայերեն լեզվով լույս տեսած «Կոստանդնուպոլսի Պատրիարքներ Գերմանոս Բ-ի (1222-1244) և Մանուելի (1244-1255) թղթերը Հեթում Ա թագաւորին և Կոստանդին Ա Բարձրաբերդցի Կաթողիկոսին» (էջ 27-63) հրապարակումը պրպտումների նոր ուղիներ է մատնանշում հայ-բյուզանդական եկեղեցական փոխհարաբերությունների ապագա հետազոտողների առջև՝ հայագիտության մեջ իրավացիորեն սրբագրելով երջանկահիշատակ Մաղաքիա Պատրիարք Օրմանյանի այն դրույթը, ըստ որի Մանուել Ա կայսեր (1143-1180) գահակալությունից հետո «յոյներու հետ միութենական բանակցութիւնները վերջնականապէս փակուեցան»։ Երախտաշատ բյուզանդագետը այս անգամ իր հետազոտության նշանախեց է դարձնում միայն հունարեն բնագրով պահպանված Գերմանոս Բ և Մանուել Ա Պատրիարքների նամակները՝ ուղղված Կոստանդին Բարձրաբերդցի Կաթողիկոսին։ Գերմանոս Պատրիարքի նամակի հունարեն բնագիրը դեռևս 1914 թ. հրապարակել է հույն հետազոտող Սպ. Լագոպատեսը, ցավոք մինչ Հր. Բարթիկյանի հրապարակումը այն անհայտ է մնացել հայագիտական շրջաններին։ Փաստորեն, բյուզանդագետը պահպանված վավերագրի և հայկական սկզբնաղբյուրներում պահպանված ժլատ տեղեկությունների հիմքի վրա պարզաբանում է Գերմանոս Բ Պատրիարքի և Կոստանդին Ա Բարձրաբերդցի Կաթողիկոսի միջև ծավալված միջեկեղեցական բանակցություններին վերաբերող պատմաբանասիրական խնդիրները։ Հոդվածի երկրորդ մասում Հր. Բարթիկյանը ներկայացնում է Մանուել Ա Պատրիարքի՝ դեռևս չհրապարակված նամակի պահպանված երկու մատյանների (Բավարական գրադարան, թ. 207 և Վատիկանի Առաքելական գրադարան, թ. 77) պարունակած նյութերի նկարագրությունը։ Այդ մատյանի հետագա հետազոտությունը իր պարունակած նյութերով կարող է հետաքրքիր բացահայտումների նյութ դառնալ հայ-բյուզանդական եկեղեցական փոխհարաբերությունների, հայ-քաղկեդոնականների մատենագրական փշրանքների հետագա ուսումնասիրության համար։ Հրապարակման մեջ տեղ են գտել նաև Գերմանոս և Մանուել Պատրիարքների նամակների հունարեն բնագրերը՝ զուգահեռ հայերեն թարգմանությամբ։

Հայերը Բյուզանդական կայսրության տարածքում

Այս թեմայի շուրջ գրախոսվող գրքում առկա է 2003 թ. լույս տեսած երկու հրապարակում: Այս թեմատիկայի առաջին լուրջ հետազոտողը հայագիտության մեջ եղել է հանրահայտ բյուզանդագետ Նիկողայոս Ադոնցը: Ներկայացվող հոդվածներից առաջինը ներկայացնում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի կողմից հրապարակված «Հայ գաղթաշխարհի պատմություն» գրքի «Բյուզանդիա» բաժինը (էջ 65-125): Հր. Բարթիկյանն այստեղ ի մի է բերում թեմայի շուրջ իր հավաքած հարուստ նյութը՝ առանձին դեպքերում ճշտելով այդ տեղեկությունների արժանահավատությունը: Սկսելով երկու ժողովուրդների (հույն և հայ) վաղագույն մատենագրական երկերում պահպանված վկայություններից՝ հեղինակն անդրադառնում է Բյուզանդական կայսրության մեջ հայագիտության բարձրաստիճան գործիչների խաղացած դերին, այնուհետև հայագիտության մեջ առաջին անգամ փորձում է հյուսել Բյուզանդական կայսրության տարածքներում ստեղծված հայկական գաղութների (**Փոքր Ասիայում՝ Կ.Պոլիս, Պերգամոն, Պեգե, Զմյուռնիա, Բալկաններում. Թրակիա՝ Փիլիպպոպոլիս-Պլովդիվ, Տրիպոլիս-Սոֆիա, Սոգրապոլիս, Դիդիմոտիստոն, Մակեդոնիա՝ Աթոս, Թեսալոնիկե, Պրիլպապոս, Թեսալիա՝ Էգեյան ծովի կղզիներ. Պատմոս, Քիոս, Էվբիա, Հոնիական ծովի կղզիներ. Կրետե**) պատմությունը, անդրադառնում է հայկական համայնքների կարգավիճակի հետ կապված խնդիրներին:

Այս թեմատիկային վերաբերող մյուս հոդվածում. «Հունական միջնադարյան արխիվային փաստաթղթեր Բյուզանդական կայսրության տարածքում Հայոց ներկայության մասին (XI-XIV դդ.)» (էջ 127-170): Այն առաջին անգամ հրապարակվել է 2003 թ. ՊԲՀ-ի 3-րդ համարում: Այս աշխատանքը, ինչպես հեղինակի մի շարք նախկին հետազոտությունները, հիշյալ թեմայի շուրջ ունեն պրոսոպոգրաֆիկ ուղղվածություն, ուր հեղինակն անդրադառնում է դեռևս ԺԹ դարում Ֆ. Միկլոշիչի և Յոզ. Մյուլլերի կողմից հրատարակված բյուզանդական վավերագրերի վեցհատորյալում առկա հայերի մասին վկայություններին և այդ նյութերի համապարփակ քննարկմանը: Այստեղ հեղինակն անդրադառնում է հետևյալ տոհմանուններին և անձնանուններին. Ասպետ, Արմենոպոլոս, Արշակ, Արշավիր, Արտավազդ, Գավրաս, Թոռնիկյաններ, Իսավեր, Լեվոն, Խաչանես, Օերենց, Կուրտիկներ, Մախիտար-Մխիթար, Մանդակ, Մեսրոպներ, Մոնաստիրիոտես, Չմշկիկ, Մենեքերիմյաններ, Վահան, Վարդ, Վարդան, Տարոնացիներ, անդրադառնում է հայ-հայեր էթնոնիմի օգտագործման դեպքերին:

Այս նույն հարցերի հետազոտության խնդիրներից է արտածված ռուս բյուզանդագետ Լիտավրինի ծննդյան 75-ամյակի առիթով 2003 թ. լույս տեսած ժողովածոյում հրապարակված «Բյուզանդական դիմագրության (պրոսոպոգրաֆիայի) մասին: Մոնաստերիոտներ, ովքե՞ր են նրանք» ռուսերեն հոդվածը, լրացնելով Ա. Պ. Կաժդանի հետազոտությունը: Հեղինակն այս ընտանիքի անունը սրամտորեն փորձում է կապել Վան տեղանվան հետ, այնուամենայնիվ ստուգաբանական այս մոտեցումը դեռևս նոր փաստարկների և ստուգման կարոտ խնդիր է մնում:

Վավերագրական հետազոտություններ

«Դաշանց թուղթ». կազմը, ստեղծման ժամանակը, հեղինակն ու նպատակը» (էջ 179-230) հոդվածն առաջին անգամ հրապարակվել է ՊԲՀ 2004 թ. երկրորդ համարում: Այստեղ հեղինակը մատենագիտական տեղեկանք է տալիս այդ վավերագրի տարբեր հրատարակությունների մասին, զուգահեռներ է անցկացնում վավերագրում առկա պատմական փաստերի և հայագիտության մեջ արձարծված տեսակետների միջև: Բերում է խնդրի շուրջ առ այսօր շոշափված բոլոր մոտեցումները: Այնուհետև հետազոտողը, հենվելով հայագիտության մեջ արձարծված հիմնական տեսակետների վրա, առանձնացնում է մի քանի խնդիրներ (1. «Դաշանց թուղթը» լատինամետ է, թե՞ հայամետ, 2. Մեկ աղբյուր, թե՞ երկու, 3. Որտե՞ղ և ե՞րբ է կնքվել դաշինքը, 4. Կնքված դաշնադրության պայմանները, 5. Տեխնիկական տերմիններ «Դաշանց թղթում», 6. Տրդատ-Կոստանդին պայմանագրի կլաուզուլան, 7. Ե՞րբ, ու՞մ կողմից է գրված և ո՞ւմ է հասցեագրված «Դաշանց թուղթը» ներկա վիճակում) և առանձին-առանձին քննում դրանք: Հետևելով Հ. Միքայել վրդ. Չամչյանի և նրա հետևողների տեսակետին, թե «Տրդատ արքայի և Կոստանդին կայսեր միջև պայմանագիր (դաշինք) կնքվել է» դրույթին, և որպես ելակետ ընդունելով Հ. Կարապետ վրդ. Շահնազարյանցի պաշտպանած «Հիշվող Տրդատ-Կոստանդին դաշինքում Գրիգոր Լուսավորիչ, Մեղրեստրոս Պապ բացակայում են, նրանք մուտք են գործել ավելի ուշ» դրույթը, անդրադառնում է հարցի կապակցությամբ Տ. Մաղաքիա Պատրիարք Օրմանյանի, ակադ. Աշոտ Հովհաննիսյանի և Հակոբ Անասյանի տեսակետներին, որոնք մանրամասների մեջ իրարից տարբերվելով, իրար հետ համաձայն են մեկ հիմնական հարցում՝ «Դաշանց թղթի» մեզ հասած տարբերակը խաչակրաց ռազմարշավների ժամանակներում ստեղծված վավերագիր է: Անդրադառնալով վերջին տարիներին հրապարակված Ռոբերտ Թոմսոնի, Գաբրիելլա Ուլուհոջյանի և Էռնա Շիրինյանի հոդվածներին, որոնց մեջ, իհարկե, չբացառելով «Դաշանց թղթի» հենքի վավերականությունը, այն համարում են լատինասեր կողմնորոշում ունեցող անձի կողմից Խաչակրաց դարաշրջանում ստեղծված կեղծ վավերագիր:

Վերոբերյալ հարցադրումներին Հր. Բարթիկյանի պատասխանը միանշանակ է. «Դաշանց թուղթը» կապ չունի լատինամետ կամ ունիթորական շրջանակների հետ, այն գրված է Հայոց Առաքելական Եկեղեցու նվիրապետական ինքնուրույնության (ավտոկեֆալություն) դիրքերից: Հետազոտողը հակված է «Դաշանց թղթի» հիմքում տեսնել Դ դարի սկզբին Տրդատ Գ-ի և Կոստանդին Մեծի միջև 325 թ. Նիկումեդիայում կնքված մի պայմանագիր (նախապես հունարեն գրված), որի վրա էլ կազմվել է ԺԳ դարում վերջնական տեսքի բերված «կեղծ» վավերագիրը:

Տաղանդավոր բյուզանդագետը «Դաշանց թղթ»-ում առանձնացնում է մի շարք պատմական իրողություններ, որոնք հասկանալի են միայն Դ դարի պատմական միջավայրում. բերվում է Դ դարի սկզբի Հռոմեական կայսրության դիոկղետիանոսյան վարչական բաժանումը, այդ եզրերից (ինչպես, օր.՝ Պոտին Արմենիա) օգտվում է նաև Մովսես Խորենացին: Այնուամենայնիվ նկատելի է նաև ԺԲ-ԺԳ դարերի քաղաքական ռեալիաների առկայությունը (Արևմտյան պետությունների վրա պապական իշխանության հավաստումը): Վավերագրի հին շերտում նշանավոր բյուզանդագետը պնդում է Նիկիայի տիեզերական ժողովի և Եվսեբիոս Նիկումեդացու (ԺԳ դ. փոխարինված Մեղրեստրոս Պապի անունով) հիշատակությունը, որը հաստատվում է նաև Ագաթանգեղոսի պատմության գրչագրերով: Ուրեմն՝ նախնական

վավերագրի terminus ante quem-ը 318, իսկ terminus post quem-ը ինչպես կարելի է կոսահել՝ 337 թվականն է: Այնուհետև հետազոտողը փորձում է վերականգնել Տրդատ-Կոստանդին պայմանագրի հիմնական կետերն ու դրույթները, անդրադառնում է վավերագրում տեղ գտած մի շարք եզրերի (հայր, եղբայր, բարեկամ, ֆրեր) նշանակությանը: Դրանք բացատրելու համար լայնորեն օգտագործում է հարակից հունահռոմեական սկզբնաղբյուրների տեղեկությունները՝ վեր հանելով իրողություններ, որոնք հազիվ թե հայտնի լինեին «Դաշանց թղթի» խաչակրաց դարաշրջանի «կեղծարարին»: Քննության է առնվում նաև Տրդատ-Կոստանդին պայմանագրի կլաուզուլան՝ ժամանակի համապատասխան վավերագրերի համեմատությամբ:

Այնուհետև հեղինակն անդրադառնում է «Ե՞րբ, ու՞մ կողմից է գրված և ո՞ւմ է հասցեագրված «Դաշանց թուղթը» ներկա վիճակում» խնդրին: Հր. Բարթիկյանը ևս, ինչպես նախորդ հետազոտողները, կարծում է, որ «կեղծիքը» կատարվել է ԺԱ-ԺԳ դարերում. «Ուստի Տրդատ թագավորի անվան տակ XI դ. վերջի և XIII դ. առաջին կեսի Կիլիկիայի հզոր վեհապետն է թաքնված (Լևոն II³ - Հեթում I)» (էջ 222): Ըստ հետազոտողի՝ «Կեղծիքը» կատարվել է «XIII դ. առաջին կեսում Կիլիկիայի հայկական թագավորության եկեղեցական ու քաղաքական վերնախավի կողմից, այն հասցեագրված էր ո՛չ թե հայերին, այլ խաչակիրներին» (էջ 224):

Ըստ հեղինակի՝ այս ժամանակ է վավերագրում տեղ գտել նաև Գրիգոր Լուսավորչի անունը, Պատրիարքական չորս Աթոռների (Անտիոք, Երուսաղեմ, Ալեքսանդրիա և Հայոց Եկեղեցու) համապատվության և այդ Աթոռների կողմից Հայոց Կաթողիկոսին ընտրելու տեսությունը, Հայոց թագավորի և Կաթողիկոսի ինքնագլուխ լինելու վարկածը: Ըստ բյուզանդագետի՝ ԺԳ դարի «Դաշանց թղթի» վերաձևողները նպատակ են հետապնդել «Մեղբեստորոս Պապի անվամբ ու հեղինակությամբ ամրագրել և տարածաշրջանի լատինների ոտնձգություններից զերծ պահել Սուրբ վայրերի Հայոց շարժական ու անշարժ գույքը, այն պահպանել «հաստատուն և անփոխադրական» (էջ 11)» (էջ 226):

Այս հետազոտության կարևորությունն առաջին հերթին կայանում է պատմավավերագիտական քննության բազմաշերտ մոտեցումը, որը նոր ուղիներ կարող է բացահայտել Հայոց պատմության խրթին խնդիրները լուսաբանելու ճանապարհին, թեպետ պիտի նշել, որ քննարկման առարկա դարձած խնդիրներից շատերը կարող են հետազոտողներին հուշել տարբեր մոտեցումներ և լուծումներ:

Կնիքագիտական հետազոտություններ

Մի շարք հետազոտություններ է գրել Հր. Բարթիկյանը այս ասպարեզում, որոնք հրապարակված են նրա հետազոտությունների նաև նախորդ հատորներում՝ շարունակելով ռուս բյուզանդագետ Վ. Շանդրովսկայայի ԺԱ-ԺԲ դդ. կնիքների հետազոտության ավանդույթը: «Գուգարաց Աշուշա բղեշխի կնիքի հունարեն արձանագրության առեղծվածի լուծումը» (էջ 237-246) հոդվածում հեղինակը վերստին անդրադառնում է խնդրո առարկա կնիքին, որն արդեն ավելի քան մեկ ու կես դար Կով-

³ Ակատի ունի Կիլիկյան Հայաստանի Լևոն Բ Ռուբինյան իշխանին, որը 1198 թ. օծվեծ իբրև Լևոն Ա թագավոր:

կասով հետաքրքրվող մասնագետների ուշադրության կենտրոնում է: Հիմնականում բանախոսելով պրոֆ. Պ. Մուրադյանի հետ, Հր. Բարթիկյանը բերում է կնիքի սեփական թարգմանությունը. «Աշուշա բդեշխ վրաց Կարթեդո(մայ)եցի» և պարզաբանում. «Աշուշան, կարթեդոմայեցի էր, Կարթո դո Մայ(շան)եցի», բնակավայր, որը գտնվում էր Հյուսիսային Ասորիքում:

Հետբյուզանդական հետազոտություններ /Metabyzantina/


Ինպես նախորդ հատորներում, այնպես էլ այստեղ Հր. Բարթիկյանը պատշաճ ուշադրություն է դարձնում Բյուզանդական կայսրության անկումից հետո ստեղծված բյուզանդական մատենագրությանը և նրա մեջ Կովկասի պատմությունը լուսաբանող սկզբնաղբյուրներին: Այս բնագավառում հայագիտությունը էական ձեռքբերումներ դեռևս չունի: Թբիլիսիի համալսարանի աշխատությունների 266 հատորում (1987 թ.) ռուսերեն լեզվով լույս տեսած «Կոստանդնուպոլսի պատրիարքարանի Մեծ հոետոր Մանուիլին (ԺՁ դարի առաջին կես) վերագրվող Մամցխե-Սաաթաբագոյի տերեր Կվարկվարե Բ-ի, Քայ-Խոսրովի և Մզեճաբուկի Ներբողյանը» (էջ 255-312) ռուսերեն հրապարակումը:

Հայ բյուզանդագետը ըստ պատշաճի գնահատում է հույն բյուզանդագետ Սպիրիդոն Լամբրոսի (1851-1919) վաստակը՝ հունարեն բնագիրը Իվերոնի վանքի մատենադարանում հայտնաբերելու և պատմական արժեքը բացահայտելու խնդրում, սակայն վիճարկում է ներբողյանի հեղինակային պատկանելության հարցը: Ըստ Հր. Բարթիկյանի՝ երկի հեղինակն է 1504 թ. կյանքից հեռացած Կ.Պոլսի Պատրիարք Հովակիմ Ա-ը, որը 1500 թ. այցելել է Մամցխե-Սաաթաբագո և անձամբ է հանձնել Մզեճաբուկ աթաբեգին խնդրո առարկա ներբողյանը՝ ակնկալելով նրա օգնությունը թուրքական իշխանությունների տիրապետության ներքո հայտնված Պատրիարքական Աթոռի ծանր ֆինանսական վիճակը թեթևացնելու խնդրում:

Հայ բյուզանդագետն իր առջև խնդիր է դնում նաև պարզել ներբողյանում տեղ գտած Վրաստանին վերաբերող որոշ պատմական գիտելիքների սկզբնաղբյուրը: Հեղինակն այստեղ տեսնում է Ակցուրի եպիսկոպոս Սիմեոնի ձեռագիրը, որը Հովակիմ Ա Պատրիարքին ուղեկցում էր Վրաստան կատարած այցելության ընթացքում: Ըստ հայ բյուզանդագետի՝ նրա միջամտության շնորհիվ է միայն բացատրվում Ակցուրի եպիսկոպոսական թեմի նշանակության ընդգծումը Վրաստանում քրիստոնեության տարածման և Անդրե առաքյալի գործունեության շրջաձիքում՝ հակադրելով այդ Աթոռը Մցխեթի կաթողիկոսարանին, որի հոգևոր իշխանությունը Մամցխեի աթաբեգները չէին ճանաչում: Կարևորելով ռուսերեն թարգմանությամբ հրապարակվող երկի նշանակությունը Վրաստանի պատմության հիշյալ ժամանակաշրջանի հետազոտության գործում՝ Հր. Բարթիկյանը ըստ արժանվույն գնահատում է ականատեսի կողմից գրված այս սկզբնաղբյուրի հաղորդած տեղեկությունների նշանակությունը ԺԵ դարավերջի և ԺՁ դարասկզբի Վրաստանի պատմության որոշակի խնդիրների հետազոտության գործում, նաև մանրամասն անդրադառնում է երկում տեղ գտած պատմական էքսկուրսներին և նշանակությանը՝ որոշակի միտումով Ակցուրի Աթոռի դերի բարձրացման գործում:

Ավելի ընդհանուր, ճանաչողական բնույթ ունի Հր. Բարթիկյանի «Հայագիտություն-բյուզանդագիտություն. փոխադարձ առնչություններ» (էջ 231-236) գեկուցում-հրապարակումը «Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները» 2003 թ. տեղի ունեցած միջազգային համաժողովում, ուր հեղինակն անդրադառնում է վերջին հարյուրամյակների բյուզանդագիտական հետազոտությունների ընդհանուր մոտեցումներին, հատկապես սկզբնաղբյուրների հրապարակման ու հետազոտության բնագավառում, և ժամանակակից հայագիտության հետ նրա սերտաճման միտումներին: Հեղինակը քննադատորեն է մոտենում վերջին տարիներին նկատվող հայագիտական հիմնարար հետազոտությունների նվազմանը, բայց հույս է հայտնում, որ բացը կլրացվի երիտասարդ սերնդի կողմից: Իհարկե, կարելի էր մտածել նաև դասական բանասիրության՝ այս բնագավառում հետազոտողներ պատրաստելու ծրագրերի մասին:

Հոդվածների այս ժողովածոյի հրապարակումով ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտը հայագետների սեղանին է դնում բյուզանդագետի ընտիր հոդվածների մի ժողովածու, որը գեղեցիկ մի նվեր է Հրաչ Բարթիկյանի ծննդյան 80-ամյակի շեմին:



ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Նոյեմբերի 12-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում (Աստվածաբանական համալսարան) տեղի ունեցավ ավարտաճառերի հերթական պաշտպանությունը:

Հինգ ճեմարանավարտ սարկավագներ հաջողությամբ պաշտպանեցին իրենց ավարտաճառերը հետևյալ թեմաներով. «Գլաձորի համալսարանը որպես գրչության կենտրոն» (Խաչատուր սարկավագ Գյոզայան), «Ամենայն Հայոց Կաթողիկոս Մակար Ա Թեղուտցի» (Սուրեն սարկավագ Վարդերեսյան), «Թովմա Մեծոփեցու կյանքը և պատմագրական ժառանգությունը» (Վիգեն սարկավագ Բաղումյան), «Մեծոփականքը որպես գրչության կենտրոն» (Վարդգես սարկավագ Սահակյան), «Եկեղեցու խորհուրդների ծիսական կանոնները «Կանոնագիրք Հայոց»-ում» (Արտակ սարկավագ Ղևոնդյան):

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՕԾԵՑ ՋԵՐՄՈՒԿԻ Ս. ԳԱՅԱՆԵ ԵԿԵՂԵՑԻՆ

Նոյեմբերի 17-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիսապետեց Ջերմուկ քաղաքի նորակառույց Սուրբ Գայանե եկեղեցու օծման արարողությունը: Եկեղեցին կառուցվել է մեկ տարվա ընթացքում՝ տիար Աշոտ Արսենյանի և Արսենյան եղբայրների բարերարությամբ: Ճարտարապետն է Սամվել Աղաջանյանը:

Ամենայն Հայոց Հայրապետին Ջերմուկ քաղաքի մատույցներում դիմավորեցին Սյունյաց թեմի առաջնորդ Ս. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանը, Սյունյաց թեմի Սյունիքի փոխառաջնորդ Աբգար վարդապետ Հովակիմյանը և թեմի եկեղեցականները: Նորակառույց եկեղեցու մոտ Նորին Սրբությանը սպասում էին Ջերմուկի հազարավոր բնակիչներ՝ տարեցներ, երիտասարդներ և մանուկներ: Վեհափառ Հայրապետը եկեղեցականների թափոքով, օրհնելով հավաքված ժողովրդին, առաջնորդվեց Ս. Գայանե եկեղեցի:

Մինչ եկեղեցու օծումը՝ Աբրահամ Սրբազանը կատարեց եկեղեցու գմբեթի խաչի օծումը, ապա սկսվեց եկեղեցու օծման արարողությունը: Վեհափառ Հայրապետի ձեռամբ օծվեցին Ս. Սեդանն ու Խորանի՝ չորս Ավետարանիչների անուններով չորս սյունները: Այնուհետև Աբրահամ Սրբազանն օծեց Մկրտության ավազանն ու եկեղեցու մնացյալ սյունները:

Օծման արարողությունից հետո, եկեղեցու մուտքի առջև իր խոսքում Աբրահամ Սրբազանը նշեց, որ Վայոց ձորում կրկնակի եկեղեցական տոնախմբություն է, քանի որ նույն օրն արդեն մի նոր եկեղեցի բացվել էր Կեչուտում, և ահա այդ ուրախությունը բազմապատկելու եկավ նաև Ջերմուկի եկեղեցու բացումը: Սյունյաց թեմի առաջնորդը երախտագիտություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ արարողությունը հանդիսապետելու համար: Ջերմուկ քաղաքի բնակչության անունից Վեհափառ Հայրապետին շնորհակալություն հայտնեց քաղաքի բնակիչ Էդգար Ղազարյանը:

Այնուհետև իր սրտի խոսքն ասաց նաև եկեղեցու բարերարը: Տիար Արսենյանն իր շնորհակալությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ եկեղեցու օծմանը ներկա գտնվելու համար, ապա նաև երախտագիտություն հայտնեց եկեղեցու կառուցմանը մասնակից բոլոր անձանց: Հավարտ իր խոսքի տիար Արսենյանը Նորին Սրբությանը հանձնեց եկեղեցու վկայականը:

Հանդիսությունը եզրափակվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ փառք վերառաքեց Աստծուն, որ Հայրենիքի նվիրական հողի վրա մի նոր եկեղեցի բարձրացավ, ուր մեր ժողովրդի զավակները պիտի իրենց աղոթքն առ Աստված բարձրացնեն և իրենց հոգու խաղաղությունը գտնեն: Նորին Սրբությունը, խոսելով Քրիստոսի հավատի փառաց լույսի մասին, որ Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից ամփոփվեց Միաձնաէջ Տաճարի Իջման Ս. Սեդանի կանթեղի մեջ, որտեղից էլ այդ լույսը ճառագվում է և վառվում աշխար-

հասկնալու հայության եկեղեցիների խորաններում, նշեց. «Ահա այսօր, սիրելիներ, այդ լույսը վառվեց նաև Ջերմուկ քաղաքում և նրա շրջակայքում: Եվ դուք պիտի գաք ձեր հոգին ջերմացնելու այդ լույսով, ձեր միտքը պայծառացնելու այդ լույսով, որ ճառագելու է Ս. Գայանե այս նորակառույց եկեղեցու Ս. Խորանից: Պիտի գաք այդ լույսի ներքո գորացնելու ձեր հավատքը, աստվածսիրության ձեր ոգին, որովհետև աստվածսիրությամբ է, որ պիտի կարողանաք հետևողը լինել Աստուծո պատվիրանների ու պատգամների, այդ պատվիրանների ու պատգամների վրա շենացնել հայրենական մեր կյանքը, ինչպես և անհատական ձեր կյանքը: Այդ աստվածսիրությամբ է նաև, որ պիտի ձեր հոգին դարձնեք սրբազան տաճարներ Տիրոջ, պիտի դարձնեք սրբազան տաճարներ Աստուծո համար, որպեսզի այնտեղ Աստված բնակվի: Մենք գիտենք մեր պատմությունից, որ մեր կառուցած քարեղեն տաճարները բազմիցս ավերվել են, բազմիցս ոչնչացվել, սակայն թշնամին երբեք չի կարողացել կործանել մեր հոգու մեջ կառուցված տաճարը, որովհետև այն հաստատված է եղել մեր գորեղ հավատքի վրա, մեր հայրերի սրբազան ժառանգության վրա, նրանց նահատակված սուրբ արյամբ են շաղախված եղել մեր հոգու տաճարի ամուր հիմերը: Հոգին է կենդանարար, և մենք պիտի շարունակենք մեր կենդանարար հոգին գորեղ պահել աղոթքով, աստվածսիրությամբ, բարի գործերով, որոնք պիտի բխեն առ Հայրենիք և առ Աստված սիրուց»:

Նորին Մրբությունը նաև իր բարձր գնահատանքը բերեց եկեղեցու բարերարին ու նրա ընտանիքին, մարզի և քաղաքի իշխանություններին և ապա վստահություն հայտնեց, որ բարեպաշտ հայորդիներն իրենց աղոթքով ու նախանձախնդրությամբ շեն ու պայծառ պիտի պահեն նորակառույց եկեղեցին:

Հավարտ իր խոսքի Վեհափառ Հայրապետը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձր շքանշան հանձնեց տիար Աշոտ Արսենյանին:

Նորին Մրբությանն ուղեկցում էին Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ Ս. Թորգոմ վրդ. Տոնիկյանը, Մայր Աթոռի փոխդիվանապետ Ս. Մեսրոպ աբեղա Պարսամյանը, Նորին Մրբության գավազանակիր Ս. Հովնան աբեղա Հակոբյանը և Տեղեկատվական համակարգի տնօրեն Ս. Վահրամ քին. Մելիքյանը:

Օծման արարողությանը ներկա էին ՀՀ Կառավարության անդամներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, Վայոց ձորի և Ջերմուկ քաղաքի իշխանությունների ներկայացուցիչներ:

ՄԱՅՐ ԱԹՈՐ ՍՈՒՐԳ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԳՈՒԳԱՐԱՅ ԹԵՄՈՒՄ

ՎԵՐԱՕԾՎԵՑ ՍԱՐԱՀԱՐԹ ԳՅՈՒՂԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Նոյեմբերի 24-ին, հանդիսապետությամբ Գուգարաց թեմի առաջնորդ գերաշնորհ Ս. Մեպուհ եպս. Չուլջանի, կատարվեց Սպիտակի տարածաշրջանի Սարահարթ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու վերածման արարողությունը: Ձեռամբ Սրբազան Հոր և մասնակցությամբ թեմի հոգևոր դասի՝ օծվեցին Ս. Մեղանը, Խորանը, Մկրտության սուրբ ավազանը: Արարողության ավարտին նորած եկեղեցում անդրանիկ Պատարագ մատուցեց Արևաշողի հոգևոր հովիվ Ս. Մովսես քին. Աշուրյանը:

Սարահարթի Ս. Աստվածածին եկեղեցին թեմակալ առաջնորդ Մեպուհ եպս. Չուլջանի առաջնորդության ընթացքում կառուցված կամ վերաբացված թվով 25-րդ եկեղեցին է:

Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 19-րդ դարի երկրորդ կեսին, 1884 թ., երբ սարահարթցիների նախնիները Բասենից գաղթեցին Սարահարթ գյուղ: 1988 թ. երկրաշարժից Ս. Աստվածածինն ավերվեց և խոնարհված վիճակում հասավ մինչև մեր օրերը: Ի ուրախություն սարահարթցիների՝ կիսաքանդ եկեղեցին վերակառուցվեց՝ բարերարությամբ ամերիկահայ մեր հայրենակցի, արմատներով սարահարթցի, բարեհիշատակ Աշոտ Մարտիրոսյանի:

Հիշարժան օր էր սարահարթցիների համար, քանզի վերակառուցված եկեղեցու զանգերը կրկին դողանջեցին ու սրբազան արարողության հրավիրեցին բարեպաշտ հավատացյալներին: Եկեղեցու օծման արարողության ավարտին Մեպուհ Սրբազանն իր օրհնության ու շնորհավորական խոսքն ուղղեց սարահարթցիներին և բոլոր ներկաներին. «Գոհություն ենք հայտնում Բարձրյալն Աստծուն, որ մեր Տիրախնամ թեմում ևս մեկ աղոթքի տուն իր դռները բացեց: Շնորհիվ ձեր համագյուղացի՝ բարեհիշատակ Աշոտ Մարտիրոսյանի, կրկին վեր հառնեց խոնարհված Ս. Աստվածածին եկեղեցին: Այսուհետ այս սուրբ եկեղեցում քրիստոնեական արժեքների և հոգևոր գիտելիքների ուսուցման գործնական հնարավորություն է ստեղծվում մեր սիրասուն զավակների համար: Ուստի, սիրելի՛ սարահարթցիներ, ձեզ ենք հանձնում հավատքի բանալին՝ այս սուրբ եկեղեցին ու ավետարանը: Այսուհետ ձեր սրտաբուխ աղոթքները, որ կմատուցվեն այս սուրբ տաճարում, թող նվիրվեն մեր Մայր Եկեղեցու անսասանության, մեր անկախ հայրենիքի բարգավաճման ու հայ ժողովրդի բարօրության համար»:

Արարողությանը ներկա էին մարգալետ Ա. Քոչինյանը, մարգային իշխանությունների ներկայացուցիչներ, համայնքապետեր, բազմաթիվ հյուրեր և համայնքի անդամներ:

Սուրբ Պատարագի ավարտին մկրտվեցին տասնյակ սարահարթցիներ, ապա ներկաներին բաշխվեց երախտիքի ու գոհության մատաղձ՝ գյուղացիների արևշատության, հարազատ գյուղի անսասանության և Մայր Հայրենիքի ու Սուրբ Եկեղեցու պայծառության համար:

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՅ ԹԵՄԻ

**ՎԱՆԱԶՈՐԻ Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ ԵԿԵՂԵՑՈՒ
ԽՈՐԱՆԸ ԶԱՐԴԱՐՎԵՑ ՀԱՅԱԶԳԻ ՍՐԲԵՐԻՆ
ՊԱՏԿԵՐՈՂ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐՈՎ**

2005 թ. կառուցված առաջնորդանիստ Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցու պատմությունն աստիճանաբար մարմնավորվում է՝ ի հարկի կահավորվելով, զարդարվելով և համալրվելով առաջնորդանիստ եկեղեցուն վայել սպասքով, եկեղեցական պարագաներով, անհրաժեշտ մաս կազմող առաջնորդական գահավորակով և նստարաններով: Եկեղեցին է՛լ ավելի առինքնող և գրավիչ դարձավ սուրբ խորանի որմնանկարներով: Թեմակալ առաջնորդ Ս. Մեպուհ եպս. Չուլջանի օրհնությամբ և նախաձեռնությամբ իրականացված աշխատանքների արդյունքում մեծանուն սրբի անունը կրող եկեղեցու սուրբ խորանը զարդարվեց գահին բազմած Հիսուս Քրիստոսի գրկաբաց բարձրադիր պատկերով, հայազգի սրբերի որմնանկարներով, նաև աջ և ձախ ավանդատների ճակատային մասում՝ Խաչելության և Համբարձման թեմաները պատկերող մեծադիր կտավներով:

Որմնանկարչությունը, որ գեղանկարչության վաղնջական շրջանի հայտնի ճյուղերից է, Հայաստանում տարածված է եղել դեռևս քրիստոնեության հաստատման առաջին իսկ դարերից: Այդ ժամանակաշրջանում կառուցվող եկեղեցիները պատկերազարդվել են աստվածաշնչյան թեմաների որմնանկարներով:

Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի վարդապետությամբ հաստատված և Ս. Թադեոս ու Ս. Բարդուղիմեոս առաքյալների կողմից հիմնված Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իր երկհազարամյա պատմության ընթացքում բազում հայազգի սրբեր ունեցավ, սակայն մեր անկախացյալ Հայաստանում առաջին անգամ Վանաձորի առաջնորդանիստ Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցու խորանն է, որ զարդարվեց հայազգի գրեթե բոլոր հանրահայտ սրբերի մեծածավալ որմնանկարներով՝ Թադեոս, Բարդուղիմեոս առաքյալներից սկզբնավորվող սրբերի շարքը՝ համապատասխան հերթականությամբ ըստ ժամանակաշրջանների պատմական իրադարձությունները նշանավորող սրբերի պատկերներով (Հռիփսիմյանց կույսեր, Քրիստոնեության ընդունում, Հայոց գրերի գյուտ, Վարդանանք, հայրապետներ և թագավորներ):

Առաջնորդանիստ Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցին պատկերազարդվեց սրբերի հիշատակը հավերժացնող ու Հայ Եկեղեցու պատմությունը անմահացնող արվեստի հրաշալի գործերով, որն իրականություն դարձավ Մեպուհ Սրբազանի մտահղացմամբ և բարերարությամբ Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանի, գեներալ Լյովա Երանոսյանի, «Ա. Հակոբյան» ՍՊԸ տնօրեն Արթուր Հակոբյանի, ԱԺ պատգամավոր Կարեն Սարիբեկյանի, իսկ «Մեզամ-գագ» ՍՊԸ տնօրեն Արմեն Մխոյանի հովանավորությամբ «*Խաչելություն*» և «Լոռի» ռեստորանի տնօրեն Արտակ Ղազարյանի հովանավորությամբ՝ «*Համբարձում*» կտավները: Աշխատանքներն իրականացվեցին երևանաբնակ շնորհաշատ երիտասարդ նկարիչների կողմից՝ Լևոն Զեքյանի գլխավորությամբ, որոնք մասնագիտացել են մանրանկարչական արվեստում: Նախատեսվում է եկեղեցու պատկերազարդումների շարունակություն:

Կիրակի օրը, նոյեմբեր 11-ին, Վանաձորի Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցում Ս. Պատարագի ընթացքում, ձեռամբ Գուգարաց թեմի առաջնորդ Ս. Սեպուհ եպս. Չուլջանի, կատարվեց որմնանկարների բարերարների մասնավոր օրհնության կարգ։ Սրբազան Հայրն իր երախտագիտության խոսքը հղեց բոլոր բարերարներին և նրանց հանձնեց շնորհակալագրեր ու որմնանկարները պատկերող նկարներ։

Թեմի հոգևոր դասի և հավատացյալների անունից հայտնում ենք բոլոր բարերարներին մեր շնորհակալությունն ու երախտագիտությունը և մաղթում աստվածահաճո բազում գործերի իրականացում։

ՂԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՅ ԹԵՄԻ

ՕԾՎԵՑ ՇՈՐԺԱՅԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Նոյեմբերի 3-ին Հայ Առաքելական Եկեղեցու Գեղարքունյաց թեմի առաջնորդ Ս. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանի ձեռամբ օծվեց Շորժայի Ս. Աստվածածին եկեղեցին:

Շորժան Սևանի ավազանի հնագույն բնակավայրերից է: Շահ Աբասի տեղահանությամբ հայաթափված գյուղը հայորդիներով վերստին վերաբնակեցվել է 1992 թվականից, ովքեր ներգաղթել էին Արծվաշենից և Աղբբեջանից: Գյուղի եկեղեցին կառուցվել է 16-րդ դարում: Եկեղեցու նորոգումն ու տարածքի բարեկարգումն իրականացվել է այս տարի՝ համայնքի միջոցներով և համայնքապետ Սուլիկո Շուշանյանի նախաձեռնությամբ:

Հավարտ արարողության կատարվեց գյուղի նորածին մանուկների օրհնություն:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՅՑԸ ՍԵՎԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՈՑ

Նոյեմբերի 14-ին, գլխավորությամբ Գեղարքունյաց թեմի առաջնորդ Ս. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանի, թեմի Երիտասարդաց միության և Գավառի Պետական Համալսարանի Ուսանողական խորհրդի անդամներն ու մի շարք ուսանողներ եղան Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

Համալսարանը հիմնադրվել է 1991 թ. փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Հակոբյանի ջանքերով և գրեթե տարեկից է Սևանի Վազգենյան Հոգևոր դպրանոցին:

Հյուրերին դիմավորեց Դպրանոցի տեսուչ Ս. Մկրտիչ վարդապետ Պռոշյանը և հանգամանալից ներկայացրեց Դպրանոցն ու նրա անցած ուղին:

Հանդիպումը նպատակ էր հետապնդում նույնատարիք երիտասարդների շփման եզրերը առավել ամուր հիմքերի վրա դնել, Դպրանոցում սաների կյանքին ավելի մոտիկից ծանոթացնել և հնարավորություն տալ ԳՊՀ-ի և Հոգևոր Դպրանոցի ուսանողներին երկուստեք ծանոթանալ տարբեր գաղափարների շուրջ ունեցած մեկմեկու կարծիքների ու տեսակետների հետ:

Կողմերի միջև տեղի ունեցավ երկխոսություն և ձեռք բերվեց համաձայնություն հետագա հաճախակի հանդիպումների և համագործակցության համար:

ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՆ ԹԵՄԻ
ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ

ԳԵՐՇ. Տ. ՎԻԳԷՆ ԱՐՔԵՊՍ. ԱՅԳԱԶԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

Նոյեմբեր 8-ին՝ Ս. Վարդան Մայր Տաճարին մեջ տեղի ունեցավ Ամերիկայի Արևելեան թեմի թեմական պատուիրակ եւ Միջեկեղեցական յարաբերութեանց տնօրէն Գերշ. Տ. Վիգէն արքեպս. Այգազեանի հաստատումը բարձր ու պատուաբեր պաշտօնին՝ նախագահ Եկեղեցիներու Ազգային Խորհուրդի:

Ժամանակէն առաջ Մայր Տաճար փութացած էին Եկեղեցիներու Ազգային Խորհուրդի պատգամաւորներ եւ հայ հաւատացեալներ՝ ներկայ գտնուելու համար այս հոգեպարար արարողութեան:

Եկեղեցականներու շքախումբը, որուն մաս կը կազմէին Գերշ. Տ. Եղիշէ արքեպս. Կիզիբեան, Գանատայի հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Բագրատ եպս. Գալստանեան եւ Եկեղեցիներու Ազգային Խորհուրդի (ԵԱԽ) նորընտիր պաշտօնեաներ, հանդիսապետութեամբ թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանի մուտք գործեց Մայր Տաճար: Արարողութիւնը ընթացավ համաձայն ԵԱԽ-ի ծիսական կանոններուն: Երգեցողութիւնը կատարեց Ս. Վարդան Մայր Տաճարի դպրաց դասը՝ ղեկավարութեամբ ծանօթ երգահան-խմբավար Խորէն Մելիսանէճեանի եւ երգեհոնի նուագակցութեամբ տաղանդաւոր երգեհոնահար Հոգշ. Տ. Մամիկոն վրդ. Քիլէճեանի:

Համաձայն Եկեղեցիներու Ազգային Խորհուրդի կանոնադրութեան՝ նախագահը կ'ընտրուի պաշտօնավարութենէն երկու տարի առաջ, եւ պաշտօնի հաստատումէն ետք կը ծառայէ երկու տարի: Նոր նախագահ Գերշ. Տ. Վիգէն արքեպս. Այգազեանի պաշտօնավարութիւնը կը սկսի 2008 թուականի Յունուար 1-էն:

Եկեղեցիներու Ազգային Խորհուրդի պատմութեան մեջ առաջին անգամն է որ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիի մը հոգեւորականը նախագահ կ'ընտրուէր՝ յանձին Գերշ. Տ. Վիգէն արքեպս. Այգազեանի:

Եկեղեցիներու Ազգային Խորհուրդը հաստատուած է 1950 թուականին, եւ անոր մաս կը կազմեն Բողոքական, Անկլիկան, Ուղղափառ եւ Արեւելեան Ուղղափառ, Աւետարանչական եւ Ափրիկեան-Ամերիկեան Եկեղեցիներ: Ամերիկայի տարածքին Խորհուրդը ունի 100.000 համայնքներ՝ 45 միլիոն անդամներով:

Արարողութիւնը տպաւորիչ էր, եւ հպարտացուցիչ, եւ յուզիչ: Տեսնել հայ եկեղեցական մը այսպիսի բարձր պաշտօնի մը վրայ՝ իրապէս հոգեկան անխառն ուրախութեան բացառիկ առիթ մըն է: Արտասանուած խօսքերը կրօնաշունչ եւ իմաստալից էին: Յուզիչ էր այն պահը՝ երբ ԵԱԽ-ի նախկին նախագահ Տ. Մայքըլ քինյ Լիվինկսթըն խորհրդանշանական լանջախաչը փոխանցեց նորընտիր նախագահ Գերշ. Տ. Վիգէն արքեպս. Այգազեանին, որ իր շնորհակալութիւնը յայտնեց բոլորին եւ խնդրեց որ աղօթեն իր առաքելութեան յաջողութեան համար:

Արարողութենէն ետք՝ Առաջնորդարանի Հայկ եւ Ալիս Գալուքճեան հանդիսաւորահին մեջ ճաշկերոյթ տեղի ունեցաւ, որուն ընթացքին թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի շնորհաւորութիւնները փոխանցեց Գերշ. Տ. Վիգէն արքեպս. Այգազեանին, ինչպէս նաեւ շնորհաւորութիւնները՝ Ամսթերտամ գտնուող անոր ընտանեկան պարագաներուն՝ տիրամօր, եղբայրներուն, քոյրերուն եւ ազգականներուն: Այս առիթով կարդացուեցան շնորհաւորական նամակներ եւ հեռագիրներ:

Եկեղեցիներու Ազգային Խորհուրդի նոր նախագահի կողքին եօթը այլ անձեր պաշտօններ ստանձնած էին:

Գերշ. Ս. Վիգեն արքեպս. Այգազեան իր շնորհակալության սրտի խօսքը արտասանեց եւ «Պահպանիչ»-ով փակեց ի պատիւ իրեն տրուած այս ճաշկերոյթը, որուն ներկայ էին աւելի քան 400 հոգի, եւ որոնց մէջ զգալի էր նախկին պոլսահայերու եւ Իսթանպուլի Ս. Խաչ Դպրեւանքի սաներու թիւը:

Գերշ. Ս. Վիգեն արքեպս. Այգազեան ծնած է 1951 թուականին Թուրքիոյ մէջ: Աւարտած է Երուսաղէմի հայոց Պատրիարքութեան դպրեւանքի եւ ընծայարանի բաժինները եւ կուսակրօն քահանայ ձեռնադրուած է 1971 թուականին: Երջանկայիշատակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէն Ս. Էջմիածնի մէջ եպիսկոպոս ձեռնադրուած է 1992 թուականին: Պսակաւոր Աստուածաբանութեան աստիճանը ստացած է Լոնտոնի Գինկս Գոլէճէն: Գէնթըրպըրիի Ս. Օկըսթին Գոլէճի մէջ հետեւած է Հովուական Աստուածաբանութեան դասընթացքներու, Զուիցերիոյ Ֆրայպըրկ Կաթոլիկ Համալսարանի տոքթորայի աստիճանի բոլոր պահանջները լրացուցած է: Տոքթորայի աստիճան ստացած է Երեւանի Գիտութիւններու Ակադեմիայի պատմութեան բաժանմունքէն (1999):


1972-74-ին եղած է «թարգման» Երուսաղէմի հայոց Պատրիարքարանին: 1974-75-ին՝ Իսթանպուլի եկեղեցիներուն մէջ քարոզիչ եւ օգնական օրուան Պատրիարք երջանկայիշատակ Ս. Շնորհք. արքեպս. Գալուստեանի: 1980-92-ին՝ հովիւ Զուիցերիոյ Հայ Եկեղեցւոյ. այս շրջանին եկեղեցական նոր համայնքներ հաստատած է Յիւրիխի, Պերնի, Քրիզլինկընի եւ Լուկանոյի մէջ: 1992-ին եպիսկոպոս կը ձեռնադրուի եւ առաջնորդ կը նշանակուի Զուիցերիոյ Հայ Եկեղեցւոյ թեմին: Այս պաշտոնը կը վարէ մինչեւ 1996 թուականը: 1997-99-ին՝ տնօրէն Հայց. Եկեղեցւոյ Ամերիկայի Արեւելեան թեմի Հայ Օգնութեան Ֆոնտի Երեւանի գրասենեակին: 2000-էն՝ թեմական պատուիրակ եւ Միջեկեղեցական յարաբերութեանց վարիչ:

1985 թուականէն սկսեալ Գերշ. Ս. Վիգեն արքեպս. Այգազեան անդամակցած է Ամերիկայի Եկեղեցիներու Ազգային Խորհուրդին եւ անոր Տեսչական Մարմնին, ինչպէս նաեւ՝ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Վարչական յանձնախումբին եւ «Հապիթաթ Ֆոր Հիւմանիթի»-ի Միջազգային մարմնին: Սրբազան Հայրը հիմնադիր-կազմակերպիչներէն մէկը եղած է «Քրիստոնէայ Եկեղեցիներ Միատեղ» կազմակերպութեան: Ան յարգուած դէմք մըն է ամերիկեան եւ համաշխարհային միջեկեղեցական կազմակերպութեանց կողմէ:

ԴԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Նոյեմբեր 9, 2007

Նիւ Եորք, Ն.Ե.



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Նոյեմբերի 7-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Շվեյցարիայի Համադաշնության Ազգային խորհրդի նախագահ Քրիստին Էգերզեգի-Օբրիստին:

Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց Շվեյցարիայի Համադաշնության Ազգային խորհրդի նախագահի այցի առիթով: Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատմական առաքելությանը, խորհրդային շրջանում կրած փորձություններին, ապա ներկայացրեց ներկա գործունեությունը հայոց կյանքի տարբեր ոլորտներում:

Նորին Սրբությունը գոհունակությամբ հաստատեց, որ Հայաստանի ու Շվեյցարիայի հարաբերություններն առավել սերտանում ու զարգանում են: Անդրադառնալով Շվեյցարիայի բերած աջակցությանը Հայաստանին՝ Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ նշեց նաև, որ Հայ Առաքելական Եկեղեցին ևս սերտ համագործակցության մեջ է շվեյցարական մի շարք միջեկեղեցական և բարեսիրական կազմակերպությունների հետ: Նա կարևոր նկատեց տարածաշրջանում խաղաղության հաստատմանն ուղղված Շվեյցարիայի միջնորդական ջանքերը և վերստին իր գնահատանքն արտահայտեց Շվեյցարիայի Համադաշնության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման համար:

Տիկին Քրիստին Էգերզեգի-Օբրիստը, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, նշեց, որ իր համար մեծ պատիվ է օրինյալ այս վայրում գտնվելը: Շվեյցարիայի Համադաշնության Ազգային խորհրդի նախագահն անդրադարձավ նաև հայ-շվեյցարական հարաբերություններին:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ
ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՏԱԼԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ**

Նոյեմբերի 8-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Իտալիայի Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Մասսիմո Լավեցցո Կասսինելլին:

Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց դեսպանին հանդիպելու առիթով և շնորհավորեց նոր նշանակման կապակցությամբ: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ նշեց, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հարաբերությունները Իտալիայի դեսպանատան հետ միշտ ջերմ են եղել, և վստահություն հայտնեց, որ դեսպանի գործունեության շրջանը կհատկանշվի սերտ համագործակցությամբ և բարի արդյունքներով:

Իր հերթին Իտալիայի դեսպանը, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, վստահեցրեց, որ պիտի շարունակի նպաստել երկու երկրների հարաբերությունների առավել սերտացմանը:

Հանդիպման ընթացքին նաև անդրադարձ կատարվեց երկու ժողովուրդների ընդհանրություններին, Հայաստանյայց Առաքելական և Կաթոլիկ Եկեղեցիների միջև առկա սերտ հարաբերություններին և համագործակցությանը, խոսվեց երկու երկրների հոգևոր կյանքի մասին:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Նոյեմբերի 3-ին, շաբաթ. – Տօն ամենայն սրբոց՝ հնոց եւ նորոց, յայտից եւ անյայտից:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ս. Նշան աբեղա Պետրոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Նոյեմբերի 4-ին, կիրակի. – Ը կիր. զկնի Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ս. Ներսես արքեպիսկոպոս Պողոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Նոյեմբերի 10-ին, շաբաթ. – Սրբոց հրեշտակապետացն՝ Գաբրիելի եւ Միքայելի եւ ամենայն երկնային զորացն:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ս. Գաբրիել աբեղա Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Նոյեմբերի 11-ին, կիրակի. – Թ կիր. զկնի Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ս. Իսահակ աբեղա Պողոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Իսկ երբ Հիսուս լսեց, նրան պատասխանեց և ասաց. «Մի՛ վախեցիր, միայն հավատա՛, և նա կապրի»» (Դուկ. Ը 50) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 79):

Նոյեմբերի 18-ին, կիրակի. – Ժ կիր. զկնի Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ս. Դանիել վրդ. Թումանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Նոյեմբերի 25-ին, կիրակի. - Ա կիր. Յիսնակաց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ս. Սահակ վրդ. Մաշայանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Անմիտ մարդ, այս զիշեր իսկ հոգիդ քեզմե պիտի առնվի: Որո՞ւն պիտի մնա պատրաստածներդ» (Դուկ. ԺԲ 20) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 82):

**“ЭЧМИАДЗИН”
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ
ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(Ноябрь 2007 г.)**

1. **ДЬЯКОН ВАРДАН БАГУМЯН** - Патриарший визит Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян в США, 30 сентября - 3 ноября 2007 г. (с. 3-60).
2. Празднование годовщины интронизации Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, 4 ноября 2007 г. (с. 61).
3. Его Святейшество Гарегин II, Католикос всех армян принял Премьер-министра Республики Болгария, 15 ноября 2007 г. (с. 62).
4. Собрание Верховного Духовного Совета в Первопрестольном Святом Эчмиадзине, 26-28 ноября 2007 г. (с. 63-64).

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И БЛАГОСЛОВЕНИЯ

5. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян г-ну Ашоту Арсеняну по случаю его награждения орденом “Св. Григория Просвятителя”, 18 ноября 2007 г. № 445 (с. 65-66).
6. Патриаршие награды (пожалование в ноябре 2007 г. энциклик, орденов “Св. Нерсес Шнорали”, благословений Его Святейшеством Гарегиниом II, Католикосом всех армян, духовным и светским лицам, оказавшим большие услуги Армянской Церкви) - (с. 67).
7. Послание соболезнования Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян по случаю кончины Агаси Айвазяна, 21 ноября 2007 г. (с. 68).
8. Послание соболезнования Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян по случаю кончины Альберта Явуряна, 6 ноября 2007 г. (с. 69).
9. Объявлен расстиженным архимандрит Вазген Нанян (с. 70).
10. Открытие памятника Хримяну Айрику в Геворкянской Духовной Академии, 29 ноября 2007 г. (с. 71-72).
11. Вручение призов конкурса “Лучший учитель года” в Первопрестольном Святом Эчмиадзине, 19 ноября 2007 г. (с. 73-74).

ПО СЛУЧАЮ ПАТРИАРШЕГО ВИЗИТА ЕГО СВЯТЕЙШЕСТВА

12. **АРХИМАНДРИТ ГРИГОР МАГСУТЯН** – Размышления по случаю Патриаршего визита Его Святейшества Католикоса всех армян (с. 75-78).

ПРОПОВЕДИ

13. Проповедь иеромонаха Исаака Погосяна в Кафедральном Соборе Святого Эчмиадзина, 11 ноября 2007 г. (с. 79-81).
14. Проповедь архимандрита Саака Машаляна в Кафедральном Соборе Святого Эчмиадзина, 25 ноября 2007 г. (с. 82-85).

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

15. **ВАРДАН ДЕВРИКЯН** – Предания, посвященные Варданидам и Аварайру, в средневековых армянских духовных песнях (литературоведческое исследование) - (с. 86-95).
16. **АРА АКОПЯН** – Об армянских церковных занавесах (искусствоведческое исследование)- (с. 96-102).
17. **СУСАННА АДАМЯН** – Деятельность архиепископа Месропа Смбатянца, посвященная литографии (литографоведческое исследование) - (с. 103-110).
18. **ХАЧИК САМВЕЛЯН** – Летопись жизни и деятельности Комитаса (историковедческое исследование) - (с. 111-131).
19. **АЙКАНУШ АКОПЯН** – Александр Манташян - крупный промышленник и национальный меценат (историковедческое исследование) - (с. 132-139).

РЕЦЕНЗИЯ

20. **АЗАТ БОЗОЯН** – Собрание византологических исследований ученого (о третьем томе книги Грача М. Бартияна “Армяно-византийские исследования”) - (с. 140-148).

В СВЯТОМ ПЕРВОПРЕСТОЛЕ И В ЕПАРХИЯХ

21. Защита диссертаций в Геворкянской Духовной Академии, 12 ноября 2007 г. (с. 149).
22. Его Святейшество Католикос всех армян освятил церковь Св. Гаяне в Джермуке, 17 ноября 2007 г. (с. 150-151).

В Гугаркской епархии

23. Заново освящена церковь Св. Богородицы села Сараарт, 24 ноября 2007 г. (с. 152).
24. Алтарь церкви Св. Григор Нарекаци в Ванадзоре украшен настенной росписью, изображающей армянских святых (с. 153-154).
25. Освящена церковь Св. Богородицы в Шорже, 3 ноября 2007 г. (с. 155).

26. Визит студентов Государственного университета Гавара в Севанскую Духовную Семинарию им. Вазгена I, 14 ноября 2007 г. (с. 155).
27. Его Высокопреосвященство архиепископ Виген Айказян - Председатель Национального Совета Церквей США, 8 ноября 2007 г. (с. 156-157).

АУДИЕНЦИИ В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ СВЯТОМ ЭЧМИАДЗИНЕ

28. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян Председателя Национального Совета Швейцарской Конфедерации Кристина Эгерзеги-Обристина, 7 ноября 2007 г. (с. 158).
29. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян посла Республики Италия в Армении Массимо Лавеццо Кассинели, 8 ноября 2007 г. (с. 159).
30. Краткие церковные новости. Информация о Святых Литургиях, проповедях и других церемониях в Кафедральном Соборе и Первопрестольном Святом Эчмиадзине в течение ноября 2007 г. (с. 160).

“ETCHMIADZIN”
OFFICIAL MONTHLY REVIEW OF
HOLY ETCHMIADZIN
(November 2007)

1. **DEACON VARDAN BAGHUMIAN** – The Pontifical Visit of His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians to the USA, from 30 September to 3 November, 2007 (p. 3-60).
2. Celebrations of enthronement anniversary of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, 4 November, 2007 (p. 61).
3. Audience granted by His Holiness Karekin II to the Prime Minister of the Republic of Bulgaria, 15 November, 2007 (p. 62).
4. Convention of the Supreme Spiritual Council in the Mother See of Holy Etchmiadzin, 26-28 November, 2007 (p. 63-64).

PONTIFICAL ENCYCLICALS AND LETTERS OF BLESSING

5. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Ashot Arsenian, on the occasion of his decoration with the Medal of “Saint Gregory the Illuminator”, 18 November, 2007, no. 445 (p. 65-66).
6. Pontifical Awards (Order of “St. Nerses the Graceful” and Letters of Blessing granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, during November 2007 to clergymen and laymen having been of great service to the Armenian Church,) (p. 67).
7. Letter of Condolence of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the passing away of Mr. Aghasy Ayvazian, 21 November, 2007, (p. 68).
8. Letter of Condolence of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the passing away of Mr. Albert Yavourian, 6 November, 2007, (p. 69).
9. Rev. Fr. Vasken Nanyan was defrocked by the order of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians (p. 70).
10. Inauguration of the bust of Khrimian Hayrik at the Gevorkian Spiritual Seminary, 29 November, 2007 (p. 71-72).
11. “The Best Teacher of the Year” prize awarding ceremony in the Mother See of Holy Etchmiadzin, 19 November, 2007 (p. 73-74).

ON THE OCCASION OF HIS HOLINESS' PONTIFICAL VISIT

12. **REV. FR. KRIKOR MAGSUTIAN** – Reflections on the Occasion of His Holiness' Pontifical Visit (p. 75-78).

SERMONS

13. Sermon delivered by Rev. Fr. Isaac Poghosian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy, 11 November, 2007 (p. 79-81).
14. Sermon delivered by Rev. Fr. Sahak Mashalian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy, 25 November, 2007 (p. 82-85).

HISTORICAL AND PEDAGOGICAL REVIEW

15. **VARDAN DEVRIKIAN**– Traditions dedicated to Vardanants and Avarayr in Armenian Medieval gandz-hymns (literary research) – (p. 86-95).
16. **ARA HAKOBIAN** – On the Armenian Church Curtains (art research) – (p. 96-102).
17. **SUSANNA ADAMIAN** – Inscription Selecting Activity of Archbishop Mesrop Smbatians (inscriptive research) – (p. 103-110).
18. **KHACHIK SAMVELIAN** – The Chronicle of Komitas' Life and Works (historical research) – (p. 111-131).
19. **HAYKANOUSH HAKOBIAN** – Alexander Mantashian: the Great Manufacturer and National Benefactor (historical research) – (p. 132-139).

LITERARY REVIEW

20. **AZAT BOZOYAN** - Collection of Byzantological Researches of the Scholar (on the third volume of "Armenian-Byzantine Researches" by Hratch Bartikian) - (p. 140-148).

IN THE MOTHER SEE AND THE DIOCESES

21. Defense of theses at the Gevorkian Theological Seminary, 12 November, 2007 (p. 149).
22. His Holiness Karekin II, Catholicos of All Armenians consecrated St. Gayane Church of Jermouk, 17 November, 2007 (p. 150-151).

In the Diocese of Gougark

23. Re-consecration of Holy Mother of God Church of Sarahart, 24 November, 2007 (p.

-
-
- 152).
24. The altar of St. Gregory of Narek Church of Vanadzor was decorated with frescos portraying Armenian saints, (p. 153-154).
25. Consecration of Holy Mother of God Church of Shorzha, 3 November, 2007 (p. 155).
26. The visit of students of Gavar State University to Vaskenian Seminary, 14 November, 2007 (p. 155).
27. His Eminence Archbishop Vicken Aykazian is the President of the National Council of Churches, 8 November, 2007 (p. 156-157).

AUDIENCES AT THE MOTHER SEE

28. Audience granted by His Holiness Karekin II to Ms. Christine Egerszegi-Obrist, President of the National Council of the Swiss Confederation, 7 November, 2007 (p. 158).
29. Audience granted by His Holiness Karekin II to H.E. Massimo Lavezzo Cassinelli, Ambassador of the Republic of Italy to Armenia, 8 November, 2007 (p. 159).
30. Brief Church News. Information about the Divine Liturgies, sermons and other services held at the Mother See and the Cathedral of Holy Etchmiadzin during November 2007 (p. 160).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԱՂՈՒՄՅԱՆ – Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հովվապետական այցելությունը ԱՄՆ	3
Նշվեց Վեհափառ Հայրապետի գահակալության տարեդարձը	61
Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բուլղարիայի Հանրապետության վարչապետին	62
Գերագույն Հոգևոր Խորհրդի ժողով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում	63

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Աշոտ Արսենյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին	65
Հայրապետական գնահատություն	67

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցական գիրը Ադասի Այվազյանի մահվան կապակցությամբ	68
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցական գիրը Ալբերտ Յավուրյանի մահվան կապակցությամբ	69
Կարգալույծ Է հռչակվել Տ. Վազգեն վարդապետ Նանյանը	70
Գևորգյան Հոգևոր Ճեմարանում բացվեց Խրիմյան Հայրիկի կիսանդրին	71
«Տարվա լավագույն ուսուցիչ» մրցանակաբաշխություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում	73

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

Տ. ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ՄԱԳՍՈՒՏԵԱՆ - Ամենայն Հայոց Հայրապետին Հովուական այցելութեան առթիւ խոհեր	75
--	----

ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. Իսահակ աբեղա Պողոսյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին	79
Տ. Սահակ վարդապետ Մաշայանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին	82

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ – Վարդանանց և Ավարայրին նվիրված ավանդությունները հայ միջնադարյան գանձերում	86
ԱՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ – Հայկական եկեղեցական վարագույրների մասին ...	96
ՍՈՒՍԱՆՆԱ ԱԴԱՄՅԱՆ – Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի վիմագրական գործունեությունը	103
ԽԱՉԻԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ – Կոմիտասի կյանքի և գործունեության տարեգրությունից	111
ՀԱՅԿԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ - Ալեքսանդր Մանթաշյան. մեծ արդյունաբերողն ու ազգային բարերարը	132

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ - Գիտնականի բյուզանդագիտական հետազոտությունների մեկտեղումը	140
---	-----

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Ավարտաճառերի պաշտպանություն Գևորգյան Հոգևոր Ճեմարանում .	149
Ամենայն Հայոց Կաթողիկոսը օձեց Ջերմուկի Ս. Գայանե եկեղեցին	150

Գուգարաց թեմում

Վերածվեց Սարահարթ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին	152
Վանաձորի Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցու խորանը զարդարվեց Հայաստանի սրբերին պատկերող որմնանկարներով	153
Օծվեց Շորժայի Ս. Աստվածածին եկեղեցին	155
Գավառի Պետական Համալսարանի ուսանողների այցը Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց	155
Գերշ. Տ. Վիգեն արքեպս. Այգազեան նախագահ եկեղեցիներու Ազգային Խորհուրդի	156

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Շվեյցարիայի Համադաշնության Ազգային խորհրդի նախագահին ...	158
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Իտալիայի դեսպանին	159
Եկեղեցական բեմ. լուրեր	160
“Эчмиадзин” официальный журнал Эчмиадзинского Католикосата.....	161
“Etchmiadzin” official monthly of Holy Etchmiadzin	164